Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

16053

891.85
Ŋ-55

Printed in Turkey
19 NOV 2000
JUN 2007
891.85
Մ-55

ՅԻՇԱՏԱԿՔ

ՍԻՊԵՐԻԱԿԱՆԻ ՄԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՄԻՍԱԿ Գ. ՔԵՇԿԵԿԵԱՆ
ՀԱԼԵՊ
ALEP-SYRIE
MISSAK G. KECHKEKIAN

ԻԶՄԻՐ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. ՄԱՄԼՈՑ

1879

18.09.2013

16053

Printed in Turkey

ՅԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

Շատ գործեր կան հրատարակուած՝ օտար լեզուաւ՝ Ռուսիոյ ու Սիպէրիոյ վրայ, երկու ահաւոր և խորհրդաւոր աշխարհներ, որոց մին առանց միւսին կարելի չէ յիշել և որ ժամանակ մ՝անմատչելի էին քննութեան։ Սակայն այս գործերուն մէջ կան որ երևակայական են կան որ հիմնաւոր։ Այս վերջին տարիներս միայն պատմադէտներ, ուղևորներ, վիճակագիրներ աւելի մօտէն սկսան քննել երկիր մ՝որ թէև Եւրոպայի մասը կ՝կազմէ, բայց անծրմէ շատ կ՝զանազանի, իր կառավարական, ընկերական, կրօնական և ընտանեկան կեանքովը։

Այս զանազանութիւնները քիչ շատ նշանակող գրուածոց մէջ նշանաւոր է Ռուզիէն Պիօտրովսքիի յիշատակը, լեհացի աքսորականի մը գործն, որուն մէջ անկողմնակալ ոգւով և արտաչարժ ոճով կ՝նկարագրէ իր տարագիր կենաց տառապանքը, իր հայրենի եղեռնն, իր ընթանալի փախուստն, և այս առթիւ կ՝բացատրէ Ռուսիոյ ներքին հիմարկութիւններն ու վարչական մեքենան որ ճնշայն կ՝փչրէ իր անիւին ներքև ընկած որսերը։ Պիօտրովսքի ոչ միայն գործող այլ և գրող է, և իր Յիշատակը՝ թէև տոյդ՝ վիպական գոյն մ՝ունէն, վասն զի մեր ընկերութեան անսովոր իրողութիւններ կ՝պարունակեն։

Պիօտրովսքի՝ իր աքսորականի պատմութիւնն 1848ին գրած և 1861ին հրատարակած է լեհերէն լեզուաւ։ Եօթ հատորէ կ՝բաղկանայ, բայց Պ. Ժիւ-

լիան Կլաբբօ համառօտագրելով՝ Երկու աշխարհաց հանդէսին մէջ (Revue des deux mondes) Առաջին անգամ հրատարակած է Ֆրանսերէն և 1873ին՝ յատուկ գրքի ձևով նոյն գործը լոյս տեսած է Հաշէդի տպարանը՝ Յիշատակը Սիպէրիականի մը անուամբ։ Ահա այս թարգմանութեան վրայ հայերէնն ընելով՝ կ'ներկայացնեմ հայ ընթերցասէրներու, որոց թերևս օգտակար լինի այս գործն, եթէ իբրև վէպ չկարդան, այլ իբրև ճշգրիտ նկարագիր, ճիշդ այն միջոցին որ առ հասարակ շատեր թիւր ու շփոթ գաղափարներ կ'տածեն Ռուսիոյ ներքին վիճակին վրայ։ Արդարև երեսուն հինգ տարի առաջ գծուած պատկեր մ'է այս, սակայն ներկայ վիճակին հետ ճշգրիտ բաղդատութիւն մը պիտի ցոյց տայ թէ աքսորականին գրքուած քն հին պատմութիւն չէ, և թէ ինչպէս՝ շատ տեղ՝ ներողամտութեամբ և մարդասիրութեամբ իսկ կ'խօսի այն հիմնարկութեանց վրայ, որ զինքն անհնարին տառապանաց և իր հայրենիքը գերութեան դատապարտած էին։

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

Օմիւռին, 13 յունվար 1879

ԾՊԱՖԱԿ

Լեհաստանի մէջ խօսք մը կայ, որմէ աւելի գերազանցը չէ գտած երբէք մարդկային ճարտարախօսութիւնը յուսաբեկ վիճակ մը նկարագրելու համար։ Այս խօսքն է, «Ուրիշ անգամ չպիտի տեսնո՛ւինք» զոր սովորաբար ամէն քաղաքական դատապարտ կ'ուղղէ իր ընտանիքին, իր բարեկամներուն երբ կ'ուղևորի դէպ 'ի Սիպերիա։ «Ո՜րքչ անգամ ալ՝ դեռ տեսնուինք . . .» որովհետև ուրիշ հնար չկայ որ այս սիրայօդ արարածները իրար տեսնեն և գրկեն, բայց եթէ օր մը նոյն տանջանաց վայրը յանկարծ իրարու հանդիպելով, ա՛յնքան խորին համոզում մը կ'տիրէ որ եթէ մէկը աքսորուի այն վշտաց աշխարհը, ուրիշ անգամ չպիտի տեսնի, ուրիշ անգամ Սիպերիան իր որսը չպիտի թողու։ Մէկ դարէ աւելի է որ Սիպերիան կ'կորզէ Լեհաստանէն՝ իր ամենէ ազնիւ զաւակները, իր ամենէ ժրաջլոխ և անձնազիր կանայքը։

Եթէ Լեհացի մ'ուզէ իր ընտանիքին յիշատակները միտքը բերել, իսկոյն այս ձիւնապատ և արիւնաթաթաւ երկիրներն իր աչքին կ'ներկային, եթէ բանաստեղծն անգամ՝ իր հայրենեաց համար ազատութեան և երջանկութեան ազագայ մ'երազէ՝ նորէն իր առջև կ'կանգնի ահռելի Սիպերիան, որ յաղթելէն ետև դարձեալ զոհեր կ'պահանջէ։ Ո՛ խորհրդաւոր ու նգաւոր երկիր, «Ո՛ մահատու աշխարհ, ուսկից մարդիկ չեն դառնար» ինչպէս կ'ըսէ լեհացի գիւղացին և ինչպէս Համլէդ ևս ըսաւ ուրիշ երկրի մը համար որ ա՛յնքան նման է սակայն մեր ակնարկած աշխարհին։ Անդրանելի աշխարհ, որուս սահմաններէն երբէք ղրուանար ասլե՛ր մը . . . :*

Բայց երբեմն նոր Զարի մը (թագաւորի) դահակալութեան պատճառաւ, երբեմն մանաւոր թողութեան շնորհիւ (որ թէև անկատար՝ այլ միշտ ընդհանուր թողութիւն կ'կոչուի) դէպ 'ի իրենց սգալից ընտանիքները կ'վերադառնան այն տարագիրները, որոց կեանքն չէ սպառած, սիպերիական տանջանքի մէջ։ Այս դէպքը

*The undiscoverd country, from whose bourn no traveller returns - - -

A. DEVEJIAN LIBRARY
NEW YORK
Ա. ՏԷՎԷՃԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

պոնէ ամբողջ դարու մէջ երկու անգամ պատահած է, այն է Պողոս Ա. և Աղեքսանդր Բ. գահակալութեան առթիւ, իսկ Նիքոլա կայսրը երբէք այսպիսի անյիշաչարութեան ակարութիւն մը չէ ունեցած։

Պատահած է երբեմն ևս բայց շատ քիչ անգամ, որ թախանձանք, աղաչանք և մի քանի տարուան անդուլ ջանք, նոյնպէս բարձրասիճան պաշտօնատարի մը պաշտպանութիւնը կարող եղած են աքսորականը դարձնել Սիպերիայէն։ Վերջապէս, տեսնուած է որ աքսորական մ'առանց յուսալու և սպասելու ընդհանուր կամ մասնաւոր թողութեան և միայն իր անվեհեր ոգւոյն և եռանդին ապաւինելով ազատած է սոսկալի ճակատագրէն և սառնապատ Սիպերիայէն, խոյս տալով նորէն լուսոյ և կենդանեաց աշխարհն երևցած է, բայց այս անակնկալ երևոյթն ալ մէկ դարու մէջ երկու անգամ պատահած է։

Այս սիպերիական գերեզմանէն դարձողներէն ոմանք՝ զրոյցներ աւանդած են իրենց տխուր տարագրութեան ընակարանին վրայ, ոմանք գրաւոր տեղեկութիւններ թողած են նոյն տեղեաց վրայ, որոնք յետոյ երկիւղածութեամբ ժողովուելով կազմած են Լեհացւոց գրականութիւնը, այն Սէպերեանց գրական ժողովածոյքը որ արդէն բաւական հարուստ է, և թէպէտ առարկան մի և նոյն Սիպերիան է, բայց անպակաս են և նորանոր դէպքեր։

Արդարև՝ ո՛րչափ տարօրինակ են Պարի զինուոր Բենիովսկիի արկածները որ, Կամչատքա տարագրուելով, տեղացի վայրենիներէն ապստամբներու ահագին բանակ մը կազմեր, երդում առնել տուեր է հաւատարիմ մնալու Պարի դաշնակցութեան, ասոնց հետ Պեհրինկայի կիրճէն անցեր, Մատակասքարը նուաճեր, և անոր գերիշխանութիւնը Ֆրանսայի թագաւորին մատուցեր է։ Բոլորովին տարբեր են Կոպեց զօրապետին պատահարները, որ քանի մը տարի յառաջ դարձեալ Սիպերիա աքսորուեր էր։ Թէև հլու, համբերող և իր բոլոր աքսորի մէջ զուարթ էր, յանկարծ խելքը թռուց, երբ իմացաւ թէ արդէն իւր ազատութեան ժամը հնչեր է։ Ո՜հ, այս անյուսալի ուրախութիւնը շատ սուղի նստաւ անոր հոգւոյն, իր բանականութեան աղօտ նշոյլներով միայն իր հայրենիքն հասաւ, և հազիւ թէ զգաստու-

թեան մի քանի վայրկեան ունեցաւ իր տառապագին անցեալին վրայ քանի մը մեղմ և քաղցր էջեր աւանդելու։ Այնքան անյոյս է Սիպերիոյ աքսորեալի մ'ազատութիւնն որ ազատութեան համբաւն անգամ կարող է սիրտը շփոթել և բանականութիւնն այլայլել։ Ողորմելին Ատոլֆ Եանուցկիէվիչ՝ երբ Լիթուանիա դարձաւ, անընդհատ երեսուն տարի, նշանակեց ամէն օր իր պառաւ մօրը համար, անապատներու մէջ վարած կենացն ամէն մէկ դէպքը՝ Կիրկիզներու կամ Խրխզներու մէջ։ Եանուցկիէվիչի եղբօր դրածներէն նոր կ'իմանանք այս օր թէ, ի՛նչ արիութիւն և ի՛նչ որդիական սէր կրած է իր սրտին մէջ ողորմելին Ատոլֆ։ Ուրիշ շատեր լռելութեամբ կ'անցնինք, բայց չենք կարող չյիշել Եւա Ֆելինսկայի գիրքը, այն վեհանձն և մեծ քրիստոնեայ տիկնոջ՝ որ Նիքոլա կայսեր խստասրտութենէն տարագրեցաւ 'ի Բերիզով, Եաղուտներու և Օսդիակներու մէջ բնակելու, այն անուանի տիկինն՝ որոյ որդին* այսօր Վարշաւիոյ արքեպիսկոպոսութեան գահը եղած է։ Տիկին Ֆելինսկայի յիշատակագիրը գեղեցիկ է և սրտակիր, մանաւանդ անոր համար որ ոչ միայն ամբաստանութենէ և դառնութենէ ազատ է (ուրիշ սիպերիական յիշատակարաններու նման) այլ և կանացի ընտիր պատկառանօք կ'սքողէ իր անձնական աղէտները։ Տիկին Ֆելինսկայի գիրքը կարդացողն անշուշտ պիտի կարծէ թէ անմեղ ժողովուրդներու մէջ թափառողպարդ աղքատախնդիր անձի գրուածը կ'կարդայ, եթէ երբեմն երբեմն մայրական աղաղակները լսելի չլինէին, թողած զաւակները խնդրելով, և չյայտնէին որ անոնցմէ ամենայն հեռացող փափկասիրտ մօր մը տրտունջներն են և ոչ թէ ինքնակամ բաղդախնդրի մը։

Օր մը Բերիզովի մէջ հոր փորելու ժամանակ՝ դիակ մը կ'գտնուի իր փայլուն համազգեստով և շքանշաններով, որ սառնապատ հողին շնորհիւ այնպէս մնացած էր՝ ինչպէս երեկեան մեռեալ մը։ Երկար ատեն խուզարկելէն և յիշատակներ քրքրելէն ետև՝ կ'հաստատեն թէ Իվան Մէնշիքովի դիակն է, որ մեզմէն մի դար յառաջ մեռեր էր իբրև աքսորեալ երկար ժամանակ նախարարներու և Ցարերու սիրելին և մտերիմը լինելու մի քանի վայրկեան ունեցաւ։

*1862 թուականին համար կ'խօսուի։

լէն եաև։ Տիկին Ֆէլինսկան՝ այս անակնկալ երևոյթին վրայ, բաւական կ'սեպէ միայն այս խօսքն ըսել «Ի՞նչ տարօրինակ դիպուած» և կ'թողու որ ընթերցողը ինքնին մտածէ թէ ի՞նչ սրտառուչ տեսարան է այս, որ լեհացի տիկին մը նոյն աքսորանաց տեղն կ'տեսնէ իր առջև այն մարդու դիակն, որ առաջին անգամ սարմատական հողը կոխեր էր անպատիժ։

Աքսորի գրուածներէն ամենէ նոր ու նշանաւոր հրատարակութիւնը Պ. Ռուֆին Պիօտրովսկիի յիշատակարանքն են այս մակագրով ՊԱՄԻԱՏՆԻԿԻ ՌՈՒՖԻՆԱ ՊԻՕՏՐՈՎՍԿԱՕԼՕ, տպագր. 'ի Պօզէն 1861։ Այս գործը նշանաւոր է և քննասիրութեան արժանի, ո՛չ միայն իր ճոխ ու մանրապատում ոճին, ընդարձակ և սրտաշարժ ձևին համար, այլ մանաւանդ հետաքրքրաշարժ է այն պատճառաւ որ հեղինակը ֆոխած սիպերիական մ'է։ Բենիովսկիէն ետք միակ օրինակն է Պ. Պիօտրովսկին, որ անվեհեր փորձեց աքսորանքէն խոյս տալու և յաջողեցաւ։ Բայց Բենիովսկին ուրիշ դաւակիցներ և օգնականներ շատ ունէր, և ազատութեան երկրէն այնքան հեռու չէր, մինչդեռ մեր ժամանակակիցը՝ Պիօտրովսկի՝ միայն իր անձին ապաւիններով կարող եղաւ բոլոր Սիպերիոյ և եւրոպական Ռուսիոյ մեծ մասէն անցնիլ, հետիոտն տաժանելի հեռաւորութիւններ չափել արևմտեան Սիպերիոյ մէջ (Օմսք գետի միւս կողմէն) Ուրալ լեռներու գագաթներէն անցնիլ և մտնել Արքանգէլ, Բեղրասուրկ, Ռիգա և մինչև Բրուսիա, առանց աչխարհացոյցի, առանց օգնականի, գրեթէ առանց ստակի, իր գալոշները և ո՛չ մի էական յայտանելով փախուստի ժամանակ, որպէս զի իր պատճառաւ ուրիշներն ալ իր բարեկամ և սոսկալի բաղդին չմիճակին։ Եթէ Պ. Պիօտրովսկու դրուածը չունի այն միապատանական փայլն զոր աւանդած է Պարի դաշնակից Բենիովսկին, դէթ այնպիսի մեծամեծ վտանգներ, այնպիսի հայրենասիրական զգացումներ և կամաց հաստատութիւն կ'նկարագրէ որ ամէն բան կ'գերազանցէ։ Հրաշալի մասն ևս պակաս չէ այս տարօրինակ ոգիականին մէջ, թէև դիւցազնը դիցազանական էակ մը չէ, այլ էապէս կայ և կ'ապրի մեր մէջ և մենք ամէն օր կ'վայելենք անոր մտերմական սէրը։ Իրաւի գետի ափերէն փախած այս եղեռնաֆոր, այս վաղեմի Ինսուրգանը (Սիպերիոյ տե-

զական բնակիչները այսպէս կ'անուանեն ամէն լեհացի աքսորական) հիմակ համեստ դասատու մ'է Պատինեօլի ընտիր դարոցին մէջ, որու համար լեհացւոց գաղթականութիւնը մասամբ շնորհապարտ է Ֆրանսայի վեհանձնութեան։

Պ. Ռուֆին Պիօտրովսկին այն դիւցազուն պատուիրակներէն կամ գաղտնի գործակալներէն մին է, որ լեհական գաղթականութեան մէջէն կ'երթային իրենց հարստահարեալ հայրենեաց յոյսեր, գաղափարներ և տարագիր ազատութեան նշաններ հաղորդելու։ Իր պատմութիւնը կ'սկսի այն ճանապարհորդութեան առաջին օրէն, երբ ելաւ 1863ին Բարիզէն՝ Պատոլիայի Կամենից քաղաքը երթալու։ Բայց, աւա՜ղ, այս գործակալները շատ անգամ իրենց հայրենակիցներուն անգործադրելի ծրագիրներ, անխորհուրդ բողոքներ, և երբեմն նաև վտանգաւոր գաղափարներ կ'հաղորդէին, և եթէ միշտ մահուան տանջանքը դիմագրաւելով անվեհեր իրենց սխալմունքը կ'քաւէին, իրենց դժնդակ վիճակին մասնակից կ'ընէին նաև շատ վեհանձն ու անօգուտ զոհեր։ Պ. Պիօտրովսկի գոնէ այս մխիթարութիւնն ունի, որ թիւր վարդապետութեան առաջնորդ չէ դարձած, և երբէք առելութիւն չէ սերմանած։ Իբրև գործակալ՝ իր ընթացքը միշտ փայլեցաւ կրօնական մարդասիրութեան զգացմունքով, և ինքն միշտ ետ կեցաւ ռամկավարական կանոնապահութեան տխուր խորհուրդներէն։ Նոյն կրօնական զգայուն հոգին կ'պատկերանայ նոյնպէս իր գրքին մէջ, գիրք մ'որ թէպէտ շատ տարիներէ 'ի վեր գրուած է, բայց հրատարակուեցաւ 1861ին, վասն զի արդէն ամենուն յայտնի է թէ ի՞նչ մեծ արգելքներ կան լեհական գրուածներու հրատարակութեան համար։

Այն միջոցին որ անդադար կ'խօսուի Լեհաստանի ազէսից և սիպերիական դատապարտութեանց վրայ, և թէ ի՞նչ սոսկալի մեքենաներ կ'հրատարակուին արժանաւոր քաղաքացիներու դէմ, կանոնիկոսներու դէմ, վարդապետներու դէմ, առաջաւոր վաճառականներու դէմ, հայրենասէր ուսուցիչներու և եռանդուն ուսանողներու ու գործաւորներու դէմ, կարծեմ թէ անօգուտ չլինիր կենդանի օրինակով բացատրել թէ ի՞նչ կ'նշանակէ Լեհաստանի համար այս պարզ խօսքը Տաքտիքա-

ՐԻՆ։ Կ'յարենք նաև որ այս պատմութիւնն ամէն մասամբ ճշմարիտ է և իրական։ Պ. Պիօտրովսկու նկարագիրն ճշմարտութեան և աղնուութեան կնիքը կ'կրէ, որ իր դատին նպաստաւոր է, և ամէն չափազանցութեան կասկած կ'փարատէ։ Ասկէց զատ՝ ամէն ընթերցող պիտի տեսնէ, որ հեղինակը երբէք չամբաստաներ մարդիկը, ընդհակառակն՝ շատ անգամ երախտագիտութեան վառվռուն զգացումներ կ'յայտնէ. միմիայն դրութիւնը կ'դատապարտէ և ո՛չ մարդիկը, այնպէս որ Պիօտրովսկիի հայրենակիցներն և մանաւանդ իր դժբաղդութեան ընկերակիցներն՝ որ անոր պատմածներուն կատարեալ վաւերականութիւնը միաբան կ'խոստովանին, շատ անգամ կ'յանդիմանեն զինքն որ չափազանց ներողամտութեամբ գրած է։

Քանի՞ քանի լեհացիներ զարմացած են այն պատկերի վրայ, զոր գծած է Պիօտրովսկին, իշխան Բիբիկովի և Պ. Պիսարէվի մասին, մարդիկ, որոնց անունները ամբուր գոյներով դրոշմուած են արդի Լեհաստանի վշտալի տարեգրութեանց մէջ։ Անօգուտ կ'համարինք քարոզել համոզում մ'որ ինքնին կ'ծնի, Պ. Պիօտրովսկու յիշատակարանը կարդացողին մտքին մէջ, և միայն կ'դիտենք՝ թէ ի՞նչ դաղտնիք ունի հայրենասիրութիւնն, ի՛նչ հաստատամտութիւն և ի՛նչ եռանդ կարող է բորբոքել մարդուս սրտին մէջ, և ո՞րքան աչքեր կարող է արտասուքով մթագնել. չենք ուզեր մեր կողմէն գովեստ կարդալ՝ թէ ի՞նչ հրաչքներ կարող է գործել հայրենասիրութիւնը ու աղատասիրութիւն, այլ միայն կ'ուզենք բացատրել թէ ի՞նչ կերպով Պ. Պիօտրովսկիի ընդարձակ դրուածքն քաղուածներ ըրինք։ Գործին բնատիպ ու անհատական արժէքը պիտի նուազէր՝ եթէ պարզ վերլուծութիւն մ'ընէինք։ Այս տեղ աւելի յարմար դատեցինք մեծ ու մանրապատում դրքի մը ճշգրիտ համառօտագրութիւնն ընել, և եթէ ներելի է Բասգալայ ազգու բացատրութիւնը գործածել, անդնդոց համաՀոպաՀՀԷ պոռկերը, վասն զի Սկպերէոյ ատոորեալ յէշպոկէը աղէտից ու թշուառութեանց ճշմարիտ անդունդ մը կը ներկայացնէ։

ԹՈՒԼԻԱՆ ԿԼԱՍՔՕ

ՑԻՇԱՏԱԿՔ

ՍԻԳԵՐԻՈՅ ԱՔՍՈՐԵԱԼԻ ՄԸ

ՄԱՍՆ Ա.

Ա

Ա-ՈՒԵԼՈ-ՐԻՆ Տ'Է ԼԵՀԱՍՏԱՆ ԵՒ ՐՈՍՈՍՈՅ ԲԱՆԴԵՐԸ։

Երկար ժամանակէ 'ի վեր որոշեր էի ճամբայ ելնել դէպ 'ի հայրենիք, և միայն պէտք եղած պատրաստութիւնը տեսնելու հոգն ունէի, երբ յանկարծ հիւանդ ընկայ Բարիզի մէջ։ Այս պատահեցաւ 1842ին վերջերը։ Ձիս տարին Գրո-Ռեան հիւանդանոցն որու վերատեսուչն էր Լիսֆրանկ սեպուհը։ Այս մարդն երբեմն Լեհացւոց հետ կայսերական պատերազմներու մէջ գտնուեր և միշտ անոնց համար սիրագին զգացմունք տածեր էր։ Այս հիւանդանոցը կային ինձի հետ մի շատ հայրենակիցներ և աքսորակիցներ որ որս ընկեր էին կամ մանչղական կամ մտացնորութեան ախտին որ տարագիրներու համար ընդհանուր հիւանդութիւն դարձեր էին։ Շատեր մեռան իմ սենեկիս մէջ, իմ մօտս, և այս տեսարանն շատ կ'դառնացնէր սիրտս, վասն զի այս թշուառները կ'մեռնէին անտարտունջ այլ խորին վհատութեան մէջ։ Կարծես թէ այս աշխարհն թողլով նա-

խաղդացմունք մը կ'կրէին ողորմելիներն, իբր թէ միւս աշխարհին մէջ ևս հայբենիք չպիտի ունենային, վասն զի օտարութեան մէջ կ'մեռնէին և չէ թէ իրենց հայրենեաց ծոցը:

Սակայն իմ այս բնակութիւնս հիւանդանոցը խորհուրդներուս համար շահաւէտ եղաւ. այս տեղ բարեկամանալու բաղդն ունեցայ ուրիշ հիւանդի մը հետ, բնիկ Ամերիկայի Միացեալ-Նահանգաց, և խոստացաւ անցագիր մը ճարել ինձի համար որ ամենէ կարևոր բանն էր իմ ձեռնարկութեան, թէև տակաւին ձեռք բերած չէի:

Անշուշտ իմ նպատակս անոր չյայտնեցի, այլ միայն այսչափ ըսի որ անսահման իրաւունիմ նորէն հայրենիքս տեսնելու: Վեց շաբաթէ ետք թողուցի հիւանդանոցը, ուսկից ամերիկացի ընկերակիցս իսկէ քիչ մ'առաջ ելեր էր դացի գտայ իմ բարեկամս իր տուած հասցէով և որդարև անկիլիական անցագիր մը հանեց այս անունով. Կամբրէ Կամբրէ, Քնիկ լա Վալէրի (Մալթա) երեսուն ելեց դոլարեկան:

Անցագիրս շատ կանոնաւոր էր, Բարիզի անկիլիական դեսպանատունէն հանուած էր Կոստանդնուպոլիս երթալու համար, և ըստ Գօվիէյ դեսպանն իր կնքով զայն վաւերեր էր: Ես տակից աւելին չէի փափաքեր: Իմ վիճակիս համար անկիլիական անցագիր մ'որ և է ուրիշ անցագրէ նախապատիւ էր: Ես Իտալերէն շատ լաւ գիտէի, բայց անկիլերէն շատ վատ կ'խօսէի, ուստի Մալթէզ լինելս (ըստ անցագրին) այս պակասութիւնս կը ծածկէր: Պատի, Վիւրթեմպերկի, Պատիէրայի, Աւստրիոյ և Թուրքիոյ տեսագիրերն (visa) շուտով կոխուեցան, բայց արտաքին գործոց պաշտօնէութեան կնիքին մօտ՝ երկտող գրուած մը կար, որ սա գժնդակ խօսքը կ'պարունակէր. «Պէտք է ցոյց տալ ոստիկանութեան վերատեսչին»: Իսկ ես բանաւոր պատճառներ ունէի իմ ուղևորութիւնս չմատնել ոստիկանութեան, որ թերևս աւելի հետաքրքիր լինէր քան իմ ամերիկացի բարեկամս: Երկար ժամանակ գլուխս մաշեցի որ անցագրիս աղետաբեր տողերը անհետացնեմ և հնար մը միայն գտայ, այսինքն մելան թափել այն երկու տողի վրայ և բծաւորել, անվթար թողլով միայն պաշտօնէին կնիքը: Այս հնարը շատ դուեհիկ էր անշուշտ, բայց բաւական

օգուտ քաղեցի, և բազմաթիւ ոստիկաններէ, որոց անցագիրս պիտի ներկայացնէի, և ոչ մին կասկածի դնաց այն անշահ բիծերուն վրայ:

Երբ այսպէս ապահովեցի անցագիրս և ճամբու պիտոյից համար ալ հարիւր յիսուն Ֆրանքի գումար մը ճարեցի, ելայ Բարիզէն 9ն յունուարի 1845:

Սդրազպուրկէն, Շթութկարտէն, Միւնիխէն, Սալցպուրկէն և Վիէննայէն անարգել անցնելով՝ զարկի դէպ 'ի Բէշթ: Իմ պաշտօնիս օգուտը կ'պահանջէր որ ամբողջ ամիս մը մնամ Մահմատստանի սոյն մայրաքաղաքը: Այս բնակութենէս օգուտ քաղելով՝ դիմեցի Վիէննայի անկիլական դեսպանին և խնդրեցի որ անցագիրս նորոգէ, որովհետև նպատակս էր ուղղակի Ռուսիա և ոչ Կ. Պոլիս երթալ և բաւական երկար ժամանակ մնալ այնտեղ: Խնդրոյս կատարումը չուշացաւ, վասն զի քանի մ'օրէն եռք՝ հինին տեղ մի նոր անցագիր ստացայ Վիէննայէն, նոր ամսաթուով՝ Ռուսիա երթալու համար, մանաւանդ մի կողմէ ևս բաղդաւոր էի որ նորը զերծ էր առաջին անցագրի ահագին բիծերէն: Փետրվարի 28ին թողուցի Բէշթ և ուղևորեցայ Պատօլիոյ Կամենից քաղաքը, որ ճամբորդութեանս նպատակն էր:

Թէպէտ շատ անտեսութեամբ կ'ապրէի, բայց Բարիզէն առած ճամբու չափաւոր գումարս կ'հատնէր, ուստի որոշեցի Մահմատստանէն ոտքով ուղևորիլ մինչև Պատօլիա: Եղանակը նպաստաւոր էր, դաշտավայրը սքանչելի և Կարպատի լեռներու տեսարանները մոռցնել կը տային ինձ յոգնութիւնս: Տարօրինակ և երբեմն զուարճալի դէպքեր մը կ'զգայի, երբ Կալիցիայէն անցնելով՝ կցկտուր գերմաներէն կ'խօսէի մի քանի աւստրիական զորձակալներու, մինչդեռ՝ գեղացիներն լեհերէն կ'խօսէին հետս և մանր տեղեկութիւններ կ'հաղորդէին, և ես այնպէս կ'ձևանայի, որպէս թէ չեմ հասկընար: Մեր գեղացիները շարունակ կատակներ կ'ընէին համբ մարդոն վրայ և իմ ծիծաղս կ'շարժէին, սակայն երբեմն ալ կ'յարգէին և կ'պատուէին զիս իբր հեռու աշխարհէ հասնող օտարական մը: Իրարու կ'ըսէին «Կ'երևի որ հեռու աշխարհէ կ'գայ այս մարդը, շատ հեռու, թերևս այն աշխարհէն ուր ադռաւներն անգամ ճու չեն ածերն»: Վերջապէս 1845ին մարտ ամսուն գեղեցիկ առաւօտ մը՝ ես կ'գտնուէի արդէն Պոյեանի դիւղաքա-

ջաքի մօտ, այսինքն այն սահմանին վերայ, որ աւստրիական պետութիւնը կ'բաժնէր ռուսական պետութենէն։ Սահմանագլխին վրայ երկու մեծաւոր պահակաղռներ կային, իրարմէ տասն քայլ հեռու։ Երբ թղթերս ցոյց տուի, առանց դժուարութեան աւստրիական պահակաղուռը բացին և անցայ, բայց երբ ռուսական պահակաղուռը հասայ, կոչեցի և ամէն կողմնայեցայ, ոչ ոք երևցաւ, կոչելէն և սպասելէն ձանձրանալով խոնարհեցայ, փակակալ գերանին տակէն անցայ և դիմեցի դէպ 'ի մերձակայ տունն, որ կ'երևէր թէ մաքսատան պաշտօնատեղին է։ Շատ զարմացան երբ տեսան որ նոյն տեղը հասած եմ առանց զինուորի ուղեկցութեան։

— Ո՞ւսկից և ի՞նչպէս անցար սահմանագլխէն։

— Ահա այն պահակաղռնէն։

— Ո՞վ բացաւ դուռը։

— Ո՛չ ոք, 'ի զուր կոչեցի և մարդ չտեսնելով ինքնին անցայ։

— Ի՞նչպէս, միթէ պահապանն իր տեղը չէ՞ր։— կոչեց մաքսատան պաշտօնաւորը և զայրագին կատաղութեամբ դուրս վազեց հրաման տալու։ Այս մարդուն սպառնական շարժումը ցոյց կ'տար թէ ի՞նչ էր նպատակը։ Վերջին սենեակը դարձաւ և մնացած զայրոյթը վրան թափեց, բայց երբոր անկլիական անցագիրս տեսաւ շուտ մը բարկութիւնն իջաւ։

Երբոր թղթերս կ'զննէին և անձիս ու ճամբորդութեանս նպատակին վրայ զանազան հարցմունք կ'ընէին, հեռուէն ողբրմելի զինուորին աղաղակները կ'լսուէին որ ծեծ կ'ուտէր իր զանցառութեան և թերևս իմ շտապելուս պատճառաւ։ Վերջապէս ելայ պաշտօնատունէն գոհ սրտով այլ դառն մտմտուքով։ Իրօք խորհրդաւոր բան մը կար այս դիպուածին մէջ, վասն զի հապա մտայ Նիքոլա կայսեր երկիրը և առաջին քայլէն ռուսական պահպանութիւնն պակասաւոր գտայ, բայց նոյն միջոցին, թէև ակամայ, թշուառ զինուորին գանակոծութեան պատճառ եղեր էի։ ուստի սիրտս կ'ճմլէր։

Մարտի 22ին կէսօրուան ժամանակ հասայ Կամենից։ Մէկ ձեռքով բռնած էի պայուսակս, իսկ միւսով բացի իջևանի մը դուռն, ներս մտայ, և մեծ բազմութիւն գտայ այն տեղ։ ընդարձակ սրահի մէջ ֆնդամաշ (billard) կ'խաղային։ Թէպէտ հակառակ էր մեր սովորութեան։

բայց դիտմամբ գլխարկս վառ չառի, և այս նշանով շուտ մ'ընդունեցին զիս իբրև օտարական, իբրև Ֆրանսացի, որովհետև այս երկու բառերը կարծես թէ նոյնանշան են մեր մէջ։ Բաւական հետաքրքրական էր սրահին մէջ անցած շարժումը։ Ֆրանսացի։ Ֆրանսացի մը, կը փսփսային ամէն կողմէ ակնածելի և համակիր ձայնով մը, բայց կ'երկնչէին, որ անզգոյշ խօսք մը կամ պարզ բարեկամական նշան մը յայտնելով՝ վտանգի չմատնուին։ Երկու հոգի միայն համարձակ մօտեցան ինձ և սկսան խօսակցիլ։

Առաջինը մի լեհացի էր Կրակովէն (որ Կամենիցէն պիտի անցնէր երթար) հետևապէս այնքան զգոյշ լինելու պէտք չունէր, իսկ միւսը ռուս զինուորական մ'էր, որ գնդախաղը թողուց՝ երբ մի քանի ֆրանսերէն խօսքս լսեց և իսկոյն ջերմ համակրութիւն յայտնեց ինձ։

— Արդեօք քիչ ժամանակ պիտի մնա՞ք այստեղ, հարցուց նա, օ՜հ կ'յորդորեմ ձեզ որ մնաք, ի՜նչ աղուոր երկիր, ի՜նչ գեղանի կիներ, բայց առաւել չքնաղ են Վարշաւի կիները ... ա՜խ, Վարշաւա՜, Վարշաւա՜, ի՜նչ երջանիկ օրեր էին այն օրերը երբ պահապան զօրաց հետ այն տեղ կ'գանուէի, ա՜յ քեզ չքեղութիւն, ա՜յ քեզ սիրուն և չքնաղ դէմքեր—։ Երիտասարդը գովեստներ կ'կարդար, բայց տաղտկալի և անտանելի էր ինձ լսել։ Զարմանալի՜ բան, Լեհաստանի հողը կոխեր, գլխաւոր քաղաքներէն անցեր և ուրիշ բան չէ՜ տեսեր, ուրիշ բան չէ գտեր գովելու այլ միայն մեր կիներուն գեղեցկութիւնը։ Կառավարութեան վրայ, լեհ բնակիչներու վիճակին վրայ, ժողովրդեան թշուառութեանց վրայ խօսք մ'անգամ չբերաւ։ Իր ուշը գրաւող միակ առարկան, գովեստի և խօսակցութեան արժանի միակ նիւթը լեհացուհիներն էին։ Բան մը միայն կարողեցաւ իր ուշը դարձնել այս սիրական առարկայէն, այն է երբ պատահմամբ Բարիզի վրայ սկսայ խօսիլ, իսկոյն հարցումներ ըրաւ Բարիզի կիներուն վրայ և կարծես թէ գոհ էր և թէ կ'զրգռէր իմ տուած պատասխաններէս։

Շատ բարի պատանի մ'էր այս Ռօքաչէվ զօրականը, որ առաջարկեց ինձ միասին ուտել պէրօգի (կարկանդակ) որ լեհական ազգային ուտեստ է, միանգամայն կատակ ընելով որ օտարականի ծանր շեշտով կ'արտասանեմ ես

պէրօֆէ բառը, սակայն շուտով իրաւունք տուաւ ինձ որ պիրօգներու համար ունեցած ախորժակս արտասանութենէս խիստ գերազանց է:

Մինչդեռ այսպէս սրահին մէջ վեր վար կ'քալէինք բարձր ձայնով խօսելով սնոտի բաներու վրայ, միւսներն որ առոյգ լեհացիներ էին, հեռուէն կ'փսփսային իրարու հետ, և երբեմն երբեմն հարցուփորձ կ'ընէին, և կողմնակի ակնարկ մը կ'ձգէին վրաս: Իրարու բոլորովին ներհակ էին անոնց զգուշաւոր և կասկածոտ դիրքը և բարեբաղդ Ռօքաչէվի բաց ու համարձակ ընթացքը:

Թէև խօսքս կ'շարունակէի ռուս զօրականին հետ, բայց միւս կողմէն կ'ջանայի նաև հասկնալ թէ՝ ի՞նչ կը խօսին արդեօք հայրենակիցներս իրարու հետ, և քանի մը կտոր խօսքեր լսեցի որ ասոնք են, «Ֆրանսայէ՞ն կը գայ այս մարդը, արդեօք մերայնոց վրայ տեղեկութիւն ունի՞, արդեօք Ֆրանսացիք մեր վրայ կ'մտածեն, արդեօք պատրաստութիւն կա՞յ», այս խօսքերուն վրայ սիրտս սաստիկ յուզուեցաւ, բայց որպէս զի յուզմունքս ծածկեմ, սկսայ աւելի վառվռուն կերպով խօսիլ ռուս զօրականին հետ Բարիզի դեղեցկութեան և շքեղութեան վրայ:

Խօսակցութիւնս կ'շարունակէի, միանգամայն զանց չընելով յայտնել թէ՝ Ռօքաչէվին և թէ միւսներուն, որ Կամենից գալուս նպատակը լեզուներ ուսուցանելու տեղ գտնել էր և աւելի լաւ կ'հասարիմ քաղքի մէջ բնակելու, և եթէ օգուտ մը տեսնեմ՝ պատրաստ եմ մինչև անգամ Միջին Ռուսիա անցնիլ: Հետևեալ օրը այս յայտարարութիւնը նորոգեցի ոստիկանութեան առջև անգամ, որովհետև կացութիւնս շուտով կանոնաւորել կ'արտօրայի: Առանց դժուարութեան թոյլատուին ինձ այն տեղ բնակիլ, իսկ մասնաւոր տուներու մէջ լեզուներ սովրեցնելու նպատակիս դալով յայտնեցին որ մի քանի արդելքներ կան, որովհետև պէտք է, ըսին, նախ խնդրագրով հրաման ստանալ դինուորական նահանգապետէն, բարձրագոյն դպրոցի կառավարչէն եւ:

Ռուս զօրականին և ուրիշ անձերու շնորհիւ, որոց հետ առաջին անգամ ծանօթացայ, շուտով դաս տալու արտօնութիւն ստացայ, թէև Ռուսաստանի մէջ մեծ արգելքներ ունի, մանաւանդ տեղացիներուն համար,

և իսկոյն ամէն կողմէ դաս ուզողները շատցան: Ես աւելի ռուս պաշտօնաւորներու տուներ կ'փնտռէի դաս տալու համար, վասն զի այս կերպով միայն կարող էի ամէն կասկած փարատել և հայրենակիցներս ալ վասնդի չմատնել: Առաջարկեցին ինձ Ռբազի տունը դաս տալ, շատ մեծ արժէք ունէր ինձի համար այսպիսի առաջարկութիւն մը, իսկոյն փոքր տարի այսպիսի պատեհ առիթ մը ձեռքէ չհանել, վասն զի Ռբազ զնդապետը ռուս պաշտօնաւոր էր, խիստ մեծ ազդեցութեան տէր և միանգամայն արքունի գանձուց խորհրդարանին նախագահ: Ի հարկէ չմերժեցի նաև լեհացի գերդաստաններու առաջարկը, բայց ջանացի այնպիսի տուներ գտնել ուր երիտասարդներ չկային, այլ միայն այրիներ և ծերունիներ, որոց մօտ աւելի ծածուկ կարող էին մնալ խորհուրդներս: Քանի մը շաբաթէն եռք կացութիւնս կանոնաւոր ընթացք մը ստացաւ և յարաբերութիւններս շատ տարածուեցան, այնպէս որ ակումներ ու ժողովներ կ'յաճախէի. բոլոր քաղքին մէջ հռչակ հանեց անունս իրրև Մօսիո Կաֆեարօ, որ այլ ևս չէին ուզեր Ֆրանսացի անուանել:

Այսպէս ահա տասներկու տարի Ֆրանսայի մէջ դաղթական մնալէ եռք՝ վերջապէս կ'դանուէի իմ հայրենեաց մէջ, իրրև Մալթէզ, իրրև Բրիտանիոյ հպատակ և իրրև ուսուցիչ օտար լեզուներու. հեռի չէի նմանապէս իմ ընտանիքէ որ Իւկրինի մէջ կ'բնակէր և այնպէս կը ցուցնէի որ բառ մ'անգամ լեհերէն և ռուսերէն չեմ հասկնար:

Այս վերջին պարագան շատ անգամ զգուշաւորութիւնս և անդորրութիւնս կ'վրդովէր. նաև ուսուցչութեան պաշտօնս աւելի կ'ծանրացնէր այս վրդովմունքս: Ո՜հ, քանի՛ քանի՛ անգամ մաղ կ'մնար որ դասախօսութեանս ժամանակ դժուարին ոճերն և տեղերը բացատրէի աշակերտներուս ա՛յն լեզուով ինչպէս անոնց նոյնպէս ինձ ծանօթ էր և ընտանի: Ո՜հ, որքան դժուարին է մարդու համար երկար ժամանակ ակամայ համր ձևանալ իր մայրենի լեզուին մէջ:

Առաջին աշակերտներէս մին էր Դմիտրենկօ, դանձատան գործակալ մը, զուարթ պատանի, որ յանկարծ խելքին փչեց իրմէ Ֆրանսերէն սորվելու, որու մէջ բնաւ տեղեկութիւն չունէր: Իրարու միտք հասկնալու

համար մեր ճարն հատնելով դասատուութեան ժամանակ, Դմիտրենկո առաջարկեց ինձ ռուսերէնի դաս տալ, (թէև ես շատ լաւ ռուսերէն գիտէի), բայց անկարող եղաւ գոնէ ուղիղ կարդալ սովրեցնել ինձ, և ասոր համար երբեմն զարմանալով կ'ըսէր ինձ. «Ֆրանսացւոց ուշիմութիւնը կ'գովեն, բայց կ'նայիմ որ շատ անընդունակ են»:

Հայրենակցացս մէջ ծպտեալ մնալովս շատ անգամ ներկայ կ'գտնուէի այնպիսի տեսարաններու որ սիրտս կ'յուզէին և պարկեշտ մարդու զգացմունքս կ'վիրաւորէին: Ակամայ խորհրդակից էի ընտանեկան յարաբերութեանց և մինչև անգամ գաղտնեաց զոր իրմէ պահելու համար լեհերէն կ'բացատրէին:

Բայց շատ ախորժելի չէր ինձ միշտ այսպիսի խօսակցութեանց հանդիսիլ, վասն զի երկու կողմէ ստիպուած էինք իրարմէ զգուշանալ, մինչդեռ մեր սրտի իրէնը նոյն էր, հայրենիքը նոյն, հայրենասիրութիւնը նոյն՝ որ մեր սիրտը կ'վառէր: Օրին մէկը այցելու մը մտեցաւ ինձ և իմանալով որ Բարիզէն եկած եմ, փափաքեցաւ լուր առնել իր եղբօր վրայ որ գաղթական էր նոյն քաղքին մէջ և զոր ես խիստ լաւ կ'ճանչէի, բայց տան տէրը իսկոյն այցելուն յետ քաշեց ըսելով, «Դու քաջ գիտես որ սաստիկ արգիլուած է գաղթական ազգականաց վրայ տեղեկութիւն ստանալ, զգուշացի՛ր, չգիտե՞ս որ օտարականի վրայ կարելի չէ վստահիլ»:

Արիւնս գլուխս թռաւ, և իսկոյն ծռեցայ առջևս դըտնուած գրքին վրայ զոր կ'թղթատէի:

Թող ներուի ինձ բան մ'ևս յիշել: Ես դաս կ'տայի Պիկուտովսկայ բարի և սիրուն տիկնոջ երկու աղջիկներուն: Միանգամ այս աղջիկներու հետ խօսելու ժամանակ, Լեհաստանին դպայ. գեղանի Մատիլտան վեհութեամբ պատասխանեց իմ անխորհուրդ խօսքիս, այնպիսի խօսքով մը զոր շատ անգամ օտարական մը կ'ուղղէ մեզ, չիմանալով թէ այն խօսքը խոր վէրք մը կ'արիւնէ: Մեծ քոյրը լեհերէն ընդհատեց անոր խօսքը և խստիւ ըսաւ.

«Ի՞նչպէս կ'յանդգնիս դու նուիրական բաներու վրայ խօսիլ ծանծաղամիտ Ֆրանսացիի մ'առջև»:

Այսպիսի դէպքեր գրեթէ ամէն օր կ'պատահէին ինձ, և երբեմն հաճոյք և երբեմն նեղութիւն կ'պատճառէին

ծրտիս: Շատ անգամ, մանաւանդ ռուս ընտանեաց մէջ համարելով զիս իբրև անտարբեր օտարական, այնպիսի դառն խօսքեր կ'խօսէին իմ ազգի և հայրենեաց վրայ՝ որ սիրտս կ'ճմլուէր և հոգիս կ'տագնապէր, սակայն ստիպուած էի ամէն բան լռութեամբ կլլել, իբրև սառնարիւն օտարական: Մանաւանդ Պ. Աբազի տունը այնպիսի տանջանքներ կ'կրէի, որոնց վրայ դըժուարին է դաղափար մը տալ:

Մեծ վտանգ կար ինչպէս ինձ նոյնպէս և ուրիշ անձերու համար եթէ կասկածէին որ ես տեղական լեզուն գիտեմ, ուստի ստիպուած էի սաստիկ զգուշանալ այս մասին, և այնչափ մեծ էր զգուշութիւնս որ քնացած ժամանակս անգամ կ'վախնայի որ չլինի թէ երազիս մէջ լեհերէն խօսք մը թռի բերնէս: Հետևապէս մոտակայ գիւղերը կ'հրաւիրուէինք՝ միշտ կ'ջանայի առանձին սենեակ խնդրել քնանալու: Զպատահեցաւ սակայն դիպուած մ'որ այս բռնած ընթացքէս զիս վրիպեցնէր, այնպէս որ ինն ամիս կարող եղայ Կամենից մնալ և երբեմն գաւառին մէջ կարճատև արշաւներ ընել առանց ոստիկանութեան ամենաթեթև կասկածը գրգռելու: Ինչպէս լեհացւոց՝ նոյնպէս և ռուսաց համար ես միշտ նոյն Մօսիւ Կաթարօն էի, անվնաս մարդ մ'որ ընկերութիւն կ'սիրէր և միշտ համակրութեամբ անոր մէջ կ'ընդունուէր: Իսկ իմ բնակութեանս բուն նպատակը և ճշմարիտ բնաւորութիւնս յայտնի էին միայն մի քանի հայրենակիցներուս, և այս գաղտնիքն ալ յետին ծայր զգուշութեամբ կ'պահէին: Ո՞վ կ'գուշակէր, ինչպէս որ վերջէն իմացայ, որ Բեզրզուրկէն պիտի գար ազգարարութիւնն, այնպէս որ Կամենիցի բնակիչները յանկարծ զարմացան իմանալով որ երկար ժամանակ նոյն քաղաքին մէջ պատսպարուած Ֆրանսերէն լեզուի դասատուն լեհացի հայրենակից մ'է, գաղթական մը, պատուիրակ մ'է . . . :

Սովորաբար կ'ըսեն որ մարդուս մէջ նախազգացում մը կայ սպառնացող վտանգը գուշակելու, ես այսպիսի դերբնական ձրից կարօտութիւն չունէի, որ դեկտեմբեր ամսուն առաջին օրերու մէջ պատահած սոսկալի վտանգը գուշակէի, վասն զի ամէն ժամանակ վտանգն առջևս էր, բաւական էր միայն որ աչքս բաց պահեմ: Արդարև՝ դեկտեմբեր ամսուն սկիզբը՝ յայտնապէս նըշ-

մալ եցի որ ամէն քայլի մէջ ոստիկանութիւնն ինձ հետ տամուտ կ'լինի և կ'լրտեսէ։ Այլ և այլ կողմէ ինձ հասած ազդարարութիւններն և ռուս պաշտօնաւորներու կէս մը հետաքննին և կէս մը զգուշաւոր ընթացքն իմ առջև աւելի հաստատեցին երկիւղս։ Շատ ուշ իմացայ որ ոչ թէ միայն իմ ընթացքս իմանալու պատճառաւ էր որ կ'յետաձգէին կալանաւորութեանս վայրկեանը, այլ անձիս վրայ որոշ տեղեկութիւն կ'ուզէին ստանալ, վասն զի կ'երկնչէին որ սխալմամբ ճշմարիտ անկլիացի հպատակ մը վտանգի չմատնեն, հզօր տէրութեան մը հպատակ որ այս պիսի գործերու մէջ կատակ չէր ընդուներ։

Սակայն շուտով ամէն կասկած փարատեցաւ և իմացայ ինչպէս իմ մօտալուտ կալանաւորութիւնը նոյնպէս և իմ ընելիք միակ որոշումս։ Այս միջոցին դեռ վախուստս անկարելի չէր, բայց կ'սոսկայի թէ ի՞նչպէս պիտի ազատիմ այն վտանգէն՝ որու ենթարկուած էին համախոհներս, որ ոչ կարող էին ո՛չ պարտաւոր աքսորանաց ճամբան բռնելու։ Նոյնպէս իմ պարտքս էր, ինչպէս անոնց՝ նոյնպէս և հաղարաւոր անմեղներու համար սխալմունք չգործել և անվնասիր մնալ հարցափորձի սոսկալի ժամուն։ Իրօք այսպիսի քաղաքական հարցաքննութեան ժամանակ ռուսական օրէնքով պիտի բանտարկուէին ամէն անոնք որ մօտէն կամ հեռուէն կասկածելի մարդուն հետ յարաբերութիւն ունէին։

Արդ՝ որովհետև ես թէ քաղաքի և թէ՛ շրջակայից բոլոր բնակիչները կ'ճանչէի, եթէ խոյս տայի բաղմաթիւ կասկածաւոր անձերու վիճակը պիտի ծանրացնէի։ Թերևս քննութիւնը տարի մը քշէր, թերևս երբէք չվերջանար։ Իմ ներկայութիւնս միայն կարող էր անհամար աղէտից առաջն առնուլ, և 'ի հարկին, գոնէ զոհերու թիւը նուազեցնել։ Ուստի որոշեցի համբերութեամբ սպասել աղետաբեր ճգնաժամին, և մնացած ազատութեան օրերս անցուցի համախոհներուս հետ մտածելով թէ ի՞նչ ընթացք պիտի բռնենք։

Ձերբակալ լինելէս մի օր առաջ, երեկոյեան ժամանակ եկեղեցւոյ մէջ տեսնուեցայ համախոհներուս մէկուն հետ, որչափ կարելի էր խօսեցանք և ամէն կողմէն համոզիա գտնուելով դրկեցինք զիրար և բաժնուեցանք։ Թէ ի՛նչ սրտաշարժ վայրկեան էր այս վայրկեանը զգայուն սրտի դիւրին է հասկնալ։ Երբ մինակ մնացի եկեղեցւոյ մէջ՝ ջերմաջերմ արտասուքներ սկսայ թափել և խնդրել Աստուծմէ որ կարողութիւն տայ ինձ այն տանջանքն ու փորձանքը կրելու, զոր առջևս կ'տեսնէի։

Ինչպէս ամէն ազգակից լեհացի, նոյնպէս և ես մայրական կրթութեամբ զարգացած էի կաթոլիկ հաւատոյ ջերմ զգացմունքներով, բայց այս համոզումն ժամանակ մը մթացաւ, և կ'յիշեմ տակաւին թէ երբ պատահեցաւ այս սխուր վայրկեանը և երբ խախտեցաւ հաւատս։ 1831ին լեհական փառաւոր ճակատամարտէն ետք՝ անցայ Կալիցիա Տվէրնիցկի զօրապետին զօրաբաժնի հետ։ Օր մը խոստովանանքի գացած ժամանակս Բերնարդեան կարգէն քահանայ մը՝ մարդասիրական ու աւետարանական գեղեցիկ խրատներ տալէն ետև՝ ըսկսաւ քարոզել որ Լեհական յեղափոխութիւնը մեծ յանցանք է, և երդմնազանցութիւն Նիքոլա կայսեր դէմ։ Այն սուրբ վայրը կ'արդիլէր ինձ պատասխանել քահանային, բայց ոտք ելնելով՝ կենացս մէջ առաջին անգամն էր որ ըսի մտովին —Քահանաներն ամէն ժամանակ ճշմարտութիւն չեն սորվեցներ և իրենց ցորենի հետ խառնուած է նաև շատ որոմն —։

Շատ ժամանակ չանցաւ, Ֆրանսա գնալով սկսայ այլոց պէս, կրօնական և քաղաքական նոր վարդապետութեանց ճաշակն առնել, արհամարհել կրօնական ծէսերն և գՅիսուս յարգել միայն իբրև մարդասէր անձ, և շատ շատ իբրև հանրավար մը։ Բայց այս տղայական հրճուանքը շուտով անցան, և Բարիզէն տակաւին հայրենիքս չդարձած՝ նորէն արծարծեցան այն զգացմունքն սրտիս մէջ որ առաջնորդեցին ինձ մանկութեանս ժամանակ և որ այժմ միակ ազդու ապաւէն ու նեցուկ պիտի դառնային ինձ պատրաստուած սխուր ճակատագրին մէջ։

4057
39

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՍԱՆԻՆ-ՍՈՐԱ,
Ս. Ա. Մաշտոցեան

Բ

1843 թուականին, դեկտեմբեր 31ի արեգակը դեռ չծագած՝ մէկը թեւս սաստիկ ցնցեց և իմ փոխնոմի անունս բարձր ձայնով գոչեց։ Թէպէտ արթուն էի բայց չփութացի պատասխանելու, վասն զի կ'ուզէի ժամանակ շահելով անվրդով կերպարան մը ցոյց տալ։ Վերջապէս երբ աչերս բացի, տեսայ որ սենեկիս մէջ կանգնած են ոստիկանութեան տեսուչ գնդապետ Գրիւնֆելտը, ոստիկան մը և հաղարապետ Պոլուտկովսկին, իշխան Բիբիկովի դիւանատան, որ Վօլնիոյ, Պոտոլիայի և Իւկրինի ընդհանուր նահանգապետն էր։ Հաղարապետը յատկապէս եկած էր Կիով քաղաքէն որ զիս ձերբակալէ։ Զարմանք յայտնեցի այս վաղահաս այցելութեան վրայ և բնապէս զարմանքս աւելցաւ երբ իմացայ թէ եկած են պահնորդներով զիս նահանգապետին առջևը հանելու։

Զմոռցայ յիշեցնելու որ ես անկլիացի հպատակ եմ, և թէ ի՞նչ ծանր պատասխանատուութեան տակ կ'ընկնային այսպէս անշահ ընթացք մը բռնելով ինձի դէմ։ Այս կարևոր զգուշութիւններն ընելէն ետք՝ խնդրեցի որ թոյլատան ինձ միւս սենեակը երթալ ու զգեստներս հագնիլ։ Երբոր կ'հագուէի, ոստիկանը կ'ժողվէր թղթերս և իրերս, ուստի իսկոյն ճամբայ ելանք դէպ 'ի նահանգապետ Ռատիշչէֆ զօրապետի տունը, զոր կ'ճանչէի երկար ժամանակէ 'ի վեր։ Այս առաջին տեսութիւնը թէ կարճ եղաւ և թէ անորոշ։ Նահանգապետը բարկացած դահլիճը մտաւ և սկսաւ հեռս ռուսերէն խօսիլ։ Ես այնպէս ցոյց տուի որ չեմ հասկնար, խնդրեցի որ ֆրանսերէն խօսի և հասկցնէ մանաւանդ կալանաւորութեանս պատճառը։ «Շուտով կ'իմանաս» ըսաւ նահանգապետը և ձեռքով նշան ընելով դահլիճէն հանել տուաւ զիս։ Այնուհետև զիս ոստիկանութեան տեսչի տունը տարին և դահլիճին մօտ՝ սենեկի մը մէջ դնելով դռները փակեցին և համազգեստ հագած մի պաշտօնական մօտս ընկերակից թողուցին խստիւ պատուէր տալով որ բառ մ'անգամ չուղղէ ինձ։

Մինչև այն վայրկեանն անտարբեր և բաւականին զարմացած էի թէ ի՞նչպէս արթննալէս 'ի վեր՝ այսպէս անխռով կ'գտնուիմ։

Բայց երբ մինակ մնացի, յանկարծ սաստիկ թոյլութիւն և սրտնեղութիւն զգացի, մանաւանդ քանի մը տածէի այն աղէտներուն վրայ՝ որ ինձ կ'սպառնային, և այն տառապանաց՝ որ իմ խեղճ և բազմաթիւ եղբարցս պիտի հասնէին, գլուխս կ'տաքնար, ուղեղս կը բորբոքէր և աչքերէս արտասուք կ'հոսէին։ Այս վտանգաւոր յուզմունքը ծածկելու համար երեսս դարձուցի իսկոյն և ճակատս պատին կռթնցուցի, բայց կարծես թէ նոյն ժամուն կ'լսէի այս պատին ետևէն դժբաղդ ընկերակիցներուս հառաչանքը ու հեծկլտանքը։ Ջանացի սրտնեղութիւնս սանձել և խաղի թղթեր նշմարելով պատուհանին մէջ, տուի և սկսայ անով զբաղիլ։

Իբրև Իւկրէնի զաւակ՝ ես քիչ մ'աւելորդապաշտ էի։ ուստի սկսայ թուղթ բանալ, որ կ'խոստանային ինձ . . . ազատութիւն։ Ի՞նչ ըսեմ, այս թղթերու գուշակութիւնն աւելի գրգռեց իմ զայրոյթս և չատ գոհ եղայ երբ ոստիկանութեան տեսուչը ներս մտնելով՝ հարցուց թէ ի՞նչ պէտքեր ունիմ, և իր հետը տարաւ այն փորձիչ խաղի թղթերը։

Քիչ մ'ետք խաղի թղթերուն պատճառած ունայն սիրփանքին յաջորդեց աւելի ծանր զբաղմունք մը։ Իմ վրայ հսկող պահապանին ուրիշ մ'եկաւ միացաւ և այսպէս սկսան խոսակցութիւն մ'որ բոլորովին անօգուտ չէր ինձի համար։ Ամէն մարդ այնպէս կ'ճանչէր զիս Կամենիցի մէջ և այնպէս համոզուած էր որ ռուսերէն և լեհերէն լեզուներուն անտեղեակ եմ, որ նոյն միջոցին իսկ այս երկու պահապանները դեռ օտարական համարելով զիս՝ բարձր ձայնով համարձակ ռուսերէն կ'խօսէին։ Յայտնի է թէ յետին ծայր ուշադիր էի այս խոսակցութեան։

—«Մեծ դատ է այս դատը, կ'ըսէր մին, քաղաքականութեան գործ։ Արդէն այսօր քաղքին մէջ քանէն աւելի մարդիկ ձերբակալ ըրին (անուններն ևս յականէ անուանէ կ'յիշէր) և հրամաններ ղրկուեցան նահանգն, և բոլոր այս բաներն սոյն օտարականին պատճառաւ եղան։ Կ'ըսեն թէ յատուկ պաշտօնով այս տեղ եկած է մեր Զարին դէմ դաւելու յօգուտ մեծ տէրու-

թեան մը, Ֆրանսայի կամ Անգղիոյ, սատանան գիտէ թէ ո՛րն է։ Աբաղի նախագահի համար ալ շատ լաւ չեն խօսիր, և մեղք պիտի լինի, վասն զի քաջ և ազնիւ մարդ է նա. բայց 'ի հարկէ միտք մ'ունէր որ իր մեծ հասակին մէջ ուզեց Ֆրանսերէն սորվիլ, շուտով պիտի քաղէ իր Ֆրանսերէնի օգուտը . . . ։

—«Ի՛նչ դժբաղդութիւն, ի՛նչ չարութիւն, պատասխանեց միւսը, երբոր այս պարոնը քաղաքն եկաւ, արդէն ինն ամիս կայ, հրաման տուին ինձ որ վրան հըսկեմ, ինչպէս որ կ'հսկենք ամէն օտարականի վրայ. միշտ հետը շրջեցայ, համարէ թէ իր կոխած տեղերը կոխեցի և ամէն կողմէ զինք պաշարեցի։ Բայց այնքան պարզ վարմունք մ'ունէր, այնքան անկեղծ կերպով կ'տեսնուէր թէ Լեհացիներու և թէ Ռուսերու հետ, այնքան անվնաս մարդ մը կ'երևէր որ վերջապէս անոր օձիքը թողուցի։ Սակայն կ'երևի որ սիրուն թռչուն մ'էր, ահա ուրիշին ծուղակն ընկաւ և իր վարձը պիտի ընդունի։ Տես մի անգամ ո՛րչափ անբաղդ եմ, ա՛յ չան զաւակ, կորի՛ր . . , ի՛նչ դժբաղդութիւն, ի՛նչ դժբաղդութիւն։»

Այս ողորմելի մարդն՝ որ զիս մատնելու առիթը կորուսեր էր, իր վշտագին սրտունջներովը զիս զուարթացուց։ Բայց միտքս բաւական յուզուեցաւ երբոր այս երկու պահապաններուն խօսակցութենէ ուրիշ տեղեկութիւններ ալ քաղեցի։ Այլ ևս կասկած չկար որ իմ երեսէս շատ մարդիկ ձերբակալ կ'ընէին. յիշուած անունները այնպիսի տարբեր բարեկամներու անուններ էին որ դեռ յաջողութեան յոյս մը կ'տածէի։ Ինչպէս որ կ'երևէր, աջ ու ձախ չնայելով այլ և այլ մարդիկ կ'բռնէին և կասկածներ կ'բարձրանային կամ աւելի ճիշտն ըսելու համար, այնքան մոլորեր էին որ մինչև անգամ Աբաղի նախագահին ծուռ աչքով կ'նայէին . . . Եթէ իրօք ինձ ծանօթ Ռուսները քննութեան ենթարկուէին, խնդիրը շփոթ կերպարանք մը պիտի առնուր և ո՛վ գիտէ թերևս այն ժամանակ իմ դաւակիցներս օգուտ պիտի քաղէին միւսներուն անմեղութենէ, որ անշուշտ պիտի յայտնուէր . . . ։

Կէսօրէն ետք՝ ժամը չորսին՝ այցելութեան եկան ինձ նահանգապետն և հաղարապետ Պոլուտկովսկին և ըսին ինձ որ շատ ծանր է իմ վիճակս և թէ իմ օգտիս համար պարտաւոր եմ ամէն բան լիապէս խոստովանիլ։ Իսկ ես հաստատապէս ժխտեցի ամէն ամբաստանութիւն, խմացուցի թէ բան մը չեմ հասկնար ինչ որ իմ վրայ կ'խօսին և թէ պիտի գրեմ Բեղրպուրգի անկիւկան դեսպանին անոր պաշտպանութիւնը խնդրելու։

«Ուրեմն կ'փափաքիս շուտ մը թողուլ Կամենիցը, հեգնութեամբ պատասխանեց նահանգապետը, անհոգ եղիր, այս մասին ամէն միջոց 'ի գործ պիտի դնեմ»։

Միևնոյն հարցուփորձը տեղի ունեցաւ հետևեալ օրերը, թէ ոստիկանութեան տեսչին տունը, ուր բանտարկուած էի, թէ նահանգապետին պաշտօնատունը, ուր առանց պահանորդի կ'երթայի։ Մէկ կողմէ նոյն սոփիստութիւնքը կ'շարունակէին որպէս զի իմ ճշմարիտ նըպատակս յայտնեմ, միւս կողմէ՝ իմ առած դերս անվրդով կ'շարունակէի։ Նահանգապետին վարմունքը սովորաբար պաղ այլ մարդավարական էին. թէև երբեմն կ'հեգնէր և կ'զայրանար։

«Պարապ տեղ կ'պնդես որ մոլորեալ ես և այդ կատակերգութիւնը կ'խաղաս, պուռաց նա երբ մի անգամիր հարցուփորձը կ'ընէր, քաջ գիտենք որ դու Իւկրենացի ես, և այս ինչ անձինք արդէն խոստովանեցան որ դու լեհերէն խօսեր ես»։

Իմ ամբաստանակիցներուս երկուքին անունը տուաւ, որ այնքան հասու չէին իմ գործոցս, և ոչ հաստատամիտ։ Նահանգապետն երկու անգամ ատեան հանեց զիս որպէս զի անոնց հետ երես առ երես խօսիմ։ Շատ անտանելի էր ինձ այս տեսակցութիւնը, և թէպէտ բայց 'ի բաց ուրացայ անոնց ամբաստանութիւնները, բայց 'ի վերջէ դիտեցի որ անկարելի էր աւելի ևս շարունակել այս ընթացքը։ Իրօք ամէն օր նոր նոր և աւելի ճշգրիտ տեղեկութիւններ կ'հասնէին իմ վրայ, և յայտնապէս նկատեցի որ այս անօգուտ հարցուփորձի խաղն երկարաձգուելով իմ դաւակիցներուս վիճակը պիտի ծանրանար։ Ուստի միտքս դրի հրապարաւ ամէն բան խոստովանիլ, միայն կ'փափաքէի որ կարելի եղածին չափ բաղմաթիւ ամբաստանակիցներ իբրև ունկնդիր ունենամ, որպէս զի իմ յայտնութիւններս հասկնան և անոնց սահմանը գիտնան։ Ուստի կ'սպասէի որ հրապարակային հարցաքննութիւն մը լինի, որպէս զի դէմառդէմ իմ խորհուրդներս յայտնեմ։

Այս ընդհանուր ատեանը քիչ ատենէն տեղի ունեցաւ. իրիկուն մը գիս Նահանգապետին մօտ տարին և ընդարձակ սրահի մը մէջ իմ ամբաստանակիցներէս շատերը տեսայ, որ երկու պատի երկայնքը ոտքի վրայ կեցած էին: Շատ սրտաշարժ էր տեսարանը, և կարծես թէ անոր մէջ այլանդակ բան մը կար: Ոմանք լոկ ծանօթ էին ինձ, ոմանք իմ համախոհներս էին, բայց ամէնքն առ հասարակ խորին յոգնութեան ու նեղութեան նշանները կ'ցուցնէին իրենց դէմքի վրայ:

Ըստ սովորականին՝ քիչ մ'ատեն մէկ քանի ստիպողական հարցումներ բրին ինձ և ես ամէնքն ալ ուրացայ բոլորովին. բայց վերջապէս չկրնալով համբերել, բարձր ձայնով և իմ մայրենի լեզուաւ գոչեցի.

«Այո՛, ես անկլիացի հպատակ չեմ, այլ բուն լեհացի եմ. Իւկրէն ծնած եմ, 1831ի յեղափոխութենէ ետք՝ հայրենիքս դաղթած և հիմակ նորէն այս տեղ եկած եմ: Այո՛, հայրենիքս դարձայ, վասն զի անտանելի էր ինձ տարադրութիւնը, վասն զի կ'փափաքէի նորէն տեսնել Լեհաստանի նուիրական հողը: Ես կեղծ անուն մը առի, վասն զի աներկիմիտ էի որ չպիտի կարենամ իմ յատուկ անունովս Լեհաստանի մէջ մնալ, թէև ես միտքս դրեր էի, ամէն բան աչքս առնլով՝ մտնել հայրենիքս, հանդարտ և անվնաս, ուրիշ բան չխնդրելով այլ միայն շնչել հայրենեացս օդը և այս տեղ մեռնիլ: Իմ մի քանի հայրենակիցներուս հաղորդեցի իմ դաղտնիքս, իրենց օգնութիւնն ու խորհուրդը հայցելով. ուրիշ բան չխնդրեցի և անոնց յայտնելու ուրիշ բան մը չունէի...»

Թէպէտ բաւական ժամանակէ 'ի վեր համոզուած էին նահանգապետն ու հաղարապետ Պոլուտկովսկին, սակայն մեծ զարմանք յայտնեցին երբ յանկարծ տեսան որ լեհերէն կ'խօսիմ: Քանի կ'խօսէի այնքան նահանգապետին դէմքը կ'պարզուէր, ձեռքերը կ'շփէր, սրահին մէջ մեծաքայլ կ'երթևեկէր, և երբ խօսքս աւարտեցի, ինձ մօտեցաւ բարեսէր դէմքով մը, և կարծես թէ շնորհակալ կ'լինէր որ այս տուի այս տարտամ և անտանելի կացութեան: Մի քանի աննշան հարցումներ ընելէն ետև՝ հրամայեց որ զիս առնեն տանին,

Երբոր ոստիկանութեան տունը դարձայ, դեռ ես նոյն գրգռիչ տպաւորութեան ներքև, ամենքն սկսան սաստիկ զարմանալ՝ իմ լեհերէն խօսիլս լսելով: Սոյն լեզուով հարցումներ կ'ուղղէի տեսչին, պաշտօնատարներուն և պահապաններուն: Մանկական, տենդային հաճոյք մը կ'զգայի 'ի գործ ածելով ազատութիւն մ'որմէ կամովին զրկուած էի, և նոյն կերպով վարուեցայ նաև հետևեալ օրը:

Աւելի դժկամակութենէ քան թէ ուրիշ նպատակաւ՝ միշտ կ'պնդէի որ ռուսերէն բնաւ չեմ հասկնար, իսկ լեհերէն խնդագին և անդադար կ'խօսէի, և կարծես թէ կ'փափաքէի մէկ քանի ժամուան մէջ փոխարինել ամբողջ տարուան լռութիւնս:

Այսպէս վերջացաւ իմ դատիս առաջին հարցափորձը, և հետևեալ օրը՝ Պոլուտկովսկի հաղարապետը եկաւ ինձ իմաց տալու որ պատրաստ գտնուիմ այն իրիկունը Կիով ուղևորելու:

Ձմերուան դեղեցիկ ու ցուրտ գիշեր մ'էր երբ Կամենիցէն ելայ. նստայ լայն ու ազատ կառքի մը մէջ՝ Պոլուտկովսկի հաղարապետին մօտ: Մեր դէմը երկու զօրականներ նստեր էին, լեցուն զէնքով: Մեր ետևէն կ'դար երկրորդ կառք մ'որու մէջ կ'դտնուէին դաղտնի ոստիկանութեան երկու պաշտօնաւորներ: Թէ եղանակին և թէ ժամանակին ուշ լինելէն (կէս գիշեր էր) քաղաքը բոլորովին ամայի ու մութ էր: Մէկ քանի տուներու առջևէն անցնելու ատեն, զոր արդէն կ'ճանչէի և որոց բնակիչներն իմ բաղդիս վիճակեր էին, աչքս վերցուցի և լոյս նշմարեցի: Արդեօք վերջի հրաժարականի նշան մ'էր այն թէ թախծադին տրտմութեան երևոյթը: Ռուսական սովորութեան համեմատ՝ միայն երառաձի կառքին ղեկին կապուած ոդրաձայն զանգակիկները գիշերային տխրադին լռութիւնը կ'վրդովէին:

Ես ալ կատարեալ լռութիւն պահեցի և հեշտալի տրամութեան մը մէջ ընկայ. չատ գոհ էի որ հաղարապետը իմ մտմտուքս չէր ընդհատեր որ և է խօսքով, և ոչ իսկ օթևանելու միջոցին: Երբոր լուսցաւ հաղարապետը լռութիւնն ընդհատեց և սկսաւ խօսիլ:

Որչափ որ առիթ ունեցայ քննել հաղարապետը թէ Կամենից եղած հարցաքննութեան ժամանակ թէ վերջէն Կիովի մէջ կատարուած հարցափորձի ատեն, դիտեցի որ նա միշտ սառարիւն, անտարբեր, բայց կիրթ, քաղաքավար էր և ինձի հետ յարգական կերպով կ'վա-

ղուէր։ Երբոր Կամենիցի մէջ նահանգապետին առջևն ելանք հաղարապետը միշտ կ'յորդորէր Ռատիչէվ զօրապետն որ ինձ հանդարտութեամբ խօսի ամէն անգամ որ ինձի դէմ ղայրոյթ կ'յայտնէր։

Այն իրիկուն որ Մահիլով քաղաքը հասանք՝ մեր կառքին զսպանակը կտրուելով՝ ես և երկու զօրականներն Կէբէրկայի (տեսակ մը սայլակ) մէջ նստանք, մինչդեռ հաղարապետն՝ դաղտնի ոստիկանութեան պաշտօնեաներու հետ ուրիշ կառք մը նստած առջևէն կ'երթար։ Այն ատեն սկսան ձիերը այնպիսի տրագութեամբ վազել որու վրայ մարդ չէ կարող դաղափար մ'ունենալ մինչև որ անձամբ տեսած չլինի Ռուսաստանի մէջ։ Այն միջոցին էր ահա, որ ինձ դիպուած մը պատահեցաւ զոր տակաւին չեմ կարող հասկնալ և յոյս չունիմնաև ընթերցողներու բացատրել։ Երբ Կէբէրկան կատաղի սրընթացութեամբ կ'թռէր՝ յանկարծ այնպիսի ցնցում մը զգացի որ կարծես թէ գլխուս մէջ բան մը խորտակեցաւ, և ուղեղիս մէջ սուր ու սոսկալի ցաւ մը բռնելուն այնպէս վայրագ աղաղակ մը հանեցի որ մինչև անդամ առջևէն գացող կառքին մէջ լսուեցաւ։ Հաղարապետն իսկոյն կառքը կեցուց և աղաղակիս պատճառը հարցուց։ Պատասխան մը չկրցայ տալ, այլ միայն կ'հեծկլտայի։ Հաղարապետը հրամայեց որ կառքը ծանր քըշեն՝ մինչև մօտակայ կայանը։ Այսպէս քիչ մը հանդարտեցայ, բայց երբ ամենէ թեթև ցնցումը լինէր դժոխային ցաւերս նորէն կ'սկսէին. ձեռքով գլուխս սեղմելով աղաղակներ կ'արձակէի։ Երբ իջևանը հասանք, անկարող եղայ կառքէն վար իջնել։ Ո՜հ, ի՜նչ ամօթ և խեղճութիւն, տղու պէս արտասուք կ'թափէի . . . ։ Այն ատեն հաղարապետն, զիս դաղտնի ոստիկանութեան պաշտօնատարներէն մէկուն և երկու զօրականներու հսկողութեան տակ ձգեց, ապսպրելով որ կառքը հանդարտ վարեն, և ինք Պրասլաւ երթալու փութաց։

Մենք մեր ճամբան շարունակեցինք. բայց քանի մը ժամ ետք՝ ուղեկիցներս՝ կառքին դանդաղ ընթացքէն ձանձրանալով՝ հրաման տուին որ աւելի արագ քալէ։ Հաղիւ երիվարները սկսան արշաւել որ տանջանքս իրօք անտանելի եղաւ։ Կարծես թէ պիտի ցնորէի, և իմպահպանս ալիոզորմ աղաղակներս լսելով ստիպուեցաւ կառքը կեցնել։

«Պէտք է որ ծանր քալէք, եթէ չէք ուզեր, իսկոյն զարկէք սպաննեցէք զիս։ Ճշմարիտը, եթէ այսպէս արշաւակի շարունակէք, հինգ վայրկեան իսկ պիտի չդիմանամ, անտարակոյս պիտի մեռնիմ, և այն ժամանակ ի՞նչ կ'լինի ձեր վիճակը»։

Զափազանցութիւն չկար ըսածիս մէջ։ Այս խօսքս զոր խորին համոզումով ըսեր էի, պահապանին վրայ ազդեց։ Մնացած ճամբան ծանր ծանր գացինք և առաւօտուն օթևան մը հասանք։ Պահապանս հրամայեց որ մեզի սահնակ (traineau) տան, թէև ճամբան ձիւնոտ չէր, այլ միայն տղմոտ։ Վերջապէս՝ կէսօրէն ետք՝ ժամը մէկին Պրասլաւ հասանք, ուր արդէն մեզի կ'սպասէր՝ հաղարապետ Պոլուտկովսքին։ Իմ աղէտալի վիճակս յայտնապէս շարժեց անոր սիրտը. ձեռքը դրաւ բազկիս վրայ, ուշադիր նայեցաւ ինձ և հարցուց ցաւիս պատճառը։ Այս առաջին ու վերջին անգամն էր որ ինձ ճշմարիտ կարեկցութիւն մը կ'յայտնէր։ Բաւական ինձ որ պաշտօնական գործոց համար պիտի պարտաւորի Ֆիով երթալ և թէ ես պիտի մնայի այն տեղ քիչ մ'այժ առնելու համար։ Քիչ մ'ետք՝ մնաս բարով ըսաւ ինձ և հեռացաւ, իսկ իմ կառքս քիչ մ'ալ քալելէն ետև՝ քաղաք կեցաւ՝ ընդարձակ ու տխուր չէնքի մ'առջև։

Երբոր վար իջեցուցին զիս, ծանր դռներն իրենց ծըխնիներու վրայ սկսան ճռնչել և ներս մտնելով մէկ քանի մթին ուղիներէ անցնելէն ետև՝ ինքզինքս բաւական մաքուր սենեկի մը մէջ գտայ, որու պատուհանն երկաթի ճողերով ամրացած էր։ Ընկայ խչտեակի մը վրայ որ անկիւնը դրուած էր, վերարկուովս ծածկուելով։

Քանի մը վայրկեան ետք՝ տեսութեան եկան ինձ երկրորդ քաղաքապետն ու բժիշկը, որ լեհացի էր։ Կարեկցութեամբ ինձ շատ հարցմունքներ ըրաւ, և պատուիրեց որ հանգստանամս քանի մը դեղեր առնեմ։ Վերջը գացին և ես մնացի երկու պահապաններուն հետ։ Արդարև իմ ցաւերուս միակ դարմանը հանդիստն էր, և որչափ պառկած ու հանդարտ մնայի ցաւ մը չէի զգար։ Այսպէս երկար ժամեր անցան, երբ յանկարծ՝ խորը լռութեան ժամանակ՝ ոյլանդակ շառաչիւն մը լսեցի և նախ չկրցայ հասկընալ թէ ի՞նչ է։ Քիչ քիչ որոշեցի որ շղթաներուն շաչիւնն է, որ պատին ետևէն կը լսուէր նեղ դաւիթներուն մէջ։ Ուրեմն կ'դտնուէի ես

այն մեծ բանտերուն մէջ որ Կիպրոսի կ'կոչուին. բայց արդեօք որո՞նք էին իմ բանտակիցներս. արդեօք հասարակ յանցաւորնե՞ր էին թէ՝ ոչ թերեւս քաղաքական կալանաւորներ ու հայրենակիցներ էին:

Իմ կասկածներս քիչ առնելու՝ մարդասէրներու Ցանկարծ քաղցրաձայն երգեր լսեցի, որ իրար հաւերդ կ'հնչուէին և երբեմն շղթաներու շառաչիւնէն կ'ընդհատուէին: Բառերը լսելիներն էին, և եղանակը ինձ քաջածանօթ: Երգածն էր, Նէրսէհ մասրէն Դէջ, ո՛ ասորոածային մանուկ . . . Ուրեմն ծննդեան ածնն էր՝ և դժբաղդ բանտաւորներն իմ հայրենակիցներս կէս գիշերին, մեր երկրին դարաւոր սովորութեան համեմատ, կ'երգէին սոյն չքնաղ երգը, Փրկչի ծնունդն աւետելու համար: Վերջն սկսան երգել ուրիշ հին երգեր, այն է Հրեշտակն ըսաւ հովիւներուն . . . Անանի փառնացան Թեղեհեմ . . . և: Ահ, ծննդեան երգերը, այս երգերն որով օրորուեր էր մանկութիւնս ու պատանեկութիւնս և զոր տարագրութենէս իվեր, տասներկու տարի կար, լսած չէի: Այս երգերը վերստին կ'ելէի թշուառ բանտաւորներու բերնէն, որոց ձայնակից կ'լինէր շղթաներու շառաչիւնը: Ո՜հ, ի՜նչ յիշատակներ կ'արթնցային մտքիս մէջ և ի՜նչ ապի արտասուքներ կ'հոսէին աչերէս:

Թէպէտև երկու օր եաք՝ դեռ թոյլութիւն մը կ'զգայի, և նոյն միջոցին քաղաքապետին փոխանորդն ու բժիշկը մի քանի անգամ գիս տեսնելու եկան, բայց գլխի ցաւս բոլորովին անցեր էր: Երբ իմ ուղեկից պաշտօնաւորը հարցուց թէ արդեօք պատրաստ եմ ճամբան շարունակելու, այո՛, պատասխանեցի. վասն զի պարտաւոր էի վերջանալս Քիւով քաղաքը հասնիլ: Երբոր տահնակը մտայ՝ դաւթին մէջ զինուորներու դունդ մը նշմարեցի, որու ձեւն ու կերպարանն այնքան դեղեցիկ ու մարտական երեւցաւ ինձ որ իմ քովս գտնուող քաղաքապետին առջև գովեցի անոնց դիրքը: Քաղաքապետի փոխանորդն ինձ ըսաւ.

«Ասոնք լեհացի զինուորներն են, որ 1831ի անցքէն եաք՝

*Լեհաստանի ազատութեան գաղտնիներու մէջ Ծննդեան գօնը կ'կարդացուի ըսած հին գրքերի, և այս պատճառաւ է որ Պէտք բոլորին քեկ. 31ին յերեքշաբաթ լինելի եաք՝ Ծննդեան գօնին կ'հանդիպի:

ռուսական հարաւային Բ. զօրաբաժնին խառնուեցան:»

Ահա այսպէս՝ շատ տարիներ է եաք՝ վերստին կ'հանդիպիլի իմ վաղեմի զինակիցներուս: Անկարող եղայ համբերել ու անցեալ անցնիլ, այս պատճառաւ խլոյն դուշեցի լեհերէն բարձր ձայնով.

«Ողջո՛յն ձեզ, քաջ ընկերներ:»

«Ցառա՛ջ, դոշեց խլոյն զօրականն, և ձիերը սլաքի պէս սրացան:

Հազիւ թէ երկու երեք մղոն հեռացած էինք Բրասլաւ քաղաքէն, սոսկալի արագութեամբ վազող կառք մը մեր առջև և մեր դիմացը կեցաւ: Զօրական մ'իջաւ մեր առջև և քանի մը վայրկեան ցած ձայնով իր ուղղաւ կառքէն և քանի մը վայրկեան ցած ձայնով իր ուղղեցին հետ խօսելէ եաք՝ իմ մօտս եկաւ և յայտնեց թէ այնուհետև իր հսկողութեան տակ պիտի մնամ: Այս զօրականը քանանեակ երիտասարդ մ'էր, բայց նիհար, ճիպ, պիծակի հասակաւ, խոժոռ դէմքով, դոն

Զօրականն այս խօսքիս վրայ քիչ մը մտածեց և հրամայեց որ խնդիրս կատարեն։ Ուստի մուրճերուն ուժով օղակները քիչ մը լայնցուցին, բայց միշտ նեղ էին այնպէս որ քայլ մ'առած ժամանակս ժանգոտ օղերն անոլոր մնալով սաստիկ կ'տագնապէին ու կ'քերթէին ոտքերուս մորթը։ Զիս վերցուցին ու սայլակին մէջ դրին։ Բելօ-Սէրքիէվ քաղաքէն անցնելէն ետև՝ դիւերուան մէջ զառիվայրի մը վրայ մեր սայլակը գլորեցաւ։ Զօրականները դուրս ընկան, չգիտեմ թէ ի՞նչ եղաւ սայլապանը։ Իսկ ես շրուշակներով ու շղթայով կաշկանդուած չէի կարող շարժում մ'ընել այնպէս որ վար թաւալգլոր ընկայ, և չգիտեմ ինչպէս եղաւ որ շղթաներս ա-նուին մէկ անկիւնին կռուեցան մնացին։ Երբ այսպէս կցուած էի ձիերը կատաղի սրընթացութեամբ կ'վազէին և կ'քաշքշէին զիս ձիւնի ու տղմի մէջ, ճմլելով կուրծքս բազուկներս ու ծունկերս։ Վերջապէս բոլորովին ուշաթափ եղայ, և երբ խելքս գլուխս եկաւ տեսայ որ դարձեալ սայլակին մէջն եմ և ամեն բան կարգին էր։ Զինուորն առջևս կանգնած կ'հարցնէր ինձ թէ արդեօք շատ կ'տագնապիմ։ Բնաւ պատասխան չտուի։ Այն ժամանակ բոլորովին ռուսական տեսարան մը տեղի ունեցաւ։ Սպայն մէկ քանի կոփոցներ իջեցուց զինուորներուն գլխուն այս պատահարին համար, թէև ինքն էր պատճառը քանի որ շարունակ արա՛գ, արա՛գ, կ'գոչէր։ Երբ ճամբայ ելանք զինուորներն ալ սկսան՝ սպային տուած հարուածները սայլապանին հասուցանել, և սայլապանն ալ իր վրէժը ձիերէն կ'առնէր կատաղաբար մտրակելով, այնպէս որ նոյն պատահարը կրկնուելու երկիւղ կար։ Իսկ ես աւելի կիսամեռ քան կենդանի միայն անցած դարձածը կ'դիտէի, և —ո՛վ մարդկային բնութեան տկարութիւն — զգացմունք մը միայն կ'տածէի, զգացմունք որ մի դուցէ երկրորդ պատահար մը նորէն հանդիպի։ Ամեն անգամ որ սայլակը ոստոստէր կամ զարնէր քարի մը, աչերս կ'փակէի և կը նուաղէի, և սակայն 'ի բնէ երկչոտ չէի և ոչ փափկասուն . . . : Հետևեալ օր Գիովի ամրոցը հասանք։

Գ

Քանի մը զինուորներ զիս իրենց թևերուն վրայ առին և տեղւոյն հրամանատարին սրահը տարին դրին։ Այն տեղ վրաս գլուխս նայեցան, անունս արձանագրեցին և ինձ այլ և այլ հարցումներ ուղղեցին, որոց ի՛նչ պատասխանելս չգիտեմ, վասն զի ոչ ըրածս գիտէի և ոչ խօսածս։ Յետոյ զիս վերցուցին, շատ մը նեղ դաւիթներէ ու անցքերէ անցուցին, մինչդեռ զինուորները զիս բռներ էին որ վար չգլորիմ։ Վերջը դուռ մը բացին, նեղ խցիկ մը մտայ և ուժաթափ ընկայ յարդէ անկողնի վրայ։ Ներս մտեր էին ինձի հետ մի քանի բանտապահներ և թիկնապահ մը։ Այս հարցուց ինձ եթէ բանի մը պէտք ունիմ. ես աղաչեցի միայն որ շղթաներուս օղակները լայնեն կամ փոխեն. նա պատասխանեց որ այդ ընելու իշխանութիւն չունի, բայց կարող է իր գլխաւորին յայտարարել իմ խնդիրս։ Այնուհետև զիս մինակ թողուցին և քիչ մ'ետք խորունկ քնացայ։ Անընդհատ քանհինգ ժամ նիրհեր էի, պահապանները եկան արթնցուցին զիս որ սկսեր էին անհանգիստ լինիլ իմ երկարատև քնահատութեան վրայ։ Քիչ մ'ետք՝ հրամանատար գնդապետն եկաւ քովս, շքանշաններով զարդարուած. լեհերէն հարցուց թէ ի՞նչպէս եմ և թէ ի՞նչ է իմ հիւանդութեանս պատճառը։ Ես շնորհակալ եղայ, բայց մեր ուղևորութեան արկածներուն վրայ բան մը չըսի. ի՞նչ օգուտ կար դանդատելու։ Խօսք տուաւ ինձ մնաջուր ղրկել և մնաս բարովի ժամանակ այս խօսքերն ըսաւ.

«Աշխատէ որ կազդուրիս. շատ տկար ես, և այս տեղ, մեր բանտին մէջ՝ պէտք է քաջառողջ լինիլ այլ և այլ տառապանք կրելու համար։»

Ես թոյլէի արդարև՝ բայց դժոխային գլխացաւս՝ որմէ սաստիկ կ'վախնայի, նուազած էր, Կ'ցաւէին միայն

գուրծքս, արմուկներս և ծունկերս, որ սայլակի դիպուածին հետևանքն էր, և այս կսկիծներս ամբողջ ամիսներ պիտի քաշէի։ Ակնարկ մը նետեցի իմ խղճիկիս վրայ, տեսայ որ վեց ոտնաչափ երկայն և հինգ ոտնաչափ լայն էր։ բաւական բարձր էր, բայց անկարգ, աղտոտ, մութ և միայն առաստաղէն փոքրիկ ծակով մը լոյս կ'առնէր և այս լուսամուտն դրսէն ու ներսէն ամրացած էր երկաթէ վանդակով։ Գլխուս վերև կը կարդայի դժուարաւ մի քանի անուններ որ պատին վրայ դրուած էին, և որոց մէջ կ'գտնուէր Ռարչինաքիի անունը, որու պիտի հանդիպէի վերջէն Սիպերիոյ մէջ։ Սենեկիս բոլոր կարասին էր փոքրիկ սեղան մը, հասարակ փայտէ աթոռ մը և կաւեղէն վառարան մը։ Քիչ մ'արդանակ և հաց բերին ինձ, բայց ձեռնկապով ուտելու դժուարութիւնն այնքան զայրացուց զիս որ ճաշս լմնցուցի, առանց կշտանալու։

Անցած հացը տեսնելով՝ յանկարծ նախանձոտական տղղումով մտքիս մէջ դաղափար մը ծագեցաւ։ Առաջին անդամը չէր որ Կոնարսքիի* վրայ կ'մտածէի որու տանջանքն դեռ ներկայ էին ամենուն յիշողութեան։ Գիտէի որ զանի տանջելու համար 'ի գործ դրուած մէկ միջոցն ալ անօթութիւնն էր։ Ես ևս կ'կասկածէի որ նոյն փորձը պիտի ընեն ինձի դէմ և անօթի ձգելով զիս պիտի տանջեն։ Ուստի մտածեցի որ նեղ օրուան համար հնար մը գտնեմ և ուելցած հացը պահեցի վառարանի վերև եղած ծակին մէջ, նոյնպէս ըրի և հետևեալ օրերուն հացը զոր ինձ կ'բերէին։ Բարեբաղդեղայ որ այսպէս պաքսամատի պաշար մը պատրաստեցի սովի ժամանակի համար։

Երբոր քիչ մը վրայ եկայ քնանալով ու կերակրով, աւելի զգացի խայթիչ ցաւ մը զոր յառաջ չկրցայ բացատրել։ քիչ մ'ետք դիտեցի որ ոջիլով ծածկուած եմ, որով կ'վատար ոչ միայն խշտիս այլ բոլոր սենեակս, իսկ շրուշակս չէր թողուր որ դոյզն ինչ դարման բերեմ։ Զորս կողմս նայեցայ և երկու աչք իմ վրայ յառած տեսայ։ պահանորդն էր նա որ նրբաղաւթին մէջ պահանութիւն ընելով հրաման ունէր բոլոր շարժումներուս

*Անուանի պաշտօնակալ, որ 1841ին Վէնայի ԴԷՔ Քլեսպոռեցոս, երկրաբար ոս անուանցան Քանդարիոմբենի մ'էր։

վրայ հսկել դրան ծակէն։ Զինք կոչեցի, բայց ընդունայն։ բնաւ ականջ չդրաւ ձայնիս։ Բարեբաղդաբար միւս օրն եկաւ ամրոցին ընդհանուր հրամանատարը, որ զիս դիմացի խուցը հանեց և հրամայեց որ իմ մաքրեն, նոյնպէս ապապրեց որ զիս սափրեն, բայց երբ աղաչեցի որ կիսամօրուս թողուն, ոպայն՝ որ այս գործողութեան ներկայ էր, պատասխանեց։

«Ո՛չ, ո՛չ, միայն պեխերդ պիտի պահես, այդ է բոլորովին լեհական ձեւ։ հին լեհացիք միայն պեխեր ունէին։

Քիչ մ'ետք՝ սենեակս դարձայ, որ բաւական մաքրուեր էր։ Միւս կողմէ ջնորհապարտ էի նաև հրամանատարուեր էր։ Միւս կողմէ ջնորհապարտ էի նաև հրամանատարին որ ձեռնկապս հանել տուաւ։ Թէև այլանդակ երևի ըսածս, բայց ձեռքերս ազատ ձգուելով՝ զգայ նաև մեքիս ազատութիւնն ու զօրութիւնը։ Շարունակ թեւերս կ'տարածէի, հաղիւ հաւատալով սոյն երջանկութեանս։ խանձարուրէն ազատող երեխայի պէս կ'ուրախանայի։

Շաբաթն անցաւ, վիճակս դդալի փոփոխութիւն մը չկրեց։ Առողջաբար ու առատ էր ինձ տրուած կերակուրը։ սենեակս ամեն օր կ'մաքրուէր, բայց օդի պակասութիւնն, անշարժութիւնս և անգործութիւնս չլատեր էին բոլորովին զիս։ Շղթաներս չէին թողուր որ քալեմ կամ գոնէ ոտքի վրայ կանգնիմ։ ուստի միշտ պառկած կ'մնայի խշտեկիս վրայ, և միայն առաւօտները սովորաբար կ'ելնէի և ծունր դնելով Հայր Դէր կ'ըսէի։ Գիշերներն երկայն էին ու խաւարային, միայն խորհրդութիւնը կ'ընդհատուէր հեռուէն մուրճերու խուլ ձայնէն, որով մէկ քանի կալանաւորներու շղթաները կ'հանէին կամ կ'դնէին։ Թէպէտ արդիլուած էր պահակներուն բառ մ'անգամ ուղղելու ինձ, բայց ես խորհրդոյն իմացայ որ Կամենիցի գատաւորներն նոյն բանտին մէջ կ'գտնուէին, սակայն ուրիշ խուցեր կ'բնակէին։

Օր մը՝ կէսօրին մօտ՝ մեծ աղմուկ մը բրդաւ սենեկին առջև։ դուռս բացին և զօրապետի ջքաղեստով մարդ մ'երևցաւ, որու շրջապատեր էին ուրիշ զօրապետներ և թիկնապահներ համազգեստով, որ նրբաղաւթին խորն ակնածութեամբ շարուեցան։ Բարձր հատակով մարդ մ'էր նա։ ձիգ կորուած աղէրեկ մազերով, ձուաձև դէմք

առանց պեխի և խիստ սուր աչեր ունէր։ Իր հագուստին ձախ թևը համազգեստին մէկ կոճակէն կապուած էր, որով կ'երևէր թէ բազկին մէկը պակաս է։ Իսկոյն իմացայ որ Վոլնիոյ, Պոտոլիայի և Իւկրէնի ընդհանուր նահանգապետ իշխան Բիբիկովն* է այս մարդը։ Գլխարկն հանեց, դուռը հրեց առանց փակելու, նստաւ աթոռի մը վրայ, ուսկից ելեր էի։ Բոլոր խօսակցութեան ժամանակ՝ սաստիկ անհանգիստ կ'երևէր սենեկիս ապակեալ օդէն. ատեն ատեն կ'դառնար մեքենապէս լուսամուտին կողմը օդ ծծելու համար։ Ֆրանսերէն լեզուով խօսեցաւ հետս ու ըսաւ.

—Թերևս իմացար թէ ես ո՞վ եմ։

—Կարծեմ թէ պատիւ ունիմ խօսելու ընդհանուր նահանգապետ՝ Բիբիկով իշխանին հետ։

—Իսկ քու անունդ Պիոտրովսկի. ծնած ես Իւկրէնի մէջ։ Մասնակից եղար 1831ի ապստամբութեան, Ֆրանսա փախար և վերջը Նորէն Կամենից դարձար Կաթարս անունով. այնպէս չէ՞։

—Այո՛, իշխան։

—Դու այնպէս կ'կեղծես, իբր թէ հայրենիքդ տեսնելու փափաքով եկար. բայց 1831էն ետք՝ կայսրն ընդհանուր ներողութիւն շնորհեց, ինչո՞ւ համար այն ժամանակ չդարձար։

—Ձեմ ուզեր խօսք մ'անդամ ըսել որ Ձեր Վսեմութեան անհաճոյ երևի. բայց այդ ընդհանուր ներողութիւնն այնպիսի կերպով 'ի գործ դրուեցաւ որ քաջալերական չէր։ Ասկէ զատ՝ ներողութիւնն միայն տէրութեան հպատակներուն կ'վերաբերէր. զատուած գաւառներուն բնակիչներն անորմէ զրկուած էին։ Դարձեալ շնորհ ու ներողութիւն խնդրելու համար՝ պէտք է որ մարդ զգայ թէ իրօք յանցանք մ'ունի . . . :

—Ո՞վ տուաւ քեզ անկլիարէն անցագիրը։

—Փողոցէն գտայ։

* Բիբիկով իշխանն մէկ բազուկը խորտակուած էր ռուսերով Բորոդինոյի պատերազմին մէջ։ Բոլոր Լեհաստան գիտէ անոր զուտ պատասխանը լեհացի կնոջմ'որ ծանուն ըսած կ'ալիրսէր և շնորհ ստանալու կ'խնդրէր էր որդւոյն համար. —Տիկին, ըսաւ Բիբիկով, այն յետոյն որ Բորոդինոյի մէջ նոր

—Մահառստան մնացիր դու մի ամսէն աւելի. կ'տեսնես որ ստոյգ տեղեկութիւններ ունիմ քու վրայ, ինչո՞ւ համար Մահառստան գացիր։

—Որպէս զի հեռքս չդանեն և ճանապարհս կարճնայ։

—Ո՛հ, ո՛չ, դու ուրիշ պատճառներ ունիր, դու ռամկավարական ընկերութեան անդամ ես։

—Իրաւ է, երբեմն նոյն ընկերութեան անդամ էի, բայց շատ ատենէ 'ի վեր քաշուած եմ։

—Միթէ դու նոյն ընկերութեան մէկ պաշտօնակալը չե՞ս։

—Ո՛չ։

—Այսպէս ուրեմն այս տեղ գալով որ և է նպատակ և քաղաքական պաշտօն մը չունի՞ր։

—Բնա՛ւ ամենևին։

—Այդ տեսակ խօսքերով չես կարող երբէք վիճակդ բարւոքել։ Քեզ պարզօրէն ըսեմ, վատ վիճակի մէջ ես։ Եթէ միայն անկեղծ օրէն ամեն բան խոստովանիս պատիժդ կրնայ թեթևնալ և այն ժամանակ կայսեր ներողութեան կ'արժանանաս։ Կօնարսքին կ'ճանչէիր, այնպէս չէ՞։

—Ո՛չ։

—Բայց անոր անունն ու գործերը իմացած ես անշուշտ։

—Անտարակոյս լսած եմ, ինչպէս նաև կրած չարչարանքը։

—Քու վիճակդ ճիշտ Կօնարսքիին վիճակն է, միայն անկեղծ խոստովանութիւն մը կրնայ նուազեցնել կայսրութեանդ հեռանքը։ Ձեմ ուզեր դատել քու զգացմունքդ, միայն կ'փափաքիմ իմանալ թէ ի՞նչ մարդոց հետ ծանօթացար Կամենեցի և շրջակայ գաւառներու մէջ։ Ես չեմ հարցներ թէ ի՞նչ էր ձեր խորհուրդն ու նպատակը. միայն յայտնէ ինձ թէ ո՞ր մարդոց հետ տեսնուեցար։

—Տէր Աստուած, բայց վեհամտայլ իշխան, Կամենեցի և շրջակայ քաղաքներու մէջ զրեթէ ամեն մարդոց հետ տեսնուեր եմ։

—Դու լաւ գիտես որ խօսքս անոնց վրայ չէ, այլ մտերիմ խորհրդակիցներու վրայ։

—Մտերիմ ու խորհրդակից ունեցած չեմ։ Մի քանի անձերու միայն կարող եղայ ազդայնութիւնս յայտնել և խորհուրդ ու օգնութիւն խնդրել։ Բայց գիտէք դուք, իշխան, որ են պատրաստ չեմ անոնց անունը տալ։»

Քանի մը վայրկեան լուռ կենալէն եւեւ՝ Բիբիկով իշխանը խօսքը շարունակեց.

— Զգիտեմ թէ ինչ պատճառաւ լեհացիներն ու ռուսներն այսպէս յաւիտեան գիրար պիտի ատեն և ջնասեն։ Մենք ամենքս սլաւ ենք. արիւնով, լեզուով, վարքով ու բարքով իրարու ազգակից ենք. պարտաւոր ենք մենք միանալ և միասին քալել։ Ով որ այսպէս չմոածեր բնաւ չհասկնար այս երկու ազգերուն ճշմարիտ շահը։

— Բոլորովին համամիտ եմ ձեզ, վեսեմափայլ իշխան, մենք ամենեին ատելութեան զգացմունք չունինք Ռուս ազգին դէմ, բայց կ'ուզենք ազատ լինիլ, իսկ Ռուսաց կառավարութիւնն . . . .

— Ես քեզի հետ վիճաբանելու ժամանակ չունիմ։ Բայց նորէն կ'կրկնեմ, շատ փափուկ է վիճակդ, բայց կարող ես անկեղծ խոստովանութեամբ ամբաստանել զայն։ Ես չեմ խոստանար ձեզի կատարեալ ու անմիջական ազատութիւն, վասն զի երբէք չեմ խոստանար ինչ որ չպիտի կարենամ կատարել. բայց կարող եմ միջնորդել կայսեր մօտ որ թոյլ տայ քեզ՝ կովկասեան բանակին մէջ ծառայելու։ Լեհացիք ամեն սլաւներուն պէս քաջասիրտ են ու արի. դու դեռ երիտասարդ ես, խելք ունիս, կարող ես շուտով սպայ լինիլ և այն ժամանակ քեզմէ կախում պիտի ունենայ ասպարէզդ։»

Բիբիկով զօրապետն սեղէն ելնելով՝ արտասանեց այս խօսքերը հաստատ ու վէս ձայնով մը, յետոյ աւելի անուշութեամբ կրկնեց։

«Սակայն ես չեմ պահանջեր որ ինձ դաղտնիքդ յայտնես. միայն կ'ուզեմ իմանալ քեզի ծանօթ անձերու անունները, պէտք չունիմ իմանալու թէ ինչ խորհուրդներ ունիք, միայն անոնց անունը գիտնալ կ'փափաքիմ, նոյնպէս չեմ պնդեր որ անմիջապէս հաղորդես ինձ. թոյլ ու տկար ես, ծանր ու տխուր տպաւորութեանց ներքև կ'գտնուիս։ Երբոր դիս տեսնել ուզես կարող ես ձայն տալ օրապահ բերդակալին միջոցաւ։ Առ այժմ թուղթ մ'առ և համառօտ կենսագիրդ գրէ . . . .

Յետոյ թեթև բարև մը տուաւ ինձ, և դուրս ելնելու միջոցին՝ դրան վրայ կանգ առաւ և բարձր ձայնով ըսաւ. «Շղթաները հանեցէք։»

Քանի մը վայրկեան ետք՝ սեղուոյն հրամանատար գնդապետն եկաւ պայտարին հետ որ երկաթներս քակէ և նահանգապետին այցելութենէ այս եղաւ բոլոր քաղաք օգուտս. բայց մեծ էր օգուտն և սրտովին անոր շնորհակալ եղայ։ Կամենիցէ մեկնելէն 'ի վեր՝ կօշիկներս չկրցեր էի հանել։ Սրունքս կ'ցաւէին, բայց բոլոր օրը սենեկիս մէջ քալեցի, ցաւին չնայելով՝ հաճոյք կըզգայի որ ազատ էին ոտքերս։ Շատ շաբաթներ անցեր էին՝ երբ իրիկուն մը՝ ուշ ատեն՝ սենեկիս մէջ երևցաւ բան մը, որ դեռ բնաւ երևցած չէր, այս է լոյս։ Թիկնապահ մը՝ չորս գինուորներով եկաւ ու հրամայեց ինձ ոտք ելնել և իր ետևէն երթալ։ Արդեօք մահուան ժամն հասա՞ւ, ըսի մտովի և հրաժարական ակնարկ մը նետեցի խուցիս վրայ։ Գինուորներուն թևերուն կրնթնելով՝ բանտին մեծ բակէն անցայ։ Գիւնը մեր ոտից տակ կ'աղաղակէր, գիշերը շատ մութ էր, օդը թափանցիկ ու մաքուր, որու ես վարժած չէի, ուստի շունչս կ'կտրէր և սակայն անպատուում օգուտ ունէր ինձ. եթէ ներելի է ըսել, ազդու հեշտութիւն մը կ'ըզգայի երբ քամիին զովացիկ յորձանքը կ'ծծէի, թէև կ'կարծէի միշտ որ մահուան կ'գիմեմ։ Տարին գիս մեծ ու ազատ սրահ մը, այլ և այլ աստիճանի զօրականներ նստեր էին մեծ ու բոլորակ սեղանի մը շուրջն, որ կանաչ չուխայով ծածկուած էր։ Գլանիկներ կ'ծխէին, բարձր ձայնով կ'խօսակցէին և երբեմն ալ կ'ծիծաղէին։ Այս էր քննութեան յանձնակումբը։ Զգալի խնդութեամբ տեսայ անոնց մէջ Պոլուսկովսկի հաղարապետը, թէպէտ և նա գիս ձերբակալեր էր։

Մի սեազդեստ պարոն, որ կ'նախագահէր յանձնակմբին, նշան ըրաւ ինձ որ մօտենամ. սա էր կայսերական դահլիճին երրորդ բաժնին (դաղտնի ոստիկանութեան) ներքին խորհրդական և անդամ Պիսարէվ, Բիբիկով իշխանին հոգեկից մտերիմը, մարդ մ'որու սոսկալի յիշատակը չպիտի ջնջուի՝ շատ տարիներ, զատուած նահանգներէն (Լեհաստան)։ Պիսարէվ հրաման տուաւ ինձ իր մօտ նստիլ և սկսաւ հարցուփորձ ընել Ֆրանսերէն լեզուաւ և մարդասէր ձայնով։ Հարցումները թէև աւելի մանր, նոյնն էին ինչ որ Բիբիկով իշխանն՝ ուղղած էր ինձ. ես ալ նոյն պատասխանները տուի, և յանձնակմբին առջև եղած հետևեալ հարցուփորձները նոյն կերպով կատարուեցան։

Որովհետև աղնուատոհմ էի, օր մը յանձնակումին մէկ նստի մէջ տեսայ նոյն դաւառի աղնուականաց մարաջախտը, վասն զի ռուսական օրէնքն այսպէս կը պահանջէր: Վշտակիր դէմք մ'ունէր և թերևս ամենքան ձևի համար կ'ընէր միայն: Նա մի քանի հարցմունք ուղղեց ինձ լեհերէն, հարցուաւ իմ ընտանեկան յարաբերութեանց վրայ: Վերջապէս յանձնակումին բոլոր անդամները գրեթէ միա՛ն, վայելուչ ձևերով կ'վարուէին ինձի հետ, թէև ես սովորական պատասխաններ կ'տայի և ուրախ լռութիւն կ'պահէի անոնց հարցումներուն դէմ: Մինչև իսկ նախագահն անդամ մ'ըսաւ ինձ:

— Այնպէս կարծեմ որ բանտին մէջ ժամանակը շատ երկար պիտի երևի քեզ. միթէ գիրքեր կ'ուզե՞ս. մատենադարանս բաց է քեզի համար. ի՞նչ կ'սիրես, վէպե՞ր թէ ոչ ճամբորդութեան պատմութիւններ:

— Ա՛հ, եթէ կարելի է ինձ Աստուածաշունչ մը տալ:

— Աստուածաշո՞ւնչ, պատասխանեց նա զարմացմամբ ինձ նայելով. իրաւ որ՝ ես Աստուածաշունչ չունիմ, բայց կարող եմ հատ մը ճարել . . . :

Եւ իրօք մէկ հատ գրկեց ինձ. և այնուհետև մինակ չմնացի:

Թերևս իմ հարենակիցներս պիտի զարմանան և բարկանան իշխան Բիրիկովի և Գ. Պիսարէֆի ըսածներուս վրայ, երբոր յիշեն թէ այս մարդոց ձեռօք քանի դերդաստաններ աւեր դարձան, քանի քանի աղնիւ զոհերու արտասուքն ու արիւնը թափուեցան և ինչպէս երբեք նահանգներ յետին ծայր վէս և կիսեղբիչ բռնաւորութեամբ ճնշում ու հարստահարութիւն կրեցին: Սակայն այս եղաւ անոնց վարմունքն ինձի հետ իմ դատի քննութեան ժամանակ, և պարտաւոր եմ յայտնել որ իմ անձիս դէմ երբէք չփորձուեցան այն տանջանաց միջոցներն որոց այնքան լեհացիներ ենթարկուեցան ռուսական բանտերու մէջ, նոյնպէս աւա՛ղ, իմ մէկ քանի պատժակիցներս: Իրաւի՝ մէկ քանի անգամ սպառնացան ինձ այդ բուռն միջոցներուն դիմելու, բայց երբէք չգործադրեցին:

Սակայն քննութիւնը կ'շարունակուէր, և ես թոյլտուութիւն ստացայ յանձնակումէն՝ ամեն օր մի ժամ նեղ դաւթին մէջ պտտուելու, թէև իմ պատոյտս ընելու ժամանակ կենդանի արարած մը չպիտի դանուէր այն տեղ՝ բայց 'ի երկու պահնորդներէն: Գաւիթը շատ անձուկ, մութ ու խոնաւ էր, սակայն կարող էի կրթութեան անհրաժեշտ պիտոյքս դոհ ընել: Երբեմն դաղտնի կ'խօսակցէի երկու պահնորդներուն հետ: Երբ այս զինուորները լեհացի լինէին (և ստէպ կ'դանուէին, մինչև անդամ այն զինուորներէն որ 1831ին մեր բանակին մէջ ծառայեր էին) աւելի մեծ կարեկցութիւն կ'յայտնէին ինձ, բայց միանդամայն աւելի դգուշաւոր ընթացք մը կ'պահէին: Ռուս զինուորներն աւելի հետաքրքրութենէ հետս կ'խօսէին թէ՝ արդեօք տեսած չեմ Կոստանդին* մեծ դուքսն օտար երկիրներու մէջ. վասն զի հաստատ կ'կարծէին թէ նա կենդանի է՝ Ֆրանսա կամ Անկլիա, և օր մը պիտի վերադառնայ որպէս զի Ռուսաստանն ազատէ Նիքոլայ կայսեր ձեռքէն: Սակայն ստիպուեցայ հրաժարիլ այս խօսակցութեանց ինձ տուած ճշմարիտ հաճոյքէն, վասն զի օր մը բանտապահը վրայ հասաւ և ինձի հետ խօսող պահնորդը դուրս տանելով վսիմսուն դաւաղանի հարուած ուտելու դատապարտեց. և լսեցի այս խեղճ պատժապարտին սրտաճմլիկ ողբաղակը:

Պարտաւոր եմ նաև մի քանի խօսք ըսել դրացիներուս վրայ, որ իմ խուցի մօտ կամ դիմացը դրանուղղ սենեակներուն մէջ կ'բնակէին: Իմ պատժակիցներս բանտին մէկ ուրիշ կողմը դրուած էին և ես անոնց հետ բնաւ հաղորդակցութիւն չունէի: Օր մը միայն նշմարեցի հեռուէն բարի ու արդարասէր դատաւոր, Զավացկին, և զինք հաւիւ ճանչցայ. այս մարդն որ երբեմն ուժեղ ու յաղթանդամ էր, կմախք մը դարձեր էր: Նեղ դաւթին վրայ դանուող դրացիներս քաղաքական յանցաւորներ չէին. անոնց մէջէն մին՝ Տումանսօֆ անուն զինուորը՝ կ'սպասէր շղթայակապ որ չորս հազար ճաղկեայ հարուած ուտէ, այն պատճառաւ որ իր մեծաւորին դիմադրութիւն ըրած էր: Բնաւ չէր վախնար հարուածներէն, իր հասպ կաշին կ'վատահէր, կ'անիծէր ճարը, զօրականներն ու իր ճակատագիրն, և շատ անդամ կ'երդէր այն եղանակն որ այս բանե-

*Նիքոլայ կայսեր եղբայր, որ մինչև յեղափոխութեան ժամանակ Լեհաստանի թագաւորութեան փեղկակալ եր, և մեռաւ 1831ին:

րով կ'սկսի, Օ՜ն, երբեմն՝ ասելիս Լեհասպոնը . . . : Երբ տանջանքի ժամը հասաւ, բանտապահները սոսկալի կատակներ կ'ուղղէին անոր.

«Օ՜ն, օ՜ն, Տուսինսքի, այսօր սատանային քովը պիտի երթաս, այսուհետև տանջանքին չպիտի կարենաս դիմանալ:

Թշուառականը լուռ ալով պատասխանեց.

—Եւ ես ձեզի կ'ըսեմ որ պիտի տանիմ և Սիպերիա գնալէն առաջ ձեզի հետ բաժակ մը դինի քամեմ. Սիպերիայի մէջ աւելի հանգիստ պիտի լինիմ քան թէ ձարին ծառայութեան մէջ:»

Սակայն վերջէն բանտապահներէն իմացայ որ թշուառ զինուորը երկու հազար հարուած ուտելէն ետև՝ նուազեր ընկեր է ձիւնի վրայ, որ իր արիւնով ներկեր է, և յետոյ զինքն առեր հիւանդանոցը տարեր են, այն պայմանաւ որ եթէ կազդուրի, մնացած երկու հազար հարուածն ալ ուտէ:

Իմ դրացիներէս երկրորդն՝ Բոլտավայի գաւառի գիւղացի մ'էր, կարճահասակ և ջղուտ: Սա զինուորական ծառայութենէ խոյս տալով անտառը քաշուած վայրենի կեանք մը կ'վարէր ու մի քանի մարդ սպաններ էր: Այս ալ տանջարան կ'տանէին (վասն զի դանակոծ լինելու և բոլոր կեանքը Սիպերիոյ տաժանելի աշխատութեանց դատապարտուեր էր) պահնորդներուն ղղուելի կատակաբանութեանց կ'պատասխանէր թէ բնաւ չվախնար:

Երրորդ դրացիս, նոյնպէս չղթայակապ առոյգ ու աղուոր զինուոր մ'էր որ, իր գումարտակով ճամբայ ելեր և ամբողջ շաբաթ մը գիւղ մը կենալով՝ օրիորդի մը սիրահարեր էր: Խեղճ պատանին գերի ընկեր էր կամովին և իր դատավճռին կ'սպասէր: Բարի ու անուշ բնաւորութիւն մ'ունէր նա, սովորաբար միշտ կ'երգէր և թէպէտ եղանակը միօրինակ էր, բայց այնքան անուշ ու ողբալի, որ քանի լսէի խորին այլայլութիւն մը կ'զգայի: Անհնար էր որ վատ սրտէ մը այսպիսի յստակ ու մաքուր ձայներ ելնէին: Երբոր բանտէն հանեցին զինք չկրցայ հասկնալ թէ ինչ եղաւ: Շատ կը ցաւէի որ սիրտս դրաւող այն դաշն ու մեղմ ձայնէն զրկուեցայ:

Այս զինուորին խուցը դրին ստորին սպայ մ'որ իրեն

յանձնուած էր յարդի շտեմարանի մը պահպանութիւնը: Սպան կրակ կ'ձգէ այս շտեմարանին մէջ որպէսզի խարդախութիւն մը ծածկէ և յանցաւոր գտնուելով՝ կ'ցնորի: Սակայն հանդարտ խելագար մ'էր. անդադար կ'խօսէր, մահուան կ'պատրաստուէր և կ'յորդորէր իր բացակայ սիրուհին որ գերեզմանին վրայ սև խաչ մը դնէ և անոր ձեռն ու զարդը մանրամասն կ'նշանակէր: Անդամ մի ևս կ'գանգատէր որ իր հօրեղբայրը մարմինը ծակած և արիւնը ծծած էր, միայն ջուր թողլով: Քահանայ մը (pope) կանչեցին, որ շատ աղօթք կարդաց դևը հանելու համար: Վերջապէս՝ բանտուորը քահանային ճամբան գոցեց. մէկ ձեռքը սաղմոսարանն ու միւսը խաչելութեան պատկերը բռնած՝ անդադար կ'կրկնէր.

«Հայրիկ, (batiouchka) գլուխդ պիտի խորտակեմ, եթէ չուտով ինձ հաղորդ չտաս:»

Քահանան ճարպիկութեամբ մինչև դուռը հասաւ և հաւատաց որ պիտի երթայ մասնատուփը բերելու. յետոյ դուրս ցատկեց սաղմոսարանն ու խաչը թողլով խելագարին: Միւս օր միջնաբերդին հրամանատարը խելագարին խուցը բանտ տուաւ, բայց նրբագաւթին մէջ կեցաւ: Բանտուորը՝ սեղմին վրայ կանգնած՝ նշան կ'ընէր անոր որ ներս մտնէ.

«Ներս մտի՛ր, զօրապետ, ականջիդ խօսք մ'ունիմ ըսելու:»

Բայց զօրապետը քահանայէն աւելի խոհեմ գտնուեցաւ. իսկոյն զինուորներ եկան, կապեցին խեղճ խելագարն և հիւանդանոց տարին: Ճամբուն վրայ շարունակ կ'պոռար կատաղաբար.

—Հայրիկ, հաղորդութիւն տուր ինձ:

Խելագարին տեղը՝ վրացի մ'եկաւ, Կովկասի ազատ մարդ մը, որ գերի ընկեր, բերդին մէջ ծանր աշխատութեան դատապարտուեր, և ապա փորձ փորձեր էր խոյս տալու իրեն վիճակակից երկու ընկերներուն հետ: Զինուորներն անոնց ետևէն ընկնելով՝ բռնելու ջանացեր էին, բայց վրացիներն՝ իրենց թիակով, որ իրենց միակ զէնքն էր, երկար ժամանակ ինքզինքնին պաշտպաներ էին: Մինչև ջղեր էր խոյս տալու, միւսը սուինով զարնուեր էր, և երրորդն զինուորներուն ձեռքն ընկեր էր: Ահա այս վրացին էր որ սենեկիս դիմացը կ'բնակէր:

«Լեռներու իշխան» կ'անուանէին զինք, ձեռքն ու ոտքը մինչ շղթայակապ էին, ամբողջ օրն իր անկողնին վրայ անխօս կ'նստէր, տխուր էր և նայուածքը դուռը։ Ես մինչ բարև կ'ասի անոր յարգանքը, երբոր բանտին ներքաղաքութէն անցնելով՝ իր խուցին պատուհանէն կ'նայէի։

Սակայն՝ շաբաթներ ու ամիսներ կ'անցնէին. ձմեռուան ցուրտին յաջորդեր էր յուլիսի հրատապ տաքութիւնը։ Բանտիս մշնուկ օդը ջղային սաստիկ դրգռութիւն պատճառեց ինձ, որ իսկոյն կ'բորբոքէր երբ ամենէ թեթև հակառակութեան հանդիպէի։ Գիշերը կարող չէի քնանալ, և մուգայ յիշելու գերութեանս մէկ մշտաև տառապանքն՝ որու ծանրութիւնը չգիտի կըրնան անշուշտ հասկընալ անոնք որ անձամբ կրած չեն . . . Կ'ուզեմ խօսիլ այն հրամանին վրայ որով պահնորդը պարտաւոր էր դրան լուսամուտն հսկել անդադար իմ գործերուս վրայ։ Կարելի չէ երևակայել թէ ի՞նչ անպատում տանջանք կ'կրէ մարդ երբ կ'տեսնէ որ իր ամենէ աննշան շարժումները կ'լրտեսեն։ Այն օտար, անողոքելի և անդրդուելի աչքն զոր ամենվայրկեան ու ամեն տեղ քեզի կ'հետևի, այն աչքն որ սեսակ մը դժոխային նախանձամութեան տպաւորութիւնն ունի, ո՞րչափ անտանելի է։ Զանց կ'առնեմ բացատրել բանտարի մը զգացմունքն որ, առաւօտ աչքը բանալուն՝ իր անկողնէն կ'տեսնէ երկու աչքեր իր վրայ ուղղուած երկու նետերու պէս։ Մի՞թէ հաւատալի է այս։ Երբոր կ'լուսնար, կ'վնասէի այն անլոյս գիշերն որ՝ թէև շատ երկար էր, բայց դոնէ այն երկու աչքերէն զիս կ'պահպանէր։ Երբեմն համբերութիւնս հատնելով, լուսամուտին կ'մատենայի որպէս զի իմ ամենդուտ աչքերս այն երկու հալածիչ աչքերուն դէմ դնէի, և վայրենիի պէս կ'ծիծաղէի երբոր այսպէս կ'սարսիլի որ պահ մ'անդին դառնան։

Այս բազմայոյզ վիճակիս մէջն էի երբ օր մը այցելութեան եկաւ ինձ զօրապետի օգնական մը, իր հետն ունենալով պաշտօնական մը, բանտապահն և քանի մը զինուորներ։ Հրամայեց ինձ ոտք ելնել ու հանուիլ։

«Բայց ես արդէն հագուստներս թողուցի։

—Ո՛չ, պարոն, պէտք է որ շապիկդ հանես։

—Ես ինչո՞ւ համար։

—Վասն զի հրաման ունիմ մի առ մի նշանակել կերպարանքդ և մարմնոյդ բոլոր նշանները զծել։

—Բայց այդ բարբարոսական ու վայրենի գործ մի է. միթէ բաւական չէ՞ դէմքիս գծագրութիւնը։

—Հրամանս անդառնալի է, կ'աղաչեմ որ հանուիս։

Հարկ եղաւ հնազանդիլ։

Եթէ ես Ռուսաց դատական սովորութեանց աւելի տեղեակ լինէի, այս ընթացքէն ոչիսի հասկընայի թէ ի՞նչ տեսակ պատիժ սպասի կրէի, և թէ ի՞նչ մասալուտ վճիռ սպասի արձակուէր ինձի դէմ, վասն զի այս ամենը տարադրութեան նախապատրաստութիւններ էին։ Սակայն ես բնաւ մտքէս չէի անցներ որ դատավճիռս հասած է, և մինչև անդամ, երբ քանի մ'օր ետք՝ եկան առին զիս և դատարանը տարին, դեռ ևս կարծէի թէ անվերջանալի հարցուփորձի մը սպասի ենթարկէի, որու արդէն սովորած էի։ Բայց դատարանին անսովոր հանդիսաւորութենէ իսկոյն գուշակեցի արտաքոյ կարգի բան մը, և շատ չանցաւ հաղորդեցին ինձ դատավճիռս։

Այս դատավճիռն, որ երկար բարակ պատառներ մէջկ'բերէր, զիս մահուան կ'դատապարտէր, բայց իշխան Բիբիկով զայն մեղմեր և պատիժս Սիպերիոյ մէջ մշտաև աշխատութեան վերածեր էր։ Սակէ զատ՝ զիս ազնուականութեան պատուէն կ'զրկէին, և ուղղութիւնս շղթայակապ սպասի ընէի։

Այս դատավճիռը կարդալէն ետև՝ հրամայեցին ինձ այս խօսքերը սորագրել.

«Լսեցի դատավճիռս 29 յուլիս (Հ. Տ.) 1844։

«Դոստոյեվսկի։»

Անկից առին զիս և տեղական հրամանատարին մօտ տարին. այն տեղ պէտք էր ճանապարհորդութեան ուրիշ զգեստներ հագնիլ, և ոտքիս շղթաներ զարկին։ Սոսկալի՛ բան. այն ժամուան շղթանները բերին ինձ որ Կիսվի ուղևորութեանս առեն այնչան տանջեր էին զիս։ Պարապ տեղն աղաչեցի, պաղատեցի հրամանատարն որ ինձ ուրիշ շղթաներ տայ, բնաւ մտիկ չըրաւ աղաչանքս։ Միայն հրաման առաւ՝ ինձ ուղեկից

լինելու սահմանուած պահակներուն՝ որ մուտաւոր իջեւանին մէջ շղթայիս նեղ օղակները լայնեն։

Զթողուցին որ նորէն տեսնեմ իմ խուցս և դրացի բանտակիցներս, այլ անմիջապէս գիս բակն իջեցուցին, ուր կ'սպասէր եռաձի կառքն (kibitka)։ Նստայ երկու պահակներու մէջտեղն, որոց հրազէնները լեցուած էին։ Բերդին դռները դոցուեցան երբ կառքը մեկնեցաւ, և իմ առջևս կ'բացուէր Սիպերիոյ ճամբան։

ՄԱՍՆ Բ.

Ա.

Տարտիրոսիանց և ազգական կեանք է Սիպերիա։

Ռուսիոյ ազնուական դասուն մէկ գլխաւոր արտօնութիւնն ալ այս է, որ մարմնական պատիժներէ ազատ կ'մնան, տարագրութեան ժամանակ հետիոտն չեն քալեր և աքսորեալներու խումբին չեն միանար։ Բայց այս արտօնութեամբ՝ նոյն իսկ ազնուականներն, տանջանքէ զերծ չեն լինիր հարցուփորձի ժամանակ, միայն վերջնական վճիռն ընդհանրապէս օրինաց համաձայն է, և այս մասին շատ քիչ անգամ անկիւ կը չեղին, ինչպէս որ պատահեցաւ Լեհացի իշխան, Ռոման Սանկուսքոյի համար։ Ստոյգ է որ Նիկոդայոս կայսրն ինքն իր ձեռքով գրած էր Սանկուսքօ իշխանին դատավճռին վրայ այս բառն — հեպիոոն։ Ուրեմն իմ ազնուական ծնունդիս շնորհիւ՝ սովորական ծանր պատիժներէն ազատ մնացի, ինչպէս են ֆնուտն կամ պլեթը (խարազան արջառաջիլ) և խմբովին ճամբորդութիւնը։

Բայց որովհետև իմ մի շատ հայրենակիցներս այս պատիժները կրած են, ինչպէս որ ես ալ աքսորանաց վայրը հասնելուս սոյն տանջանքը կրելու ենթակայ պիտի գտնուէի (քանի որ այն ատեն՝ դատավճռին համեմատ՝ իմ ազնուականի իրաւունքս պիտի դադրէր) այս տխուր առարկային վրայ մի քանի ճշգրիտ տեղեկութիւններ պիտի տամ։

Քնուտն երկար ու բարակ փոկ է, որ տեսակ մը նիւթով եռուած և մետաղի խարտածով լաւ մը ծեփուած է։ Այսպէս պատրաստուելով՝ փոկը յետին ծայր կարծր ու ծանր կ'դառնայ. բայց կարծրանալէն առաջ՝ դիտմամբ բարակցած եղրերը կ'ծալլեն, և այսպէս բոլոր փոկին երկայնքն ակօսաձև ճեղքուած մը կ'յօրինուի, բաց ի ծայրէն, որ միշտ կակուղ ու ճկուն կ'թողուն որպէս զի դահճին դաստակին բոլորտիքը դիւրաւ փաթթուի, իսկ փոկին միւս ծայրն երկաթէ ակիզ մ'ամրացած է։ Քնուտին դոգաւոր կողմն պատժապարտին մերկ կռնակին վրայ կ'ինջնէ և իր եզրերով դանակի պէս կ'կտրէ անոր մորթը. երբ փոկն այսպէս միսերուն մէջ կ'մղուի, դահիճը գայն վեր շվերցներ, այլ հորիզոնական դիրքով իրեն կ'քաշէ և այսպէս մսի կտորներ ակիզովը կ'հանէ։ Եթէ դահիճը կաշառուած չէ և իր գործը խղճի մտօք կ'կատարէ՝ երրորդ հարուածէն ետք՝ պատժապարտն ընչասպառ կ'մնայ և շատ անգամ հինգերորդ հարուածին՝ հոգին կ'աւանդէ։

Մեծն Պետրոսի մէկ հրովարտակաւ քնուտի հարուածի բարձրագոյն թիւն հարիւր մէկ որոշուած է, բայց շատ-քիչ անգամայ թիւին կ'հասնին՝ եթէ կամք չունին պատանելու։ Ռուսական օրինաց տարօրինակ մէկ հանգամանքն ալ այս է. կ'պահանջէ որ քնուտի հարուածը միշտ անզոյգ լինի։ Տանջարանն, որու վրայ կ'դրուի պատժապարտը, կ'կոչուի կ-էնլ (մատակ ձի). զառիվայր տախտակ մ'է որու վրայ կ'կապեն պատժապարտը, կռնակը բոլորովին մերկ, գլուխը վերին ծայրը սաստիկ կպած, ոտքերը ստորին ծայրը, իսկ ձեռքերը տախտակին փաթթուած և կապուած, այնպէս որ ամենէ թեթև շարժումն ընել իսկ անկարելի է։ Որոշուած թուով հարուածները տալէն ետև՝ գժբաղդ պատժապարտը կ'քակեն և ծունկի վրայ բերելով խարանի նշանը կ'դրոշմեն։ Այս նշանն է ՀԷՐ (գող) բառի տառերն որ կնքոյ մը վրայ երկաթէ ապերով փորուած է, և դահիճը պատժապարտին ճակտին ու այտերուն վրայ կ'դրոշմէ։ Երբոր արիւն կ'հոսի, վերքը սև նիւթով մը կ'ծեփեն, որու բաղադրութեան մէջ վառօդ կ'դանուի։ Վէրքը բժշկուելէն ետև՝ նշանն կապուտակ դոյն մը կ'ստանայ և ցմահ

կ'մնայ։ Ատեն մը՝ այս խարանը տալէն ետև՝ մարդուն ոունդն կամքիթը կ'կտրէին երկաթէ գործիքով, բայց Ալեքսանդր Ա. կայսեր իշխանութեան վերջին ժամանակներն այս բարբարոսական ծոնր պատիժը վերցաւ յաւուրս հրովարտակաւ։ Սակայն Սիպերիոյ մէջ մի շատ պատժապարտներ տեսայ որ նոյն վայրագ պատժով այլակերպած էին, իսկ ճակտի վրայ խարան կրողներ անթիւ էին։ Կարծեմ թէ կիներն այս պատժէն ազատ են, վասն զի Սիպերիոյ մէջ և ոչմէկ հատ տեսայ այս երրակի դրոշմով։

Պէրն, դոր շատ անգամ և սխալմամբ Փոսոի հետ կ'շփոթեն՝ դարձեալ մի պատժական գործիք է, նուազ սոսկալի։ Ատոնք երեք փոկ են, որոց ծայրն երկաթէ գնտակներ կան. միւս ծայրը դահճի դաստակին կը փաթթուի։ Ռուսական օրինաց համեմատ՝ պէտք է որ պէտն հինգ վեց լիտր կշռէ. երբոր պատժապարտին կռնակին վրայ իջնէ՝ եռածայր դաւազանի պէս կը զարնէ։ Քնուտին պէս միսը չկորզեր, բայց մորթը կը ճեղքուի հարուածներուն տակ, որ ողնաշարի սիւնն ու կողքերը, երբեմն ալ, ինչպէս պատմեցին ինձ, փորոտիքն իրենց տեղէն կ'անջատէ ու կ'կորզէ։ Այն պատժապարտներն որ թաղամթիւ պէտի հարուածներու ենթարկուած են, սովորաբար թոքական ախտով բռնուած են։ Աւելի ոյժ առնելու համար՝ դահիճը կը հեռանայ, ապա կ'վազէ և տանջանարանին մօտ գալով ուժգին կ'զարնէ թէ՛ քնուտով և թէ պէտով։ Ըսի որ կարելի է դահիճը շահիլ. այն ատեն այնպէս կ'ընէ որ ձեռքի ճկոյթը գործիքին չկռթնի և այս բաւական է հարուածը մեղմելու համար, առանց հսկող զօրականին կասկած տալու։ Ընթերցողը կարող է նոյն փորձն ընելգաւազանով մը։ Եթէ հարուածներուն թիւը շատ է, դահիճը կ'շահին որ առաջին հարուածները սաստէ, այնպէս որ մահապարտը կապէս կողքերուն զարնէ, այնպէս որ մահապարտը շուտով մեռնի և տաժանելի վիշտերէ ազատի։

Երրորդ տեսակ պատիժ մ'ալ կայ որ կէրճ կ'ըսուի. (սկվոշ—ստրոյի) այսինքն երկու կարդ բաժնուած զօրաց մէջէն պատժապարտը կ'տանին կ'բերեն, որ երկու կողմէն հարուածեն. զինուորներու պահուած է սովորաբար այս պատիժը. սակայն հայրենակիցներէս շատերն այս պատիժը կրած են քաղաքականացանցանք

համար։ Այս պատիժը տալու համար նոր կտրուած փայտեր կ'առնեն և մի քանի օր ջրի մէջ կ'թրջեն որ կակուղ ու դիւրաթեք լինին։ Զինուորներն՝ իրարմէ հեռու՝ երկու կարգ կ'շարուին, որպէս զի կարողանին անարգել և բոլոր զօրութեամբ պատժապարտը հարուածել։ Պատժապարտը՝ մինչև մէջքը մերկացած՝ մէջտեղէն կ'անցնի. ձեռքն առջևէն կապուած են հրացանի վրայ, որու սուրնն իր կուրծքին կ'կոթնի. իսկ բունէն զինուոր մը կ'բռնէ ու առջևէն երթալով կ'քաշէ։ Սովորաբար ծանր ծանր կ'քալեցընէին պատժապարտն որ անընդհատ հարուածներ կ'ընդունի մէջքին ու պարանոցին վրայ. եթէ նուազի ու վար ընկնի՝ նորէն կ'վերցընեն ու կ'շարունակեն։ Մեծին Պետրոսի մի հրովարտակն հարուածներու վերին թիւը տասներկու հազար կ'նշանակէ, բայց հազիւ պատահած է որ մի անգամին երկու հազարն անցնի, և այս այն ժամանակ կ'պատահի՝ երբոր իբրև «օրինակ ցոյց տալ» ուզուի։ Սովորաբար երկու հազար հարուածէ ետք՝ պատժապարտը հիւանդանոց կ'տանին և երբոր վերքերը բժշկուի, վերստին կ'հանեն դուրս որ մնացած պատիժը կրէ։

Երբ պատժապարտը քիչ մը կազդուրի և առողջանայ զինուորական հիւանդանոցին մէջ, տէրութեան գլխաւոր քաղաքներէն մին կ'ուղարկուի։ Այն տեղ խելմը պատժապարտներ կ'գումարուին, իրենց պատժին համեմատ՝ զատ զատ կ'բաժնուին, այսինքն ոմանք միայն կ'տարագրուին (պօսէլենիէ), ոմանք բռնի աշխատանաց (կատորկա) կ'ենթարկուին։ Այսպէս կարգ կարգ որոշելէն ետև՝ խումբ խումբ կ'բաժնուին. ամեն մէկ խումբն ոչ երկու հարիւր յիսունէն աւելի և ոչ հարիւրէն պակաս պէտք լինի։ Խումբերը կազմուելէն ետև՝ Սիպերիա երթալու կ'մեկնին, և այս տխուր ճակատագրին դատապարտուած մարդոց ամենէ մեծ տանջանքներէ մէկն ալ այս ուղևորութեան համար անցած ժամանակն է։ Օրինակի համար՝ Ֆիոմէն մինչև Դօպոլսք ամբողջ տարի մը կ'տևէ, և եթէ պատժակիր կարաւանն աւելի հեռու տեղ երթալու դատապարտուած է, օրինակի համար՝ Իրքուտքի նահանգին Նէրզինսքի հանքերը՝ այն ատեն ուղևորութիւնն երկու տարի կ'տևէ։ Բուռն աշխատանքի դատապարտուողներն աւելի ծանր պահպանութեան ու հսկողութեան ենթարկուած են քան թէ աքսորականները, որք առանձին խումբերու բաժնուած են։ Այս կարաւաններն, որոց ետ ստէպ կ'հանդիպէի իմ տխուր տարագրութեան ժամանակ, հետևեալ կարգով կ'յառաջանային։ Առջևէն կ'ձիավարէր ծանրաքայլ Կազաքմի՝ բոլորովին սպառազէն և նիզակ ի ձեռին, ասոր ետևէն կ'գային պատժապարտներ առանձին կամ երկերկու հոգի ոտքէն կամ ձեռքէն կաշկանդուած. ասոնց ետևէն կ'երթային քսանի չափ մարդիկ, որոց դաստակներն երկաթէ երկար գաւազանի մը կապուած էին երկու կողմէ, ուրիշներ ալ նոյնպէս կապուած էին և ասկէ զատ իրենց ոտքը շղթայի զարնուած. կիները՝ գոնէ իմ տեսածներս, առանց շղթայի էին։ Կարաւանին երկու կողմէ զինուորներ կ'քալէին, լեցուն հրացաններով, մինչդեռ Կազաքներ ասոնց բոլորտիքն ազատօրէն կ'ձիավարէին։ Կալանաւորներուն ետևէն կ'գար՝ առաջին կառքին մէջ՝ կարաւանին հրամանատար զօրականը, գլխիկոր և ծխափայտը բերանը դրած։ Միւս սայլերու մէջ էին հագուստներն ու հիւանդները. այս վերջիններու վիճակն անուր մը ճգուած և սայլի ցիցէն կապուած էր։

Միտս կ'ճմլուէր միշտ, երբ այսպիսի կարաւաններու կ'հանդիպէի. մանաւանդ կանանց տեսարանը աղիողորմ էր։ Սովորաբար խոր ու տխուր լռութիւն մը կ'տիրէր այս խումբերու մէջ, և միայն շղթաներու խուլ ձայնէն կ'վրդովէր։ Անտարակոյս ասոնք ճշմարիտ չարագործներ էին, ընկերութեան ամենէ անպիտան մասը. բայց ո՞վ կարողէ ըսել թէ չկային անոնց մէջ և շատ անմեղներ, քաղաքական յանցաւորներ ու հայրենակիցներ։ Այնուհետև՝ երբ Իրտիշ գետի ափերուն վրայ կ'գտնուէի, ինձի պէս երկու քաղաքական տարագիր ընկերներ ունեցայ՝ Աքէզիցկին և Սիցևսկին, որ կարաւաններուն հետ հետիոտն ճամբորդած էին։ Ասոնք մանրամասն տեղեկութիւններ տուին ինձ այս տեսակ ուղևորութեան վրայ։ Ինչպէս՝ օրինակի համար, եթէ այս թշուառներէն մին քնանայ, միւս ընկերը չկրնար շարժիլ առանց իր ընկերն արթնցընելու, քանի որ երկուքն ալ նոյն գաւազանին կապուած են, առանց ատոտիկ ցաւ պատճառելու, եթէ

շարժումն սաստիկ լինի, ինչպէս որ կ'պատահի սովորաբար քնացած ժամանակ։ Օթևանի ու ճաշի ժամանակ՝ բոլոր կալանաւորները բոլորակի կ'նստին, մինչդեռ զինուորները հեռուն կ'հսկեն և Կապաքները ձիերով շրջան կ'ընեն։

Կարաւանը շաբաթնակ երկու օր կ'քալէ, երրորդ օրը կ'հանգուցանայ, և այս պատճառաւ Նիժնի Նովկորոտէն սկսեալ՝ ուր դիւղերը կ'նուազին՝ դիւմանդ և որոշեալ հեռաւորութեամբ՝ տուներ շինած են կալանաւորները պատսպարելու հանգստեան օրերը։ Այս բնակարաններն երկայն են, միայարկ, ցած, ամայի անապատներու մէջ, որ ժամանակ առ ժամանակ կը կենդանանան և տարօրինակ տպաւորութիւն մը կ'ընեն։ Նոյնպէս զօրանոցներ շինուած կան բոլոր ճամբուն վրայ՝ անհաւասար հեռաւորութեամբ, Փիսվէն ու Սմոլինսկէն մինչև Նէրզինսկ։ Միշտ զօրական կը գտնուի այս զօրանոցներուն մէջ, որպէս զի կարելի լինի փոխանակել առաջին պահնորդներուն հետ։ Զօրականը պատասխանատու է կալանաւորներուն համար և անոնց վրայ բացարձակ իշխանութիւն ունի։ կարող է պատժել փայտով, ձաղկով։ ուսի և անիրաւութիւններն անխուսափելի են։ Սակայն ըսինք ի պատիւ մարդկութեան, որ այս զօրականներէն շատերը ոչ միայն իրենց հրամանատարական իշխանութիւնն անզթաբար չեն գործածեր, այլ շատ անգամ խնամածու ու կարեկից կերպով կ'վարուին իրենց յանձնուած թշուառներուն հետ։ Սաստիկ ցրտերու կամ Սիպերական գետերու յորդած ժամանակ (մայիսէն մինչև յունիս կէսը) աքսորական խումբերն իրենց գտնուած օթևաններուն մէջ կ'մնան, և այնպիսի կարգով կ'ուղևորին, որ ամեն շաբաթ խումբ մը կը հասնի Դոպոլսկ, մինչդեռ ուրիշ մ'անկից կ'նէնկ և իր ճամբան կ'շարունակէ։ վասն զի Դոպոլսկի մէջ ջրաբաղնիներու յանձնաժողով մը կայ, որ ամեն մէկուն վերջնական տեղը կ'ցուցնէ ինչպէս որ կ'պահանջեն հասարակաց աշխատանքն և տեղական յարմարութիւնները։ Հաշուած են որ տարադիրներուն թիւն ամեն տարի մինչև տասն հազարի կ'հասնի։

Հարկ կ'համարիմ պարագայ մ'ալ յիշել, զոր պատմած է ինձ նոյն ինքն Սիբիրցիին որու վրայ որդէն

խօսեր եմ։ Երբոր իր խմբին հետ Մոսկուայէն կ'անցներ Լէօխտէմպէրկի դուքսն և իր կինն Մարիա մեծ դքսուհին անոր կ'հանդիպին։ Նիկոլայի աղջիկն իմանալով որ այն խմբին մէջ Լեհացի քաղաքական դատապարտեալներ կ'գտնուին՝ կ'հրամայէ որ իրենց ցոյց տան, և մի ժամկանակ առնլով անոնց կ'նայի։ բառ մը անգամ չարտասաներ, այլ շարունակ կ'սրբէր աչքերէն վազած արտասուքը։ Լէօխտէմպէրկի դուքսը կ'մօտենայ Սիբիրցիին, անունը կ'իմանայ և անոր կ'ըսէ թէ Կայսրէն ներողութիւն պիտի խնդրէ անոր համար։ Դուքսը մոռցաւ թէ ոչ չհամարձակեցաւ այդ ներողութիւնը խնդրելու, չգիտեմ։ Այս ատոյդ է որ շատ ժամանակ ետք Սիբիրցին տեսայ և ելնելէս ետք դարձեալ այն տեղ թողուցի։

Բ

Տարօրինակ հանդիպում։ մինչդեռ կիպիոկան կը սրանար դէպ ի այն երկիրն ուր կ'դառնայ, ուրիշ կ'տանէր իրրև ոճրագործ մ'որ դառն ճակատագրի մը դատապարտուեր էր, կարող եղայ տեսնել իմ թշուառութենէս աւելի մեծ աղէտներ։ ատեն ատեն կ'դիտէի այն խմբերն որոց քովէն կ'անցնէի և իմ վիճակս աւելի երջանիկ կ'գտնէի։ այս բաւական չէ, հարկ եղաւ ինձ ըսել որ ես ալ չպիտի աղատէի այս սոսկալի տառապանքէն ու նախատինքէն եթէ իմ տոհմական արտօնութիւնս չունէր, ծննդեան արտօնութիւն մը զոր ես կ'մերժէի համոզմամբ, իսկ Կայսրն զայն կ'պահպանէր, մինչև անգամ ինձի համար։ Եւ համեմատելով իմ վիճակս այս աքսորականներու դատակին հետ հարկաւ իմս շատ աւելի տանելի էր։ ատոյդ էի որ շուտ, շատ շուտ պիտի հասնիմ իմ տեղս։

Ես չարագործներու ու մարդասպաններու հետ կապուած չէի, և ձեռքերս ազատ էին։ Միայն շղթայիս նեղ օղակները դիս կ'նեղէին և այս մասին չեմ պատկառիր խօսելու։ Ստուգիւ շատ ցաւ կ'զգայի, բայց այնքան աղաչեցի որ պահապաններս յանձն առին այն անիծեալ օղակները լայնել մօտակայ օթևանի մը մէջ, թէև այս մասին իրենք հակառակ հրահանգներ ընդուներ էին ի Կիով։ Առաջ իմ պահապաններս մերժեր էին ինձ հետ խօսակցիլ, ամեն անգամ որ անոնց հետ խօսիլ ուզէի, ըսելով որ հրաման չունին ինձի բառ մը ուղղելու։ Սակայն շարունակ ու երկար յարաբերութենէ ստիպուեցան իրենց խստութիւնը մեղմել։ Քիչ առ քիչ սկսանք աղատօրէն խօսիլ և միասին խմել այն Ռուսական օղին, որու կազդուրիչու առողջարարյատկութիւններն այն առեն սկսայ գնհատել։ Իմ երկու պահապաններս քարասիրտ չէին, բայց իրենց պաշտօնէն աւելի չմոթած կ'երևէին քան թէ ուրախ։ Օր մը յոգնութենէ և ցաւերէ հիւանդ եղեր էի և օթևանի մը մէջ պառկեր էի, երբ հետևեալ խօսակցութիւնն ականջիս զարկաւ.

«Շատ դժբաղդ ենք. եթէ որոշեալ օրը Օմսկ չհասնինք՝ դանակոծ պիտի լինինք, իսկ եթէ մարդը շատ ստիպենք և եթէ ճամբան յանկարծ մեռնի՝ նոյնպէս պիտի պատժուինք։ Մրջաւի դժբաղդ ենք։»

Իմ մահուանս կամ ինքնասպանութեանս երկիւղը շարունակ կ'պաշարէր անոնց միտքը։ Երբ լաստակոյտով դետերէ կ'անցնէինք, իմ երկու թևերս կ'բռնէին որ չլնի թէ ինքզինքս ջուրը նետեմ. իսկ կերակուրի առեն միսը մանր մանր կ'կտրէին և ոսկորները կ'հանէին որ դրդալով ուտեմ։

Թէև պահապաններս անգութ չէին, բայց զարմանալի անտարբերութիւն մը կ'ցուցընէին իմ տխուր կացութեանս համար։ Օրինակի համար՝ վերը յիշած խօսակցութեանս մէջ՝ դիս իբրև մարդ, իբրև տառապագին և դժբաղդ արարած մը չէին նկատեր. իրենց համար վտանգաւոր աւանդ մ'էի, որմէ չուտով ազատիլ կ'ուզէին. մի միայն իրենց վիճակին կ'արդահատէին։ Բայց միայն ասոնց վրայ չտեսայ այս անձնական մարդասիրութիւնն և ուրիշին աղէտից համար անդթութիւնն։ Ուրալի լեռներէն անցնելու ժամանակ

նոր կառավարն, որ խոշոր ու կոպիտ թշուառական մի էր, ինձ մօտեցաւ և հարցուց.

«Միթէ Լեհացի՞ ես. ետևէդ ուրիշ քանի՞ հեղեղակ կ'դայ։

— Եւ ոչ մէկ հատ։

— Եւ ոչմէկ հա՛տ։ Զո՞վ կ'խաբես։ Ամբոր հեղեղակ մը կ'երևի Լեհացիի մը հետ, կարելի է դրաւ դնելոր ուրիշներ ևս կան։ Այ Լեհացիները կ'վնասան. ճշմարիտը չգիտեմ թէ ի՞նչպէս չեն սպառիր . . . ։»

Սակայն շատ անիրաւ և ապերախտ պիտի լինէի եթէ չըսէի որ այսպիսի ծանր դիտողութիւններ հազուադիւտ և բոլորովին բացառիկ էին. մինչև անգամ հակառակ էին առ հասարակ ինձ ցոյց տրուած վարմունքին։ Այո՛, ժողովուրդն ամեն տեղ ինձ կարեկցութիւն ու հոգասիրութիւն ցուցուց։ Երբոր անգամ մը Մեծ Ռուսաստան մտնելով՝ կ'յառաջանայի, շարունակ արդահատութեան ու համակրութեան նշաններ կ'տեսնէի։ Քանի՛ քանի անգամ ուղևորներ և մանաւանդ կիներ ետևէս վազելով՝ կ'ուզէին բռնի տալ ինձ այլև այլ դրամական պարգևներ. քանի՛ քանի անգամ կառքի իջած ժամանակ դեռատի աղջիկներ տեսայ որ կանգ կ'առնէին, և տրտմագին կ'ճայէին ինձ մինչև անգամ իրենց աչքը կ'սրբէին։ Հարուստ վաճառական մը, Նիժնի–Նովկորոտի տօնավաճառէն դառնալու առեն, թախանձանօք երկու հարիւր բուբլի տուաւ ինձ։

«Այս դումարն ինձի համար չնչին դումար մ'է, ըսաւ, իսկ քեզի համար կրնայ օգտակար լինիլ։»

Եթէ միշտ մերժեցի ընդունիլ այսպիսի դրամական պարգևներ, զոր անտարակոյս Ռուսական իշխանութիւնը ձեռքէս պիտի առնուր, ընդ հակառակն աներկիւղ ու երախտագիտութեամբ կ'ընդունէի այն կերակուրներն ու ըմպելիներն զոր ամեն կողմէ բնակիչներն ինձ կ'բերէին։ Ուր որ իջնէինք, օթևանի տէրը չէր մոռնար թէյ կամ օղի մեծարելու ինձ, և իր կինը կամ աղջիկներն կարկանդակ, աղած ձուկ, միրգ կը պարգևէին ինձ, նոյնը կ'ընէին նաև դրացիները։

Դուլա քաղաքին մօտ՝ իջևանի մը մէջ պաշտօնական մ'եկաւ, համազգեստ հագած և դողդողալով թաշկինակի մէջ փաթթած մի ծրար տուաւ ինձ ըսելով.

— Ընդունէ՛ այս ի պատիւ սուրբիս։»

Ես չհասկըցայ միտքն ու համաձգեստէն կասկածելով՝ մերժողական նշան մ'ըրի։

«Դու Լեհացի ես, ըսաւ ինձ քիչ մը կարմրելով, և մեր սովորութիւնները չգիտես։ Այսօր իմ տօնս է, և այսպիսի մի օր մեր պարտքն է բաժին հանել դժբաղդներուն։ Ուրեմն յանուն իմ սուրբիս ընդունէ, կ'աղաչեմ։»

Այսպիսի սրտաշարժ և քրիստոնէավայել աղաչանքի չկրցայ դիմադրել. առի ծրարն որ հաց, աղ և քանի մը դրամ կ'պարունակէր։ Ստակը պահպաններուն տուի, և պաշտօնակալին հետ կապը կտրեցի։ Այն ատեն նա հարցուց ինձ.

«Ինչո՞ւ համար քեզ Սիպերիա կ'տանին։

— Վասն դի Լեհացիի պէս զգացի ու մտածեցի։

— Իրաւունք ունէիր, քանի որ Լեհաստան կը գտնուէիր. բայց ինչո՞ւ համար Լեհացիք կ'ուզեն որ իրենց մտածութեան ձևը Ռուսիոյ մէջ փոխադրեն։ Մեր քաղաքին զօրանոցին մէջ տասն Լեհացիք կան, որ 1831ի յեղափոխութենէ ետք՝ մեր զօրախմբին հետ խառնուեցան. կ'հաւատա՞ս, պա՛րոն, այս Լեհացիներն կ'գրգռեն մեր Ռուս զինուորներն համոզելով որ շատ դժբաղդ են, թէ Կայսրն է այս դժբաղդութեան պատճառը, և թէ իր իշխանութիւնն օրինաւոր չէ։ Արդ՝ ի՞նչ է ասոր հետևանքը. միայն իրենց կացութիւնն աւելի կ'ծանրացընեն և Ռուսական օրինաց խստութիւնն իրենց վրայ կ'հրաւիրեն։ Այս Լեհացիք չեն մտածեր որ մեր աղգը ունի և պարտաւոր է ունենալիր բնաւորութեան յարմար կառավարութիւն մը։ Ռուս ժողովուրդը դեռ կոչտ է և անմշակ. ի՞նչպէս կարելի է ուրիշ տեսակ կառավարութեան ուրիշոր և է քաղաքական վերանորոգման փափաքիլ այսպիսի վիճակի մը մէջ։ Եթէ մեր օրինաց խստութիւնը քիչ մը նուազի՝ քաղաքացիներուն կեանքն ու հարստութիւնն մեծ վտանգի կ'մատնուին, սպանութիւններ, յափշտակութիւններ և հրդեհներ պիտի պատահին։ Ժամանակին հետ՝ կարելի է մի քանի փոփոխութիւններ ընել, բայց դեռ այդ ժամանակը հասած չէ, և առայժմ ասոր վրայ մտածելն աւելորդ է . . . ։»

Բոլորովին տարբեր տեսարան մը պատահեցաւ

Գաղանի մօտ։ Երբ Իլլեան մտայ, մեծ զարմանքս տեսայ որ օթևանին տէրն միանդամայն քահանայ էր։ Կոչնականներով ու գիւղացիներով չրջապատուած, և ահագին չիշ մը օղին առջևը դրած՝ ֆոֆոշկան երկար ճառ մը բաժակներու ուժով կ'ուռոդէր և կ'զուարթացընէր։ Զգիտեմ թէ ի՞նչ նշանէ հասկըցաւ որ Լեհացի եմ. շուտ մը ոտք ելաւ և իմ վրայ թափեց իր ճարտասանութեան հեղեղը, ողբալով Լեհացւոց ապստամբական ոգւոյն վրայ, առ Զարն ունեցած անհնազանդութեան վրայ և այն աղէտից վրայ որ ոչ միայն իրենց գլխուն կ'թափին, այլև բոլոր Ռուսիոյ վրայ։ Սակայն այս օղիական պերճախօսութիւնն չարգիլեց որ ինձ բաժակ առաջարկէ. խնդիրը կատարեցի և խոհեմութեամբ քաշուեցայ դացի. մինչդեռ քահանայն անդադար կ'խաչակնքէր գլխուս։ Զգիտեմ թէ այս խաչի նշանով կ'օրհնէ՞ր գիս թէ ոչ կ'հալածէր իր վրայէն չար ոգին ապստամբութեան դէն։

Թէև՝ առ հասարակ՝ իմ վրայ կ'գթային և այս կարեկցութեան սրտաշարժ նշանները կ'տեսնէի աղքատիկ մարդոց կողմէ և մինչև անգամ դինեսէր քահանայի մ'անիմանալի օրհնութիւններէն, բայց ուրիշ մոբացկաններ իզմէ ողորմութիւն կ'խնդրէին և ես աչքի զլանար։ Եթէ չեմ սխալիր, օր մը Սարանսկ քաղաքին մէջ՝ երբ չղթայակապ կ'սպասէի որ պահնորդները փոխուին, մարդ մը տեսայ որ ձեռքն երկընցընելով իզմէ ողորմութիւն կ'խնդրէր։ Զինուորական մի քանի սաղաւարտիկ ունէր և կուրծքին վրայ մի քանի չքանշաններ որ այլ և այլ պատերազմներու նշաններն էին։ Իր զինուորական ծառայութենէ ազատած զինուոր մ'էր նա, և ինչպէս որ կ'երևէր՝ կայսերական գունդին կ'վերաբերէր։ Այլանդա՛կ պահպաններ. Զարին հաւատարիմ ու արժանի մէկ ծառայն հաց կը խնդրէր այն մարդէն, որ նոյն Զարէն պատժուած էր՝ իբրև ապստամբ և թիարանի դատապարտուած . . . ։ Անտարակոյս՝ աշխարհիս մէջ ամենէ դժբաղդ մարդն, Սիպերիոյ ոճրագործէն աւելի թշուառը, Ռուս զինուորն է։ Թողունք Ռուս զինուորին քսան քսանհինգ տարուան* զինուորական ծառայութիւնը, որով իր

* Ռուսիոյ կառավարութիւնն ներկայ Ալեքսանդր կայսրը ։

կեանքն ու առողջութիւնը կ'մաշուի, թողունք գաւա-
զանի ու ճաղկի հարուածներն, որ հաղարներով կ'կրէ
իր երկար և դժնդակ նահատակութեան ժամանակ,
դոնէ՝ երկար տարիներ գէնք կրելէն ու ծեծ ուտելէն
ետև՝ իր ծերութեան օրերուն մէջ անպաշտպան ու
թշուառ չմնար։ Շատ շատ՝ եթէ կառավարութիւն
զինուորութեան մէջ այս մաշած և զառամած զինուոր-
ներէն միոյն չնորհ ընէ, կ'թողու միայն որ արքունական
հողի վրայ բնակի, իր ընտանիքէն և բնիկ երկրէն հա-
զարաւոր մղոններով հեռու, առանց անոր բան մը
տալու, որպէս զի կարող լինի գոնէ երկիրը մշակել ու
ապրիլ։ Իսկ եթէ կարգուի, իր արու զաւակն տասն
տարեկան լինելուն՝ պարտաւոր է Զարին նուիրել։
Այս ստուգապէս գիտէ զինուորն որ իր որդին ալ իրեն
նման թշուառ կեանք պիտի վարէ։ Ո՛րչափ խնամքի կա-
րօտ են այս հին զինուորներն. և սակայն շատերն ամ-
բոցներն ու բանտերը կ'ղրկուին, կամ իրենց տունը
կ'ուղարկուին, և այն տեղ՝ ծեր ու որ և է աշխատու-
թեան անյարմար, ծանր բեռ մը կ'դառնան իրենց
ընտանիքին, որու առջև բոլորովին օտար կ'երևին։
Բայց կառավարութիւնն արձակուրդի վիճակին մէջ
բացորոշ կ'պատուիրէ մօրուս չթողուլ և չմուրալ։
Դժբաղդաբար աւելի դիւրին է առաջին պատուէրը
պահել քան թէ երկրորդը։

Իմ արդէն յիշած անհանգստութեանս պատճառաւ
մէկ քանի օր միայն ակամայ դադար առնլէն ետև՝ մեր
ճամբան շարունակեցինք, և միայն ձի փոխելու և ճա-
շելու համար օթևան կ'իջնէինք։ Գիշեր ցերեկ կ'քշէինք
և սայլակին մէջ նստած կ'քնանայինք. բայց իմ քունս
աւելի անհանգիստ էր քան թէ իմ երկու պահնորդնե-
րուս։ Սայլակին անդուլ երերումէն ու ցնցումէն՝ ամեն
վայրկեան շղթաներս կ'շարժէին և ոտքերս կ'զարնէին։
Այս տանջանքին առաջն առնլու համար ստիպուած էի
շղթաները դէպ ինձ քաշել և շարունակ ձեռքով բռնել։
Իմ պահպանողներուս մօտ անքուն տանջուելով՝ որք խո-
րունկ կ'քնանային, և որոց սաղաւարտներն շատ ան-
դամ կ'բռնէի որ հովը չտանի, խնդուքս կ'բռնէր երբ

քոլ, զինուորական ծառայութեան պարտիներուն ընթացքին Ս. Թ.
ցած է։

կ'մտածէի որ ես իմ պահապաններուս վրայ կ'հսկէի։
Միօրինակ էր այս ուղևորութիւնն թէև սոսկալի արա-
գութեամբ կ'յառաջանայինք, կամ լաւ ևս ըսեմ՝ նոյն
իսկ այս արագութիւնն էր պատճառ որ չէի կարող չորս
դիս նայիլ և նոր տպաւորութիւններ ստանալ։ Միջին
հաշուով օրն 176 վերստ (հազարամէտր) ճամբայ կտրե-
լով՝ անցած էի հետզհետէ Զէրնիքով, Օրէլ, Դուլա,
Բիաղան, Վլատիմիր, Նիժնի-Նովկորոտ, Գազան։ Վի-
ատքա և Պէրմ գաւառներէն, Ուրալ ու Դոպոլոք լեռ-
ներէն անցած էի, և քսան օրէն ետք՝ Լեհաստանի ար-
գաւանդ դաշտերէն փոխադրուեր էի արևմտեան Սի-
պերիոյ ծոցը և բնաւ չգիտէի թէ ի՞նչ ժողովուրդներ և
երկիրներ թողած եմ իմ ետևս։

Դեռ Օմսք չհասած՝ վերջին օթևաններուն մէկուն
մէջ՝ ձիերը փոխելու ժամանակ՝ զինուոր մը իմ առջևս
կեցաւ հանդարտութեամբ եղանակ մը սուլելով որ ինձ
դող ազդեց. այս եղանակն էր Տոմպրովսկիի եղանակն.
«Ո՛չ, Լեհաստան չպիտի կորսուի»։ Այս զօրականն էր
Մաղովիի մէկ հայրենակիցն, 1831ի պատերազմներէն
մին, հին գինակից մ'որ Սիպերիոյ զօրաբանակին մէջ կը
գտնուէր։ Կամացուկ մ'ինձ մօտեցաւ և հաղիւ ժամա-
նակ գտաւ հարցընելու.

«Ի՞նչ կ'ընեն մերայինք և ի՞նչ կ'խօսին Ֆրանսայի
մէջ։»

Վերջապէս 1841 օգոստոսի 20ին՝ գիշերը շատ ուշ
ժամանակ՝ կանգ առինք ամրոցի մ'առջև։

«Ո՞վ է այն» պոռաց պահակը մարակոցին բարձուն-
քէն։

— Դժբաղդ մը» պատասխանեց սայլավարը։

Դռներն անմիջապէս բացուեցան. Օմսք քաղաքը
հասեր էինք։

Ռուսիոյ պաշտօնականներուն սովորութեան համե-
մատ՝ տենդային արագութեամբ՝ քսան վայրկենի մէջ՝
իմ դալուստս յայտարարեցին բերդին հրամանատարին
Գորչաքով իշխանին, որ արևմտեան Սիպերիոյ ընդհա-
նուր նահանգապետ էր։ Շուտ մը հրման հետևանքով որ
դիս տանին զօրապահակն, իշխանին բնակարանին մօտ։
Դրին զիս սենեկի մը մէջ, որ արդէն կ'գտնուէր մի
զօրական, կանոնապահութեան անհնազանդ լինելուն
համար։ Նա մի պատանի էր, լաւ գերդաստանէ, հա-

զիւ քսան տարեկան, գեղեցիկ, ընորհաղէմ, զուարթ, որ Ֆրանսերէն կ'խօսէր և իր զուարթութիւնն կ'հաղորդէր անոնց որ կ'մօտենար։ Երբ իմացաւ որ Լեհացի մ'եմ, եռանդագին հիւրասիրեց զիս, առատ թէյ խմցուց և ամեն ճիգը թափեց որ ինձի համար անկողին մը պատրաստէ։ Թէև երկար ճամբէն շատ յոգնած էի, բայց գիշերուան մեծ մասը խօսակցելով անցուցի սոյն պատանիին հետ, վասն զի մեծ հաճոյք կ'զգայի անոր զուարթ զրոյցներէն։ Նա շատ քաջ կը ճանչէր Սիպերիոյ երկիրը և շատ ճշդրիտ ու օգտակար տեղեկութիւններ տուաւ ինձ այս մասին. բայց իմ ուրախութեանս չափը լցուց, երբ Սիպերիոյ աշխարհացոյց տախտակը բացաւ իմ առջև։ Ցենդոտ հեռատաքրքրութեամբ զայն քննեցի, բոլոր նշանները բացատրել տուի, զայն սերտեցի և իմ յիշողութեանս մէջ ջանացի տպաւորել այլև այլ ճամբաներ ու վտակներ. սիրտս ուժգին կ'զարնէր, աչքս չէի կարող աշխարհացոյցէն հեռացընել, և ի վերջէ զօրականը դիտեց իմ յուզմունքս։

— Ա՜հ, ըսաւ, ի՞նչ կ'խորհիս, արդեօք խոյս տալու հնար մը կ'փնտռե՞ս. խնդրեմ, այդ բանը մոքէդ հանէ', վասն զի բոլորովին անկարելի է։ Քու մի՛ շատ հայրենակիցներն այդպիսի փորձեր ըրին, բայց անտարակոյս ինքզինքնին երջանիկ պիտի համարէին, եթէ ամեն կողմէ հալածուելէն, անօթի ծարաւ տանջուելէն, յուսահատութենէ ցնորելէն ետև՝ կարողացան նէին ինքնասպանութեամբ ազատիլ իրենց յիմարական ձեռնարկութեան հետևանքէն։ Այս հետևանքն են անշուշտ կնուան և թշուառ կեանք մը զոր չեմ կարող նկարագրել։ Ի սէր Աստուծոյ, հեռացո՛ւր մոքէդ այդպիսի մտացմունքներ։»

Ընկերիս հարցուցի թէ ի՞նչ էր իր կալանաւորութեան պատճառը։

«Միթէ ես գիտե՞մ, պատասխանեց նա։ Առաջին անգամը չէ որ ես կ'ողջունեմ այս ամրոցին պատերը. այս հաճոյքը դէթ ամիսն երկու անգամ կ'վայելեմ։ Հէն գլուխ դնդապետ մ'ունինք, որ յիտին ծայր խիստ է զինուորական կանոնապահութեան մասին, և որովհետև՝ ինչպէս կ'դիտես, իմ սե՛ւ թէ ճերմակ բաղդիս ընեմ, միշտ զուարթ և խնդումերես եմ, ասոր հա-

մար ստէպ կ'բանտարկէ զիս, որպէս զի ծանր դէ՛ մարդ լինիմ։ Անոր բարկութեան գլխաւոր պատճառն այս է, որ երբէք իրմէ բան մը չեմ խնդրեր. այս վարմունքս կ'անուանէ նա լրբութիւն և մոռածելու ազատութիւն։

Յետոյ պատմեց ինձ իր խորհուրդները. մտադիր էր ուրիշ զօրագունդ անցնիլ, քանի որ դնդապետը իրեն դէմ ոխ պահեր էր։ Կ'յուսար որ նուաճեալ Կիրդիզներու մէջերթայ, որոց լեզուն կ'սորվէր, նոյն ամրոցին մէջ բանտարկուած բնիկներուն հետ խօսակցելով։ Երկրորդ օրը նախաճաշէ անդամ մը սոյն անպատուի զաւակ՝ մի խանի հետ, և այս տեսակցութեամբ առաջին անգամ առիթ ունեցայ զննել սոյն պատերազմասէր և թափառական ժողովրդոց մէկ ներկայացուցիչն, որ յայնկոյս Օրէնպուրգի դտնուած անապատները կ'բնակին։

Միւս օրն՝ առաւօտեան ժամն ութին, Տէկրաւ դնդապետին այցելութիւնն ընդունեցի որ ամրոցի հրամանատարն էր, մի պատկառելի ծերունի, սաստիկ դէր, մարդավար և Շուեդացի սերունդ։

«Ի՜նչ դժբաղդութիւն, ի՜նչ դժբաղդութիւն, կը կրկնէր անդադար, որ մի անգամ աղատ օտարութեան մէջ մտածեցիք վերստին դալ։»

Շատ չանցաւ Օմսկ քաղաքին ոստիկանութեան տեսուչ՝ Պ. Նալաբարդին եկաւ, բարձրահասակ, բարակ, նիհար մարդ մը, նեղտի պէս չիտակ, լարի պէս ձկուն, երկայն դէմքով, մանր, խոր ու սուր աչքերով, որ խառնուրդ մ'էր Գաղաղ, Ձիրքէզ և Թաթար ցեղերու։ Իր դէմքին վրայ անդղի նման բան մը կար, և իրօք՝ վերջէն իմացայ որ յետին ծայր աբիւնուչտ ու անդութ էր։ Սակայն այս մարդն ակամայ եռանդ մը կը յայտնէր։ Նա հարցուց ինձ թէ ի՞նչպէս յանդգներ էի վերադառնալ առանց Զարին հրամանին, և երբ պատասխան տուի թէ մի մեայն հայրենեաց տենչը զիս զրդռեց, յուզուեցաւ և պոռաց.

«Ո՜ հայրենիք, հայրենիք, դու ի՜նչանոյշ բան ես . . . :»

Կէսօրին՝ զիս Կորչաքոֆ իշխանին մօտ կոչեցին և մեծ սրահ մը տարին, ուր կ'դտնուէին մի շատ պաշ-

ուենատարներ որ գիր կ'գրէին։ Քիչ մ'ետք՝ ոմանք ոտք ելան և ձեռքս սեղմեցին Լեհերէն խօսելով։ Ասոնք հայրենակիցներ էին, առոյգ երիտասարդներ, քաղաքական գատապարտներ որ վարչութեան դիւանատան մէջ կ'աշխատէին։ Ասոնց օրինակէն սիրտ առին նաև Ռուսներն, ինձի մօտեցան և սկսան իմ վիճակիս վրայ խօսիլ։ Այն ատեն իմացայ որ այս վճռական վայրկեան մ'էր ինձի համար։ Արդէն ըսի թէ տարագիրներու մասնաժողովն, որ Դոպոլոք քաղաքը կ'գանուէր, աքսորելոց խումբերը կ'ընդունէր, և ամեն մէկ դատապարտին վերջնական վճիռը կ'տար ու երթալիք տեղը կ'որոշէր։ Բայց որովհետև ես աքսորելոց կարաւանին հետ ճամբայ ըրած չէի, չէ թէ Դոպոլոք քաղաքի մասնաժողովն, այլ Օմսկ քաղաքը բնակող Սիպերիոյ ընդհանուր նահանգապետն էր որ պիտի սահմանէր իմ բնակութեան տեղս։ Արդ՝ կարևոր պարագայ մ'էր այս ինձի համար։ Վասն զի նահանգապետը կարողէր գիս նահանգին մօտ գործարան մը ղրկելբուռն աշխատութեան դատապարտելով, կամ՝ ներշինք՝ հանքեր փորելու — Սիպերիոյ մէջ աքսորականի մը դժոխքն բազմաթիւ շղթաներ ունի, աւա՛ղ — և իրօք այս խնդիրն էր որ նոյն միջոցին մօտակայ սրահին մէջ կը յուզուէր, ուր ընդհանուր նահանգապետն խորհուրդ կ'ընէր։ Իմ խօսակիցներս կ'ըսէին ինձ որ յուսամ մանաւանդ անոր համար որ Քասուտին խորհրդին ներկայ էր, բարձր պաշտօնական մ'որ իշխանէն ետքն ամենէ մեծ ազդեցութիւն ունեցող մարդն էր, որ վեհանձն բնաղդումներ ունէր, և միշտ քաղաքական յանցաւորներու համար նպաստաւոր կերպով կ'խօսէր։ Ցանկարծ շշուկ մ'ելաւ, ամենքը շուտով իրենց տեղը դացին նստան, և Կորշաքօֆ իշխանն դրան սեմին վրայ երևեցաւ։ Բայլ մ'առաջանցաւ, քիչ մ'ատեն իր աչքն իմ վրայ սևեռեց, ապա կռնակը դարձուց և իր սենեակը դարձաւ, առանց ինձի խօսք մ'ուղղելու։ Այս տաժանելի ակնկալութեան մէջ՝ ժամ մ'անցուցի։ Վերջապէս տեսայ Պ. Քասուտին խորհրդականն որ սրահէն դուրս կ'ելնէր։ բարևսէր և քաղաքավար դէմքով յայտնեց ինձ որ պարտաւոր էի երթալ աշխատիլ Եկատերինսքի–Զաւոտի (գործարան) գտուրանն, Թարայի գատաւորին մէջ, Իրտիշ գետի ափերուն վրայ, Օմսկ

քաղաքին հիւսիսային կողմէն 300 քիլոմէտրէն աւելի հեռու։ Հազիւ թէ Քասուտին դուրս ելաւ, որ ներկայ դատուողներն փութացին ընդհանուրելու իմ նոր վիճակս։ Ամենուն իմ հրաժարական բարևս տուի, նոյն իսկ իմ երկու խեղճ պահակներուն, որ Քիով քաղաքէն ինձի ուղեկից եղեր էին։ Ցետոյ կեղեվոյի մը մէջ մտայ նստայ, որ վարը կ'սպասէր և որ պիտի առնէր զիս տարագրութեան վերջնական տեղը։

Դ.

Հոկտեմբեր ամսոյն 4ին, ցուրտ առաւօտ մը, ժամը 10ին, հեռուէն տեսայ գեղ մ'որ երկու հարիւր ոչ-ղորմելի տուներ ունէր, բոլորն ալ փայտաշէն, Իրտիշի գետին մօտ և ընդարձակ դաշտի մը վրայ։ Ներքին կողմն՝ բարձր տեղ մը և նոճիներու անտառի մը մէջտեղ՝ գործարանի մը շէնքը կ'բարձրանար։ Այս էր Եկատէրինսքի–Զաւօտ։ Զիս դանձուց պաշտօնատունը տարին, և քիչ ատենէն գործարանին վերատեսուչն եկաւ, այս է Արամիլքի, որու արդէն յանձներ էին պահակներն ինձ վերաբերող թղթերը։ Ամենուն առջև գիս մերկացուց, և այսպէս ստուգեց Քիովի մէջ իմ մասիս եղած նկարագիրը, զոր ձեռքը բռնած էր, յետոյ հրամայեց որ անուս գրեն գատապարտելոց ցուցակին մէջ՝ ընթացիկ թուանշանով մը, և ապա զօրապահին ցոյց տան։ «Զղթայակապ պիտի աշխատի, յարեց նա դուրս ելնելու ատեն առանց երբէք խօսք մը ինձ ըսելու։

Երբոր գնաց՝ երիտասարդ մ'որ բոլոր նոյն միջոցին՝ միւս դրագիրներուն պէս զբաղած էր, ոտք ելաւ և գիրկս ընկաւ։ Այս է Շարլ Պոկտագէվքի, Քրաքով աղաքէն, որ Էթէնպէրկի կռուին մէջ մտած լինելով

երեք տարուան համար թիարան դատապարտուած էր գործերու և մինչև մահը աքսոր մնալու։ Քանի մը վայրկեան ետք՝ եկաւ մեղի միացաւ մի ուրիշ քաղաքական յանցաւոր ժան Սիեյեսի, Լուպլէնի բնիկ։ Արագօրէն և յայտնի յուզմամբ կ'խօսակցէին. աղաչեցին դիս որ ամեն բանի մէջ համբերողու հլու լինիմ և բանէ մը չառնուիմ։ Այս պայմանաւ միայն պիտի յաջողէի դիւանատան մէջ պաշտօն վարել, փոխանակ ծանր ու կոշտ աշխատանքի ենթարկուելու գործարանին մէջ, մանաւանդ այս ընթացքով պիտի կարենայի աղատիլ այն մարմնական պատիժներէն որոց ենթակայ են ամեն չարագործները։ Կարելի չէ նկարագրել այս կցկտուր ու հատկլեալ առաջին խօսակցութիւնը. չեմ կարող նաև բացատրել թէ մարմինս ի՞նչ սարսուռ զգայ, երբ Լեհացի բերաններէ լսեցի փայտի ու խարազանի հարուածներու պատմութիւնը։ Ցետոյ դիս մինակ թողուցին, և շուտ մը դացին ի գործ դնել իրենց աղդեցութիւնը գործարանի տորին պաշտօնատարներու վրայ որպէս զի վերատեսչին խօսին և փոխելտան այն անըմբռնելի հրամանն, որով շղթայակապ աշխատելու դատապարտուեր էի։ Այսպիսի հրաման մը բնաւ եղած չէր այս տեղ մինչև անդամ մարդասպաններու դէմ։ Շատ ուշ իմացայ այս անսովոր խստութեան պատճառը, Կորչաքօք իշխանն՝ իր վճռադրին վրայ սա խօսքը գրած էր իր ձեռօք. «Պէտք է յատուկ հսկողութիւն ընել Պիօտրովսկու վրայ» և այս տարօրինակ յանձնարարութիւնն մեծ տպաւորութիւն ըրած էր Արամիլսքիի վրայ։

«Քանի որ ես վերատեսուչ եղած եմ, կ'ըսէր նա անտառապահին, այսպիսի բան մ'երբէք տեսած չեմ. անշուշտ այս մարդը դէ-ոնաֆէթ մը պիտի լինի»։

Վերջէն տարին դիս զօրապահակ մ'ուր շատ դինուորներ կային, և ասոնց մէջ կ'գտնուէին անկախութեան պատերազմին ժամանակ կռուող զօրականներ։ Այս հայրենակից դինուորները պատրուակ մը կը մնտուէին միշտ որպէս զի ինձ մոտենան և հարցընեն ինձ մեղմիկ թէ ի՞նչ պիտի լինի Լեհաստան, Եւրոպա, և թէ արդեօք յոյս կա՞յ։ Սաստիկ յոգնած և յուզուած էի. նստարանի մը վրայ ընկայ, և դրեթէ երկու ժամ թաղուած մնացի մթին երազներու մէջ։ Յանկարծ

իմ առջևս կանդնած տեսայ ուժեղ, կարճ, կոշտ ու կոպիտ մարդ մը, որու անարգ կերպարանն սուտ չէր հաներ գող երրակի դրոշմն, զոր խարանով կոխեր էին ճակտին և երկու այտերուն վրայ։ Այս մարդն ինձ սա պարզ բառերը ըսաւ.

«Ո՛տք ելիր ու դնա աշխատէ՛։»

Այս մարդն էր չարագործներուն վերակացուն, որ դատապարտութենէ ազատած էր . . . ։ Ո՛ Աստուած իմ, դու միայն լսեցիր այն ժամանակ իմ սրտիս աղաղակն, երբ ես առաջին անդամ կ'դիտէի որ հրաման կ'տար ինձ և կ'դուդէր ինձ անարդանօք թշուառական մը . . . ։ Այս խօսքին վրայ մարդուն արձակած ակնարկս արդեօք սրտիս զայրագին թախծութեան մի ցոլմունքը չէ՞ր. բայց վերակացուն քայլ մը ետ քաշուեցաւ, աչքերը վար իջեցուց և տխուր դէմքով մը ըսաւ ինձ.

«Ի՞նչ ընեմ. ինձ կ'հրամայեն, ես ալ պարտաւոր եմ կատարել այդ հրամանները։»

Սիրտս կ'փղձկէր. գլուխս երկու ձեռքիս մէջ դրի և տեսայ որ կրակի պէս տաք էր. քիչ մ'ետք՝ պաղ քրտինք պատեց գլուխս և ես կարող եղայ վերջապէս շունչ առնուլ. «Երթանք» ըսի ոտք ելնելով, և վերակացուին ետևէն գացի։

Վերակացուն սիս մեծ դարբնոցը տարաւ, որ շատ մօտ էր զտարանին. ոտքս սալի մը վրայ դրին ու շղթաներս հանեցին։ Իսկոյն հասկըցայ որ իմ երկու հայրենակիցներուս միջնորդութեան արդիւնքն էր այս։ Կիսով քաղաքէն մեկնելէս ի վեր՝ առաջին անգամն էր որ մուճակներս հագնելու կարող եղայ։ Ցետոյ տարին դիս նորաշէն տան մ'առջև գտնուող փուռ մ'որ դարի չորցընելու կ'ծառայէր։ Այս չէնքին տանիքը դեռ աւարտած չէր, և հարկ էր տախտակամածին վրայ եղած ատաղձներու բեկորները, տաշէղներն ու աղբերը մաքրել։ Ելնարանէ մը տանիքն ելայ, վերակացուին և դինուորին հետ, որ հրաման ունէին իմ քովէս չհեռանալ։ Արդէն տանիքին վրայ մի կալանաւոր կար, որու հետ պարտաւոր էի աշխատիլ։ Ձեռքս տուին մի բահ և մի աւել, և ինչպէս իմպաշտօնակիցս նոյնպէս և վերակացուն ցոյց տուին ինձ թէ ի՞նչպէս պէտք էր գործածել բահն ու աւելը։ Ցուրտ էր օդը՝

երկինքն ամպոտ ու մխուր, իսկ մեր վրայ դրուած աշխատանքն ոչ այնքան տաժանելի։ Բայց ես յանդիմանութիւն չընդունելու, ամեն խօսքէ ու նայուածքէ ազատ մնալու համար կ'աշխատէի անվրդով, առանց դլուխս վեր վերցընելու, և քիչ ատենէն բոլոր մարմինս քրտինքը պատեց։ Ա՜հ, լացի ես . . . արտասուքս թափեցան անդութ հողի վրայ . . . ։

Պ. Արամիլսքի իր օրական տեսչութեան պաշտօնը վարելու ատեն, իմ աշխատած տեղս եկաւ, չէնքին ուրիշ պաշտօնատարներուն հետ։ Ես իմ գործս կ'շարունակէի առանց դառնալու, և իբրև մեղապարտ անոնց նայուածքէն խոյս կ'տայի։ Երբոր անոնք դացին, քիչ մը ժամանակ անցաւ և վերակացուն մեզ ըսաւ.

«Հանգստացէ՛ք։»

Նստայ ես աւլուած տաշեղներու կոյտին վրայ պաշտօնակցիս մօտ, որ բարեկամ երիտասարդ մ'էր. երեք խարանի դրոշմ ունէր և զուարթ բնաւորութիւն մը։ Ամեն վարանմունք փարատեցի, և ամենէ առաջ ես անոր խօսք ուղղեցի.

«Երկար ժամանա՞կ է որ դու այս չէնքին մէջ ես։

— Երեք տարի կայ։

— Եւ քանի՞ տարուան համար դատապարտուած ես։

— Մինչև ի մահ։

— Եւ ի՞նչ գործի համար։

— Իմ տէրս սպաննեցի։»

Սարսուռ զգացի, բայց խօսքս շարունակեցի.

— Անշուշտ դիպուածով և առանց նպատակի սպաննեցիր։

— Այո՛. բայց «այոյէ», առանց նպատակի, պատասխանեց նա ծիծաղելով։ Այոյէս տապար մ'ունէի մէջքս, երկու ձեռքով բռնեցի զայն և անոր գլուխը ճեղքեցի։»

Սոսկումէս սառեցայ. բայց քանի մը վայրկեան ետք՝ նորէն շարունակեցի.

«Բայց ինչո՞ւ համար այդպէս անգթաբար սպաննեցիր տէրդ։

— Ինչո՞ւ. ի հարկէ ուրախ սրտիս չսպաննեցի. մեր տէրը մի անզգամ ու անգութ մարդ էր. տաժանելի աշխատանքով մեզ կ'տանջէր և մահուշափ մեզ կը մարակէր։ Բոլոր հասարակութիւնն այս դահիճէն ազատելու համար, ես գործն իմ վրայ առի և դինք սպաննեցի։ Ատուած ուզեց որ Ֆնոդին տակը չմեռնիմ և հիմակ աւելի հանդիստ եմ այս թիարանն քան թէ տանս մէջ։ Միայն կը ցաւիմ որ իմ նորատի կինս թողուցի. բայց քանի որ նորատի ու սիրուն է, շուտով ամուսին մը պիտի դտնէ։

— Սակայն պարտաւոր ես դղջալ մարդասպանութեանդ համար։

— Բայց միթէ սպաննածս մա՞րդ էր. ո՛չ, սատանայ մ'էր . . . ։»

Նորէն մեր աշխատանքն սկսանք, և մինչև մութը շարունակեցինք։ Այն ատեն նորէն պահականոցը մտայ, ուր եկան դիս տեսնելու իմ երկու հայրենակիցներս, հսկող դինուորներուն հետ։ Վերատեսուչն այս շնորհն ըրած էր անոնց։ Մենք սկսանք ցած ձայնով խօսիլ՝ դինուորներուն և կալանաւորներուն հանած աղմուկին մէջ, և մեր կենաց գլխաւոր դէպքերն իրարու պատմեցինք։ Խեղճ բարեկամներս անդադար կ'յորդորէին զիս համբերել և բոլորովին հնազանդիլ։ Կ'աղաչէին զիս որ ամեն զայրոյթ զսպեմ, և կ'ուսային որ համեմատաբար աւելի երջանիկ վիճակ մը պիտի ունենամ, ինչպէս որ իրենք կ'վայելէին, իրենց անպարտաւ և հանգիստ ընթացքին համար։ Գորովագին դրկեցինք զիրար և ես քնացայ։

Այսպէս կ'վերջանար ահա իմ կալանաւորի կենաց առաջին օրը։ Բայց քանի՛ քանի այսպիսի օրեր դեռ ես պիտի անցընէի . . . ։ Արևուն հետ ելայ՝ իմ աշխատութեան տեղս երթալու. ժամն ութին նախաճաշիկ ըրի։ Կէսօրին ժամը մէկին պահականոցը դացի ճաշելու և վերադառնալով դործս շարունակեցի, մինչև որ մութը կոխեց։ Շատ անդամ մեր աշխատութիւնը կ'փոխուէր դործարանին պիտույից և տեսչին կամայ համեմատ։ Դիշեր ցերեկ՝ մեռս տարագիրներուն հետ՝ վերակացուին և մի դինուորի հսկողութեան ներքև կ'մնայի։ Երբեմն դաւիթը կ'տալի, երբեմն ջուր ու փայտ կ'կրէի. ատեն ատեն կ'հրամայէին ինձ որ վառելու փայտ կտրեմ և կարդաս կուտակեմ։ Այս վերջին աշխատանքս շատ ծանր էր, վասն զի աշնան ու ձմեռն, բաց օդին, անձրևի տակ, Արպերիոյ սառ-

նաշունչ ցրտով պարտաւոր էի կատարել այս գործը։ Մրշավ վշտալի և տխուր էին այս օրերը, բայց ի՞նչ օգուտ կայ երկար խօսիլ այս մասին . . . :

Իմ գլխաւոր նպատակս էր բնաւ խօսքի կամ վէճի չբռնուիլ իմ վերակացուներուս և մեծաւորներուս հետ, որպէս զի ծանր պատժի կամ պատահարի տեղի չտամ . . . վասն զի երդմներ էի որ և է մարմնական պատուհաս չկրել, եթէ իմ կամ ուրիշներուն կեանքն անգամ վտանգի մէջ ձգէի։ Ուստի իմ կարողութեանս և պարտաւորութեանս ներածէն աւելի կ'աշխատէի։ Սիրտս կ'վկայէ որ բոլոր ջանքս ըրի որ և է անհամբերութեան շարժում մը, ամեն սրտմտութեան ղգացում զսպելու։ Բայց պարտաւոր եմ, անիրաւ չլինելու համար, նաև խոստովանիլ թէ իմ վերակացուներս ոչ կամապաշտ եղան և ոչ դիտմամբ չարասէր։ Իրաւ, խիստ և դաժան էին, բայց ինձի դէմ բռնակալներու քմածին խստութիւններ ցոյց չտուին։ Իսկ իմաքսորականներէն ընկերներս այնպէս յարգանօք և կրնամ ըսել բարեսիրտութեամբ կ'վարուէին ինձի հետ որ սրտագին իրենցմէ գոհ էի։ Անգութ կատակներ չէին արձակեր ինձի դէմ, ինչպէս որ՝ ուրիշ չրջաններու մէջ՝ անգամ մարդիկ սակայ կ'արձակէին, աւա՜ղ, բարձրէն վար ընկնող և իրենց հաւասարող դժբաղդներուն դէմ։ Նստ անգամ ինձ կ'օգնէին, երբ տեսնէին որ ծանր է աշխատանքս, կամ իմ դժուարին գործս իրենք կ'առնէին և աւելի գիւրին գործ մ'ինձի կ'ձգէին։ Առաջին օրէն սկսեր էին ինձի հետ դուդելով չխօսիլ, և «պարոն» բառը գործածել։ Անշուշտ դժբաղդութիւն մ'որոնու ես արժանի չէի, յարգ պիտի ներշնչէր այսպիսի անկիրթ, նոյն իսկ վայրենի մարդոց, որ թէև դաժան էին և մեծարան, կ'ղգային սակայն որ յանցաւոր են։ Մի քանի հայրենակիցներէ ըսա՝ որ ինձի պէս քաղաքական դատապարտներ էին, Եկատերինբուրգաց Զաւոսի երեք հարիւրեն աւելի ազատականները ձշմարիտ չարագործներ էին։ Մին հանդորդ մը սպաններ, ուրիշ մը՝ սակալի կուսակցութիւն մ'ըրեր էր, այս՝ սուտ գրամ կորեր էր, այն՝ գողութիւն ըրեր էր բուրն միջոցներով։ Ո՛չ սուտ ամօթ, ոչանպատեհ գողութիւն մ'ունէի այսպիսի մարդոց ընկերութեան մէջ որ անխուսելի էր և ամենօրեայ։ Սակայ կ'խօսա-

ցէի այս տարօրինակ ընկերներուս հետ, կ'քննէի ա-նոնց բնաւորութիւնը, և թոյլ կ'տայի որ իրենց կենաց զանազան դէպքերն ինձ պատմեն։ Անշուշտ վատաք չունիմ թիարանի դիւցազուններու կենսագիրը լինիլ, բայց դէպք մը պիտի պատմեմ որ հետաքրքրական է, վասն զի ցոյց կ'տայ որ սուտ պատուասիրութիւնն իր ներկայացուցիչն ունէր նաև մեր մէջ։

Աքսորականներէն մին, որ մշտատև աշխատութեան դատապարտուած էր, Քանտիա կ'կոչուէր, Փոքր հասակով, պնդակազմ երիտասարդ մ'էր. թուխ, գունատ դէմք, սև ու վառվռուն աչեր ունէր, և իր կերպարանքը ցոյց կ'տար որ անվեհեր բնաւորութիւն մ'ունէր։ Բեդրպլբրկի մէջ՝ գինեվաճառի գործակալ է եղեր, և երբ մի օր հարցուցի թէ ի՞նչ էր իր դատապարտութեան պատճառը, այսպէս պատասխանեց.

«Պատճառն այս է որ իմ սիրուհիս սպաննեցի։ Կասկած ունէի որ նա անհաւատարիմէ ինձ, և սիրտս կ'տանջուէր սասակիկ։ Միաքս դրի վրէժ լուծել։ Իմ դիտաւորութիւնս դիւրաւ կատարելու համար այնպէս կեղծեցի որ այդ անիրաւութիւնը մոռցած եմ։ Այնքան անոյշ խօսքեր ըսի անոր որ յաջողեցայ խօսք առնուլ տօնի մ'օր գիւղերթալ զբօսնուլ՝ ինչպէս որ երբեմն կ'երթայինք։ Երկար ատեն վարանեցաւ նա, կարծես թէ կ'զգար գլխին գալիքը, բայց վերջապէս հաւանութիւն տուաւ, այս պայմանաւ միայն որ իր մէկ բարեկամուհին հետն առնու։ Այդ պայմանն իմ գործիս յարմար չէր, բայց հարկ եղաւ ընդունիլ։ Որոշեալ օրն երեքնիս միասին ճամբայ ելանք։ Զինուած էի ատրճանակով և դաշունով մը և իմ սիրուհւոյս քովէն քալելով՝ հետը կ'խօսակցէի։ Երբէք այնքան գեղանի ու սիրող երևցած չէր ինձ, բայց այս պարագան իսկ իմ նախանձս և վրէժխնդրութեանս ծարաւը աւելի կ'գրգռէր։ Քանի՛ քանի անգամ իմ խորհուրդս ի գործ դնել ուզեցի, բայց իր նայուածքը դիս դինթափ կ'ընէր։ Ի վերջ՝ մարդագետնի մը մէջ կանգ առի և դաշտանկարին մէկ նշանակէտն անոր ցոյց տուի։ Սիրուհիս դլուխը դարձուց. նոյն պահուն ատրճանակս քունքին մօտեցուցի և կայծհանը թողուցի. ձեռքս կը դողար, և դինք միայն վիրաւորեցի։ Բարեկամուհին խոյս տուաւ պոռալով, իսկ սիրու-

հիս որ թեթև մը գլխէն վիրաւորուեր և թալկացեր էր, ինքն իր վրայ շատ անգամ շուրջ դարձաւ և ապա ծունկի վրայ գալով ինձ ըսաւ. «Ներէ՛» այնպիսի թափանցիկ ու տխուր ձայնով մը որ սարսուռ զգացի։ Սակայն անոր պատասխան տուի դաշունի հարուածով մը։ Դաշոյնս մինչև կոթը խրեցաւ սրտին մէջ. ընկաւ նա անկենդան։ Սուրս կուրծքին մէջ ձգեցի և գացի շուտ մ'ինքզինքս ձեռք տուի. կնուտի պատիժը կրեցի, և աւասիկ բոլոր կեանքս պիտի անցընեմ այս տեղ. . .։

— Մինթէ չե՞ս ցաւիր զանի սպաննելուդ համար, և մինթէ խիղճդ չտանջեր քեզ դառնապէս։

— Այո՛, կ'ցաւիմ. չպիտի մոռնամ զանի որչափ ատեն որ ապրիմ և ուրիշ մը չպիտի սիրեմ։ Իսկ եթէ խղճիս հարցընեմ՝ կարծեմ թէ լաւ գործ մ'ըրի զանի սպաննելով։

— Բայց եթէ հնար լինէր՝ որ վերստին ապրելով՝ քեզ սիրէր, մինթէ պիտի սպաննէի՞ր։

— Նա առաջ շատ երջանիկ և ապայետին ծայր ապերջանիկ մարդ մ'ըրաւ զիս։ Եթէ կենդանանար՝ վերստին պիտի սպաննէի։

— Այսպէս ուրեմն իբրև յանցանք չես նկատեր այդ գործը։

— Ի՞նչ յանցանք։ Նա իմ երջանկութիւնս յափշտակեց, ես ալ անոր կեանքն յափշտակեցի. նա իզմէ աւելի մեղապարտ է։»

Պէտք է որ մի քանի խօսք ըսեմ մեր գիւղին և անոր գործարանին կազմութեան վրայ։ Եկատարինոքի–Զաւօտ հիմնուած է Կատարինէ Բ. կայսրուհւոյն իշխանութեան օրով, որու անունը կ'կրէր. տեղւոյն բնակիչներն հին աքսորեալներու սերունդէն էին։ Գիւղին բոլոր շահը կամ եկամուտը զտարանն էր, որ տարին երկու երեք միլիոն լիտր ալքօլ կամ ոգելից ըմպելի կ'արտադրէր, և մօտ երկու հազար վէրստ (286 մղոն) տարածութեամբ երկրին օդի կ'մատակարարէր։ Այս զտարանը վարձու տրուած էր Սինպերսկ դաւառի երկու հարուստ վաճառականներու, որ էին Պ. Օրլով և Այէքսէյէվ։ Ասոնք անչուշտ մեծ վաստակ ունէին, վասն զի ագարակի վարձքէն և աքսորեալներու ռոճիկէն զատ՝ զօրապահակին և սպային (հարիւր մէկ հոգի) թոշակ կը վճարէին, թո՛ղ այն քիչ շատ մեծ պարգևներն զոր վերակացուներուն և կառավարութեան միւս պաշտօնատարներուն կ'ընծայէին։ Վերատեսուչը թոյլ կ'տար որ աքսորեալներուն դրեթէ կէսը գործարանին մէջ աշխատին, իսկ մնացած կէսը կ'պահէր հասարակային գործերու համար, ինչպէս ճամբաներ բանալու, չէնքեր շինելու, առողջապահիկ միջոցներու համար, և այլն։ Մեղմէ ամեն մէկն ամիսը երեք ֆրանք և իննսուն լիտր ցորեն կ'ընդունէր։ Եթէ այս ցորենը ծախէինք գիւղացւոց՝ կարող էինք մեր բոլոր պիտոյքը հոգալ։ Բայց որպէս զի գործարանին վարձակալները քաջալերեն բանուորները, ամսական թոշակը կ'աւելցընէին՝ ամիսը հինգ, ութ և մինչև տասն ֆրանքի հասցընելով։ Տաղնապ կառագործներն աւելի կ'վաստըկէին, վասն զի ժամը մէկ հատի վրայ ստակ կ'առնէին։ Այսպէս աւելի շահաւէտ էր վարձակալներուն ծառայելը, վասն զի թէ՛ թոշակը շատ էր և թէ բանուորն կառավարութեան պաշտօնատարներու ազդեցութենէ հեռու կ'մնար։ Եթէ մէկն անհնազանդ կամ ծոյլ գտնուէր, վարձակալաց գործակալը վերակացուին կ'իմացընէր, որ միայն իրաւունք ունէր պատիժ սահմանելու։ Բայց պատիժ ըսելով կ'ակնարկեմ միայն փայտին ու խարազանին, վասն զի հայհոյանք, նախատինք, ապտակներ անդամ, ափսո՛ս, խեղճ թիակներն ամեն կողմէ կ'ընդունէին։ Աքսորեալներէն շատերը զօրանոցը կ'բնակէին. անոնք որ շնորհ կ'գտնէին՝ գիւղին բնակիչներուն մէկուն տունը կ'բնակէին, և այն ատեն պարտաւոր էին հիւրընկալ տան մէջ իրենց վրայ հսկող զինուորին թոշակ վճարել։ Վերջապէս՝ քիչ մը կրթութիւն ունեցողներուն համար ամենէ նախանձելի աշխատանքն գործարանի դիւանին աշխատանքն էր։ Աւելորդ է ըսել որ այսպէս կամաց կամաց զանազան պաշտօններու հասնելով՝ դատապարտը նոր իրաւունք մը չէր ստանար, և վերատեսչին հաճոյից համեմատ՝ կարելի էր ամեն վայրկեան ուրիշ պաշտօնի կոչուիլ։

Որովհետև ինձ յանձնուած պաշտօնն ժրութեամբ կատարելու կ'ջանայի, որովհետև միշտ իմ անձիս վրայ կ'իշխէր, այնպէս որ մինչև այն ատեն չէի կարծեր որ կարողպիտի լինիմ, հետևեալ տարին ոչ միայն վարձակալներուն ծառայութեան մէջ մնայ, այլև քիչ ատենէն դիւանատան պաշտօնատար եղայ։ Այսպէս ազատեցայ

կոպիտ և ամեն մարմնաւոր ու բարոյական կրթութենէ զուրկ մարդոց յարատև ընկերութենէ։ Ամիսը տասն ֆրանք թոշակ կ'ընդունէի, և ներկայ աշխատանքս շատ աւելի թեթև էր քան թէ առաջինը։ Առաւօտեան ժամն ութին դիւանատունը կ'երթայի և մինչև կէս օր կ'մնայի. իսկ կէսօրէն ետք՝ ժամն երկուքէն մինչև երեկոյեան տասն կամ տասնմէկ կ'մնայի։ Հարկ էր միշտ ներկայ գտնուիլ, մինչև անգամ եթէ ստիպողական գործ չունենայի կամ բնաւ գործ չլինէր։ Այն տաղտկալի երկար ժամերը՝ կ'գրէի, ծանօթութիւններ կ'քաղէի, խորհրդածութիւններ կամ խորհուրդներ կ'երկնէի որ մտքիս մէջ քիչ քիչ կ'հասունցնային։ Իմ դիւանատունս շատ ուղևորներու ժամադրութեան տեղն էր, որք կ'գային կամ ցորեն ծախելու կամ ոգելից ըմպելիներ դնելու համար։ Ասոնցմէ կային գիւղացիներ, քաղաքացիներ, վաճառականներ, Ռուսներ, Թաթարներ, Հրէաներ և Զէրքէզք։ Եթէ մէկ կողմէ շատ քիչ կ'խօսակցէի վերակացուներուս և պաշտօնակիցներուս հետ, իմ վշտակից ընկերներուս հետ, միւս կողմէ անձանձիր հետաքրքրութեամբ անցնողդարձող օտարականներէն Սիպերիոյ վրայ այլ և այլ տեղեկութիւններ կ'ստանայի։

Այնպիսի մարդոց հետ կ'խօսէի որոց ոմանք Բիրիդով գտնուած էին, ոմանք Ներչինսկ, Զինաստանի սահմանագլուխը, այլք՝ Քամչատքա, ոմանք՝ Կիրգիզի դաշտերը և Պուխարա։ Այսպէս՝ առանց իմ սենեկէս ելնելու՝ կ'յաջողէի բոլոր Սիպերիոյ վրայ մանր տեղեկութիւններ ստանալ։ Այն տեղեկութիւններն մի օր շատ օգտակար պիտի լինէին երբոր փախուստի խորհուրդս ի գործ դնէի։ Իմ մէկ հայրենակիցս, Վիրօսքի, զտարանիս դիւանատան առաջին պաշտօնատարն էր, բայց ես աւելի կապուած էի Ստեփան Պաղանօվի հետ, որ գործարանին Ռուս գործակալն էր և վարձկաններուն փոխանորդն ու միանգամայն ազգականը։ Պատուաւոր և բարեսիրտ քսանամեայ երիտասարդ մ'էր, պակասութիւն մը միայն ունէր, Նիկողայոս կայսրը պարզմտօրէն կ'պաշտէր։ Նա չէր կարծեր բնաւ որ Նիկողայոս կայսրը կրնար սխալիլ. իր կարծեօք ամեն չարիք պետարներու կամ ազնուականներու գործ էր, կ'պնդէր թէ Զարն իր հպատակներն ամենէ երջանիկ ժողովուրդը պիտի ընէր, եթէ ազնուականները չհակառակէին։ Ինչպէս փորձով տեսայ՝ պէտք

է ըսել որ այս դաղափարն Ռուսիոյ բոլոր ժողովրդեան մէջ կար, բայց ի «Դաբրովէրցի» (հնահաւատ) ըսած մարդերէն, Պաղանօվի հետ ունեցած համակրութեանս դլխաւոր։ մէկ պատճառն ալ այս էր, որ նա կարող էր իր արդի վիշտերը մոռնալ բնաւ։ Խեղճ պատանին, որ բոլորովին զուրկ էր կրթութենէ, սաստիկ սիրահարած էր իր հօրեղբօր աղջկան, բայց Օրլովներն արդելք կ'լինէին այս ամուսնութեան։ Ի՜նչ տարօրինակ բան. սիրոյ դաղտնիքներ կ'յայտնուին այս անիծեալ հողին վրայ, ուր եղեռնադործները կ'աշխատին ...։ Ճշմարիտ էր որ իմ խօսակից պատանին ազատ էր, և ամեն առաւօտ փայտի կամ խարազանի վախով քունէն չէր արթննար։

Ցիրաւի՝ որչափ որ իմ վիճակս յարաբերաբար բարեբախտ էր, բայց երբ միտքս կ'դար որ ամենէ թեթև առիթ և դործակալի մը նշմայրը կրնար դիս անուանարկ ընելու սոսկալի պատժի մ'ենթարկել, հոդիս շարունակ դողի մէջ կ'իյնար, և վայրենի տխրութիւն մը դիս կ'համակէր։ Կարելի չէր մոռնալ այն պատիժներն որ ամեն օր այս ինչ կամ այն ինչ եղեռնադործին կ'տրուէին, որ մեր ընկերականդասակարդութեան մէջ՝ իմ հաւասարներս էին, և այնպիսի աղաղակներ կ'արձակէին որ յուսահատութեամբ կ'ցնորէի։ Մինչև անդամ մեծաւորաց ընտանութիւնն աքսորելոց հետ՝ իր վտանդաւոր կողմն ունէր։ Պէտք չէ բնաւ վստահիլ այն քմածին շնորհներուն զոր կ'պարդեւէ անսահման իշխանութիւն վարող մարդ մը, մարդ մը որ դրեթէ միշտ կոպիտ է, ստէպ իր ընկերին հետ կը խաղայ, զանի իր աստիճանին պահ մը կ'բարձրացընէ որպէս դի վերջէն աւելի վար նետէ։ Շատ անդամ այս ծուղակին մէջ ընկած են՝ ինձի պէս Սիպերիա ճամբորդող մի շատ հայրենակիցներս։ Ստէպ ասոնք իրենց կրթութեամբ, իրենց կերպերով և դժբաղդութեան մէջ աղնիւ վարմունքով դատապարտեալ խումբէն իբրև ընտիր մարդիկ կ'զատուին, մեծարանք և մինչև անդամ շնորհներ կ'ստանան. այն ատեն ընկերական կենաց մէջ վերահաստատուելու յոյսերով կ'օրորին։ Ցանկարծ պատրանքի ժամը կ'հասնի, և ջրաքոչին խստիւ կ'զգացընեն իր վիճակը, և երջանիկ է եթէ միայն խօսքով կոչուէր և ոչ թէ ծեծով ...։ Եկատերինքի–Զաւօտ հասնելէն քանի մը տարի առաջ՝ Ռուս զօրապետ մը կը գտնուէր անդ, Ն... որ Նիկողայոս կայսեր հրամանաւ

բռնի աշխատանաց դատապարտուած էր։ Վերատեսուչն ակնածութեամբ կը վարուէր կալանաւորին հետ իր ալէզարդ հասակին և բարձր աստիճանին համար. անոր թեթև աշխատութիւններ կ'տար, իր ընկերական շրջանին մէջ և իր սեղանն անգամ կ'ընդունէր։ Դժբաղդաբար զօրապետը կ'մոռնար երբեմն իր վիճակը (մանաւանդ երբ արբած էր) իբրև բարձրաստիճան ոսպայ կ'խրոխտար և կ'անասստէր։ Այն ատեն վերատեսուչն զտարանին փուռին կապել կ'տար զանի, և կ'բռնադատէր որ կրակը վառ պահէ, տասնհինգ օր կամ մէկ ամիս, ճմրան սաստիկ ցրտերուն ժամանակ։ Զօրապետը՝ կրակէն տաքցած, մրոտած՝ կ'խոստանար զդաստանալու, և վերատեսչին հետ իր նախկին ընտանութեամբ ատեն մը վարուելէն ետև՝ վերստին փուռը կ'երթար գործելու։ Այսպէս շատ տարիներ աքսորավայրն անցնելէ ետև՝ Զարին կողմէ ներողութիւն ստացաւ և իր առաջին զօրապետութեան պաշտօնն ընդունեց։

Դիւանի մէջ պաշտօն չստացած՝ ասոր չափ կարևոր ափոփանք մը գտայ իմ դառն վիճակիս, այս է՝ հրամանտուին ինձ զօրանոցէն ելնել և ուրիշ տեղ բնակիլ։ Այսպէս կարող եղայ եղեռնագործներու այս սովորական բնակութենէ ելնել, գինովութեան ու եպերելի անառակութեան բնակարան մը, և իմ երկու հայրենակիցներուս հետ Սիէզիսկիի տունն անցնիլ։ Պ. Սիէզիսկին յաջողեր էր փայտէ պզտիկ տնակ մը շինել իրեն համար. վասն զի երկար ատեն Եկատարինոքի–Զաւոտի մէջ բնակեր և իր թեթև թոշակէն խնայողութիւն ըրեր էր։ Տնակը դեռ ևս լմընցած չէր, տանիքը բոլորովին բաց էր, սակայն մեր կահ կարասին այս տեղ փոխադրեցինք։ Քամին ամեն ծակերէն կ'փչէր, բայց որովհետև փայտն առատ էր, ամեն գիշեր վառարանը կրակ կ'վառէինք։ Աղէկն այս էր որ մեր առանձին տունն էինք, եղեռնագործներու նողկալի ընկերութենէ հեռու. միայն զինուորներն՝ որոց վարձքը մեր վրայ էր, մեր քովէն չէին հեռանար։ Ձմեռուան երկար գիշերները խօսակցելով կ'անցընէինք, մեր սիրականները կ'յիշէինք, և ապագային համար յատակագիծներ կ'պատրաստէինք։ Ա՜հ, թէ որ այն տնակը դեռ կանդուն է, և եթէ դժբաղդ տարագիր եղբայր մը կ'պատսպարուի այնյարկին տակ, թող գիտնայ որ իրմէ առաջ ուրիշներ այն

տեղացած և հայրենիյիշատակներով մխիթարած են...։

Իմ քաջարեկամս՝ Սիէզիսկին Վարշաւի միջնաբերդին մէջ դժբաղդ Լէվիդուին բանտակիցն էր և անոր սոսկալի մահուան դրեթէ ականատես վկայ եղած էր։ Երկուքին խցիկներն ալ նոյն նրբագաւթին վրայ կ'բացուէին, և շատ անգամ Լէվիդուն՝ հարցաքննութեան դատարանէն դառնալուն՝ արիւնաթաթաւ վիճակի մէջ, կ'գոչէր Սիէզիսկիին.

«Այլևս չեմ կարող դիմանալ, պիտի խենթենամ, և յիմարութեանս մէջ կամայ ակամայ բերնիս եկածը պիտի խօսիմ։»

Այս երկիւղը ինք շարունակ կ'պաշարէր։ Օր մը երբ՝ ինչպէս որ ինք կ'անուանէր, այս ոչխան բաղանիքէն կ'վերադառնար, երդիկէն իր ընկերին ըսաւ որ գոնէ գիշերուան մինչև տասնմէկ ժամն արթուն մնայ և հսկէ։ Թէև Սիէզիսկի այս խօսքին կարևորութիւն չընծայեց, բայց չքնացաւ, և յանկարծ ժամը տասնին Լէվիդուի սենեկին մէջ նշոյլ մը տեսաւ։ Գիշերապահը Կրակ կայ կ'պոռար, բայց մինչև բանտապահին դալն ու բանալիները բերելը՝ ժամանակ անցաւ։ Երբ սենեկին դուռը բացին՝ գաւիթը թանձր մխով լցաւ։ Խեղճ պատանին վերջին շունչը փչեր էր այն խշտեկին վրայ՝ որու կրակ աուեր էր հսկողասպ (veilleuse)։ Իմ բարեկամս քիչ ատենէն տեսաւ Լէվիդուին այրած մարմինն որու ոսքերէն բռնած զինուորները դուրս կ'քաշէին։ Գլուխը սալարկին վրայ կ'զարնէր. տհուելի էր այն տեսարանը։ Կ'ըսեն թէ երբ Նիկողայոս կայսրն այս լուրն առաւ՝ սաստիկ սիրտը շարժելով՝ հրամայեց որ քաղաքական կալանաւորներու հետ այնուհետև այնքան խստութեամբ չվարուին։ Այս դիպուածէն ի վեր՝ քաղաքական բանտաւորներն առանց ճրագի կ'թողուն իրենց խուցին մէջ։

Ինչպէս արդէն ըսի՝ Սիէզիսկին Սիպերիա ճամբորդեր էր հետիոտն և աքսորելոց կարաւանին հետ։ Երբ մեր գործարանը հասաւ՝ նախ միւս պատժապարտներուն հետ խիստ ծանր աշխատանքի դատապարտուեցաւ, բայց քանի մը տարի ետք՝ անտառապահը՝ հաւատարիմ ու քաջ մարդ մը պէտք ունենալով՝ իր քովն առաւ զանի. վասն զի Սիէզիսկին ոչ միայն պատուաւոր մարդ էր այլև ընտիր որսորդ։ Այն ատեն իր կեանքը բոլորովին

փոխուեցաւ, և անտարակոյս մեր մէջ ամենէ երջանիկն եղաւ։ Նա անտառը կ'պահպանէր, կ'հսկէր փայտերուն կտրուածքին վրայ, և ատեն ատեն մեղի որսի միս կ'բերէր։ Յայտնի է թէ վերաբերուչն և պաշտօնատարներն երէին ընտիր մասը կ'վայելէին, քանի որ թոյլ տուեր էին անոր հրացան կրելու։ Երբեմն Միէղիսկին ամբողջ շաբաթներ բացակայ կ'գտնուէր, և առիթ ունեցանք զգալու թէ այս բացակայութիւնն ո՛րչափ մեղի ծանր նստաւ մանաւանդ անգամ մը։ Որովհետև Պոկտաղէվքին և ես բոլոր օրը դիւանին մէջ կ'գտնուէինք, Միէղիսկին միայն կարող էր հսկել մեր տան վրայ։ Լա՛ւ, մի անգամ անոր երկար տարակայութենէ օգուտ քաղելով՝ մեր տունը կողոպտեցին. դուռը խորտակելով բոլոր մեր ցորենն ու թէյը յափշտակեր էին։ Այս վնասը շատ ծանր եկաւ մեզի։

Մի քանի հայրենակիցներ որ՝ իբրև պարզ տարագիրներ, շրջակաները կ'բնակէին՝ տօնի օրեր այցելութեան կ'գային մեզի. այն ատեն՝ տեղական իշխանութեան հրամանաւ, կ՚բռոզ էին Եկատարինակի–Զաւօտի մէջ շրջիլ։ Այսոնք մեզի տեղեկութիւններ կ'բերէին միւս աքսորելոց վիճակին վրայ, և մեր միտքը կ'գար բիւրաւոր հայրենակից եղբայրներու յիշատակն որք մեռեր էին այս քաւութեան երկրին մէջ։ Մեր միօրինակ կենաց մէջ՝ նշանաւոր դէպք մ'եղաւ Լեհացի քահանայի մը գալուստը։ Ռուսիոյ կառավարութիւնը թոյլ կ'տայ չորս լեհացի քահանայից Սիպերիոյ մէջ շրջելու, տարին անգամ մը այցելելու այն ամեն գործարաններն ուր կ'գտնուէին լեհացի քաղաքական յանցաւորներ և անոնց կրօնական սիւտոյքն հոգալու։ Ամեն գաւառակի մէջ կ'ծանուցուի՝ քանի մ'օր առաջ՝ Աստուծոյ պաշտօնէին գալուստը, որպէս զի հաւատացեալներն ժամանակ ունենան հեռաւոր տեղերէն գումարուելու։ Իր այցելութեան ատեն՝ քահանան պատարագ կ'մատուցանէ, հաղորդ կ'տայ և տարուան ընթացքին մէջ մեռնողներուն գերեզմանը կ'օրհնէ։ Ամեն քրիստոնէի կամ պարզապէս պարկեշտ մարդու զարմացման արժանի է այն չորս խեղճ քահանայից անձնուիրութիւնն, որք շարունակ կ'ճամբորդեն բալխիրով, Սիպերիոյ սառնաշունչ հովերուն մէջ, և կ'երթան Դոպոլսքէն Քամչատքա և Ներչինսքէն բևեռային ծովը։ Այն քահանայն՝ որ 1845ին մեր գործարանն այցելեց՝ Տ՚

Մինիկեան կրօնաւոր մ'էր Սամոկիտիայէն. բայց Տամինիկեան հագուստ չէր հագեր, որպէս զի Սիպերականաց ուղղափառութեան անախորժ չերևի։ Վերաբերուչն բարեսրտութեամբ թոյլ տուաւ որ ժամերգութիւնն իր սրահին մէջ կատարուի, որ գիւղին ամենէ ընդարձակ սենեակն էր։ Խոստովանելով սուրբ սեղանին կ'մատուցանէինք։ Ամբոխը շատ էր. Լեհացի տարագիրներ ու գինուորներ հեռաւոր տեղերէ եկեր էին. մինչև անգամ մեր հայրենակիցներէն անոնք որ կաթոլիկ չէին, եռանդագին սիրով ներկայ կ'գտնուէին սուրբ խորհրդի։ Թէ՛ կաթոլիկ և թէ ոչ կաթոլիկ՝ սուրբ պատարագն իրենց կը յիշեցնէր սուրբ Լեհաստանը։

Դ.

Բաւական շատ եղեր էի յետին տատիճանէն մինչև առաջին տատիճանն, որու կարելի լիներ հասնիլ եղեռնագործ մ'որ Խրտիշի եղերքը գտնուող գործարանին մէջ կ'բանէր։ 1846ին սկիզբը՝ կարողէի գրեթէ երևակայել և ինքզինքս ամենաչոր դիւանակալութեան պարզ պաշտօնեայ մը սեպել, որ հեռաւոր վայր մը և ապաշնորհ կլիմայի մը տակ վշտագին աքսորուած լինէր։ Ո՛րչափ տարբեր էր այս ժամանակն 1844ի պատահած սոսկալի ձմերային եղանակէն, երբ ջրանցքերը կ'սուլէի, փայտ կ'կրէի կամ կ'կտրէի, և մարդկային ոգի ամենէ անարդ ու վատ մարդոց հետ նոյն յարկին ներքև կ'ապրէի։ Ափսո՛ս, արդեօք իմ հայրենակից եղբայրներէն քանինե՞ր նոյն վայրկենին կ'հնձէին կամ Ներչինսքի հանքերուն մէջ կամ կարգապահ զօրականաց մէջ։ Արդեօք քանինե՞ր նաև, որչափ որ իրմէ աւելի թեթև պատժի ենթարկուած էին, բարեբաստիկ պիտի համարէին 1846ին՝ Եկատարինսքի–Զաւօտի մէջ ունեցած վիճակս, որմէ ապայն որոշեր էի ա-

զա՝ ինչ, մինչև անգամ կնուտն և Ա.քաղուայի խորհրդաւոր գնդանները աչքս առնլով...։

Միպերիա բառն անթիւ վիճակներ, տառապանք և փորձանք կ'պարունակէ զոր ռուսական պատժական օրինագիրը թէև քիչ շատ կ'անուանէ ու ճոխ է, սակայն կարող չէ սահմանել ու մանրամասն նկարագրել։ Երկու գլխաւոր դատակարգութիւններն, այս է ատոր և Քոռն-շխոդանի միայն անշնչելի անդունդի մ'անորոշ գիծերը կ'ցուցընեն, անդունդ մը զոր բռնապետութիւնն ըստ հաճոյս կ'լեցընէ։ Արդարև՝ ամեն բան քմահաճ է դատաստանի մը մէջ որ բաղմաթիւ հրամանագրեներու ձեռքէ կ'մեկնուի ու կ'գործադրուի, Դոպոլսկի մասնաժողովին, Միպերիոյ ընդհանուր կուսակալին, որ և է մէկու մը միջոցաւ, նոյն իսկ վերատեսչին ու պահակին կողմէ։ Ուրիշ բան է աքսորուիլ Վլատքա, Դոպոլսկ և մինչև անգամ Օմսկ, ուրիշ բան է աքսորուիլ ի Պիրէզով, ինչպէս որ աքսորուեցաւ մեր վեհանձն տիկին Ֆէլինսկա, կամ ի Քամչատքա, ուր աքսորուեցաւ Պէնիոֆսկի, Կոպենց զօրապետը և ուրիշ շատ անուանի հայրենակիցներ։ Նոյնպէս ուրիշ բան է Կոմկոսու բանակին մէջ ծառայել յառաջնալու իրաւունքով, այսինքն այն յուսով որ մի օր մարմնական պատիժներէ կ'ազատի մարդ, կամ Գազակներու զօրագնդին մէջ կ'մտնէ, Կիրկիզի սահմաններուն վրայ։ Կարելի է բուռն աշխատանքէ ազատիլ կառավարութեան մէկ գործարանին մէջ, ինչպէս որ ինձ պատահեցաւ Եկատարինքի–Զաւոտի մէջ, բայց քանի՛ քանի դժբաղդ մարդիկ կ'աշխատին շղթայակապ Ներչինքի սոսկալի հանքերուն մէջ, և կ'սպասեն, որ յանկարծ վրան այդ սոսկալի վայրերն և վերջտան կեանքի մը որու համար արդէն աշխարհ չկայ։ Ամենէ սոսկալի հանքերն են ժանդաւի հանքերն։ Օրէնսուրկի և ուրիշ տեղերու կարգապահական խումբերն ահռելի բնակութիւն վայրեր կ'համարուին։ Այս տեղ խարազանն ու դաւազանը մեր դժբաղդ ուսանողներուն և գործաւորներուն ամենօրեայ հացն են, և սոսկալ ատանք այդ տեղերը կ'աքսորուին։ Վերջապէս Ա.քատուայի բերդն ալ կայ, որ Ներչինսկէն շատ հեռու չէ, և ամենէ մեծ յանցաւորներու համար, ապստամբ ոճրագործներու կամ աքսորէն փախուստ տուողներուն համար պահուած է։ Այս տեղ փակուեցաւ վերջին անգամ մեր Պետրոս Վիլոսկին,

երբոր չկրցաւ դլուխ հանել իր սիպերական ապստամբութեան խորհուրդը։ Այս խորհրդաւոր ամրոցին վրայ չեմ կարող բան մ'ըսել, վասն զի չտեսած եմ մարդ մ'որ այս անդունդը մտած լինի։ Միպերիոյ մէջ ամեն մարդ անպատուամարտա իով կ'արտասանէր այս բառը։

Տեղւոյն բնակիչներն ոչմիայն կ'արհամարհեն ոճրագործներն այլև հասարակ աքսորեալը, որ շատ անգամ կ'անարգուի վատնակ անուամբ, բառ մ'որ ամեն նուաստութեան և անուանարկութեան դաղափարները կ'պարունակէ։ Աքսորեալը քաղաքային իրաւունքներ չվայելեր, դատարանի առջև իր յայտարարութիւնը և վկայութիւնը չընդունուիր, և իր կինն, որ բնիկ երկիրը կ'մնայ, կարող է երկրորդ անգամ կարգուելու, վասն զի իր երիկը մեռած կ'սեպուի։ Աքսորեալին այս վիճակն օրէնդրին նպատակին դէմ է, որ կ'փափաքի Միպերիոյ բնակիչները շատցընել։ Դատապարտը միայն ամենէ ատորին կարգէն կրնայ կին առնուլ, և՝ ապէ դատ՝ իր դաւակներն միշտ թագին ստրուկները կ'մնան։ Իրաւի՝ անդութ մի արտանութիւն կայ որ կ'ներէ կենկան Միպերիա գնալ իր դատապարտեալ ամուսնոյն հետ, ինչպէս որ գացին անձնուիրաբար Դրուսկոյքոյ իշխանուհին, տիկին Վոչչաքիվիչ և ուրիշ շատ սիրաշոհ Լեհուհիներ, սակայն երբոր երթան այլ ևս իրաւունք չունին դառնալու։ և այս աքսորի երկրին մէջ ծնած դաւակներն նոյնպէս թագին ստրուկ կ'դառնան։ Տարօրինակ բան մ'ևս յիշատակենք։ երբ կայսերական ընդհանուր ներողութիւն հրատարակուի՝ այս ներողութենէ միայն հայր ու մայր կ'օգտին, իսկ Միպերիոյ մէջ իրենց դաւակներն չեն կարող անկէ օգուտ քաղել՝ եթէ ոչ մասնաւոր հրամանաւ։ Բայց բոլոր այս խիստ կանոններն բաւական չդտաւ Նիկոդայոս կայսրն։ 1845 դեկտեմբեր ամսոյն՝ Միպերիոյ մասին մի մեծ հրովարտակ հրատարակեց, որու մէջ՝ շատ ծանր պատիժներէ զատ՝ զոր մի առ մի մէջ բերել աւելորդ է, կ'յայտարարէր թէ՝ աքսորեալները կարող չեն ոչմիայն անշարժ այլև շարժական ստացուած ունենալ, և կը հրամայէր որ բռնի ամխատանքի դատապարտուած յանցաւորներն անխարիր զօրանոցներու մէջ բնակին։ Այս հրամանը սարսափ ազդեց բոլոր բնակիչներուն, և նոյն իսկ պաշտօնատարները յայտնեցին որ այս

հրամանն ոչ միայն անգութ է այլև անպատեհ և դրութէ անգործադրելի։ Զգեցեալ ի՛նչ կերպով ի գործ դրուեցաւ այս խիստ կանոնն, բայց պարտաւոր եմ ըսել որ, այս նոր կարգադրութիւններն աւելի եւս զրգռեցին զիս Սիպերիայէն փախչելու խորհուրդս ի գործ դնելու։ Աւելի լաւ կ'համարէի ամեն տեսակ վտանգներու ենթարկիլ քան թէ կամովին հաւանիլ և երթալ թիապարաններուն հետ զօրանոցները բնակիլ։

Թէև քաղաքական յանցաւորներուն համար ի հարկէ Սիպերիոյ բնակութիւնը ծանր է, այնպէս է սակայն խոստովանիլ որ հասարակ յանցաւորներն իրենց վիճակէն շատ չեն դանդատիր, և շատ անգամ իրենց նախորդ կեանքէն աւելի լաւ կ'սեպեն։ Սարուկներց ու զինուորներն, մինչև անգամ անոնք որ բուռն աշխատանքի դատապարտուած էին, սակայն ինձ կ'ըսէին.

«Ինչո՞ւ համար ցաւիք ու դանդատիք. այն տեղ. ալ մեր աշխատանքն այս տեղին չափ ծանր էր, իսկ պատիժներն աւելի յաճախ։»

Եւ սակայն նոյն իսկ այս մարդիկ՝ շատ անգամ դիմադրաւելով Կոսոդն ու սոսկալի տանջանքներ՝ փախուստ կ'տան, ... այնչափ զօրաւոր է մարդուս սրտին մէջ ազատութեան բնազդն ու հայրենեաց սէրը։ Սիպերիոյ ուղևորութեանս մէջ զարմանալով տեսայ Դիուժնի առջև սկսած՝ ամեն տեղ շաղգամի անհամար դաշտեր որ ճամբու երկու կողմերը բռներ էին։ Շատ տեղ այս շաղգամները խլուած ոտնակոխ եղած կ'երևէին։ Այն ատեն խնացայ որ բնիկները դիտամբ այս տունկերը կ'խնամեն, որպէս զի փախստականները կարենան ուտելիք գտնել իրենց գիշերային արշաւանաց ժամանակ։ Ճամբուն եզերքը գտնուած գեղերու և տուններու մէջ ուրիշ սովորութիւն մը կայ. բնակիչներն երեկոյին հաց ու ամանով կաթ կ'դնէին պատուհաններուն մէջ որ փախստականներն առնուն ուզեն։ Թերևս աւելի շահու համար կ'ընէին քան թէ ողորմութեան ոգւով։ Իրաւի՝ Սիպերիոյ մեծ արահետներէն անպակաս են փախստական ոճրագործներ, և կարելի չէ երևակայել թէ ի՛նչ վտանգներ, ի՛նչ զրկանք ու տառապանք կ'կրեն այս եղկելիներն իրենց բանտէն ազատելու համար։ Խարանի դրոշմն ունեցողներն արիասրտով կ'այրեն իրենց երեսը որպէս զի ան-

արդական տառերը ջնջեն։ Շատեր կ'բանտուին, և անոնք որ կ'ազատին բարեբաղդ կ'սեպեն ինքզինքնին եթէ կարենան գէթ վայրի կեանք վարել անտառներու մէջ և աւազակ դառնալ, կամ լաւ եւս ըսել, աւազակ վերադառնալ։

Թէև Սիպերիոյ հասարակ յանցաւորներուն մէջ խոյս տալու փափաքն ընդհանուր է, բայց քաղաքական մեղապարտներն, իմ հայրենակիցներս, ընդ հակառակն՝ հոգիս այդ փափաքը կ'տածեն։ Մէկ կողմէ Կոսոդի և մարմնական պատիժներու երկիւղը, որ բնազդս աւելի ջրաւոր է բարեգենցաղ դատու մարդոց մէջ, միւս կողմէ լեզուին, ճամբաներու և տեղւոյն բարուց վրայ իրենց ունեցած ոգեղութիւնն արդելք կ'լինին Լեհացիին այդ յուսահատական փորձն ընելու։ Անկէ զատ՝ գեղացի Ռուսին հնարքը չունի խոյս տալու համար։ Բաւական չէ իրեն համար անտառներու կամ անհնան դիւղի մը մէջ կորսուիլ, իր նպատակին հասնելու համար՝ պէտք է որ օտար տեղեանները հասնի, և սակայն այնչափ ընդարձակ տարածութիւններ կան չափելու որ ամեն յոյս ի դերև կ'հանեն։ Բայց Երբեմն՝ քաղաքական աքսորեալներու մէջ՝ խիզախին խոյս տալու փորձեր եղած են։ Պենիովսկիի նախիրներն ամեն մոռի մէջն են և անմիհար հողիները կ'զրգռեն։ Երբեմն ոմանք կ'դաւադրեն՝ բաւական մեծակալ խումբ կազմելով՝ որպէս զի զէն ի ձեռին Պարսկաստան, Զինաստան կամ անհուն բացավայրերէ անցնին, երբեմն աւելի յանդուգն խորհուրդներ կ'լինին որպէս զի բոլոր Սիպերիան ոտք հանեն Զարերու տիրապետութեան դէմ։ Պետրոս Վիլոսկին, նոյն ինքն որ 1831ին պատահած Լեհաստանի յեղափոխութեան առաջին նշանը տուած էր, և որ վերջէն՝ պատերազմի մէջ՝ Ռուսաց ձեռքն ընկաւ և Ներչինսկ աքսոր դնաց, դաւադրութիւն մը կազմեց այն տեղ և իր յանդգնութիւնը քաւեց Աքատուսի ամրոցին մէջ։ Նոյն նպատակն ունէր նաև Միէրսինսկի սրբոյին դաւադրութիւնը, որ Սիպերիոյ տարեգրութեանց մէջ երևելի է։ Այս արիւնահեղ ու եղերական գործէն մի քանի տարի առաջ հասայ ես Եկատարինսկի–Զաւոտ։ Օմսկ քաղաքին բոլորտիքն մօտն էի, այն տեղն ուր այս սոսկալի տեսարանս անցեր էր։ Ականատես վկաներն և դերասանները տե-

ռայ և անոնց բերնէն՝ այս ողբալի արկածին վրայ, մանրամասն տեղեկութիւններ քաղելոյ, որոց կատարեալ ճշտութեան կ'երաշխաւորեմ։

Սիէրօսինակի սրբան, մեր յեղափոխութենէ առաջ՝ Վոլինիոյ Օվրուց քաղաքին Պագիլեանց վանքին վանահայրն էր, և միանգամայն տեղական դպրոցներու տեսուչը։ Մեր 1831 թուականին ազգային շարժման մէջ մեծ ու ազդու դեր մը խաղաց, և վերջապէս Ռուսաց ձեռքն ընկաւ։ Նիկողայոս կայսրն զրկեց Սիէրօսինակին որ իբրև պարզ զինուոր ծառայէ Պիսերիոյ Բոզակներու գնդին մէջ։ Քանի մը տարիներ՝ այս վանահայրն անհուն բացավայրեր կ'արշաւէր ձիով, Բոզակի պէս հագուած, նիզակը ձեռքն և սուրը մէջքը կապած, և Կիրգիզները կ'հալածէր։ Օմսկի մէջ՝ զինուորական դպրոց մը կայ, և օրին մէկն, երբոր դասատուի մը պէսքն զգացին, նախկին վանահայրը յիշեցին, որու կարողութիւնն և փրանսերէն ու գերմաներէն լեզուաց ունեցած հմտութիւնը գիտէին. ուստի զինք Կիրգիզի դաշտերէն Օմսկ կանչեցին։ Այսպէս վանքին հին վանահայրը, նախկին Բոզակը Օմսկ քաղաքի զինուորական դպրոցին դասատու եղաւ, թէև միշտ իր գնդին մէջ իբրև պարզ զինուոր կ'համարուէր։ Սիէրօսինակի սրբան՝ այս իր նոր պաշտօնին մէջ՝ շատով շատ սիրաեր դրաւեց և իր յարաբերութիւններն ընդարձակեց։ Թէև մարմնով փոքրուկ ու ջլուտ էր, բայց մտքի կորով և հաղուագիւտ յանդգնութիւն մը ունէր. ուստի մտածեց՝ Սիպերիոյ մէջ ընդարձակ դաւադրութիւն մը պատրաստել, որու մասնակից պիտի լինէին բոլոր աքսորեալները, զօրապահակներու զինուորները, մի շատ սպաներ, որ դեռ ևս կ'յիշէին Բէսգէլի խորհուրդներն և մարտիրոսութիւնը, վերջապէս տեղւոյն բնակիչները, Ռուսեր և մինչև անգամ Թաթարներ։ Շատ երկար պիտի լինի այս տեղ բացատրել, բայց Սիպերիան լաւ ճանչցողին յայտնի է, որ յեղափոխութեան տարբեր պակաս չեն այն տեղ։ Դժգոհութիւնն ընդհանուր է, թէև տարբեր աստիճանաւ և տարբեր մինչև անգամ հակառակ պատճառներով։ Պահապան զօրաբանակը միայն կ'պահէ այս ընդարձակ երկիրներն երկաթի շրջանակի մը մէջ, որով կ'սեղմուի պետութիւնը։ Արդ՝ նոյն իսկ զօրա-

պահակի մէջէն էր որ Սիէրօսինակին իր ձեռնարկութեան համար յաջողակ կուսակիցներ կ'գտնէր։ Իրյատակագիծն էր որոշելոյ վայրկենին բոլոր ամրոցներն ու գլխաւոր տեղերը դրաւել, զինուորական դաւակիցներու և աքսորեալներու ձեռքը (որոց մեծ մասը զինուորներ էին) և պարագաներուն սպասել։ Եթէ գործը ձախող ելնէր, զինեալ պիտի քաշուէին Կիրգիզներու բացավայրէն դէպ ի Տաշքանդի խանութիւնն, ուր շատ կամաւորներ կային, կամ դէպ ի Պուխարա, որպէս զի անկից Արևելեան Հնդկաստանի անկլիական սահմանները մտնեն։ Ապստամբութեան կեդրոնը Օմսկ քաղաքն էր, ուր դաւադիրներն իրենց ձեռքի տակն ունէին տեղւոյն բոլոր թնդանօթները։ Արդէն ընդհանուր ապստամբութեան դրօշակը պարզելու նշանը տրուած էր, երբ առաջին իրիկունն՝ դաւադիրներէն երեք հոգի ամեն բան յայտնեցին տեղւոյն հրամանատար՝ Տէկրաֆ գնդապետին, ճիշտ այն մարդն որ Օմսկէն անցնելու առենս ինձի հետ խօսեր էր։ Սիէրօսինակի և իր ուղեակիցներն նոյն դիպերն իսկ ձերբակալեցան և ամեն կողմ սուրհանդակներ զրկուեցան որպէս զի դաւադիրները խումբ խումբ ձերբակալեն։ Այսպէս ապստամբութիւնն՝ իրանալու միջոցին՝ դեռև ելնելէն առաջ՝ քննութիւնն սկսաւ ու երկար տեւեց։ Երկու յանձնախումբ հետզհետէ կազմուեցան և ի վերջէ լուծուեցան առանց արդիւնք մը բերելու, վասն զի գործը կնճռոտ ու մութ էր. միայն Երրորդ յանձնախումբ մ'որու անդամները յատկապէս Բեգրզուրկէն զրկուած էին, յաջողեցաւ քննութիւնը գլուխ հանել։ Նիկողայոս կայսեր մի վճռագիրն կ'դատապարտէր Սիէրօսինակի սրբան և իր գլխաւոր դաւակիցներն հինգ հոգի, որոց մէջ կ'գտնուէր կայսրութեան պատերազմաց սպաներէն մին, վախճան տարին անցած մարդ մը, Կորսի, և Ռուս մը, Մէյլդին, և ամեն մէկն եօթն հազար դաւազանի հարուած անխնայ կրելու։ Դատաստանին՝ չէ թէ թուանշանով, այլ ամբողջ գրերով գրուած էր այսպէս. եօթն հազար հարուած անխնայ։ Միւս կալանաւորներն՝ որոց թիւը հազարի կը հասնէր, դատապարտուեցան՝ ոմանք երեք հազար, այլք երկու հազար հարուած ընդունելու և մնացեալ բանի աշխատութեան ենթարկուելու։ Ասոնցմէ ոմանք

ալ պարզապէս բանի ոչխատանաց, ոմանք կարդասպա-
հական խումբերու և այլք բանտարկութեան մէջ պիտի
մնային։

Գործադրութեան օրը հասաւ, այս էր 1857 մարտ
ամսուն՝ Օմսկ քաղաքին մէջ։ Կոլոմիլիվ զօրապետն՝ որ
հռչակաւոր էր իր անդթութեան կողմէ, և մայրաքա-
ղաքէն յատկապէս ղրկուած էր այս գործին համար՝
ամբողջին հանդիսին հանդիսապետը պիտի լինէր։ Երբ-
որ արևն ելաւ, երկու վաշտ զօրք շարուեցան մեծ
հրապարակի մը վրայ, քաղաքին մօտ։ Մի վաշտը վեց
գլխաւոր յանցաւորներու յատկացած էր, իսկ միւսն
անոնց համար որ այնքան շատ հարուածներ չպիտի
ընդունէին։ Մինը չուներմ մոնը նկարագրել այս սոս-
կալի օրուան կատարածը։ միայն պիտի խօսիմ Միէրօ-
սինսքի սրբային և իր հինգ թշուառ ընկերներուն վը-
րայ։ Երբոր հրապարակին իջան, դատավճիռն անոնց
կարդացուցին և կէրծն (սկիզբնատոյց) սկսաւ։ Դատա-
վճռին գրոյն համեմատ՝ հարուածներն կ'իջնէին, այս-
ինքն անիծեալ, և պատժակիրներուն աղաղակները մին-
չև երկինք կ'բարձրանային։ Եւ ոչ մին կրցաւ որոշեալ
հարուածներն ամբողջ կրել, ամենքն իրարմէ հետ՝ ւ.ի
քանի անգամ կէրծն անցնելով՝ ընկան իրենց արիւնով
կամրցած ձիւնին վրայ ու հոգինին աւանդեցին։ Դիա-
մամբ ամենէն վերջը ձգեր էին Միէրօսինսկի սրբան՝
որպէս զի իր ընկերներուն տանջանաց ականատես լի-
նի։ Երբ վերջապէս իր կարգը հասաւ, երբ իր կռնա-
կը մերկացուցին և ձեռքը հրացանին կապեցին, վաշ-
տին բժիշկն անոր մօտ գնաց և անոր ներկայացուց,
ինչպէս որ միւսներուն տուեր էր, սրուակ մ'որ կաղ-
դուրիչ ըմպելի մը կ'պարունակէր, բայց սրբան մեր-
ժեց պոռալով.

— Խմեցէ՛ք իմ արիւնս, չեմ ուզեր ես ձեր ըմպե-
լին։»

Այն տեղն տանջանաց նշանը տուին։ վանահայրն
սկսաւ բարձր ու պայծառ ձայնով մ'երգել։ Ողորմա՛-
ծոյ, Աստուա՛ծ, ըստ մեծի ողորմութեան քոմ, ըստ բազում
գթութեան քոմ։ Կոլոմիլիվ զօրապետը դուշց զարնող-
ներուն.

«Սատանի՛կ, աւելի՛ սատանիկ։»

Եւ պատկէս բանի մը վայրկեան լուեցան վանահայր

երգն որ կ'ընդմիջէր հարուածներու շչիւնով և զօրա-
պետին սոսկալի աղաղակովը . . . ։ Միէրօսինսկի հաղիւ
թէ մի անգամանցած էր վաշտին կարգերէն, այսինքն
հազար հարուածներ էր միայն, որ ձիւնին վը-
րայ գլորեցաւ՝ արիւնաթաթաւ ու ընչասպառ. ի զուր
ջանացին ոտքի վրայ կեցընել զինք. ուստի առաջուց
պատրաստուած սահնակի մը վրայ դրին զինք, նեցու-
կէ մը կապելով՝ այնպէս որ կռնակը հարուածներուն
ներկայացընէ, և սահնակն սկսաւ զօրաց շարքին մէջ
երթևեկել։ Այս երկրորդ փորձին սկիզբը՝ նահատակը
դեռ ևս կ'մրմնջէր ու կ'հեծեծէր, բայց հետզհետէ իր
հեծումները նուազելով՝ չորրորդ շրջանին իր հոգին
աւանդեց. վերջին երեք հազար հարուածները միայն
անշունչ դիակի մը վրայ իջան։

Մեծ փոս մը բացին և անոր մէջ ամփոփեցին այն
մարդոց մարմիններն որ այն սոսկալի օրն անշունչ ըն-
կան հրապարակին վրայ կամ տանջանքէն մի քանի օր
ետք մեռան, թէ՛ Լեհացի և թէ Ռուս։ Թոյլ տուին
որ ազգական ու բարեկամներ հաւատոյ նշանը կանգ-
նեն այսպիշատակելի շիրմին վրայ. և մինչև 1846՝ դեռ
ևս կ'երևէր այն տեղ փայտեայ մեծ խաչն որ իր սև
թևերը կ'տարածէր անապատի մէջ սպիտակափայլ ձիւ-
նէն վեր։

ՄԱՍՆ Գ.

Ա.

ՓԱԽՈՒՍՏ ՈՒ ԴԱՐՁ։

Նիկողայոս կայսրն՝ 1845 թուականին վերջերն՝ հրաման մը հանած էր, որու վրայ արդէն խօսեցայ, և որու նպատակն էր ծանրացընել Սիպերիոյ աքսորելոց վիճակն և ամրացընել անոնց բոլորտիքն այն կապերն զոր ժամանակն ու սովորութիւնը թուլացուցեր էին, մանաւանդ անոր համար որ անկարելի եղած էր անթերի կատարել աքսորավայրի խիստ օրէնքը։ Յառուկ մասնաժողովներ կազմուելով՝ կ'այցելէին պատժարաններն որպէս զի աւելի խիստ միջոցներ առաջարկեն։ Զարին կասկածոտ կամքը կատարելու համար՝ ամենէ առաջ յարմար դատեցին որ աքսորեալները զօրանոցներու մէջ բնակելու պարտաւորին։ Այս ամեն պարագաներն կ'ստիպէին դիս վաղուց յղացած խորհրդիս մէջ յարատևել։ Արդէն այն վայրկենին՝ երբ Փիով քաղաքին մէջ կ'ստորագրէի այն դատավճիռն որ դիս ցմահ աշխատանքի կ'դատապարտէր, որոշեցի խոյս տալ սոյն անիծեալ երկրէն։ Աղօտ յոյս մը ծագեցաւ սրտիս մէջ՝ որ ջանամ վերստին տեսնել կենդանի ու ազատ մարդկան աշխարհը։ Երբ տարադրութեանս առաջին ժամանակները ծանր աշխատանքի ենթարկեալ եղայ՝ խոյս տալու վստահութիւնս կորուսի, սակայն Եկատերինսկի–Զաւօտի դիւանատան մէջ մնալով իբրև պաշտօնաւոր վերստին վստահութիւնս ծնաւ, և կարող եղայ

իմ յարաբերութեանց շրջանն ընդարձակել։ 1845 թուականին ամրան սկիզբը երկու անխորհուրդ և տարաժամ փորձեր ըրի, որ իսկոյն ի դերև ելան առանց կասկած մը գրգռելու։

Յունիս ամսուն մէջ՝ պզտիկ նաւակ մը նշմարեր էի՝ զոր շատ անգամ երեկոներն Իրտիշ գետին ափը կ'թողուին։ Մտածեցի այս ակատը մտնել և անով մինչև Դօպօլսկ հասնիլ։ բայց հաղիւ թէ՝ մութ գիշեր մը՝ նաւակը մտայ և քաշելով սկսայ մի քանի անգամ թիակը վարել, յանկարծ ամպերուն մէջէն լուսինն երևեցաւ և բոլոր երկիրը վտանգաւոր լուսով մը լուսաւորեց։ Նոյն միջոցին գետեղրէն վերատեսչին ձայնը լսեցի, որ մի քանի պաշտօնատարներու հետ կ'պտըտէր։ Կամացուկ մը ցամաքն եղայ, և այս անգամ գործս անյաջողցնաց։ Հետևեալ ամսուն՝ նոյն նաւակն աւելի նպաստաւոր վայր մը տեսայ, լճակի մը վրայ, որ ջրանցքով մը կ'միանար Իրտիշ գետի հետ՝ մեր գործարանէն բաւական հեռաւոր տեղ մը։ Այս եղանակիս մէջ՝ Սիպերիոյ ջրերուն վրայ ստէպ պատահած երևոյթի մը անընկճելի արդելք մը հանեց իմ երկրորդ ձեռնարկութեանս դէմ։ Երբ մութը կոխէ, օդը յանկարծ կ'սառի և չորս դին այնտիսի թանձր մշուշ մը կ'պատէ որ անհնարին կ'լինի երկու քայլ հեռու բան մը նշմարել։ Պարապ տեղը՝ նաւակս ամեն կողմը շարժեցի այն մութ գիշերն որու ժամերն երկար էին և ահ ու դող կ'ազդէին ինձ։ մշուշը կ'արդիլէր ինձ ջրանցքը նշմարելու, որմէ Իրտիշ գետը մտնելու մտադիր էի։ Վերջապէս՝ երբ արշալոյսն ելաւ՝ կարող եղայ ընդունայն փնտռած ելքս գտնել, բայց կրցայ առանց արդելքի բնակարանս դառնալ։ Այնուհետև թողուցի այս խորհուրդս և չուզեցի Իրտիշի անհնարին ալիքներուն յանձնել ինքզինքս։ այլ սկսայ աւելի լաւ և հասուն կերպով մտածել իմ փախուստիս յատակագծին վրայ։

Ամենէ առաջ նկատելիք և որոշելիք կէտս այս էր։ իմ վտանգալի ուղևորութիւնս ո՞ր կողմէ պարտաւոր էի ընել։ Թէպէտև մեծ արահետն՝ որ բնապէս ամենէ առաջ կ'ներկայանար ինձ, պիտի կրնար Սիպերիոյ խորերէն հանել զիս և մինչև Մեծին Ռուսաստանի ծոցը տանիլ, բայց նկատեցի շուտով որ անանցանելի է։ Ցե-

ղական իշխանութիւնը գիշեր ցերեկ կ'հսկէ այդ ճամբուն վրայ, և շատ անգամ ընիկներն իրեն կ'օգնեն հաւատարմութեան՝ կամ ճիշտ՝ յափշտակութեան ոգւով և երբեմն փախստական եղեռնագործին վրայ հրացան կը քաշեն մացառներու ետևէն որպէս զի զանի սպաննեն ու կողոպտեն։ Այս մասին ժողովրդային առած մը կայ անոնց՝ մանաւանդ Թաթարներու մէջ՝ որ է. «Սկիւր մը սպաննելով՝ մարդ լոկ մրթ մը կ'ստանայ, մինչդեռ վաշնակ մը զարնելով՝ երեք մրթ ձեռք կ'ձգէ. հագուստը, շալիկն ու կաշին»։ Միտքս կ'գային ուրիշ շատ ճամբաներ, որ այլև այլ ուղղութիւն ունէին։ Կարողէի արևելեան Սիպերիայէն անցնիլ՝ Իրքուտսքէն, Ներչինսկէն և հասնիլ մինչև Օխոտսքի ծովը, և այն տեղ նաւ մը գտնել, որ կարող էր զիս հանել Ամերիկայի Միացեալ-Նահանգաց կամ Քալիֆորնիոյ մէկ նաւահանգիստը։ Կարող էի նաև դէպ ի հարաւ դառնալ, Կիրկիզի անապատներէն անցնիլ, դիմել մինչև Պուխարա և անկից մտնել արևելեան Հնդկաստանի անկլիական երկիրները։ Միւս կողմէ՝ Ուրալ գետն՝ եթէ բաղդ ունենայի անոր ակունքը հասնիլ, կարող էր մինչև Կասպից ծովը տանիլ զիս, ուսկից պիտի յաջողէի ապաւէն գտնել Տաղստանի Չէրքէզներու մօտ։ Ի վերջէ փախուստիս համար՝ չորրորդ ճամբայ մ'ալ կար. կարելի էր Ուրալ լեռներէն անցնիլ, Օրէնպուրկի նահանգին Ուֆա բարձունքն ելնել, Վոլկա գետին ջրանցքը մտնել, որ Տօնին կ'խառնուի և այս գետէն նաւարկել Ազովի ծովը. այս տեղէն ալ անցնիլ Եւրոպայի կամ Ասիոյ Տաճկաստանն և կամ արևմտեան Վրաստանը։ Այնպիսի պատճառներով զոր աւելորդ կ'համարիմ այս տեղ բացատրել, այս չորս ճամբաներն ալ հետզհետէ իմ նպատակիս անպատեղ դասայ, և միտքս դրի իմ ազատումս հիւսիսային կողմը փնտռել, Ուրալի սարերէն անցնելով, Բէղորայի դաշտավայրէն և Արքանկէլէն։

Այս շաւիղն բանուկ չէր, ուստի և ամենէ ապահովն. մանաւանդ խիստ մեծ առաւելութիւն մ'ունէր, վասն զի ամենէ կարճն էր։ Եթէ մի անգամ Արքանկէլ հասնէի, ուր ամեն տարի չորս հինգ հարիւր նաւ կ'երթևեռկեն, և մեծ մասամբ օտար վաճառականի նաւեր են, վստահ էի գտնել անշուշտ նաւ մ'որ տանջարանէն փախած քաղաքական դատապարտ մը պիտի

ընդունէր։ Ահա այսպէս վերին հիւսիսի և Սպիտակ ծովու շրջակայից վրայ դարձուցի իմ մանրազնին հետազօտութիւնս, սակայն զանց չըրի նաև միւս ճամբաներու վրայ տեղեկութիւն քաշել, քանի որ բաղդը կրնար զիս այն կողմերը նետել։ Մեր թիարանը քիչ մը աշխարհաշրջիկ էր, և շատ չանցաւ կայսրութեան այլ և այլ կողմերէ հասնող թիապարտներուն մէջ՝ բաւական ճշգրիտ տեղեկութիւններ ստացայ բոլոր Ռուսիոյ վարուց ու սովորութեանց վրայ։ Բայց երբեմն հարաւէն և հիւսիսէն, երբեմն արևելքէն ու արևմուտքէն Եկատերինսքի–Զաւօտ եկող վաճառականներու և ուղևորներու հետ յատկապէս իմ ունեցած խօսակցութիւններէն օգուտ քաղեցի որք առ երևոյթս անհոգ ու անդգայ այլ իրապէս կրթութեան կարօտ աշակերտի մ'աշխարհագրական հմտութիւնն աւելցուցին։

Կալանաւորն՝ որ փախուստի միջոցներ կ'խորհի, շատ անգամ մանր մունր նկատումներ կ'ընէ որոց յուութիւնը միայն կարող է ընթերցողին հետաքրքրութիւնը շարժել։ Մանր ծանր և դժուարաւ կարողեղայ իմ ուղևորութեանս անհրաժեշտ եղող բաները պատրաստել, որոց մէջ գլխաւոր տեղը կ'բռնէր անցագիր մը։ Երկու տեսակ անցագիր կայ Սիպերիոյ բնակիչներուն համար, որ՝ Ռուսաց պէս՝ շատ կ'սիրեն երկար ճամբորդութիւններ ընել կայսրութեան մէջ։ Մէկ անցագիրն տեսակ մը տոմսակ է կարճ ժամանակի և մօտակայ տեղեր շրջելու համար, միւսն շատ աւելի կարևոր է և վերին իշխանութեան կողմէ կ'տրուի դրոշմաւոր թղթի վրայ և կ'կոչուի փլակատ։ Թէ՛ մին և թէ միւսը չինեցի։ Կան մի քանի արուեստներ զոր թիարանի մէջ անգամ կ'բանին մարդիկ երբ մի անգամ սորված և սիրած են զանոնք։ Եւ այսպէս իմ պատժակից բարեկամներէս մին, որ սուտ դրամահատ էր, մի քանի բուփլի փոխարէն ընծայեց ինձ ընտիր արքայադրոշմ կնիք մը։ Իսկ դրոշմաւոր թուղթն, որ անհրաժեշտ էր անցագիր չինելու համար, դիւրին էր հատ մը խորել իմ յատուկ գործածութեանս համար, այն դիւանատունէն ուր այնքան կ'մրոտէի հասարակաց օգտին համար։ Նոյնպէս ծանր ծանր և դժուարաւ ձեռք բերի այլև այլ հագուստներ, որով կարող պիտի լինէի ծպտեալ ուղևորիլ։ Ամեն ջանքս ըրի թէ

բարոյապէս և թէ նիւթապէս այլակերպիլ և տեղացիի մը կերպարանքն առնուլ, ճշմարիտ Սիպերացի մը դառնալ։ Երբ Քիով քաղաքէն ելայ և Եկատարինակի-Զաւօտ եկայ, արդէն մօրուս թողած էի, որ քիչ ատենէն պատկառելի և բոլորովին օրիօրոխական երկարութիւն մը ստացաւ։ Շատ ճիգ թափելով՝ ձեռք ձգեցի նաև կեղծամ մը, բայց Սիպերական կեղծամ մը, այսինքն բուրդը դարձած ոչխարենիէ չինուածը, ինչպէս որ այս երկրին մէջկ'կրեն ցրտէն պահպանուելու համար։ Այս միջոցներու շնորհիւ՝ ստոյգ էի բոլորովին ծպտիլ։ Վերջապէս՝ իմ առած բաներուս ծախքը հանելէն ետև՝ դեռ ևս հարիւր ութսուն ռուբլի թղթադրամ (գրեթէ 200 ֆրանք) ունէի, որ չափաւոր գումար մ'էր իմ երկարատև ճամբորդութեանս համար, և որ դժնդակ դիպուածի մ'առթիւ տակաւին պիտի նուաղէր։

Ես յայտնապէս կ'տեսնէի իմ ձեռնարկութեանս դժուարութիւնները և թէ այն վտանգներն որոց թերևս ենթարկէի ամեն մէկ քայլիս։ Գիտէի որ չէի կարողիսկ ապահովապէս վստահիլ իմ դաշունիս վրայ՝ իբրև յետին ապաւէնս։ Ինչոր կ'ուզեն թող ըսեն, մարդ չէ կարողմիշտ ըստ հաճոյս ինքզինք սպաննել։ Կ'մոռացէի որ կարելի էր որ դիս բռնէին քնացած ժամանակս, կամ սաստիկ յոգնած ու բարոյապէս ոչ ամբողջ եղած ատենս, այնպէս որ մարդս վերջին ազատութեան միջոցն ալ կ'կորուսէ, այս է իր կեանքը բառնալ։ Թէև ծանր էր վիճակս՝ բան մը կար որ դիս կը քաջալերէր և խիզճս կ'թեթևէր, այս է՝ հաստատապէս ուխտած էի, որ ամենևին գաղտնիքս մարդու չյայտնեմ; մինչև որ ազատ երկիր չհասնիմ, նոյնպէս որոշած էի ոչ օգնութիւն, ոչ պաշտպանութիւն, ոչ խորհուրդ խնդրել որ և է մարդէ, մինչև որ Զարին կայսերական սահմաններէն չանցնիմ, և այսպէս նախադաս կ'համարէի իմ ազատութիւնս հրաժարիլ քան թէ իմ նմաններս վտանգի մէջ դնել։ Արդէն իմ տխուր վիճակիս բաղդակից ըրեր էի շատ մը հայրենակիցներ երբ Կամէնից մնացի, մինչդեռ կ'կարծէի թէ ընդհանուր շահուց վերաբերեալ պաշտօն մը կ'վարեմ։ Բայց այսուհետև խնդիրը լոկ իմ անձնական փրկութեանս կ'վերաբերէր և միայն ինքզինքս պարտաւոր էի ապա-

գինել։ Ամուսնած պաշտպանեց դիս այս հաստատուն ուխտիս և որոշմանս մէջ, որ պարզապէս պատուաւոր ուխտ մ'էր, և թերևս այս ուխտիս համար էր որ՝ սկիզբէն ի վեր՝ իր պաշտպան բաղուկն իմ վրայ տարածեց։

Յամին 1846 յունուար ամսուն վերջերը՝ բոլոր պատրաստութիւններս ըրեր էի, և այս ժամանակը շատ յաջողերևեցաւ ինձ, վասն զի նոյն օրերը տեղի պիտի ունենար Ուրալ լեռներուն ստորոտը՝ Իրպիդի տօնավաճառը, որուն նմանը միայն արևելեան Ռուսիոյ մէջ կ'տեսնուի, այնպիսի երկիր մ'ուր առևտրական կեդրոններ սակաւաթիւ լինելով, ուր անհուն տարածութեանց պատճառաւ սովորական հաղորդակցութիւն չգտանուելով՝ այս տեսակ վաճառատեղիներն ճշմարիտ մարդկային ժողովատեղիներ կ'դառնան և ճամբաները կ'գոցուին վաճառքներու և ուղևորներու անհամար սայլերով։ Կ'յուսայի որ այս խուռն բազմութեան մէջ պիտի կարենայի կորսուիլ, ուստի այս պարագայէն օգուտ քաղելու փոյթ տարի։ 1846ին փետրուարի 8ին ճամբայ ընկայ։ Իմ վրայ ունէի երեք չապիկ, որոց մին գունաւոր ու ռուսական ձևով՝ երկար էր, բաճկոն մը և հաստ չուխայէ լայն տաբատ մը, ոչխարենի վերարկու մը ճարպով ծեփուած, որ մինչև ծունկերս կը ծածկէր։ Ունէի նաև խոշոր կպրած կօշիկներ։ Մէջքս կապեր էի ճերմակ, կարմիր և սև բուրդով հիւսուած գօտի մը, և իմ կեղծամիս վրայ կանգուն կ'երևէր կարմիր թաւիշէ և մուշտակէ եզրերով գդակ մը, զոր Սիպերիոյ մէջ կ'հագնին տօնի օրերը հարուստ գիւղացիներ կամ վաճառականի գործակալներ։ Ասկէ զատ՝ մեծ ու լայն մուշտակ մ'ունէի, որու օձիքին բոլորտիքը կապուած էր թաշկինակ մը, և որ ոչ միայն դիս ցրտէ կ'պահպանէր այլև երեսս կ'ծածկէր։ Ձեռքս բռնած պարկի մը մէջ՝ ուրիշ զոյգ մը կօշիկ ունէի, չորրորդ չապիկ մը, ամառուան տաբատ մը, որ երկրին սովորութեան համեմատ կապոյտ էր, նոյնպէս հաց ու ծուկն։ Ալ կօշկիս բունին մէջերկար դաչոյն մը պահեր էի, բաճկոնիս տակ ատակս պահեցի, որ հինգնոց ու տասնոց ռուբլի թղթադրամ էր։ Վերջապէս՝ կաշիէ հաստ թամբանով ծածկուած ձեռքս բռներ էի, ամուր ու վարակոտ դաւազան մը։

Այսպէս հագուած՝ իրիկուն մը մեկնեցայ Եկատերինսկի–Զաւօտէն, խոտորնակ ճամբայ մը բռնելով։ Սաստիկ եղեամ կ'սեղար և լուսնկային կ'շողշողար օդին մէջ։ Քիչ առնէն՝ իմ Ռուսիկոնս՝* Իրտիշ գետն՝ անցայ, որու կարծր ու սառնապատ կեղևը կ'կոխէի, և թէպէտ հագուստներս ծանր էին՝ սակայն շտաքայլ Թարայի ճամբան բռնեցի, որ իմ բանտէս 12 քիլոմէտր հեռի աւան մ'էր։ Ձմրան գիշերները շատ երկար են, մտածեցի ինքնիրենս. արդեօք մինչև առաւօտ ո՞րչափ ճամբայ կարող պիտի լինիմ կտրելու, որպէս զի իմ փախուստս չմնացուի։ Եթէ իմացուի, ի՞նչ պիտի ընեմ։

Հազիւ թէ Իրտիշէն անցեր էի՝ որ յետուստ բալխիրի մը ձայնը լսեցի։ Դող ելայ, բայց միաքս դրի սպասել գիշերային ուղևորին, և, ինչպէս որ շատ անգամ պատահեր էր ինձ՝ իմ վտանգաւոր ճամբորդութեանս ժամանակ, այն բանն որմէ իբրև վտանգ կ'վախնայի՝ փրկութեան առիթ մ'եղաւ ինձի համար։

«Ո՞ւր կ'երթաս, հարցուց ինձ գեղացին՝ բալխիրն իմ առջևս կեցնելով։

— Թարա կ'երթամ։

— Եւ ո՞ւսկից կ'գաս։

— Զալիվինա գիւղէն։

— Վաթսուն քսլէկ տո՛ւր ինձ (10 դուրուշ) և ես քեզի Թարա կ'տանիմ, ուր ես ալ կ'երթամ։

— Ո՛չ, շատ ուշէ. յիսուն քսլէկ կ'տամ, եթէ ընդունիս։

— Է՛հ, շատ լաւ, շո՛ւտ ելիր նստէ, բա՛րեկամ...։»

Նստայ իր մօտ և արշաւակի ճամբայ ելանք։ Իմ ընկերս վերստին պիտի դառնար իր տունը. ճամբան որ սառած ձիւնէն կարծրացած էր, հայելիի պէս փայլեցող էր և հարթ, և կծու ցուրտը թևեր կ'տար ձիերուն. կէս ժամէն Թարա հասանք։ Գեղացին թողուց դիս քաղաքին մէկ փողոցին մէջև իր ճամբան շարունակեց։ Երբ մինակ մնացի՝ իմ առջևս ելած տան պատուհանին մօտեցայ, և՝ ռուսական սովորութեան համեմատ՝ բարձր ձայնով հարցուցի.

* Իրտիշ գետը գետերէն գեր տ'է. որ հինգ Պիզատելը կը կազմէ։ Այս գետակէն էր որ անցար Կեսար՝ երթնայ հոլոռակ, և Հռոմի վրայ դալէր։

«Ձիեր կա՞ն։

— Ո՞ւր պիտի երթաս։

— Իրպիտի տօնավաճառը։

— Ունինք։

— Երկո՞ւ հատ։

— Հա՛, երկու հատ։

— Քանի՞ քսլէկ կ'ուզէք ամեն մէկ վերստին համար։

— Եօթն քսլէկ։

— Այնչափ չեմ տար, վեց քսլէկ բաւական է։

— Ի՞նչ ընենք, թո՛ղ այդպէս լինի։»

Մի քանի վայրկեան ետք՝ ձիերը պատրաստ ու բալխիրին լծուած էին։

«Բայց դո՛ւ ո՞ր տեղէն ես, հարցուցին ինձ։

— Դոմսկէն, Պ...ին գործակալն եմ (այս տեղմարդու մ'անունը տուի)։ Իմ վաճառականս իրմէ առաջ Իրպիտ գնաց, իսկ ես մէկ քանի մանր գործերու համար ետ մնացի և կ'նայիմ որ շատ ուշացեր եմ. կը վախնամ որ տէրս պիտի բարկանայ։ Եթէ շուտ քշես, քեզի օղիի դրամ ալ կ'տամ։»

Գեղացին սուլեց, և ձիերը սլաքի պէս սրացան։ Ցանկարծ երկինքը ծածկուեցաւ, սկսաւ առատ ձիւն վաղիլ, գեղացին ճամբան կորսընցուց և ուր երթալիքը չգիտէր։ Երկար ժամանակ ասդիս անդիս շրջելէն ետև՝ ստիպուեցաւ կայ առնուլ և գիշերն անտառն անցընել։ Սաստիկ բարկութիւն կեղծեցի և կառապանս սկսաւ աղաչելով ներում խնդրել։ Զպիտի փորձեմ նկարագրել թէ ի՛նչ տոկալի անձկութեան մէջ անցուցի այն գիշերը բալխիրին մէջ, ձիւնաբեր փոթորկի մ'ատեն, և Եկատերինսկի–Զաւօտէն չորս մղոն հեռու՝ ամեն վայրկեան կարծէի լսել կնդրկներու բոժոժի ձայնն որք իբր թէ իմ ետևէս ղրկուած էին։ Վերջապէս սկսաւ լուսնալ։

«Թարա դառնանք, ըսի գեղացիին, այն տեղուրիշ բալխիր մը պիտի բռնեմ, իսկ քեզի, ասլո՛ւշ մարդ, ստակ մ'անդամ պիտի չտամ, այլ ոստիկանին պիտի յանձնեմ քեզ որ այսպէս ժամանակս կորուսիր։»

Գեղացին՝ բոլորովին չվիրաւորուած՝ սկսաւ դառնալ դէպ ի Թարա. բայց հազիւ թէ մի վերստ քշեց որ կայ առաւ, չորս-կողմը դիտեց և ձեան կոյտերու ներքև ճամբու հետք նշմարելով՝ պոռաց.

«Նահ՝ այս ճամբէն պարտաւոր էինք երթալ։

— Ուրեմն այդ ճամբան բռնէ դնա, ըսի անոր, և Աստուծո՛յ ապաւինէ . . . :»

Այն ատեն սայլավարն իր բոլոր ճիգը թափեց որ կորուսած ժամանակը շահի։ Սակայն սոսկալի մոռածմունք մը պաշարեց զիս։ յիշեցի մեր տարաբաղդ գնդապետ Վիզոսկին, որ խոյս տալու ատեն՝ ինձի պէս ամբողջ գիշեր մ՝անտառին մէջ անցընելէն ետև՝ իր սայլապանին ձեռօք զօրականներուն մատնուեցաւ։ Արդեօք իմ գիւղացիս ալայսպիսի մատնութիւն մը կ՝խորհէ՞ր, կ՝ըսէի իւրովի, և արդէն ձեռքս դաշունիս կը տանէի մեքենաբար։ Ունա՛յն երկիւղ, անիրա՛ւ կասկած։ Գեղացին քիչատենէն իր մէկ բարեկամին տունը հասաւ, որ ինձ թէյ մեծարեց և նոյն գնով ձիեր տուաւ ինձ որ ճամբաս շարունակեմ։ Այսպէս իմ ճամբաս կ՝շարունակէի, ձիերս չափաւոր գնով փոխելով, երբ՝ ուշ ատեն Սօլոտակայիա անուն գիւղը հասնելով՝ յանդուգն և ծանր գողութեան մը զոհ ընկայ։ Սայլապահը վճարելու համար դրամ չունէի, անոր հետ մի պանդոկ մտայ, ուր մի շատ գինով մարդիկ կային, զանն զի բարեկենդանի վերջին օրերն էին։ ԲաՀկոնիս տակէն մի քանի թղթադրամ հանեցի և երկու հատ պանդոկապետին տուի փոխելու համար, երբ յանկարծ խումբ մը մարդիկ՝ դիտմամբ թէ առանց դիտման, զիս այնպէս հրեցին դրասեղանէն որու վրայ թղթադրամներս դրած էի, որ ես հեռուն ընկայ և ճարպիկ ձեռք մը նոյն դրամներս կորզեց։ Ի զուր պոռացի, գողը չկրցայ երևան հանելև մտքէս անգամ չանցուցի ոստիկանին դիմել, այլ ստիպուեցայ համբերել։ Այս կերպով քառասուն բուվիս գողցան, բայց ամենէ աւելի իմ ցաւս և կրնամ ըսել սարսափս աւելցընող բանն այս եղաւ, որ գողը նոյն միջոցին իմ երկու անգին թղթերս յափշտակած էր՝ մին պզտիկ յիշատակագիր մ՝էր, որու վրայ նշանակեր էի մանրամասնաբար բոլոր այն քաղաքներն ու գիւղերն՝ ուսկից անցնելով Արքանկէլ պիտի հասնէի, միւսն էր դրոշմաւոր անցագիրս, որ այնքան սուղ նստած էր ինձ . . . :

Այսպէս ուրեմն փախուստիս առաջին օրէն կորուսի ճամբորդութեանս չափաւոր ստակին մէկ քառորդը, իմ յիշատակագիրս, որ իմ ճամբուս ուղեցոյցը պի-

տի լինէր և արքայագրոշմ անցագիրս, թուղթ մ՝որ միայն կարող էր հետաքրքիր մարդու մը կասկածները փարատել . . . յուսահատ վիճակի մէջ էի։

Բ

Բան մը յատկապէս իմ վտանգալի փախուստս յաջողցընելու օգնեց, և ստիպեց զիս տոկալ ամեն արգելքի և խարէութեան, և կերպով մը կամայ ակամայ զիս արիացուց, այս էր այն պարագային որով անհնարութեան մէջ գտնուէի իմ ձեռնարկութենէս հրաժարիլ։ Մի անգամ որ Եկատարինակի–Զաւօտէն ելայ, վիճակս բոլորովին մի և նոյնը կ՝դառնար, թէ՝ Թարսայի մէջ բռնուէի, թէ Ուրալ լեռներու վրայ, թէ Բէզորայի անապատներուն մէջ, թէ Արքանկէլի նաւահանդստին մէջ, մինչդեռ յառաջերթալով՝ աւելի իմ ազատութեանս կիսին կ՝մօտենայի։ Հետևապէս դատապարտուած էի ոչ զղջալու և ոչ վարանելու։ Այսպէս՝ թէև անդարմանելի էր բրած կորուստս, իմ ճամբաս անդադար կ՝շարունակէի, և երբ Իրպիտի մեծ արան

թիւ մեծ զուարթութիւն-և աղմկալի բերկրութիւն մը կ'յայտնեն, որով բոլոր գործունի ժողովուրդը կ'ոգեւորի՝ անշահաւէտ եղանակէն եկնելով։ Իմ ձայնս ալ կը խառնէի սայլավարներուն սուր ու թափանցիկ աղաղակներուն, որոնցմէ կ'բարձրէի ամեն անցորդ իբրև իմ փախուստիս ակամայ գործակիցն, վասն զի որքան շատնային բալխիրներու ու ձիերու թիւն այնքան սիրտ կ'առնէի։ Ի՞նչպէս կարելի է, կ'ըսէի իւրովի, այսքան վաճառականներու, գործակալներու և դեղացիներու մէջ որոշել քաղաքական դատապարտ մ'որ իր աջաստութիւնը կ'փնտռէ, ի՞նչպէս կարելի էր այս շարժուն և յարափոխ Բաբելոնի մէջ դիս հալածել։ Մեր Իւիրէնի առածին ըսածին պէս, անապատին մէջ հովին ետեւէն պնդել է . . . :

Իմ արշաւիս արագութիւնն հասկցընելու համար, որ բնաւ չէր տարբերեր միւս Սիպերականաց արշաւէն, բաւական է ըսել որ իմ փախուստիս երրորդ օրը, և Թարայի անտառն անցուցած դիշերս ի հաշիւ չառնլով, շատ ուշ ատեն ինքզինքս Իրպիտի դրան առջև գտայ, Եկատարինակէն հազար քիլոմէդր հեռու։

«Կա՛նգ առ, և անցագիրդ ցո՛յց տուր» պոռաց պաշտօնաւորը։

Բարեբաղդաբար, յարեց նա շատ ցած ձայնով։

«Քնան քսպէկ տուր, և չիտակ գնա։»

Շուտով կատարեցի օրէնքին պահանջը որ այնքան յարմար կերպով կ'փոխուէր, և քիչ ատենէն պանդոկի մ'առջևը հասայ, ուր առաջ չուզեցին դիս ընդունիլ, վասն զի տեղ չկար, բայց վերջապէս դիս ընդունեցին երբ յայտնեցի որ միայն դիշերը պիտի մնամ, ստոյգ լինելով որ հետևեալ օրն իմ մեծաւորս պիտի գտնէի և անոր հետ պիտի բնակէի։ Ցեռոյ դուրս ելայ, այնպէս ցոյց տալով՝ որպէս թէ ոստիկանութեան դիւանատունը պիտի երթայի, և դառնալով յայտնեցի որ թղթերը վար դրին որպէս դի հետևեալ օրն ինձ յանձնեն։ Իրքան (դումարման մէկ սենեակը) լեցուն էր սայլաններով, և այնպիսի կուսրի հոտ մը կար այն տեղ որ մարդու գլուխը կ'դառնար։ Ես շատ խօսեցայ իմ տիրոջ վրայ, մեր գործերուն վրայ, և բոլոր ճիգս թափեցի որ սիպերական աղմկալից հացկերութի մը մասնակցիմ, որ բաղկացած էր շաղգամի ապուրէ, ձկան

ապուխտէ, իւղած ճաւարէ և աղած կաղամբէ։ Հացկերութէն ետք՝ ամեն մարդ իր բաժինը վճարեց տան տիրոջ և կրցածին պէս պատրաստեց իր անկողինն Իրքայի մէջ։ Ոմանք փռան վրայ երկնցան, ոմանք՝ յարդի վրայ և այլք՝ գետնի վրայ, այս՝ նստարանին վրայ, այն՝ նստարանին տակը։ Ես ալ ամենուն պէս ընդրի, բայց անկարողեղայ քնանալ, վասն զի սիրտս վախով և յուսով սաստիկ յուզուած էր։

Իմ բոլոր ընկերներուս պէս հետևեալ օրը լուսնալուն արթնցայ, և բոլորովին օրթոտոքս կերպով երեք անգամ երկրպագութիւն ըրի սուրբերու պատկերներուն առջև, որ ամեն Ռուսի տան անկեան մէջ անպատճառ կ'երևէին, պարկս չալկեցի և դուրս ելայ տէրս գտնելու պատրուակաւ։ Թէև տակաւին առաւօտ էր, մեծ հրապարակն արդէն մարդիկներով լեցուն էր։ Իրպիտ քաղաքը բաւական ախորժելի տեսք մ'ունի, թէև բոլոր տունները փայտաշէն են։ Փողոցները լայն, հրապարակներն ու վաճառատեղիներն ընդարձակ են։ Ամեն տեղ՝ ռուսական ոճով շինուած կրպակներ կ'բարձրանային բարակ տախտակներով, ժամանակաւոր տօնավաճառին համար։ Բալխիրները, սայլերն, որ զօրաբանակի նման շարուած էին, վաճառքի հակեր կ'պարունակէին։ Իսկ դատարկներն իրարու վրայ դիզուած էին, այսպէս հազարաւոր կառքեր կային։ Սակայն ես միայն քաղաքէն անցայ, վասն զի կ'տեսնէի որ երկար ատեն մնալն կրնար ինձ վտանգաւոր դառնալ։ Մանաւանդ կ'վախնայի որ այնպիսի տեղ մը յանկարծ չպատահիմ Եկատարինաքի-Զաւօտի մէջ տեսնուած բազմաթիւ ծանօթներուս մէկուն, և հետևապէս չէի ուզեր՝ առանց հարկի՝ այս իմ ծպտեալ վիճակս փորձի դնել։ Կրպակէ մը քանի մը հաց և աղ դնելով պարկիս մէջ դրի, և քաղաքին դիմացի դռնէն դուրս ելայ, և ոչ մի պաշտօնաւոր արժան համարեց ինձ խօսք մ'ուղղելու։ Մինչև Իրպիտ ձիերու համար ըրած ծախքս, դողցուցած ստակս դուրս ձգելով, շատ նուազեր էր իմ պահեստի դումարս։ Միայն Եօթանասունհինգ ռուբլի թղթադրամ ունէի։ Այս պզտիկ դումարով ի՞նչպէս պիտի կարենայի Ֆրանսա հասնիլ։ Ցայտնի կ'երևէր, որ պարտաւոր էի այնուհետև յոյսս միայն ոտքերուս և բազուկներուս վրայ դնել, եթէ կարենայի ճամբու վրայ

օրասպահիկս աշխատելով ճարել։

1846ի ձմեռն յետին ծայր սաստիկ եղաւ, և ձիւնն այնքան առատ եկաւ որ շատ տեղ փլած տեսայ հաստատուն տուներ։ Միսկերականներն երբէք չեն յիշեր այսպիսի խիստ եղանակ մը։ Սակայն երբ առաւօտուն Իրպիտէն անցայ, օդն աւելի մեղմացաւ. բայց միւս կողմը ձիւնն սկսաւ այնքան սաստիկ ու թանձր դալ՝ որ բոլորովին մարդուս աչքը կ'մթադնէր։ Տարօրէն այլայլութիւն մը կ'զգայի, այս գրեթէ միշտ անձայն դաշտերու մէջ ինքզինքս կ'դտնէի և ձիւնի տարափով պաշարուած զոր ի զուր թորթափելու կ'ջանայի։ Շատ դժուարաւ կ'քալէի այս սպիտակ կոյտերուն մէջ ուր ամեն մէկ քայլիս իմ առջևս կ'կուտակուէին։ Սակայն ես ճամբուս հետքը չկորուսի, և ատեն ատեն իրենց բախիրով ինձ հանդիպող սայլավարներ շուիլոս գտնելու ինձ կ'օգնէին. կէսօրուան մօտ՝ երկինքը բացուեցաւ, և աւելի դիւրաւ սկսան քալել։ Սովորաբար՝ դեղերէն հեռու կ'անցնէի, և երբ աւան մ'անցնելու ստիպուէի, շիտակ ու անվրդով կ'քալէի, որպէս թէ չրջակայ բնակիչմը լինէի և տեղեկութիւն խնդրելու պէտք չունենայի։ Երբեմն գետին ծայրը գտնուող տնակ մը մտնելով հարցմունքներ ընելու կ'համարձակէի, երբոր իմ բռնելիք ճամբուս վրայ ծանր տարակոյսներ ունենայի։ Երբ անօթի լինէի՝ պարկէս կտոր մը սառած հաց կ'հանէի, և քալելով կ'ուտէի կամ ծառի մ'ոտքը նստելով, անտառին հեռաւոր մէկ կողմը։ Իսկ ծարաւս անցընելու համար կ'վնտռէի այն խորշերը զոր տեղւոյն բնակիչները գետերու և լճակներու սառոյցին մէջ կ'բանային որպէս զի իրենց անասուններուն ջուր տան. երբեմն ալ բաւական կ'սեղէի բերնիս մէջ հալած ձիւն դնել, թէև այս միջոցն ուշածիս պէս իմ ծարաւս չէր անցներ։ Երբ Իրպիտէն ելայ առաջին օրը ճամբաս շատ տաժանելի դտայ, այնպէս որ իրիկունը բոլորովին յոգնած դադրած էի։ Իմ հագած ծանր հագուստներս աւելի կ'յոգնեցընէին զիս, բայց չէի կարող հանել։ Երբ դիշերը հասաւ՝ անտառին խորերը մտայ և մտածեցի անկողնիս պատրաստել։ Արդէն գիտէի թէ Օսդիակներն ի՛նչ միջոց կ'գործածէին՝ իրենց սառած անասատներու մէջ՝ քնանալու ատեն պատսպարուելու համար։ Պարզապէս խոր ծակ մը կ'փորեն հոն ձեռն կոյտի մը ներքև, և այսպէս

կոչտ անկողին մը կ'շինեն իրաւ, բայց բոլորովին տաքուկ։ Ես ևս նոյնն ըրի, և քիչ մը ետք՝ հանդիստ քուն մը քաշեցի որմէ այնքան պէտք ունէի։

Երբ հետևեալ օրն արթնցայ՝ սաստիկ անհանգստութիւն մը զգացի, ոտքս շատ սառած էին։ Որովհետև բոլորովին վարժած չէի Օստիակներու այս սովորութեան, անխոհեմութեամբ մուշտակս բրդոտ կողմէն վրաս ծածկեր էի, փոխանակ կաշի կողմէն ծածկելու, այնպէս որ տաքութիւնը սառոյցանալով՝ ձիւնն հալեր և առաւօտեան դէմ բոլոր մարմինս պաղ առեր էր։ Միտքս դրի օգուտ քաղել այս դասէն ապագային մէջ. նոյն միջոցին ջանացի շուտ շուտ քալելով ընդարմացած ոտքերս տաքցընել, և յաջողեցայ։ Դժբաղդաբար՝ օտարներ

մակերէնս փուեցի որ չորնան։ Ցեսայ հաց կերայ կշտացայ և նստարանին վրայ երկնցայ անպատուում գոհութեան զգացումով։ Կարծէի թէ ամէն զգուշութիւն ըրեր էի, իմ կաթոլիկական աղօթքս ընելէ ետև՝ ցոյցի համար պարտաւորիչ յարգանք մատուցի օրթոդոքսական սուրբ պատկերներուն, և սակայն երկու կանանց մտքին մէջ կասկածներ ծնան։

Ինչպէս որ վերջէն իմացայ, այս կասկածին պատճառը՝ չորցընելու համար փուած ճերմակեղէնս էր։ Դիտեր էին որ Ռուս բանւոր մ'այնքան փոխնորդ չունենար, վասն զի չորս հատ շապիկ ունէի ես։ Արդէն քունս սկսեր էր կոխել, երբ փսփսուք մը լսեցի որ դուռ հանեց զիս, և յանկարծ երեք դեղացիներ ներս մտան, որոց մին ցած ձայնով հարցուց.

«Ուր է նա։»

Նորատի կինը զիս մատով ցոյց տուաւ և այս մարդիկ զիս կոչեցին և ասպա մշտեցին զիս, հարցընելով թէ արդեօք անցագիր մ'ունի՞մ։ Ճարահատ պատասխան տուի.

«Եւ ի՞նչ իրաւամբ անցագիրս կ'ուզէք. միթէ ձեր մին կոլվա կամ պաշտօնաւո՞ր է։

— Իրաւ է, մեր մէջ պաշտօնաւոր չկայ. միայն այս տեղացի բնակիչներ ենք։

— Ուրեմն դուք իրրև տեղացի տունե՞րը կ'կոխէք և անցագիր կ'պահանջէք։ Ո՞վ գիտէ թէ ի՞նչ մարդիկ էք դուք, և ո՞վ գիտէ թէ յատուկ նպատակ մը չունիք իմ թղթերս գողնալու։ Բայց անհո՛գ եղիք, և պիտի հասկըցընեմ ձեզ թէ որո՞ւ հետ կ'խօսիք։

— Բայց մենք այս տեղացի ենք։

— Միթէ իրա՞ւ է ինչ որ կ'ըսեն» հարցուցի ես տան տիկնոջ կողմը դառնալով, և երբ հաստատական նշան մը ըրաւ, վրայ բերի.

«Լաւ ուրեմն, հիմակ կրնամ ձեզի պատասխան տալ. իմ անունս Լաւրէնտի Ֆուզմին է, Դօպոլաք գաւառէն եմ։ Պոհոդայի գործարանները կ'երթամ գործ փնտռելու, և առաջին անգամ չէ որ այս տեղէն կ'անցնիմ։»

Վերջն աւելի մանր տեղեկութիւններ հաղորդեցի և անցագիրս ցոյց տուի։ Միայն պարզ թուղթ մ'էր բնակութեան (վասն զի, ափսո՛ս, իմ մեծ անցագիրս կորուսեր էի), որմէ յետին պաշտօնաւորն անդամ չսիրեր խաբուէր, բայց կնիք մը կ'կրէր, և ասոր տեսքը բաւական էր ամենուն վստահութիւն ազդելու։ Այն ատեն ոչսան այլ և այլ լուրեր հարցընել Իրպիտի տօնավաճառին և ուրիշբաներու վրայ, և ի վերջէ՝ ինձ բարի գիշեր ըսին, և ներում խնդրեցին որ զիս անհանգիստ ըրեր էին։

«Կ'տեսնես որ մեր վարմունքը ներելի է. կարծեցինք որ դուք փախած աքսորական մ'էք, և երբեմն այսպիսի աքսորականներ ասկից կ'անցնին։»

Գիշերուան մնացորդը հանգիստ անցուցի. առտու մնաս բարև ըսի երկու կիներուն, որոց հիւրընկալութիւնը քիչ մնաց որ գլխուս փորձանք պիտի բերէր։

Այս պատմած դիպուածս տխուր ապաւորութիւն մը թողուց մտքիս վրայ. տեսայ և համոզուեցայ որ այլ ևս պէտք չէր գիշերն ապաւէն փնտռել մարդոց մէջ, եթէ չէի ուզեր ծանր վտանգներու մէջ ընկնիլ, և թէ օստեակի ձիւնային անկողինն իմ միակ անկողինս պիտի լինէր, մինչև որ նոր կարգադրութիւն մ'ընէի։ Եւ արդարև հարկ եղաւ գոհ լինիլ այս ձիւնային անկողնով իմ բոլոր ուղևորութեանս ժամանակ՝ Ռուրալ լեռներէն մինչև Վէլիքի-Ռեսուիկ հասնիլս, այսինքն փետրուար ամսուն կէսէն մինչև 1846 ապրիլի սկիզբը։ Մայն երեք չորս անդամ համարձակեցայ ապաստանիլ խնդրել գիշերը մեծաւոր տնակի մը մէջ, վասն զի տասնհինգ օր շարունակ անտառին մէջ իմ ոյժս հատեր սպառեր էր և ինչ ընելիքս չգիտէի։ Բոլոր միւս գիշերներն բաւական կ'համարէի որջ մը փորել և անոր մէջ քնանալ։ Միայն աւելի շրջահայեաց եղայ, և քիչ ատենէն իմ պատսպարանս պատրաստելու համար աւելի ճարպիկութիւն ստացայ։ Դիտեր էի որ թանձր անտառներուն մէջ՝ ձիւնը չէր կրնար հասնիլ խոշոր ծառերու ստորոտը, և դիպուածով կոճղին բոլոր դիրքը նեղ միջոց մը կ'թողու որ շուտով խոր ծակ մը կ'դառնայ։ Այսպէս ծառին երկայնքը կ'սահէի հորի նման չինուած խոռոչին մէջ. երբ յատակը հասնէի՝ գաւազանովս ձիւնը դուրս կ'նետէի վերին բացուածքէն և այսպէս կամար կ'յօրինէի որ զիս լիովին կը պատսպարէր։ Սակայն շատ անգամ այս գիշերային բնակառանն չէի կարող լինել, վասն զի մերթ ձիւնը շատ փխրուն էր, մերթ դժուարաւ չինած կամարս յանկարծ կ'փլէր։ Այն ատեն ծառին մօտ կ'նստէի, և կռնակս կոճղին տուած՝ կ'քնանայի կամ կ'ներկայէի բոլոր գիշերը։ Երբոր ցուրտը սաստկանար և զգայի որ անդամներս կը

բռնուէին, ոտք կ'ելնէի, ըստդիպուածոյ կ'քալէի, վասն զի չէի կարողմութիւն որոշել ճամբան. միայն օգուտն այս էր որ շարժելովքիչ մը մարմինս կ'տաքնար։ Շատ անդամ կ'թողուի որ առատ վաղող ձիւնն գիս ծածկէ. այն ատեն աւելի կ'տաքնայի, բայց առտու շատ դժուարին կը լինէր ինձ ճերմակ պատանքս թօթուել։ Փիչ քիչ այս կերպով քնանալու վարժեցայ։ Եղան գիշերներ՝ երբ անտառին խորը կ'մտնէի որպէս թէ ինձ ծանօթ օթևան մը լինէր։ Սակայն՝ պարտաւոր եմ ըսել, որ երբեմն՝ այս վայրենի կեանքն ինձ անտանելի կ'երևէր։ Ոչ մարդկային բնակարան կար, ոչ տաք կերակուր և ոչ իսկ սառած հաց, որ շատ օրեր իմ միակ սնունդս էր։ Այս զրկանքն իմ աչքիս առջև բերաւ այն երկու նողկալի ուրուականներն որ ցուրտ ու անօթութիւն կ'կոչուին, որոց անունը շուտով կ'տանք երբորքիչ մը նեղութիւն քաշենք։ Այսպիսի վայրկեաններու մէջ՝ սաստիկ կ'վախնայի քնէհար չլինելու, վասն զի ստէպ քունս կ'կոխէր, որ տեսակ մը մահուան յայտնի նշանն էր, որու դէմ բոլոր մնացած ուժովս կ'մաքառէի։ Սակայն ամենէ աւելի զղացած պէտքս տաք սնունդ մ'էր, և շատ դժուարութեամբ կ'զսպէի փափաք մ'որ գիս շարունակ կ'գրգռէր որ և է հիւղ մը մտնելու և սիպերական շաղդամով եփուած ապուր խնդրելու։

Երբոր անցայ Վէրքոտուրիէ՝ վերջին փայտաշէն քաղաքէն, որ Ուրալի արևելեան ստորոտը կ'գտնուէր իմ ճամբուս վրայ և ուր զգուշացայ դադար առնելու, պատահեցայ վեց ուս երիտասարդներու, որոցմէ խիստ շատ տեղեկութիւններ ստացայ։ Իրենց հագուստէն ու լեզուէն հասկըցայ իսկոյն որ չրջակայ քաղաքներէն չէին, և ոչ իսկ Սիպերիացի։ Երբ անոնց հարց ու փորձ ըրի՝ ըսին ինձ որ Արքանկէլ դաւառի՝ Միկէնի վիճակէն կ'գան, որ Սառուցեալովկիանու եզրն է, և թէ Դօպոլսք կ'դիմեն, որպէս զի գործ փնտռեն իրրև անասնաբոյժ։ Այս երիտասարդներն հաճելի դէմք մ'ունէին, յետին ծայր ճերմակ դոյն և արծաթափայլ մազեր. որ սանտրած վուշի կ'նմանէին։ Եթէ իրենց աչքերը փայլուն կապոյտ չլինէին, պիտի կարծէի թէ Ալպինոսներ են։ Ցայտնեցին ինձ որ իրենց ձգած երկիրը շատ աղքատ էր, մինչև անգամ թշուառ. ոչ ցորեն կ'բուսնէր այն տեղ, ոչ դարի ու ոչ վարսակ,

բնակիչները ձկնորսութեամբ կ'ապրէին և առուտուրով և հացն Արքանկէլէն կ'ստանային։ Այս մարդիկը տեսնելով, որ այնքան հեռու տեղէ հետիոտն կ'գային՝ սիրտ առի։ Ես որ իմ կողմէ շատ տեղեկութիւններ տուի անոնց Սիպերիոյ վրայ, բայց ոչ իմ բնակած տեղերու վրայ, և մասնաւորապէս այն Գաղաքներու վրայ ուր շատ ձիեր կ'գտնուէին։ Զարմանալի՝ խաղ է բնութեան խաղն, որով կ'համի մարդկային ցեղը բաշխել երկրագնդիս վրայ։ Սառուցեալ ովկիանու հեռաւոր-եղերքը բնակող այս ողորմելի բնակիչներուն հաւատը՝ Սիպերիան Աւետեաց երկիրն է, իբրև Եդեմ մ'է, ուր կ'միտին իրենց երջանկութեան երազները, ուր խումբ խումբ կ'գաղթեն, որպէս զի աւելի շահաւէտ աշխատանք գտնեն և աւելի դիմաց երկին մը։

Զգիտեմ թէ քանի՞ օր այսպէս քալեցի Ուրալի անտառուտ ու ձիւնոտ բարձունքը մագլցելով։ Ճամբուն միօրինակութիւնն, այն դէպքերու պատահումն օրերուն թիւն մոռցիս հաներ էին։ Միայն այս կ'յիշեմ որ Բավուտա՝ լեռներուն մէջ՝ գիշեր մը քնացայ մարդկային բնակարան մը, և այս երկրորդ անգամն էր Իրպիտէն մեկնելէս ի վեր, և երրորդ անգամն էր որ տաք կերակուր կերայ. այս թէթև սփոփանքն ալ դիպուածի արդիւնքն էր։ Երեկոյին շատ ուշ գիւղէն կ'անցնէի. հիւղմը նշմարեցի ուր դեռ ճրագ կ'վառէր, և յանկարծ ձայն մը լսեցի որ կ'ըսէր.

«Ո՞վ է այն։

— Ուղևոր մը։

— Եւ շատ հեռու պիտի երթա՞ք։

— Այո՛, շատ հեռու։

— Լաւ ուրեմն, եթէ կ'ուզես, մեր տունը հանգստացիր։

— Ատուած փոխարէնը հատուցանէ ձեզ. արդեօք նեղութիւն չը՞լինիր ձեզի։

— Ինա՛ւ նեղութիւն չէ։ Դեռ պառկած չենք, նե՛րս մտիր, խնդրեմ։»

Այս հիւրասէր տնակին սեմէն ներս մտայ և գտայ երկու բարեսէր և բաւական տարեաց անձինք, այր ու կին։ Սիպերիական պարզ կերակուր մը հանեցին ինձ, թէև իմ աչքիս Լուգուլլոսի ճշմարիտ խնջոյք մ'էր։ Բայց ամենէն հաճելին այս էր ինձի համար, որ կա-

բոզ եղայ հագուստներս հանել, զոր բնապէս չէի կրցած հանել բաց օդին անցուցած դիշերներս։ Տնեցիք հարցումներ ըրին ինձ և ես պատասխանեցուի։ Յետոյ՝ տնեցի որ Դոսլոլը դաւառէն եմ, և Ուրալի միւս կողմը Սոլիքամսկ կ'երթամ, ուսկից ապգական մը գրած էր որ կրնամ գործ գտնել աղարաններու մէջ։ Յետոյ՝ այս բարի մարդիկ պատմեցին ինձ իրենց վիճակն և զանգատեցան իրենց բաղդէն։ Ասոնք ստրուկներ էին, որ դատապարտուած էին սերունդէ սերունդ ծառայել և Ուրալի կառավարական գործարաններու մէջ աշխատիլ, որ բազմաթիւ էին։ Երբեմն Բավուտայի մէջ իսկ գործարան մը կար, բայց քանի որ տէրութիւնը թողեր էր զայն, պարտաւոր էին մինչև Պոհոդոլդնալ աշխատելու համար, ուր ծառայութիւնը շատ ծանր է, և կիներն և տասնչորս տարեկան տղայք անգամանկից ազատ չէին։ Հետևեալ օրն իմ հիւրընկալ տնեցիք թոյլ չտուին որ երթամ իրենց հետ նախաճաշիկ ընելու առաջ, և չուղեցին ընդունիլ տուած ստակս, թէև շատ թախանձեցի։ Ա՛հ, ի՜նչչափ ջերմ ու մտերմական եղաւ մեր բաժանումը։ Սակայն այս ուրախութիւնս պղտորեցաւ երբոր ինձ երթաս բարև ըսելու և ճամբուս վրայ տեղեկութիւններ տալու ատեն՝ բարի մարդն ըսաւ.

«Սակայն Բավուտայէն քիչ մը հեռու պահասլան զօրքեր կան որ անցագիր պիտի պահանջեն քեզմէ և կարող են ուզած տեղեկութիւնդ տալ։»

Դիւրին է երևակայել որ բոլոր ճիգս թափեցի այդ տեղեկութեանց աղբիւրին չդիմել։ Սկսայ լեռ ու ձորէ անցնիլ, մինչև վիզս ձիւնի մէջ թաղուելով, և ուղիղ ճամբան այն ատեն միայն բռնեցի երբոր զօրապահակէն բոլորովին հեռացայ։ Միւս օրերն ալ այսպէս շարունակեցի, և ատեն ատեն միայն հաց կ'գտնէի էղբոշչաներուն մէջ որ իմ ճամբէս շատ հեռու կ'գտնուէին։ Էղբոշչա ըսուած բնակարանները՝ փոքրիկ չէնքեր են իրարմէ շատ հեռու, ճամբորդներու դիւրութեան համար, և կ'երևին Ուրալ լեռներէն մինչև Վէլիքի-Ռուստուկ։ Այն բնակարաններու մէջ՝ կ'գտնուին հաց, աղած ձուկ, շողգամ, կաղամբ, կէս, (մրդողի) երբեմն ալ օղի։ Մէկ քանի էղբոշչաներու մէջ կ'գտնուին նաև խոտ ու վարսակ ձիերու համար։ Այս հիւրանոց-

ներուն տէրերն՝ որ միշտ մենակեաց խեղճ ծերուներ են կամ ծեր ու թշուառ ամուսիններ, սկսած պաշարը կ'ճարեն և բաւական շահ կ'ընեն։

Դիրիկունը շատ մը տայլավարներու հանդիպեցայ որ Իրպիտի տօնավաճառէն կ'դառնային և զաղար կ'առնէին իրենց ձիերուն համար. բայց ես անոնց հետ մնալ չուզեցի. կ'դուշակէի որ Ուրալի գագաթին մոտ էի, և աւելորդապաշտական զգացում մը դիս կ'մղէր իմ ճակատագրիս յետին կատարը։ Ի վերջ Ուրալի սարը հասայ դեղեցիկ դիշեր մը։ Լուսինը կ'լուսաւորէր լիովին չքեղ ու սլանդակ դաշտանկար մը. ծառերն ու հոկայական ժայռերը կ'նկարէին իրենց ոստախիտ ստուերներն ձեան լայնատարած սաւանին վրայ։ Հանդիսական, գրեթէ կրօնական լռութիւն մը կ'տիրէր իմ բոլորտիքս։ Ատեն ատեն չոր ու մեռաղական աղաղակ մ'ակամէն կ'զարնէր. ցրտին սաստկութենէ ճայթող քարերուն ձայնն էր այս։ Ա՛հ, բնութիւնն որչափ որ կոչտ ու վայրենի կ'երևէր ինձ այս տեղ, դարձեալ աւելի դիտակը կ'դանէի քան թէ հեռուն քաղաքակիրթ մարդիկը. բնութիւնն իրմէ անցագիր չպահանջեց։ Այս տարօրինակ ու զարհուրելի ձևերը տեսնելով՝ որ լուսնկային այնքան կ'մեծնային, տկամայ կ'մոռցէի ուրիշ աշխարհի մ'ոգիներն, կ'յիշէի վկսերու դիւթական և տխուր էակներն ու զրոյցներն որով իմ մանկական օրերս օրորուած էին Իւկրէնի մէջ։ Նոյն իսկ ես՝ Իւկրէնի ամեն տղոց աչքին՝ միթէ էշբայէն մեծ ու ճշմարիտ դև մը չը՞պիտի համարուէի՝ եթէ տեսնէին դիս այս սլանդակ հագուստովս, ձիոով ծածկուած երկար մորուսովս ու յօնքերովս, իբրև ստուեր թափառական այս անտառին ստուերներուն մէջ . . . ։

Յուրաքանչիւր դիս և այս երկարտև հիացումս դադրեցուց. ուստի սկսայ իջնել այն անհուն պատուարին արևմտեան զառիթափէն զոր բնութիւնը կանգնած է Եվրոպիոյ ու Եւրոպական Ռուսիոյ մէջ։ Հետևեալ օրն սայլավարներուն միացայ և առիթ ունեցայ տեսնել այն հրաշալի արագութիւնն որով դիտէին իրենց սայլերը ուղղել դրեթէ անանցանելի ճամբաներէ։ Երեսուն բախիր կային, ամեն մէկը ձիով մը լծուած, և եօթն սայլավար կ'վարէին բոլորը ձիով մը լծուած, և եօթն սայլավար կ'վարէին բոլորը

լորը։ Ճամբան նեղէր, ու երկու կողմէ այնքան բարձր ձեան պատուարներ կային որ մարդիկ, ձիերն ու սայլերն քանի մը քայլ անդին անհետ կ'լինէին։ Երբ դիմացէն ուրիշ կարաւան մը գար, ամենէն թեթեւը ձիւնապատ պատուարին մէջ կ'թաղուէր, և այն ատեն ձիերուն միայն ականջները կ'երևէին։ Այս այլանդակ չրջանը կատարելէն ետև՝ երկու կարաւաններու մարդիկ իրարու կ'օգնէին որպէս զի սայլակներն ու ձիերը ձիւնէն դուրս հանեն։ Այս հանդիպումը բան մը չէ եթէ բաղդատենք ուրիշ դիպուածներու հետ, երբ յանկարծ լեռնանման կոյտերը կ'փլին և բոլոր բալիսիրներն ու կարաւանները կ'ծածկեն։ Ձիերն՝ որ այս արգելքներուն սովորած են՝ իսկոյն կ'նետուին հեղեղատներու մէջ և յետոյ սայլավարները զանոնք դուրս կը հանեն։ Ուրալ լեռներու մէջ՝ այս ուղևորութեան դժուարութեանց պատճառաւ՝ անվեհեր կառապաններն օրը քսան վերստէն (երեք մղոն) աւելի չեն քշեր, և մինչև Վէլիքի-Ռուստիուկ՝ ճամբուն վրայ ձիերու դիակներ տեսայ որ չկրցեր էին դիմանալ տաժանելի յոգնութեան։ Իսկ սայլավարին (եամշչիկ) կարողութիւնն՝ որով ամեն աշխատութեան ու զրկանաց կ'դիմանայ, աննկարագրելի և անհաւատալի կ'թուի։

1846 մարտ ամսուն առջի օրերը՝ հասայ Սոլիքամակ, որ Ուրալ լեռներու արևմտեան զառիվայրի ստորոտը կ'գտնուի, և առանց դադար առնելու՝ չարունակեցի ճամբաս Բէզորայի բացավայրէն դէպ ի Վէլիքի-Ռուստիակ, անցնելով Զէրդինէ, Բայ, Լայոբ և Նոյէ գիւղաքաղաքները։ Թողլով լեռնոտ կողմերը՝ դրեթէ ամեն տեղ մի և նոյն ահագին սառնալեռներն, մի և նոյն թանձր անտառներն, մի և նոյն տաժանելի յոգնութիւնները կ'կրէի, նոյնպէս դաղտնագողի հաց կը գնի էշ-չիաներէն, նոյն կերպով ծակեր ու խոռոչներ կ'բանայի ամեն գիշեր հանդստանալու համար։ Սակայն գիւտ մ'ըրի որ ինձ շատ օգտակար եղաւ։ Դիտեր էի այս անբնակ երկիրներուն մէջ՝ որ երբ յանկարծ գիշերը վրայ հասնէր, պատահական ճամբորդներ սովորութիւն ունէին մեծ կրակ մը վառել անտառին մէջ և մինչև առաւօտ վառ պահել։ Ես ալ շատ անգամ այսպէս կ'ընէի, և անապատին մէջ այս բոցավառ կրակը կ'տաքցընէր զիս և կ'զուարճացընէր։

Բայց այսպիսի գրօսանք մը կ'վայելէի միայն երբոր անտառին ամենէ խոր տեղուանքը կ'հասնէի։

Իրկուն մը որ Զէրդինէն չանցնելու համար (վասն զի ճամբուս վրայ գտնուած քաղաքներէն միշտ խոյս կ'տայի) երկար ատեն անտառի մը խորերը պտըտեր էի, ճամբաս կորուսի և չգիտէի թէ ո՞ր կողմը դարձել պէտք է։ Ձեան բուռն մրրիկ մը զիս կ'շրջէր և իր գնտակներով կ'հարուածէր։ Իմ սև բաղդէս՝ հացս ալ հատեր էր։ Ձիւնին վրայ կ'ոլորուէի ջլաձիգ շարժումով, անկարող եղայ քնանալ, մահը կանչեցի . . . ։ Առաւօտեան դէմ օդը մեղմացաւ, մինչև իսկ գեղեցիկ եղաւ, և իմ ցաւերս ալ դադրեցան. բայց բնաւ ճամբուս հետքը չգտայ, և իմ ոյժս բոլորովին սպառած էր։ Զանացի արևելեան կողմն ուղղել ընթացքս՝ թէ՛ արևուն նայելով և թէ ծառերէն կախուած մամուռներուն։ Գաւազանիս վրայ յենլով՝ քիչ մը ժամանակ ևս քաշքշուելով յառաջացայ, բայց անօթութիւնս նորէն սկսաւ տանջել զիս։ Ոյժս հատեր, երեսս արտասուքով ողողեր էր և սահեցայ ընկայ ծառի մը ստորոտը։ Քիչ քիչ քունը կ'պաշարէր զիս, գլուխս կը դնդչէր և գաղափարներս կ'շփոթէին։ Տարօրինակ էր վիճակս. բոլորովին անզգայ դարձեր էի, և միայն ստամոքսիս կտրտոցէն կ'զգայի որ տակաւին կենդանի եմ։ Չեմ կարող ըսել թէ ո՞րքան ժամանակ այս վիճակին մէջ մնացի, երբ յանկարծ մարդու զօրեղ ձայն մը զիս թմրութենէս հանեց։ Աչքերս բացի . . . իմ առջևս կանգուն տեսայ անծանօթ մարդ մը։

«Ի՞նչ կ'ընես այդ տեղ։

— Ճամբաս կորուսի. մոլորած եմ։

— Եւ ո՞ւսկից կ'գաս։

— Զիրդինէն։ Սոլովէցքի վանքն ուխտի կ'երթամ. բայց մրրկի բռնուեցայ և ճամբաս կորուսի. քանի մը օրէ ի վեր բնաւ բան մը կերած չեմ։

— Զարմանալո՛ չէ. մենք բնիկ տեղացի ենք, և սակայն շատ անգամ կ'մոլորինք։ Շատ դէշ ըրեր ես փոթորկի ժամանակ ճամբայ ելնելով։ Ա՛ռ նայիմ, քիչ մը սա ըմպելիքէն խմէ։»

Փայտէ սրուակ մը մատեցուց բերնիս. ուստի մ'օղի խմեցի որ իսկոյն կենդանացուց զիս, բայց նոյն պահուն փորս սկսաւ աւելի կորտուիլ և ցաւէն սկսայ

ցատկրտել։ Աւանց ուզելու գոբինոգան գաբ* կ'պարկի։

«Օ՛ն, հանդարտէ՛» պոռաց ինձ օտարականը։

Եւ ինձ տուաւ հաց ու չոր ձուկ զոր մոլեգնաբար կուլ տուի։ Նորէն ծարին ստորոտը նստայ, և ընկերս իմ քովս նստաւ։ Ցեսակ մ'որսորդ էր որ՝ իր որսն ընելէն ետև՝ տունը կ'դառնար հրացանը բունին մէջ դրած և սանտալները ոտքը։ Երբ քիչ մը հանդարտուեցաւ, ուզեց զիս մօտակայ էշլուշկան տանիլ։

«Բոլոր սրտէ շնորհակալեմ քեզի. ամենարարին Աստուած քեզ հաղարապատիկը պարգևէ։

— Մեծ բան չէ ըրածս. մենք քրիստոնեայ ենք։ Նո՛ւտ ճամբայ ելիր, սի՛րտ առ։»

Ցեղէս ելայ, բայց շատ դժուարութեամբ. գլուխս կ'դառնար։ Բոլոր այժմ ժողվելով, իմ առաջնորդիս ետևէն գացի՝ ատեն ատեն իր թևին վրայ յենելով։ Վերջապէս ճամբան հասանք և որսորդը թողուց զիս՝ Աստուծոյ յանձնելով։ Քիչ մ'ետք՝ անտառին մէջ աներևույթ եղաւ։ Հեռուէն կ'դիտէի էշլուշկան, ուրախութիւնս անկարագրելի էր։ Կարծեմ թէ անպատճառ սիրտ երթայի այն հիւրատունն եթէ խմանայի անդամ որ զօրականներ կ'սպասեն այն տեղ զիս բռնելու համար։ Մինչև դուռը հասայ, բայց երբ մի անդամ սեմէն անցայ, չկրցայ ոտքի վրայ կենալ, և գետինն ընկնելով նստարանի մը տակ գլորեցայ։ Քանի մը վայրկեան բոլորովին մարած մնալէն ետև՝ խելքս գլուխս եկաւ և տաք կերակուր խնդրեցի։ Քիչ մը չոդամէ ապուր տուին ինձ. թէև անօթութենէ կ'տանջուէի, բայց չկրցայ բան մ'ուտել։ Կէսօրին մօտ՝ նստարանին վրայ պառկեցայ, և միայն հետևեալ օրն նոյն ժամուն արթնցուց զիս հիւրնկալս, որ իմ մասիս անհանգիստ էր։ Նա բարեսիրտ և պարկեշտ մարդ մ'էր, և իր դուքին ու սէրն աւելցան իմ վրայ երբոր իմացաւ որ Սպիտակ ծովու սուրբ կղզին ուխտի կ'երթամ։ Նա քրտնած, ջրի մէջէն, բոլոր հագուստներս թրջուած է-

* Այսպես կ'կոչուի Ցաբենոգ փաղաքին անունը առաջ կարծ սա յաճախ կրնուաց գաբը. կ'պատմուի թէ այս փաղաքին շարունակ թանաւոր փաղիներ կ'գտնուէին երբեմն, որոնք խայտառակը կ'ընէին, և ահա այս հանգամանքներն ազատելու համար ոտոտել կ'տային։ Մ. Բ.

ին, սկսաք եղաւ զանոնք չորցընել վառարանին վրայ։ Բունն, հանդիստն, տնուշ ջերմութիւն մը զիս շուտով կազդուրեցին. Կարողեցայ կերակուր ուտել և ճամբայ ելնել՝ թէև իմ հիւրընկալս կ'թախանձէր որ օր մ'ևս հանգիստ ընեմ իր տան մէջ։ Պատճառներ ունէի իմ դիտաւորութեանս մէջ հաստատ մնալու, բայց հանդիսաւորապէս խոստացայ՝ ուխտս կատարելէն ետև՝ վերադարձիս իրեն այցելութիւն տալ անպատճառ։

Այս հիւրանոցներն շարունակ փորձանք մ'եղան ինձ իմ տառապագին ուղևորութեանս ատեն, մինչև Վէլիքի-Ռուսիկ։ Քանի քանի անգամ յոգնած դադրած այս հիւրասէր յարկերու առջևէն անցնելու ատենս, այնքան չէի փափաքեր անոնց տակ դիշերային պատսպարան գտնուելու, վասն զի այդպիսի մեծ երջանկութիւն մը ինձի համար չէր, որքան կ'տեսնայի տաք ապուր խնդրելու, զոր որովայնս կ'պահանջէր, տաղտկացած լինելով սառած հնցէն, չոր ձուկէն և կէս-էն։ Այն ժամանակ կէս ծաղրելի, կէս ողբալի պայքար մը կ'սկսէր իմ մէջ, և կարծես թէ չար ու բարի ոգին կը մաքառէին յիս խելքս առնելու։

Օր մը այս հիւղերէն մէկուն մէջ մտեր էի որ հաց դնեմ։ Բարձր հասակով ծերունի մը գտայ այն տեղ, սպիտակ մօրուսով և տանուտէր տարեկան նորատի աղջիկ մը, շնորհալի դէմքով. մանկիկ մը կ'օրօրէր նա և կ'երգէր որպէս զի քնացընէ։ Մերունին շատ սուղ ծախեց ինձ հացը (լիտրը 6 կոպէկ), և սկսայ ուտել զայն՝ քիչ մը կէս թափելով վրան։ Մերունին բոլորովին անտարբեր կերպով կ'նայէր ինձ և ատեն ատեն անելիան հարցումներ ինձ ուղղելով կ'շառաչար. իսկ նորատի կինն (այս իր թոռն էր) յայտնի գորովանօք կ'քննէր զիս։ Հազիւ թէ մարդը պահ մը հեռացաւ և դուռը քաշեց որ կինն իսկոյն նստարանի մը վրայ ցատկեց, դարակէ մ'երկու հիւթեղ նկանակներ առաւ, որ հաւկթով ու կարագով շաղուած էր, շուտ մը մուչակիս տակը դրաւ, և արտօրնօք օրօրոցին մօտ վազեց շարունակ իր երգը մրմնջելով։ Երբէք չպիտի մոռնամ այս շնորհալի գործն զոր իրրև յանցանք ահուդողով կատարեց խեղճ կինը։

Զպիտի ճանձրացնեմ ընթերցողն երկար բարակ պատմելով իմ ճամբորդութիւնս մինչև Վէլիքի-Ռուսիկ։ Ա-

զևորութիւնս միօրինակ էր ու տաղտկալի՝ հաղիւ ուրեմն փոփոխութիւն մը կ'կբէր, երբ սայլավարներու կամ ուխտաւորներու կ'հանդիպէի կամովին, և երբեմն ալ խոյս կ'տայի։ Դէպք մը միայն պիտի պատմեմ, որ իմ հոգւոյս վիճակին վրայ կարող է թերևս դաղափար մը տալ։ Օր մը մարդ մը տեսայ անտառին մէջ. դէպ ինձ կ'վազէր զարհուրած և կ'պոռար.

«Ի սէր Աստուծոյ, յառաջ մի երթար. վարը երկու աւազակներ կան որ քիչ մ'առաջ կ'ուզէին զիս բռնել։»

Պարապ տեղը ջանացի յորդորել որ քովս մնայ միասին աւազակներուն դէմ դնելու համար. մռիկ չըրաւ և արտօրնօք փախաւ։ Մինակ մնալով ձող մ'առի և ապա աւազակները դիմաւորելու ելայ։ Կ'հաւատա՞ս, ընթերցող, այնպիսի այլայլութիւն մ'զգացի այն ատեն որ հաճոյք պատճառեց ինձ։ Ուրեմն ուրիշ վտանգ մ'էր այս, անցագիր պահանջելու վտանգէն տարբեր։ Աներկիւղ պիտի երթայի այնպիսի մարդոց դէմ որ ինձի չափ երկիւղներ ունէին իրաւ, բայց ես անոնց առջև կարդ ու օրէնքը կ'ներկայէի . . . ։ Սակայն այս գոհունակութիւնը չունեցայ. չտեսայ աւազակներն, ինչպէս որ ցաւտահեր էի Ուրալ լեռներու բաղմաթիւ արջերուն, զոր՝ տեղացւոց պատմութեան նայելով՝ անպատճառ պիտի տեսնէի։ Այս դաղաններէն և ոչ մէկ հատ տեսայ այն լեռներուն վրայ։

1846 ապրիլ ամսուն առաջին կէսին մէջ՝ Ռուսաց սուրբ շաբաթէն քիչ մ'առաջ՝ վերջապէս հասայ Վէլիքի–Ուստիւկի դուռը, ուր որոշած էի սովորական ճամբորդութեանս կերպը փոխել։ Փետրվար 13ին Իրպիտէն ելեր էի, հետևապէս գրեթէ երկու ամիս կար որ այն վայրենի կեանքը կ'վարէի, անտառներու և ձիւներու մէջ։

Գ.

Տակաւին Վէլիքի–Ուստիւկ չհասած՝ պարագաներու յարմար՝ նոր դեր մը սկսեր էի։ Մինչև Իրպիտ վանականի դործակալ էի, այնուհետև՝ բոլոր Ուրալ լեռներու ուղևորութեանս մէջ՝ գործաւոր էի որ Պոհոտոյ գործարաններուն կամ Սոլիկամսկի աղարաններուն մէջ գործ գտնելու կ'երթայի. երբ այս վերջին քաղքէն հեռացայ, քիչ քիչ սկսայ ուխտաւորի մը կերպերն ու բնաւորութիւնն առնուլ, այնպէս որ Սոլիտակ Ծովուն մէջ՝ Սալովէցկի վանքին սուրբ պատկերներն համբուրելու փափաք ունէր։ Ես Պոհոմոլէց դարձայ, որ երկրին նուիրական բառն է և կ'նշանակէ «Երկրպագու Աստուծոյ»։ Ռուսաստանի մէջ հրաչագործ պատկերներու պաշտօնը շատ տարածուած է, մանաւանդ չորս ուխտատեղիներ մեծ համբաւ կ'վայելեն և բազմաթիւ այցելուներ կ'ընդունին։ Այս ուխտատեղիներն են, Կիով, Մոսկուա, Վէլիքի, Նովկորոտ և Սոլովէցկի վանքը։ Շատ ուսներ, մինչև անգամ հարուստ վանականներ հետզհետէ կ'այցելեն այս չորս սրբավայրերն, և այսպիսի հետիոտն ուղևորութիւն մը երբեմն ամբողջ տարիներ կ'տևէ։ Օնէկայի մօտ երկու կին տեսայ (որոց մին շատ նորատի էր) որ արիաբար կատարեր էին այս բարեպաշտական պաշտօնը և իրենց բնիկ երկիրը կ'վերադառնային, որ Ուրալ և Վէրքոտուրիէ լեռներուն միւս կողմն էր, Իրկուտսկի դաւառին մէջ։ Շատ ուխտաւորներ բաւական կ'համարին միայն ամենէ մօտաւոր ուխտատեղիներն երթալ, և այս պատճառաւ Սոլովէցկի վանքն ամեն տարի հազարաւոր ուխտաւորներ կ'յաճախեն՝ հիւսիսային երկիրներէն և մինչև անգամ Սիպիրիայէն գալով։ Այս ուղևորութիւնը ձմեռը կ'կատարեն, փասն դի միւս եղանակներուն մէջ ճամբաներն անանցանելի են։ Այս Պոհոմոլէցներն, այր ու կին, ամեն տեղ լաւ համարում ունին և լաւ կ'ընդունուին, թէև շատ անգամ անոնց մէջ ապիրատներ ալ կ'գտնուին որ

երկար տարիներ իրենց համար արհեստ ըրած են այս չրջուն բարեպաշտութիւնը։ Արդարև՝ ռուս գեղացին ոչ միայն իբրև օրհնութիւն կ'համարի՝ երբ Պոհոմոլէցն իր անակը մտնէ, բաւական չեսպեր զանի հիւրասէր մտերմութեամբ ընդունելու, այլ նաև դրամ կ'տայ որ ուխտաւորին տանի, իրեն համար աղօթք ընէ և մոմ վառէ։ Ես ինքս իբրև ուխտաւոր՝ պարտաւոր էի շատ անգամ՝ խեղճ մարդկան բարեպաշտիկ նուէրներն ընդունիլ և ուխտաւորին տանիլ։

Տեսնելով որ ուխտաւորն ամեն կողմէ յարգ ու պատիւ կ'ընդունի, նկատելով որ այս կերպով հաւանական էր որ ստիպ անցագրի խուզարկութեան չենթարկուէի, յուսալով որ կարող էի ուխտաւորներու՝ մի խումբի միանալ և անյայտ մնալ, յարմար դատեցի այս նոր էներպարանափոխութիւնը կրել և Պոհոմոլէց դառնալ։ Պէտերբուրգի դաշտերէն անցնելու ատեն՝ մի շատ ուխտաւոր խումբերու պատահեցայ, որ դէպ ի Վէլիքի-Ուստիուկ կ'երթային։ Թէև անոնց ուխտակից կ'համարուէի՝ բայց չէի ուզեր անոնց միանալ, վասն զի կ'վախնայի որ երկար յարաբերութիւն հաստատելով անոնց հետ մատնուիմ. և ի սկզբան սկսայ միայն գաղտնապէս քննել իրենց բարեպաշտական սովորութիւնները։ Վերջապէս երբ Վէլիքի-Ուստիուկի մոտեցանք, դիտեցի որ բաւական հմտութիւն ունիմ և կարող եմ, առանց կասկած գրգռելու՝ աներկիւղ մասնակից լինիլ անոնց կենաց և Աստուծոյ երկրպագութեան խմբին միանալ։

Քաղաքը մտնելով՝ վանառատեղւոյն մեծ հրապարակին վրայ դադար առինք, սակայն բաւական չմոթած և յուզուած էի, երբ բարեբաղդաբար քաղաքացիի հագուստով երիտասարդ մը կրպակէ մ'ելնելով ինձ մոտեցաւ ու հարցուց.

«Արդեօք Սոլովէցկի վանքը գացող ուխտաւո՞ր ես։

— Այո՛։

— Ես ալ կ'երթամ։ Պառկելու տեղ ունի՞ս։

— Ո՛չ, ես նոր եկայ։

— Ուրեմն եկուր ինձի հետ։ Իրաւ արդէն շատուոր ենք, բայց քեզի համար տեղ պիտի գտնուի։ Մեր հիւրընկալ կինն շատ լաւ կին է. նա մեր կերակուրը կ'եփէ և մեր հացը կ'շաղէ։ Ես ալ հիմակ գացի ալիւր ու ձաւար գնեցի։»

Ես ցոյց տուաւ ինձ իր չալկած պարկը։

Փութացի առաջնորդիս հետևէն գնալու. անոր անունը Մ...ի էր և Վիատկայի գաւառէն։ Շուտով մեր բնակարանը հասանք, ուր երկու Իշոյի մէջ քսանէն աւելի ուխտաւորներ դիզուեր էին, այր ու կին։ Ոչ որ իզմէ անցագիր խնդրեց, և տան տիրուհին սիրով յանձնառաւ իմ հացս եփելու։ Շուտ մը բարեկամական յարաբերութիւն հաստատեցի ոչ միայն սեղանակիցներուս հետ այլ և մի շատ ուխտաւորներու հետ որ թիւով երկու հազարի կ'հասնէին և բոլոր քաղաքը լեցուեր էին։ Ասոնք Տվինա գետին հալելուն կ'սպասէին, որպէս զի կարող լինին լաստերով ու նաւակներով Արքանկէլ փոխադրուիլ և անկից Սոլովէցկի վանքը։ Քանի քանի այլանդակ, հետաքրքրաշարժ, կրթիչ կերպարաններ կարող էի քննել՝ այս առթիւ իմ բարեպաշտ եղբայրակիցներուս մէջ։ Ի՛նչ նշանակական դէմքեր, որոց ոմանք խստակրօն ճգնաւորի երևոյթներ ունէին և ոմանք նուրբ ու խոհուն բարեպաշտի, որ գիտեն երկնից շահը կապել աշխարհի շահուն հետ, ոմանք երանութեան հասած ապուշի դէմք առեր էին և այլք յետին ծայր նենգաւոր ու խորամանկ խաբերայի։ Լէօնար տը Վինչի մը կարող էր օրինակներու ընդարձակ հաւաքածոյ մը դառնալ, որշափ իր առաքեալներուն նոյնչափ իր Ցուդային համար։

Հարկ եղաւ իմ վիճակիս պայմաններուն հպատակիլ, և ստիպուեցայ, մանաւանդ սուրբ շաբթուն մէջ՝ ոչ միայն իմ ընկերներուս հետ անվերջանալի երգեր մրմնալ եղբայի մէջ, այլ և առաւ ու իրիկուն ժամերգութեան ներկայ գտնուիլ, հազար անգամ երեսս խաչ հանել, հարիւր անգամ ծունր դնել, մոմեր վառել և քահանային ձեռքը պագնել։ Քահանային տեսքը միշտ սրտնեղութիւն կ'պատճառէր ինձ, կ'վախնայի մանաւանդ որ հաւատքը ռուսերէն լեզուաւ ըսել տայ ինձ, վասն զի ամենևին չգիտէի։ Բարեբաղդաբար գոհ եղաւ իմ երկրպագութեամբս, զոր Ջերմեռանդ ոգւով և ճարպիկութեամբ կ'կատարէի, և այս երկրպագութիւնը՝ յիրաւի բաւական ծանր մարմնամարզութիւն մ'է, վասն զի պէտք է հարիւր անգամ իրարու վրայ ճակատդ գետինը քսես, առանց ծունկդ կրկնելու, քանի որ այսպէս կ'պահանջէ ռուսական եկեղեցին։ Իմ ներքին զգացումս սաստիկ կ'տառապէր այս տեսակ խաղէ, բայց

գոնէ կարող եղայ խոստովանանքէ խոյս տալ, առարկելով որ մի քանի օր առաջ սոյն կրօնական պարտաւորութիւնն կատարած եմ Լալակի մէջ։ Երբ սուրբ շաբաթն անցաւ, այս ջերմագին բարեպաշտութիւնն սկսաւ պաղել, թէև եկեղեցիներու մէջ բաւական ատեն երգեր կ'երգէինք։ Սակայն եկեղեցւոյ մէջ անցուցած երկար ժամերս այնքան նեղութիւն չէին պատճառեր ինձ, վասն զի անուրանալի է, որ աւելի նախադաս կ'համարէի եկեղեցին մնալ քան թէ խլան։

Բոլոր ժամանակս անցուցի Վէլիքի-Ռուստիուկը քննելու, և Ռուսաստանի մէջ աւելի քաջ կ'ճանչնամ այս քաղաքն ու Արքանկէլը։ Թէև բոլորովին փայտաշէն է, սակայն Սուքոնայի եղերքն ազիւսէ սիրուն տուներ կան։ Քաղքին ամենէ գեղեցիկ զարդերն են եկեղեցիներն, որ գեղին գունով ներկուած են և տանիքն կանանչգոյն ծածկուած. մինչև քսաներկու հատ համրեցի։ Կան նաև երկու վանք, մին ճգնաւորներու համար, սուրբ Միքայէլի անուամբ, միւսը քաղքէն դուրս՝ կուսանաց համար։ Կ'պարտաւորիմ յայտնել, որ կուսանաց կեանքն մանաւանդ նորատի աղջկանցը, ամենևին հրապուրելի գոյներով չէր ներկայանար ինձ։

Թէև Ռուսիւկի ժողովուրդը միայն տասնհինգ հազար բնակիչ ունի բայց վաճառականութեան կողմէ բաւական անուանի է։ Իրաւի՝ զանազան բերքերու բնական համբարանոցն է որ այս երկիրներու մէջ կ'արտադրին, ինչպէս են Վիատքա, Բերմ, Վոլգատա և Սիպերիա։ Այս բերքերն են գլխաւորապէս տեսակ տեսակ ցորեն, վուշ, կանեփ, ճարպ, աղած միս, կուպր, փայտ, մուշտակ եւ, որ կ'հաւաքուին Վէլիքի-Ռուստիւկ, որպէս զի անկից Տվինայի վրայէն Արքանկէլ փոխադրուին, և տեղւոյն նաւահանգիստէն նաւերով տարուին երկրագունտին ամեն կողմերը։ Այլ և այլ երկիրներէ բազմաթիւ նաւորդներ կ'դան այն տեղ և կ'սպասեն որ Տվինան հասնի, որպէս զի դիզուած բերքերն Արքանկէլ տանին հազարաւոր նաւակներով ի հաշիւ դործավարներու։ Այն ատեն այս գործավարները կ'թողուն, որ Պոհոմլէցիներն ձրի նստին նաւակներուն վրայ, այն պայմանաւ որ իրենց կերակուրն ուտեն և իրենց հետ ալիւրի, ճաւարի և աղած ձուկի բաւական պաշար առնուն, այնպէս որ կարօտութիւն չքաշեն մինչև Արքանկէլ։ Այն ուխտա-

ւորն որ յանձն կ'առնու թիավարել, տասնհինգ ռուբլի թղթադրամ կ'ընդունի դործավարներէն, որ սիրով կ'ընդունին այս դործակցութիւնը, վասն զի թիակերու չատ մեծ պէտք կայ։ Բնաւ թի վարած չէի մեծ նաւերու մէջ, սակայն այս դործն յանձն առի, իմ դրամական վիճակս քիչ մը բարւոքելու յուսով։ Իրպիտէն մեկնելէս ի վեր՝ ճիշդ տասնհինգ ռուբլի ծախք ըրած էի, վասն զի հացը սուղ չէ այս կողմերը, և մանաւանդ թէ Ուրալ լեռներէն անցնելու ատեն՝ և թէ վերջն առիթ չունեցայ անօգուտ ծախքեր ընելու։ Շատ ուրախ էի, որ կարող եղայ իմ հոդեպահիկս իր առաջի գումարին այսինքն եօթսունչիսնդ ռուբլիի հասցընելու։ Առաջին օրն որ Տվինայի վրայ սկսաւ նաւ բանիլ, Վէլիքի-Ուստիուկի մէջ դրեթէ ամբողջ ամիս մը մահարեր ճանճրոյթի և անվերջանալի աղօթից և կրօնական պաշտաման մէջ անցնելէն ետև՝ իմ ընկերակիցներով պայման դրի դործավարի մը հետ որ մեզ իր նաւով տանի։ Սակայն պարտաւոր էի՝ ըստ սովորութեան՝ անցագիրս տալ ա-նոր որ պահէ, մինչև Արքանկէլ հասնիլս, և ահա այս առաջարկութիւնը զիս քիչ մը վրդովեց։ Բայց գուշակելով որ նաև նստողներն ազնիւ ու չիոթ սիտի հանեն, քիչ մը սիրտ առի։ Եւ իրօք՝ դործավարն ակնարկ մը նետեց իմ խեղճ անցատոմսիս վրայ և կնիքը տեսնելով գոհ եղաւ։ 1846 մայիս 10ին ինքզինքս նաւակի մը մէջ նստած գտայ և պատրաստ էի դէպ ի Արքանկէլ մեկնիլ։

Տվինայի վրայ բանող նաւակներուն կազմութիւնը չատ հետաքրքրական է. եթէ հեռուէն տեսնես՝ կարծես թէ տուն մ'է կամ ծփուն չտեմարան մը։ Արուեստ չկայ անոր շինութեան մէջ, ամեն բան մարդուս ջլուտ ուժին ձգուած է, ու ամեն մէկ նաւ քառասունէն մինչև վաթսուն նաւավար կ'պահանջէ։ Իսկ թիակներուն թիւն երսունէն մինչև քառասունի կ'հասնի, ասոնք ամբողջ ելևիններ են բաւական բարակ։ Նաւուն զանազան ուղղանգակ մասերուն մէջ (որ թէ մթերանոցի համար են, թէ ճամբորդներու գիշերային պատսպարանի համար, թէ անոնց այլևայլ պիտոյից համար) պիտի յիշեմ միայն մեծ քառակուսի փայտէ արկղ մը, որ չորս ճողաափ բարձր՝ տանիքի վրայ դրուած է և կիսովին հողով լեցուն, այս է նաւուն խոհանոցը։ Բոլոր օրը կրակ կը վառի անոր մէջ։ Երկու գերան չեղակի կ'կոթին որ-

գին որմերուն վրայ և այս գերաններէն՝ վայրէ կոթե-
բով կախուած են՝ կերակուր եփելու կաթսաներ։ Երե-
կոյին մեր ուներցածը նաւը տարինք և այն տեղ պառ-
կեցանք։ Երբ լուսցաւ նաւատէրն (Նոզնիկ) բարձր ձայ-
նով պոռաց. «Նստեցէք ու աղօթեցէք։» Ամեն մարդ խ-
կոյն տանիքին վրայ նստաւ, և պահ մը մահմետականի
գիրք մը պահելէն ետև՝ ոտք ելան և սկսան հազար
անգամ խաչ հանել ու երկրպագել։ Աղօթքը վերջա-
նալէն ետք՝ ամեն նաւորդ՝ նաւատէրէն սկսեալ մինչև
խեղճ ուխտաւորն, դեռը պղինձ դրամմ մը նետեց։ Այս
եր Տվինայի ալիքները նպաստաւոր ընելու միջոցը։

Տվինա՝ որու վրայ բազմաթիւ նաւեր կ'երևին, շատ
կենդանի տեսք ունի։ Ամեն անգամ որ նաւը երկար
դադար առնուր և նորէն ճամբայ ելնելու պատրաստուէր
նաւատէրը կ'աղաղակէր «Նստեցէք և աղօթեցէք Աս-
տուծոյ», և նաւատին սովորական գործողութիւնը
վերստին կ'սկսէր։ Երբ Տվինայի ափերուն երկայնքը
դանուած անթիւ մատուռները հեռուէն երևէին ամեն
մարդ հազար անգամ խաչ կ'հանէր ու երկրպագու-
թիւն կ'ընէր։ Դեռը խաղաղ եղած տաեն՝ նաւը ջրին
հոսանքով կ'քալէր և ամենքը կ'կանգնէին, կ'խօսակ-
ցէին կամ կ'երգէին։ Զարմացայ դիտելով թէ նաւաս-
տիներուն երգերն ինչպէս զուրկ էին խմաստէ և զգա-
ցումէ, թէև իրենց եղանակը անուշ էր և շնորհալի.
ռուսական բոլոր ժողովրդային երգերը գրեթէ այսպէս
են։ Երբ վոթորիկ պատահէր կամ փոանդաւոր վայր
մը, բոլոր նաւորդները կ'սկսէին շարժիլ և ամեն զօրու-
թեամբ ու արագութեամբ կ'աշխատէին։ Ես ալ մեծ ե-
ռանդ ցոյց տուի իմ պարտաւորութիւնս լաւ կատարե-
լու համար, և առանց պարծենալու կարող եմ ըսել որ
մեծ վարժութիւն ստացայ թէ թի և թէ զեկ վարելու
մէջ։ Շատ գոհ էի տեսնելով որ հմուտ և յաջողակ նա-
ւուղիներ դիս կ'գովէին և ամեն դժուարին ու նեղպա-
բազայի մէջ Լաֆէնոէ (իմ չինցու անունս էր) կ'կոչէ-
ին որ օգնութեան հասնիմ։ Մեր ճգանց հակառակ՝ մեր
տաւն երկու անգամ աւազի վրայ խրեցաւ, և այն ա-
ինեն պէտք եղաւ տաս տասներկու ժամ մեր բոլոր զ-
ըութեամբ աշխատիլ նաւը ջրի վրայ հանելու։ Մեր զու-
արճութիւններէն մէկն ալ այս էր, որ երբ նաւը դեռ
եղրին կ'մտանար՝ մի շատ կիներ ու մանկունք՝ փոք-

րիկ մակոյկներու մէջ նստած կ'գային մեզի և ողորմու-
թիւն կ'խնդրէին։ Այդ տաեն անուշ և ողորմագին մե-
զեզի մը կ'երգէին այնպիսի ողբալի ձայնով մ'որ երբէք
կենդանի մէջ լսած չեմ և որու հագներդն էր. Բաթուշկի,
ծաթուշկի, դայնրե ելէբցա» (հայրիկներ, մայրիկներ, հաց
տուէք)։ Բոլոր ուղևորները, թէ նաւատաներն ալ թէ
ուխտաւորներն չէին զլանար ողորմութեան տուրքն, և
մուրացկաններն վերստին կ'սկսէին իրենց երգերն մե-
զի յաջող և բարի ճամբորդութիւն մաղթելու համար։

Տվինայի վրայ տասնեհինգ օր տևեց մեր ճամբոր-
դութիւնը։ Քանի Արքանկէլի մոտենալինք, դիշերներն
աւելի կարճ կ'լինէին։ Վերջին դիշերը միայն երկու
ժամ էր՝ արևու մարը մտնելէն մինչև ծագիլը։ Բայց
այս երկու ժամու մէջ անգամ կարելի էր կարդալ ու
գրել առանց դժուարութեան։ Վերջապէս՝ երբ Ար-
քանկէլի եկեղեցիներուն ոսկեզօծ գմբէթները փայլե-
ցան նորել արևուն ճառագայթներէն, բոլոր նաւորդ-
ները ցնծութեան աղաղակ մ'արձակեցին, և նաւաս-
տին փութաց ծովը նետել հոզալի արկղն որ մեզի խո-
հանոցի տեղ ծառայեր էր։ Նոյնն ըրին և միւս բոլոր
նաւերն, վասն զի այս նուիրական սովորութիւն մ'է։
Դիչ մ'ետք՝ թիավարներն սոսկալի ճայթումով խորտա-
կեցին իրենց թիակներուն ստորին մասերը, —այս ալ
Տվինայի նաւորդներուն ուրիշ մի այլանդակ սովորու-
թիւն է, —և երբ նաւամատոյցը հասանք, գործա-
վարներուն ձեռքով ստացանք մեր անցագրերն և տաժ-
անելի աշխատութեամբ մեր վատորկած տասնեհինգ ռուբ-
լին։

Այսպէս ուրեմն Արքանկէլ հասեր էի։ Վերջապէս
սպիտակ ծովուն այն ծոցն էի, որ Ուրալ լեռներու
տաժանելի ուղևորութեանս մէջ՝ միշտ իրրև փրկութեան
նաւահանգիստ մ'երևցեր էր ինձ։ Կ'տեսնէի մոռուստ
այն ազատարար նաւերուն ծխուն դրօշներն որոց ա-
ղօտ, դիւթական նկարը շատ անգամ առջևս ներկա-
յացեր էր՝ երբ անտառներու մէջ օստրակի անկողինն
կը պատրաստէի ձիւնակոյտերը փորելով։ Ահ, այս
բազմագոյն դրոշները տեսնելով որքան կ'հրճուէին աչ-
քերս, որ քանի քանի ամիսներ միայն ձիւնի անապատ-
ներ տեսեր էին, և որքան անկեղծ ու ջերմ էին դ-
րութեան աղօթքներս զոր կ'ընէի իմ ուխտաւոր եղ-

բայրակիցներուն հետ, որ ինձի պէս բարեբաղդ էին իրենց ուխտագնացութեան նպատակին հասնելով . . . :

Սակայն զգոյշ եղայ և չուզեցի շտապել, այնպէս որ իմ դիրքս պահելու համար իմ ընկերներուս հետ Սոլովեցկի հիւրատունը գացի, այսինքն այն մեծ շէնքն զոր կառուցած են սուրբ կղզւոյն վանքի կրօնաւորներն Արքանկէլի մէջ՝ ուխտաւորներուն դիւրութեան համար : Սովորութեան համեմատ՝ իմ թեթև ծրարս բարապանին յանձնեցի և շատ ուրախ եղայ դիտելով որ նորեկներէն ամենևին անցագիր պահանջող չկար : Թէպէտ հիւրատունը շատ սենեակներ ունէր, բայց բոլորն ալ հիւրերով լեցուն էին և ես հազիւ անկիւն մը գտայ վերնայարկը . գոնէ առանձին լինէի . գառաւ ուխտաւորի մը հետ էի, որու ջերմեռանդութիւն իրենն գեղեցկութիւն չէր տար բնաւ : Հետևեալ օրերն՝ երբ մէկ կողմէ ուխտաւորներն դէպ 'ի սուրբ կղզին ուղևորելու համար հիւրատունէն կ'հեռանային, միւս կողմէ ուրիշներ կ'գային Վէյլիքի–Ուստիուկէն, այնպէս որ ոթևանը միշտ լեցուն կ'գտնուէր : Այսչափ տարբեր հասակի ու սեռի մարդոց բազմութենէ յառաջ եկած բնական հետևանքն աւելի դիւրին է գուշակել քան թէ գրել . միայն շատ փափաքելի էր որ այս սուրբ կղզւոյն դրախտին ու դժոխքին մէջ քաւարան մ'ալ գտնուէր, որպէս զի թէ բարոյականի ծառայէր և թէ առողջապահութեան : Աւելորդ է ըսել որ Վէյլիքի–Ուստիուկի երդերն ու թափսրներն այս տեղ ալ սկսան մեծ ջերմեռանդութեամբ, և միւս օրն ներկայ եղայ՝ հիւրատան մատուռին մէջ՝ այլ և այլ տարօրինակ բարեպաշտական դործողութեանց, որոց նմանը միայն օրթոդոքս եկեղեցւոյն մէջ կ'տեսնուին : Աղթաւորներով լեցուն էր մատուռը . ոմանք իրենց գլխուն վրայ աղթներ կարդալ կ'տային, ոմանք կցորդաց դիրքեր, իսկ այլք ծռելով՝ Աւետարանն կռնակի վրայ կ'կրէին : Այս աւետարանը մեծադիր դիրք մ'էր, երկու ոտք երկայն, հին խոշոր տառերով տպուած, կազմն էր երկու փայտեայ հաստատ տախտակ, որու վրայ տասներկու առաքելոց ձուլածոյ պատկերը կային : Քահանայն մեծ դժուարութեամբ կ'վերցնէր այս ահագին դիրքը : Արդ՝ ով որ ուզէ իր վրայ աւետարան կարդալ տալ, պէտք է որ ծուի առանց ծունր դնելու, այնպէս որ գլուխն իրեւ

գրքակալ ծառայէ : Իրաւի՝ կան ուխտաւորներ որ կարող են իրենց քսակներն ու գլուխները միացընել այս բարեպաշտ գործին համար, այսինքն շատ դրամ տալ ու գլուխ չծռել, սակայն այն ժամանակ՝ որչափ որ ծանրութիւնը կ'թեթևնայ, շնորհն ալ կ'թեթևնայ . ուստի ո՛վ որ փափաքի լիուլի շնորհաց զօրութիւնը վայելել, պարտաւոր է մի քառորդ ժամ խոնարհիլ և իր չալակն առնուլ Հաւատոյ այս տարօրինակ արձանը : Ամեն բան դրամով է ռուսական եկեղեցւոյ մէջ, և տրուած պարգևին համեմատ՝ Պապը (քահանայն) օրուան աւետարանը ծանր ու եռանդով կ'կարդայ կամ շտապաւ ու արհամարհոտ դանդաղութեամբ կ'մեռնայ : Պէտք է որ մարդ ուս դեղացիին համոզումն ու կորովի վիճն ունենայ որ կարող լինի դիմանալ այս հոգևոր կրթութեանց : Բայց և այնպէս ի՞նչ հրաշքներ կ'գործէ բարեպաշտութիւնը : Հիւրատան ընկերներէս մին, որ Վիատքայի դեղացի մ'էր, շատ գանգատ կ'ընէր գլխի ցաւէն, բայց երբ գլուխն փայտակալմ Աւետարանին տակը դրաւ, որու ծանրութենէ իր դէմքին ու վիզին երակները խորտակուելու չափ կ'ուռէին, մատուռէն դուրս գալով՝ ըսաւ ինձ .

«Փառք Աստուծոյ, կարծես թէ այն անիծեալ ցաւը ձեռքով գլխէս հանեցին :

Սակայն ջերմեռանդ աղթաւորներու պարտպմունքը չարգիլեցին զիս քաղաքը պտըտելու : Արքանկէլ գրեթէ քսան հազար բնակիչ ունի . բայց նաւահանգիստն ու առևտրական շարժումը մեծ կենդանութիւն կ'տան քաղաքին : Բուն քաղաքը՝ Տվինայի վրայ ձգուած փայտէ կամուրջով մը Սոլոնպալ կղզւոյն հետ միացած է, որ տեսակ մ'արուարձան է և դաւառապետին պալատն այս տեղ կ'գտնուի : Գեղեցիկ եկեղեցիներ ու տղիւսաշէն մի քանի տուներ կ'զարդարեն այս քաղաքը, որ մեծ մասամբ փայտաշէն է : Միայն լայն փողոց մը սալայատակ ունի և կ'տարածուի Արքանկէլի բոլոր երկայնքը, մինչդեռ միւս փողոցները անել և շատ տղմոտ ու աղտոտ են : Ամեն տեղ կ'երևի գոնորա, այսինքն այն ճախնուտ հողն որու վրայ չինուած է քաղաքը, ինչպէս և Բեղրզպուրկ : Մէկ հրապարակին վրայ կանգուն կ'երևի Լոմոնոսովի վիթխարի արձանն : Ռուսաց գրականութեան սկիզբը կ'տանին կ'հասցնեն մինչ այս հե-

տորն, այս հռչակաւոր քերականն, որ կ'ծաղկէր Մեծն Պետրոսի դուստր՝ Եղիսաբէթ կայսրուհւոյն օրովը։

Ընթերցողը կրնայ դիւրաւ գուշակելոր քաղքին մէջ իմ չրջագայութեանս դլխաւոր, միակ նպատակն էր նաւահանդիստը։ Թէև եղանակը դեռ նոր սկսեր էր, բայց քանի չափ օտար նաւեր արդէն ծովածոցին մէջ կը գտնուէին։

Միայն կայմերուն վերև ծածանող դրօշակներուն մէջ կարող չեղայ եւագոյն դրօշակը նշմարել։ Այս դրօշակին պակասութիւնն արդէն չարագուշակ նշան մ'էր։ Նաւերէն շատն անկիլիական էին. կային նաև մի քանիներ որ Հոլանտայէն, Շուէտէն, Համպուրկէն եկած էին, իսկ Ֆրանսայէն ամենևին չկար։ Քիչ մ'ետք դիտեցի որ մէն մի նաւու կամուրջին վրայ ռուս զինուոր մը կ'չրջէր, արթուն ու անխուսելի վկայ մը, վասն զի դիշերն անդամ հսկողութիւնն անընդհատ կ'շարունակէր։ Ասկից զատ՝ իրարմէ հեռու կեցած պաշտօնաւորներ կային որ անանցանելի պատուար կ'կազմէին նաւահանդստին երկայնքը, և ամեն երթևեկողներէն անցագիր կ'հարցնէին։ Բազմաթիւ հետաքրքիրներ ու չրջողներ քաջալերեցին վրայ խառներ էին և ամեն փախուստի փորձ աւելի կ'դժուարացնէին։ Ի՞նչպէս կարելի էր այս արթուն պահնորդներուն առջև նշմայր մ'ընել նաւավարի կամ նաւապետի մը։ Եթէ նաւերէն մին իմ առջևէս անդամ անցնէր՝ ի՞նչպէս պիտի կարենայի մտանել և Ֆրանսերէն կամ գերմաներէն խօսիլ, այն ամբոխին մէջ, և ռուս դեղացի ուխտաւորի հագուստով։ Միթէ ամենուն նայուածքն իմ վրայ չպիտի հրաւիրէի և այսպէս օձիքս ձեռք չպիտի՞ տայի։ Սակայն քարափին երկայնքը իմ պտոյտս շարունակեցի՝ նպաստաւոր առիթ փնտռելով, որ, ափսո՛ս, բնաւ չպատահեցաւ։ Վերջապէս հարկ եղաւ ինձ նորէն դառնալ հիւրատունն, ուր կ'սպասէին ինձ բարեպաշտիկ կրթութիւններ։

Երկրորդ օրն՝ ինձի հետ Արքանկել եկող ուխտաւորներն սուրբ կոյսին դնալու համար ճամբայ կ'ելնէին. չընկերացայ անոնց՝ պատճառելով որ սաստիկ յոգնած եմ, և նաւահանդիստը դացի։ Վերստին այն աղատարար ծովածոցին բոլորտիքը կ'չրջէի։ կ'տեսնէի իսկ նաւեր որ իրենց բեռներն աւարտելու էին, և այս ալ իրենց մօտալուտ ուղևորութեան նշանն էր։ Իմ սիրտս

սաստիկ կ'զարկնէր, կուրծքս կ'ուռէր, հազիւ կարող էի զսպել այս աղաղակն։

«Ապատեցէք, մի թողուք զիս այս տեղ։»

Վերջապէս մտեցայ մի քանի նաւաստիներու որ դրաված էին ցամաքին կապուած պարաններուն մօտ։ Թէև շատ վտանգաւոր էր, համարձակեցայ անոնց մի քանի ֆրանսերեն խօսք ուղղել։ Միայն իրենց գլուխը վեր վերցուցին և զարմացած դէմքով մը ինձ նայեցան։ Փորձ փորձեցի գերմաներէն խօսիլ, բայց ընդ ունայն։ Սկսան վրաս ծիծաղիլ, և ստիպուեցայ չուտ մը խոյս տալ, վասն զի արդէն բաղմութիւնը մեր չորս կողմը կ'հաւաքուէր։ Հետևեալ օրն՝ իմ բոլոր ճգունքս նորէն ապարդիւն մնացին։ Զսպիսի նկարագրեմ ոչ այս երեք օրուան մէջ կրած տանջանքս, և ոչ իմ երևակայած այլ և այլ փորձերս այն նաւերէն մէկուն մտանելու համար։ Թէև օդը շատ ցուրտ էր՝ փոյթ չըրի, և նաւահանդստին ծովը մտայ լուացուելու համար, վասն զի կ'յուսայի այս կերպով նաւու մը մտանալ. բայց այս հնարքն ալ պարապ ելաւ, և աղատումի բարեպատեհ առիթ մը չերևցաւ։

Երրորդ օրը շատ՞ուշ հիւրատունը դառնալով՝ իմ ներկայ վիճակիս բոլոր պարագաները մտքիս առջև բերի, և այս տխուր համոզումն ունեցայ որ կարելի չէր իմ յոյսս Արքանկելի նաւահանդստին վրայ դնել։ Արդէն շատերը կ'զարմանային թէ ինչո՞ւ համար կ'ուշանամ սուրբ կոյսին ուղևորելու իրև ուխտաւոր։ Եթէ աւելի երկար ժամանակ քաղաքը մնայի և սպասէի որ ֆրանսական նաւ մը գայ, անտարակոյս ոստիկանութեան ձեռքը պիտի մատնուէի։ Եթէ ուխտաւորի դեր չունենայի, թերևս նշանաւոր սրճարան մը մտնէի և օտար նաւերու մէկ նաւաստիին հետ յարաբերութիւն հաստատէի, բայց միթէ կարելի՞ էր իմ դեղացի պարզ հագուստով այնպիսի տեղ մը ներկայանալ։ Մե՛ն, ո՞րչափ տխուր և մթին եղաւ հիւրատան մէջ անցուցած վերջին դիշերս։ Միայն Արքանկել հասնելու մտածմունքս էր որ ինձ այնչափ այժ տուաւ ամեն տաժանելի վտանգներ դիմագրաւելու և սոսկալի դրկանք կրելու։ Լաւ, հիմակ որ իմ բոլոր ճգանց նպատակին հասած էի, հիմակ որ Արքանկել իմ աչքիս առջևն էր, դիտեցի որ ի

զուր տանջուեր եմ և պէտք էր խոյս տալ քաղքէ մը զոր երկար տեն իբրև աղատութեան վայր մ'ողջուներ էի։

Դ.

Ես մինչև Սօլովեցկի վանատունը չգացի, բայց այս ուխտատեղւոյն վրայ բաւական մանր տեղեկութիւններ հաւաքեցի։ Արքանկէլի արևմտեան կողմն՝ երկու հարիւր ութսուն վերստ՝ (40 մղոն) Սպիտակ ծովու մէջ կղզիներու խումբ մը կայ, որոց ամենէ մեծը Սօլովեցկ կ'կոչուի։ Ի սկզբան՝ Ֆինք կ'բնակէին այս պեղ. յետոյ Նովկորոտի հին հասարակապետութեան աներկիւղ որսորդները գրաւեցին զայն, և ի վերջէ սուրբ Զոսիմոսի ապաստանն եղաւ։ Այս սուրբը պզտիկ տուն մը և փայտաշէն մատուռ մը հիմնեց այստեղ։ Այնուհետև ուրիշ ճգնաւորներ եկան։ Այսպէս սեպագետ կրօնաւորներու վանք մը հաստատուեցաւ, որ քիչ առնէն անուանի եղաւ իր հրաշքներով, հարստացաւ հաւատացեալներու նուէրներով, և վերջապէս ամրոց մը չինեցին այն տեղ հաւաքուած գանձերը պահպանելու համար։ Նովկորոտի հասարակապետութեան հետ՝ Սօլովեցկ և իր վանքն ճարերու իշխանութեան տակ մնան, որ մանաւանդ ամրութիւններն աւելցուցին։ Սուտ Դիմիտրիոս ժամանակ, Պօրիս Կոտունովի կուսակիցները սուրբ կղզւոյն ամրոցներն ապաւէն փնտռեցին՝ իրենց գանձերով և կատաղարար կռուեցան «հեռամուտին անվեհեր ասպետներուն դէմ» ինչպէս որ աւանդութեամբ կը պատմուի։ Արդեօք ասոնք էին դիպուածով մեր հռչակաւոր Լիսովսքան+, տասնեօթերորդ դարու մեր յանիրաւուն ասպետները։ Այս դիմադրութիւնը սուրբ կղզւոյն փառքն աւելցուց, կղզի՝ որ Ֆիովէն ետք՝ ռուսաց սուրբ տեղեաց մէջ առաջին կարգը կ'բռնէ։

Որովհետև Սօլովեցկ սառնապատ դիրք մ'ունի և դժուարահպելի՝ անկարելի է գրեթէ նոյն տեղը մնալ։ Սակայն մի քանի ժամանակէ 'ի վեր՝ կրօնաւորներն իրենց ձեռքով կվառ կ'պատրաստեն, որ շատ անուանի է։ Ասկէ զատ՝ աղօրի ունին, մի քանի արջառ և ձիեր։ Վանքին մօտ ընդարձակ մթերանոցներ կան ուր ուխտաւորները իրենց ծրարները կ'դնեն և փոխարէն թուանշան մը կ'ընդունին։ Աւելի ընդարձակ և աւելի շատ են ուխտաւորներու յատկացած բնակարանները։ Ասոնք մեծ սրահներ են, որոց մէջ կան երկար սեղաններ ու նստարաններ, ուր ուխտաւորները կ'բնակին, կ'պառկին ու կ'ճաշեն։ Մարդիկ ու կանայք տարբեր բնակարաններ ունին։ Միշտ գովութեամբ կ'խօսին այն կրօնաւորներուն հիւրընկալութեան վրայ։ Կերակուրի տեն՝ վանական մը՝ իւրաքանչիւր սրահի մէջ Վ«ԲԷ Սրբոց կամ մի քանի աղօթք կ'կարդայ։ Ամեն ուխտաւոր իրաւունք ունի առաջին երեք օրը ձրի բնակիլ ու կերակրուիլ։ Այս ժամանակը՝ կ'աղօթէ, կ'խոստովանի, մոմ կ'վառէ, մոմ կ'բռնէ, իր գլխուն Ակ«ԷՆԷՈՒ կամ Աւետարան կարդալ կ'տայ։ Այս հոգևոր այլ և այլ կրթութեանց համար յատուկ գին որոշուած է, բայց գիները շատ չափաւոր են։ Սուրբ Զոսիմոսի և Սավատիի գերեզմաններու այցելութեան համար յատուկ տակ կ'վճարուի։ Երեք օր անցնելէն ետև՝ ուխտաւորն՝ եթէ աւելի երկար մնայ, պարտաւոր է ինքնին հոգալ իր պիտոյքը և օթևանի վարձը վճարել։ Շատ բարեպաշտներ ուխտ կ'ընեն մի քանի տարի շարունակ մնալ սուրբ կղզին, իրենց օրերը բարեպաշտութեամբ և ապաշխարութեամբ անցընելու համար։ Վանականները սիրով կ'ընդունին այսպիսի հիւրեր, բայց այս պայմանաւ որ իրենց ծախքը վճարեն, կամ վանուց մէջ որ և է օգտակար գործ կատարեն, իբրև գործաւոր կամ իբրև պարտիզպան եւ։

Երբ Սպիտակ ծովը նաւարկելի կ'դառնայ, այսինքն երբ յունիսի առաջին օրերը կ'հասնին, ուխտաւորները կ'դիզուին Արքանկէլի մէջ՝ փոքրիկ նաւակներով՝ որ ֆոբպաս կ'կոչուին, և դէպ ի Սուրբ կղզին կ'դիմեն։ Նաւագինը ոչինչ բանէ. բայց անհանգստութեան և վտանգ-

ներու պատճառաւ, որ շատ անգամ կ'պատահին այս երկար ուղևորութեան ժամանակ՝ յարաձուփ ծովուն վրայ, շատ ուխտաւորներ Արքանկէլէն հետիոտն կ'երթան՝ ծովափը բռնելով՝ մինչև այն հրուանդանն որ Սոլովէցկի դիմացը կ'ելնայ, և որմէ միայն մէկ վերստ հեռաւորութիւն ունեցող նեղուցով մը կ'բաժնուի, և ահա այն տեղէն նաւ կ'նստին դէպ ի Սուրբ կղզին գընալու համար: Կղզին մատչելի է միայն չորս ամիսներու մէջ, այն է յունիսի, յուլիսի, օգոստոսի ու սեպտեմբերի մէջ: Երբ հոկտեմբեր կ'սկսի սպիտակ ծովու վրայ նաւարկութիւնը կ'արգիլուի բռնաշունչ հովերէն և մանաւանդ Սառուցեալ ովկիանոսէն եկած սառոյցներէն: Հոկտեմբերէն մինչև յունիս՝ վանքը այլ ևս ուխտաւոր մը չընդունիր:

Զարմանալի բան, թէև հաւանական կ'երևի, Աստուծոյ այս տան մօտ անգամ ձարերն իրենց համար մեծ տուն մը չինել տուած են, —խորհրդաւոր բանտ մը, որու վրայ մեծ սոսկումով կ'խօսէին ուխտաւորներն, վասն զի չգիտէին թէ ի՞նչ նպատակի կ'ծառայէ այդ բանտը: Իրօք, որո՞նք կրնային լինել այդ դնդանին մէջ փակուած դժբաղդները: Աստնք սովորական յանցաւորներ չպիտի լինէին, քանի որ այսպիսիներ Սիպերիա կ'ղրկուին: Սակայն այս իրաւ է որ Սոլովէցկի բանտն անբնակ չէ. վասն զի պաշտօնաւորներ ու պահակներ միշտ կ'հսկեն անոր վրայ, կ'պատմէին ինձ, որ մի քանի տարի առաջ՝ տեսած են այն տեղ ճերմակ մօրուսով ծերունի մը, որ շարունակ արտասուք թափելէն կուրացեր էր: Ի հարկէ չեմ կարող այս պատմութեան ստուգութիւնը երաշխաւորել, թէև շատ մարդոց բերնէն լսած լինիմ. մանաւանդ կարող չեմ հաստատել այն գաղտնիքն, զոր մի քանի անգամ սկանջիս փսփսացին, այսինքն թէ Սոլովէցկի կալանաւորն Նիկոլայ կայսեր մէկ եղբայրն էր, նոյն ինք Կոստանդին մեծ դուքսը . . . :

Հիմակ կ'դառնամ իմ պատմութեան: Այն սխուր գիշերուան երկրորդ օրն, որ ես որոշած էի այլ ևս փորձ չփորձել Արքանկէլի նաւահանգստէն խոյս տալու, առաւօտ կանուխ ելայ, ծրարս ուզեցի հիւրատան սպասաւորէն, և յայտնեցի թէ մտադիր եմ երթալ Սոլովէցկի վանքը: Մի քանի հաց ու աղ դնելէն ետև՝ Տէր-

նայէն անցայ և իրօք դիմեցի դէպ 'ի այն արևմտեան հրուանդանն որ սուրբ կղզւոյն դիմացն է: Օդը տաք ու աղօր էր, երկիրը տափակ, բայց ամայի ու վայրենի: Երեկոյին հասայ փոքրիկ գիւղ մը, և միտքս դրի այն տեղ ռուսական բաղնիք մտնել, որ անհրաժեշտ էր ինձ՝ այնչափ երկար ժամանակ սուրբերուն հետ բնակելէս ետք: Ռուսերը, նոյն իսկ ռամիկ ժողովուրդը, շատ անգամ այսպիսի բաղնիք կ'մտնեն, մանաւանդ շաբաթ օրն և տօնի օրերու առջի իրիկունները: Բաղնետունը սովորաբար պարզ փայտաշէն է, ուր երկու մէջտեղ քառակուսի երկարութեամբ մեծ վառարան մը կ'գտնուի, աղիւսէ կամ անտաշ քարերէ շինուած, որ բնաւ շաղախ չունին. ծխան չկայ և ծուխը առաստաղին ծակերէն դուրս կ'ելնէ: Երբ քարերը սաստիկ կ'տաքնան, անոր վրայ պաղ ջուր կը թափեն, և շոգին ելնելով բոլոր սենեակը կ'լեցուի և բաղնետունն կ'դառնայ: Այս անպատրաստի տաք տունէն ելնելէն ետև՝ անբացատրելի փափաք զգացի կաթ խմելու, և ննջելու համար խրճիթ մը գացի զոր տան տէրը ցոյց տուաւ ինձ:

Այս խրճիթին մէջ երեք կին կային, և երեսս ռուսական ձևով խաչ հանելէն ետև՝ իմ փափաքս անոնց յայտնեցի: Իմ տուած ստակիս փոխարէն՝ խիստ պզտիկ չափով կաթ տուին, և այս ևս կախած դէմքով, որու պատճառը առաջ չիրցայ հասկնալ: Երբոր ումպ ումպ կը խմէի կաթը, խօսակցութիւն մը սկսաւ այս կիներուն մէջ, և վերջապէս գաղտնիքը իմացայ: Այս կիներն ոպրօշէրցի կամ հին հաւատացեալ կոչուած աղանդին կ'պատկանէին, և խաչ հանելու կերպէս դիտեր էին, որ ես ողորմելի օրթոտոքս մ'եմ: Աստնք բացէ 'ի բաց յայտնեցին իրենց վիշտը, տեսնելով որ ինձի պէս բարեպաշտ մարդ մը՝ անխուսելի կորստեան ճամբու մէջ կ'դտնուէի: Ցեռոյ ցոյց տուին ինձ՝ թէ ինչպէս կարող եմ փրկութեան հասնիլ, և վիճաբանութենէ ձանձրանալով՝ իրենց առաջարկութիւնն ընդունեցի: Այս բարի կիներն այնքան ուրախացան որ նորընծայիս երեք չափ կաթ տուին առանց փոխարէն դրամ ընդունելու: Վերջը ճամբայ հանեցին զիս ջերմ մաղթանք ընելով որ Աստուած զիս պահպանէ իմ նոր հաւատքիս մէջ: Աւա՜ղ, այս մաղթանքը չիրցաւ, վասն

զի հազիւ թէ հիւրատունը հասայ որ նորէն սկսայ օրթոտոքսի պէս խաչ հանել։

Իմ ճամբան շարունակեցի և շատ օրեր ճախնուտ երկիրներու վրայ քալեցի, վտիտ ու կարճ եղևնի անտառներէ անցնելով, ուր երբեմն կ'ստիպուէի դիշերն անցնել։ Քիչ քիչ կ'նշմարէի որ հիւսիսային կլիմայի տակն եմ, վասն զի կ'տեսնէի որ արևն այնուհետև դրեթէ չէր թողուր զիս։ Մարը մոնելէն մինչև ծագելու միջոցը շատ կարճ էր, և նոյն միջոցին իր ճառագայթներուն արձակած նշոյլներով կարելի էր խիստ նուրբ գործեր կատարել։ Գիշերը ցորեկէն կ'որոշուէր մի միայն խոր լռութեամբ մ'որ բոլոր բնութեան վրայ կ'տարածուէր։ Իրաւի՝ դպրոցն ստացած աշխարհագրական տեղեկութիւններս երկար ժամանակէ 'ի վեր կ'պատրաստէին զիս այս երևոյթին, սակայն երբեմն կարծէի թէ կ'երազեմ՝ ինքզինքս տեսնելով այնպիսի երկիր մ'ուր արևը բնաւ մարը չէր մաներ։ Դաշտավայրը հետզհետէ աւելի անշուք ու ամայի կ'դառնար։ Վերջապէս ծովամը հասայ, և այնուհետև ծովեզերեայ ապառաժներու երկայնքը շարունակեցի իմ ճամբաս։ Մի քանի օր օդը շատ գեղեցիկ էր և արևն այնքան տաք, որ ստիպուեցայ մուշտակս հանել։ Բայց շատ չանցաւ՝ բռնաշունչ հով մ'ելաւ, և ովկիանոսը լեռի նման ճիւնափայլ կոհակներ թաւալելով՝ կարծես թէ կ'ուզէր արդարացնել իր սպիտակ ծով անունը։ Այս տեսարանը թէ տխուր և թէ զարմանալի էր։ Փոթորիկն մի քանի օր տևեց։ Երբեմն մարդերու կը հանդիպէի, բայց նոր ըսպաննուած օձի մը տեսքը ցոյց տուաւ ինձ որ մինչև անգամ այս կլիմային տակ սողուններ կ'գտնուին։

Օր մը՝ ծովուն եզերքն խակ՝ աղքատիկ գիւղը հասնելով, շատ ուխտաւորներ տեսայ, որոց մէջ էին իմ Վէլիք-Ռուսիւկի հին ուղեկիցներս։ Արքանկէլէն իրմէ շատ առաջ եղնելով՝ նաւակի մէջ՝ սուրբ կղզին գնալու, փոթորկի բռնուեր և ստիպուեր էին այն տեղ ապաստան փնտռելու։ Նաւակ մ'անգամ բոլոր ճամբորդներով ծովը ընկղմեր էր։ Այս խեղճ մարդիկ կ'սպասէին որ օդը հանդարտի։ Իսկ ես՝ հետիոտն ճամբայ ընկայ, աւաստելով՝ որ այսպէս աւելի շուտ պիտի հասնիմ վանքն քան թէ այն տխուր նաւակներով։ Իրիկուան դէմ ծովը հանդարտեցաւ և քիչ ատենէն հասայ հրուան-

դանն որ սուրբ կղզւոյն դիմացն էր։ Գաւազանիս վրայ յենլով՝ մի քանի վայրկեան կեցայ և ծովեզերը քննեցի։ Մեր հին Լէոնէանց վրայ մտածեցի, որ թերևս այս տեղ բանակած էին՝ երբ կ'արշաւէին դէպ 'ի հիւսիս, յետոյ ձախ կողմս դարձայ և վանքը տանող նաւուն չսպասելով՝ այն ճամբան բռնեցի որ զիս Օնէկա պիտի տանէր։

Իրօք այս ճամբան միայն բաց էր իմ առջև, քանի որ Արքանկէլի նաւահանգիստն չէի կարող ելնել։ Արքանկէլէն Վէլիք-Ռուսիւկ դառնալ և նոյն իսկ Մեծն Ռուսիոյ ծոցը մոնելը մեծ անխոհեմութիւն մ'էր, ուստի այս ճամբուն վրայ չէի կարող մտածել։ Ամենէ բնականն այս էր. իբրև ուխտաւոր՝ Սոլովեցկի իմ ուխտս կատարելէ ետև՝ կրնայի վերադառնալ Օնէկա, Օլոնեցի գաւառին մէջ, որպէս զի ուխտագնացութեան շրջանս աւարտեմ Նովկորոտի և Քիոմի մէջ, և ինչպէս կ'ըսեն «Սուրբ Նշխարները երկրպագելու համար». իրաւ՝ դեռ որոշ չգիտէի թէ ի՛նչ պիտի ընէի Օնէկա հասնելէն ետև, բայց քանի որ Արքանկէլի մէջ յոյսերս պարապ ելան, միտքս դրի մեծ մեծ խորհուրդներ չտածել և միայն վաղուանը մտածել։ Ուստի հրուանդանին արևմտեան եզրէն ճամբաս շարունակեցի, և շատ օրեր քալեցի այնպիսի ուղիէ մ'որու մէկ կողմն անտառախիտ բլրակներ կային միւս կողմը ծովը։ Իմ առջևս միայն աւազ, թրփուտներ և ճահիճներ կը տեսնէի։ Այս ամայի երկրին վրայ դաղափար մը տալու համար բաւական է որ դէպք մը պատմեմ։ Երբ մի օր գիւղ մը հասայ, բնաւ հաց չգտայ։ Շաբաթ մը կար որ գիւղացիներն հացէ զուրկ մնացած էին, վասն զի վատ օդին պատճառաւ Արքանկէլէն սովորաբար ալիւր բերող նաւն չէր հասած։ Հացի տեղ՝ Սալիտակ ծովէն ելած թարմ տառեխներ գտայ, որ խոշոր էին ու շատ համեղ։

Օնէկայի մէջ՝ թէև մի քանի օտար նաւեր տեսայ նաւահանգիստը, բայց ամենևին փորձ չփորձեցի ճամբայ ելնելու։ Եթէ փորձ մ'անգամ ընէի յաջողութեան թեթև յուսով իսկ՝ պէտք պիտի լիներ շատ օրեր անցընել այս քաղաքն՝ ուր ուխտաւորներու խումբեր չը կային, որպէս զի դէթ կարող լինէի անոնց մէջ պահուըտիլ, և ոստիկանութեան հսկողութենէ խոյս տալ, ինչպէս որ խոյս տուեր էի Վէլիքի-Ռուսիւկի և Ար-

քանկէլի մէջ։ Ասկէ զատ՝ որովհետև յոյսս խիստ ցաւալի կերպով պարապ ելած էր, հարկաւ ցամաքային ուղևորութեան վրայ աւելի վստահութիւն ունէի, քանի որ մինչև այն օր իմ յոյսերս 'ի դերև ելած չէին։ Օնէկայի մէջ երկու ցամաքի ճամբայ ունէի իմ առջևս, և անոնցմէ մին ընտրել այնքան էր։ Մէկն էր աջ կողմս որ պիտի տանէր զիս Լաբոնիոյ ճախնուտէն մինչև Դոբնէօ գետն Շուէտի սահմանագլխին մօտ, միւսը ձախ դիս՝ որ պիտի տանէր Օլենէց գաւառին մէջէն, Վիդէկրայի վրայէն՝ մինչև Ֆինլանտիոյ ծոցն ու Պալդիկ ծովը։ Առաջին ճամբան շատ դժուարին էր, իսկ երկրորդը շատ վտանգաւոր։ Եթէ Ուրալի լեռներէն և Պէչորայի դաշտավայրէն անցնելու ժամանակս։ Քանի որ ուխտաւորի կերպարանն առեր էի առաջուան պէս վախնալու տեղի չկար մարդկային բնակարանէ. ասկէ զատ եղանակն աւելի մեղմ էր, վասն զի յունիս ամսուն մէջն էինք, և եթէ հարկ լինէր ինձ անտառը քաշուիլ պառկելու կամ գիշերն անցնելու համար, կ'գտնէի այն տեղ ոստեր ու կանաչ տերևներ, որով բաւական փափուկ անկողին մը կարող էի վնել։ Զարմանալին այս է, որ այնքան գիշերներ մենաւոր անցընելով՝ ամենևին անհանգիստ չեղայ վայրենի գազաններէ, որ խիստ շատ կան այն կողմերը։ Միայն երբեմն կ'արթննայի գայլերու հեռաւոր ոռնալէն, թէև երբէք գայլ չտեսայ։

Բայց պէտք չէ հետևցընել որ այս ուղևորութեանս ժամանակ՝ շատ նեղութիւններ և մտատանջութիւն չունեցայ, թէև բաւական ստոյգ տեղեկութիւններ ունէի երկրին սովորութեանցը վրայ։ Օր մը՝ մեծահամբաւ Քարկոպոլէն քիչ մը հեռու՝ հիւղի մը մէջ՝ ուր քիչ մը կերակուր կ'խնդրէի, ըսին ինձ որ միայն փոլէնոյ ունին ինձ տալու։ Ես ալ, Բե՛ր փոլէնոյ, ըսի, բաւական զոհ լինելով տեսնել այն ազգային կերակուրն, որու վրայ այնքան գովեստներ լսած էի, թէև ինչ լինիլը չգիտէի։ Սակայն յետին ծայր չխթեցայ երբ տան տիկինն առջևս դրաւ կոյժ մը ջուր, դգալ մը, և չոր ու սևուկ ալիւրով կէս մը լեցուն դաշխուրան մը։ Ի՞նչպէս ուտել պէտք էր այս, ի՞նչ ընելու էր, որ օտարական լինելս չյայտնուէր, բոլորովին տգէտ երևելով փոլէնոյ ազգային կերակուրի մասին որ հանրածանօթ է առուսաց։ Հոգւով մարմնով խօսակցութեան մը մէջ մտայ, որպէս զի ուշադրութիւն չդրաւեմ, բայց տանտիկինն յամառ էր և հարցուց ինձ.

«Ինչո՞ւ համար չես ուտեր, քանի որ այդչափ անօթի ես։ Արդեօք կ'ուզե՞ս որ քիչ մը կվա՞ս խառնեմ ալիւրին հետ։

—Ո՛հ, այո՛, կվա՞ս—, պատասխանեցի չխթած։

Ուստի կինը մրգօղի բերաւ, և բարեբաղդաբար ինքն

ներէն և անհրաժեշտ պիտոյքներ հոգալու ծանր ծախքէն, սակայն պէտք է խոստովանիլ որ Օնէկայէն մինչև Վիտէկրա ըրած ուղևորութեանս մէջ չկային այն տաժանելի տառապանքն զոր պարտաւորեր էի կրել Ուրալ լեռներէն և Պէչորայի դաշտավայրէն անցնելու ժամանակս։ Քանի որ ուխտաւորի կերպարանն առեր էի առաջուան պէս վախնալու տեղի չկար մարդկային բնակարանէ. ասկէ զատ եղանակն աւելի մեղմ էր, վասն զի յունիս ամսուն մէջն էինք, և եթէ հարկ լինէր ինձ անտառը քաշուիլ պառկելու կամ գիշերն անցնելու համար, կ'գտնէի այն տեղ ոստեր ու կանաչ տերևներ, որով բաւական փափուկ անկողին մը կարող էի վնել։ Զարմանալին այս է, որ այնքան գիշերներ մենաւոր անցընելով՝ ամենևին անհանգիստ չեղայ վայրենի գազաններէ, որ խիստ շատ կան այն կողմերը։ Միայն երբեմն կ'արթննայի գայլերու հեռաւոր ոռնալէն, թէև երբէք գայլ չտեսայ։

Բայց պէտք չէ հետևցընել որ այս ուղևորութեանս ժամանակ՝ շատ նեղութիւններ և մտատանջութիւն չունեցայ, թէև բաւական ստոյգ տեղեկութիւններ ունէի երկրին սովորութեանցը վրայ։ Օր մը՝ մեծահամբաւ Քարկոպոլէն քիչ մը հեռու՝ հիւղի մը մէջ՝ ուր քիչ մը կերակուր կ'խնդրէի, ըսին ինձ որ միայն փոլէնոյ ունին ինձ տալու։ Ես ալ, Բե՛ր փոլէնոյ, ըսի, բաւական զոհ լինելով տեսնել այն ազգային կերակուրն, որու վրայ այնքան գովեստներ լսած էի, թէև ինչ լինիլը չգիտէի։ Սակայն յետին ծայր չխթեցայ երբ տան տիկինն առջևս դրաւ կոյժ մը ջուր, դգալ մը, և չոր ու սևուկ ալիւրով կէս մը լեցուն դաշխուրան մը։ Ի՞նչպէս ուտել պէտք էր այս, ի՞նչ ընելու էր, որ օտարական լինելս չյայտնուէր, բոլորովին տգէտ երևելով փոլէնոյ ազգային կերակուրի մասին որ հանրածանօթ է առուսաց։ Հոգւով մարմնով խօսակցութեան մը մէջ մտայ, որպէս զի ուշադրութիւն չդրաւեմ, բայց տանտիկինն յամառ էր և հարցուց ինձ.

«Ինչո՞ւ համար չես ուտեր, քանի որ այդչափ անօթի ես։ Արդեօք կ'ուզե՞ս որ քիչ մը կվա՞ս խառնեմ ալիւրին հետ։

—Ո՛հ, այո՛, կվա՞ս—, պատասխանեցի չխթած։

Ուստի կինը մրգօղի բերաւ, և բարեբաղդաբար ինքն

իր ձեռաք դաշխուրանին մէջ թափեց ու ալիւրը դդա-
լով խառնեց։ Ալիւրն ուռելով ամանին բերանն ելաւ
և տեսակ մը խաւիծ դարձաւ, զոր վերջապէս կարող
եղայ ճաշակել։ Այս էր պարզապէս փառան մէջ եփած
վարսակ, զոր խնամով շոկեր ու ալիւր ըրեր էին։ Երբ
ջրով ու մրգոդիով լուծուի բաւական ախորժելի կերա-
կուր մը կ'դառնայ, և ես զայն պիտի առաջարկեմ,
մանաւանդ Կարպատի մեր քաջ լեռնականներուն։

Օլենէցի երկրին ամէն կողմն ջրանցքներ կան որ ի-
բարու հետ կ'կապեն այլ և այլ գետեր և լճեր, ինչ-
պէս Օնէկա, Լատոգա, Վիտէկրա, Սվիր եւ, որ տեղ-
ույն յարաբերութեանց գլխաւոր ճանցը կ'կազմեն։ Այս
ջրանցքները պահպանելու և հսկելու համար այլ և այլ
տեղեր պահնորդներ հաստատուած են։ Աւոնցմէ շա-
տերը լեհացի էին, որ այն տեղ կ'հեծեծէին տասնվեց
տարիէ 'ի վեր՝ այսինքն 1831 թուականէն 'ի վեր։ Ար-
քանկելէն մինչև Վիտէկրա տեսայ ես իմ թշուառ հայ-
բենակիցներէն շատերն այս զօրապահակներուն մէջ։
Այս երկարատև ժամանակին ընթացքով՝ անոնք շատ վատ
կ'խօսէին ռուսերէն լեզուն։ Սակայն կ'խօսակցէի՞ անոնց
հետ իբրև Սիպերիոյ մէկ բնակիչը և կ'խնդրէի որ իրենց
նեղութիւններն ինձ պատմեն։ Մանաւանդ շարադու-
շակ բան մը կ'լսեմ, որ դիս'դող հանեց։ Այս դժբաղդ
հայրենակիցներուս մէկուն ազէտալի տրտունջները լսե-
լէն ետև՝ զինուորական կենաց ծանր աշխատութեանց
ու նեղութեանց վրայ, իբրև ճշմարիտ ռուս գիւղացի
մը անոր ըսի.

«Բայց վերջապէս ձեզ՝ այնքան չեն ծեծեր։

—Ի՞նչպէս չեն ծեծեր, պատասխանեց ինձ՝ դրեթէ
վայրենի ծիծաղով մը, միթէ կարծես թէ հոս մարդ
ձրիապէ՞ս կ'ուտէ Զարին հացը . . . »

Շատ անգամ ուրիշ ցաւալի իրողութիւն մը կ'տես-
նէի այս երկրին մէջ. հրէայ մանուկներու խումբեր Ար-
քանկել կ'տանէին։ Ցայտնի է թէ, մինչդեռ ռուս կա-
ռավարութիւնն Լեհաստանէն հաստակաւոր մարդիկ զի-
նուոր կ'դրէ, հրէայ ժողովրդէն տաս տասնհինգ տա-
րու աղայքը կ'առնէ, որպէս զի կարող լինի աւելի դիւ-
րաւ մոռցնել տալ անոնց ընտանեկան ու կրօնական
աւանդութիւններ, և զինուորական կենաց վարժեցնել,
որու համար հաստակաւոր հրէայք անյարմար կ'դատ-

սուին։ Այս անչափահաս տղոց շատը նաւային ծառա-
յութեան կ'սահմանուին և Սպիտակ ծովու այլ և այլ
նաւահանգիստները կ'դրկուին։ Այս ածիլուած, մանր
մուշտակներով ծածկուած խեղճ տղոց տեսքն, զոր զի-
նուորներն իրենց առջևէն կ'քշէին իբրև ոչխարի երա-
մակ, սրտաճմլիկ էր։ Անոնցմէ շատերն, ինչպէս որ բը-
նիկները կ'պատմէին ինձ՝ ճամբան կ'մեռնէին։

Թուսիոյ բարոյական վիճակին նկատմամբ ուրիշ մէկ
երևոյթ մը նշմարեցի Օլենէցի երկրին մէջ՝ որ բաւական
հետաքրքրական է։ Ճամբան հարցնելու համար հիւղ
մը մտեր էի։ Այս ճամբան Քարիսպոլէն Վիտէկրա տա-
նող ճամբան էր։ Հիւղին մէջ միայն ծերունի մը դտայ
որ պատուաւոր դէմք ու երկար մերմակ մօրուս ունէր։
Երբ մի անգամ խօսելու սկսաւ, այնպէս բուռն ատե-
լութիւն յայտնեց պաշտերու (քահանայից) դէմ, կառա-
վարութեան ու Զարին դէմ որ դժուարին չեղաւ ինձ
դիտել որ խօսակիցս «սաբովէր» (հնահաւատ) էր։ Ցետոյ
երբ տեսաւ որ բաւական համամիտ եմ իր կրօնական
կարծեաց, սկսաւ երկար բարակ խօսիլ և արտասուք
թափել՝ ճշմարիտ հաւատոյ հալածման վրայ։ Եւ որպէս
զի փաստով ցոյց տայ թէ Նիկոնի վերանորոգումէն 'ի
վեր՝ ռուսական արդի խաչ հանելու սովորական ձևն
բոլորովին հերետիկոսական է, դուրսը լաւ մը նայելէն,
դրան պարզունակը քաշելէն և ինձ երդում առնելա-
լէն ետև, որ այս գաղտնիքը բնաւ դուրս չհանեմ, թա-
գուն տեղէ պատկեր մը հանեց դեղին պղնձի վրայ, որ
Նոյնի բիւզանդական գործ էր, բաւական կոչտ շի-
նախնի բիւզանդական գործ էր, բաւական կոչտ շի-
նուած, որու վրայ ներկայացած էր Յիսուս Քրիստոս,
որ մանկունքը կ'օրհնէր աջ ձեռքին երկու մատներով
ճիշդ հնահաւատներուն ծէսին համեմատ։

«Մեզ կ'ստիպեն, ըսաւ ինձ, երթալ հերետիկոսնե-
րու եկեղեցին, և քահանաներն ալ կ'բռնադատեն զմեզ
խաչ հանել իրենց կերպով։ բայց երբ եկեղեցիէն կ'վե-
րադառնանք՝ ճշմարիտ Աստուծոյ կ'աղօթենք և ներո-
ղութիւն կ'խնդրենք այդ մեծ մեղայ համար . . . »

Ցետոյ՝ հին տեսար մը հանեց ծակէ մը, որ կ'պարու-
նակէր Յովհան Նահապետի պատուիրանն և իր եղբարց Յեսու
մատնողին ու ծախողը։ Բարեմիտ մարդն սկսաւ իմ առ-
ջև կարդալ այս նորութիւններն ու մի քանի արաս-
սուք թափեց սիրտը շարժելով՝ երբ այն տեղն հասաւ,

ուր Յակոբի որդին Պետափրէսի կնոջ դիմադրեց։

Երբ Վիտէկրա հասայ, նաւահանգստին վրայ դեղացի մը քովս եկաւ և հարցուց թէ ո՞ւր կ'երթամ։

«Ես ուխտաւոր մ'եմ, պատասխանեցի, Սոլովեցկի վանքէն կ'դամ, և հիմնակ Նովկորոտի ու Քիովի սրբոց մասունքը համբուրելու կ'երթամ։

—Ուրեմն ես քու մարդդ եմ, ըսաւ ինձ, ես քեզ Բեղրզլուրկ պիտի տանիմ. նաւս պզտիկ է, ձի մը միայն ունիմ զոր պէտք է փոխադրեմ, և դու ալ քիչ մը կ'օգնես ինձ թիավարելու . . . ծանր աշխատանք չէ։

—Ես այդ աշխատանքին վարժ եմ, և գիտեմ սակայն որ թեթև գործ չէ։ Ի՞նչ պիտի տաս ինձ։

Երկար բարակ սակարկութեան վրայ խօսեցանք։ Այնպէս կ'երևէր որ խորամանկ նաւավարը կ'փափաքէր բաղուկներէս օգուտ քաղել առանց սակ մը տալու։ Վերջապէս համաձայնեցանք, և խօսք տուաւ ինձ տալ բոլոր նաւարկութեան ժամանակ, և այս սակարկութենէ այնքան գոհ եղաւ որ իսկոյն գինետունը տարաւ դիս և բաժակ մը գինի խմցուց։

Բեղրզլուրկ գնալու խորհուրդս, նոյն իսկ Նիքոլա կայսեր մայրաքաղաքը, բաւական տարօրինակ էր և անտարակոյս Եկատէրինոքի–Զաւօդի մէջ մտածած փախուստի միջոցներուս մէջ այս խորհուրդը չկար. բայց Սրբանկիլէն սկսելով՝ քիչ մը դիպուածին հետևելով կ'ուղևորէի։ Իմ բոլոր ջանքս էր միայն օգուտ քաղել ամեն պարագայէ որ դիս ծովու մը կամ սահմանագլխի մը կրնար մօտեցնել և բնաւ քանի մը ժամէ աւելի չը կենալ տեղը մը, որպէս զի իզմէ անցագիր պահանջելու չելնեն։ Արդ մեր նաւակը նոյն օրը ճամբայ կ'ելնէր։ Թէև ձեռնարկս այլանդակ էր, բայց ամեն այլանդակ բան իր ապահով կողմն ունի, մայրաքաղաք մ'այնքան վտանգաւոր չերևցաւ ինձ որքան գաւառի մը պզտիկ քաղաքը, և գործը ցոյց տուաւ որ իմ հաշուիս մէջ սխալած չէի։

Երեկոյին՝ նաւակը նաւահանգստէն ելաւ և սկսանք մեր ճամբորդութիւնն, որ Վիտէկրայէն, Օնէկա լճէն, Սվիր գետէն, Լատոգա լճէն ու Նէվայէն անցնելով՝ մեզ մինչև Բեղրզլուրկի պարիսպներուն սակը պիտի տանէր։ Գիշեր ցորեկ կ'թիավարէինք՝ անթիւ մակոյկներու, նաւակներու ու նաւերու մօտէն, որ բոլորովին

ծածկեր էին լիճերն ու գետերը, մանաւանդ լատերու քովէն, որ նոյնպէս մայրաքաղաքին պիտոյից համար էին և որ տեղ տեղ նաւերու անց ու դարձը բոլորովին կ'կարէին։ Մենք 'ի սկզբան երեք հոգի էինք, ես, նաւատէրն, ու իր որդին, բաւական ուժեղ երիտասարդ մը, որ երբ եղերքը կ'մօտենայինք՝ ձին դուրս կ'հանէր և նաւակով մը չուանին կ'կապէր որպէս զի գոյն քաշէ։ Թէև նաւակը շատ անձուկ էր, նաւատէրը երբեմն մարդ կ'առնէր որ յարմար տեղեր հանէ, և ի՞նչպէս կարելի էր թողուլ ամենէ թեթև շահը։ Փոքրադարար այս անցորդներն ժողովրդական զգաստ կարգէն չէին և ինձ մեծ նեղութիւն կ'պատճառէին։ Ոչ միայն պարտաւոր էի շարունակ թի քաշել այլ և այս դիմոքներուն վրայ հսկել, և անգամ մը ջուրը նետուեցայ որպէս զի այս ողորմելիներէն մին ազատեմ որ անոր մէջն ընկեր էր։ Չեմ ուզեր եւեղբ իրենքս բարեսիրտ ցոյց տալ, և պարտաւոր եմ խոստովանիլ որ անձնական շահ մ'ունէի այս անտանելի մարդոց վրայ հսկելու։ Եթէ դժբաղդութիւն մը պատահէր՝ պէտք պիտի լինէր առաջին կայարանը կենալ և ոստիկանութեան հետ հարցուփորձի բռնուիլ, այնպէս որ անտարակոյս խօսակցութիւնն իմ անցագիրս պահանջելով պիտի սկսէին։ Հետևապէս իմ զթասիրական գործս աւետարանական չէր բոլորովին։

Քանի կ'մտածենայինք մեր նպատակին այնքան աւելի մտատանջութիւնը դիս կ'պաչարէր և հոգերս կ'աւելնային. կ'փափաքէի Ս. Բեղրզլուրկի սովորութեանց վրայ տեղեկութիւններ ստանալ։ Բարեբաղդաբար նաւատէրն՝ երբ նաւն օթևանի մը մօտ կեցաւ, շատ ճամբորդ կիներ առաւ, որ իրենց ազգականներուն այցելութիւն ընելէն ետև՝ մայրաքաղաքը կ'դառնային. ուր երկար ժամանակ 'ի վեր կ'բնակէին իբրև սպասուհիներ և սենեկապահուհիներ։ Ես՝ իբրև ուխտաւոր՝ կը պարտաւորէի այս կիներուն բարոյական քարոզել, բայց իմ քարոզն շատ անգամ անոնց խնդութիւն կ'պատճառէր։ Սակայն ես բոլորովին անտպատի մէջ չէի քարոզեր, մանաւանդ երբ պաշտպանելու սկսայ պառաւ կին մը, զոր սենեկապան աղախիններն եպերելի կերպով կը ծաղրէին։ Աւա՜ղ, որչափ անհոգ և ինքնասէր է երիտասարդութիւնը։ Կորելիայի ազգատոհմի մ'

էր այս կինն, առաջին անգամն էր որ Ս. Բեդրզպուրկ կ'երթար իր լուսացարար աղջիկը տեսնելու համար. նա զիս շատ սիրեց զինքս պաշտպանելուս, հայրիկ կոչեց զիս, և իրօք նախախնամական օգնութիւն մը տուաւ ինձ։

Բաւական ծանր փոթորիկ մը կրելէն ետև, երբ մեր կիները սոսկալի աղաղակներ հանեցին, և անցանք Նովա-Լատոգա և Շլուսէլպուրկ, ուր Ալեքսիս Օրլոֆ խեղդեց դժբաղդ Պետրոս Գ.ը. Մեծն Կատարինէի հրամանաւ, հասանք առաւօտեան ժամն ութին մայրաքաղաքին նաւամատոյցը, ճիշտ Նէվսկի-Բէրսպէկտիվի դիմացը։ Սենեկապահ սպասուհիներն շուտ մը ցամաքն ելան, և փոքրիկ մը համար ինձ ժամադիր եղան։ Ես ալ կ'պատրաստուէի ցամաքն ելնել, թէև ճիշդը խօսելով, սատիկ չփոթած էի, երբ իմ պառաւ Կորէլիացիս մօտեցաւ ինձ և ըսաւ.

«Կեցիր, ինձի հետ կեցիր. մարդ ղրկեցի որ աղջիկս կանչէն, երբ գայ կարող է քեզի ածան բնակարան մը ցոյց տալ։»

Ընթերցողը կարող է դուշակել թէ այս առաջարկութիւնն ինչ եռանդով և անպատուում ուրախութեամբ ընդունեցի։ Թէև երկար ատեն նաւակին մէջ մնացինք, բայց մարդ չեկաւ մեզմէ անցագիր պահանջելու։ Իմ երջէ լուսացարար աղջիկն եկաւ, գրկեց իր մայրը գորովանօք, անոր արկղն առաւ, գոր փայտէ մ'անցնելով, երկուքս մեր ուսերուն վրայ դրինք, և այսպէս ճամբայ ընկանք մեր բարեմիտ պառաւին հետ, որ գլխուն վրայ դրած էր իր կերակուրի պատուկը։ Ահա այս տաբորինակ կերպով մտայ ձարներու քաղաքը . . .

Անթիւ փողոցներէ, դռներէ ու կամուրջներէ անցանք, մինչև որ լուսացարարին բնակարանը հասանք։ Այս ցած յարկով տուն մ'էր, ուր կ'բնակէին ամենէ խեղճ գործաւորներն։ Մանաւանդ գիշերները կ'գային խշտեկի մը վրայ պառկելու. կամ ինչպէս ռուսերէն կ'ըսեն, մերկ պառկելու, արմուկը բարձ ընելով։ Տեղւոյս մէկ քանի բնակիչներուն կարմրած քիթերն և ուռած այտերն ցոյց կ'տային ինձ որ այս յարկին ներքև ուրիշ շուառութիւններ ալ ծածկուած էին։ Սակայն կային նաև աւելի կանոնապահ տունաւորներ, որ շահու համար վարձու կու տային իրենց կահած սենեակներէն մին։ Իմ լուսացարար աղջիկս այս տունաւորներէն մին էր։ Դժբաղդաբար իր

սենեակն արդէն բռնուած էր, բայց նա ներկայեց զիս դրացուհւոյ մը։ Շուտով կարգի՞ դրինք գործն և օրն ութ կոբէկ տալով իր սենեակը վարձու բռնեցի, և որդէս զի ձախորդութեան առաջն առնում, տան տիրուհէս խնդրեցի որ ոստիկանութեան պաշտօնատունն ինձ ցոյց տայ, անցագրիս գործը կարգադրելու համար։

«Եւ ո՞վ ես դու, հարցուց ինձ տան տիրուհին։

—Ես պոհոմլեց (ուխտաւոր) մ'եմ, Վոլոգայի միւս կողմէն, Սոլովեցկի վանքէն կ'գամ և Վէլիքի Նովկորոտ կ'երթամ սրբոց մասունքը համբուրելու համար . . .

—Շատ լաւ կ'ընես, թող Աստուած օգնէ քեզ, ցոյց տուր ուրեմն անցագիրդ։

Իմ ողորմելի անցատոմս հանեցի սաստիկ մտատանջութեամբ և անոր տուի։ Անտարակոյս կարդալ չգիտէր նա, վասն զի կնիքին նայեցաւ և անցատոմսը նորէն ինձ դարձուց ըսելով.

—Եւ ո՞րչափ ժամանակ այս տեղ մնալու միտք ունիք։

—Շատ շատ, չորս հինգ օր միայն, վերջապէս հանդստանալու չափ ժամանակ պիտի անցնեմ։

—Գիտե՞ս ուրեմն, ի՞նչ պիտի ըսեմ քեզի, անօգուտ է ոստիկանութեան երթալդ։

—Դու գիտես, ինչպէս կ'ուզես այնպէս կ'ընեմ, վասն զի տեղւոյն սովորութիւնները չգիտեմ. բայց ինչո՞ւ համար անօգուտ է կ'ըսես։

—Պատճառն այս է որ պէտք է քեզի ընկերանալ, և այդ ալ շատ մեծ նեղութիւն մ'է ինձ համար։

—Ի՞նչ հարկ կայ ինձ ընկերանալ։

—Վասն զի բաւական ժամանակէ 'ի վեր՝ ոստիկանութիւնը յետին ծայր պահանջող եղած է։ Ասոնց մը բաւական էր որ ճամբորդը մինակ ոստիկանութեան երթար, հիմակ կ'պահանջուի որ անպատճառ տանուտէրն կամ վարձկան անոր հետը լինի։ Արդ՝ որովհետև անպակաս են մարդիկ պաշտօնատունն, պէտք պիտի լինի երկար սպասել, մինչև որ մեր կարգը հասնի։ Եթէ ճամբորդը մէկ կամ երկու ամիս մնար, ինչ և է, կ'արժէր այդ ծանրութիւնն առնուլ, բայց քանի որ մի գիշերուան կամ մի քանի օրուան համար է, ի՞նչ օգուտ չարունակ երթալ գալէն։ Մեզ ապրուստ պէտք է, և-

թէ տան աշխատանքը թողունք, միթէ ոստիկանութիւնը հայ կ'տայ մեզ։ Այս պատճառաւ աւելի լաւ կ'համարինք ամենին չյայտնել ոստիկանութեան, երբ կ'տեսնենք որ վարձարնակն քանի մ'օր միայն պիտի մնայ։ Այս կերպն աւելի լաւ է մեզի համար, և եթէ ոստիկանութիւնն ամեն բան ուզածին պէս չիմանայ, մեծ չարիք մը չպատահիր։

Ես բնաւ տարակուսիւն մը չբրի։ Իմ պզտիկ սենեկիս մէջ նստայ և միտքս դրի այն ջօրն դուրս չելնել, թէև տան տիրուհիս կ'տիպէր դիս երթալ քաղաքին լուսավառութիւնը տեսնել, վասն զի մեծ ոսն էր մայրաքաղաքին համար։ 1846 յուլիս ամսուն 9ն էր, և լաւ չեմ յիշեր, կարծեմ թէ Նիկոլաս կայսեր ազգիկը, Օլգա մեծ դքսուհին կ'նշանուէր կամ կ'կարդուէր Վուրդեմբերկի իշխանին հետ։

Մութ օրն եկայ և քաղաքը պատեցայ, որու հոյակապ փողոցներն անապատ կ'երևէին ինձ։ Ես հնար մը մտածեցի շուտով մայրաքաղաքէն մեկնելու համար։ Միտքս դրի՝ 'ի հարկին Պարիկ ծովուն եզերքը հասնիլ լողալով։ Սակայն՝ եթէ աւելի յարմար միջոց մը ներկայանար ինձ, չպիտի արհամարհէի։ Գիտէի որ շոգենաւ մը Բեդրզպուրկէն Հավրը պիտի երթար, բայց թէ օ՞ր օրն և օ՞ր ժամուն պիտի երթար, օ՞ւր խարիսխ ձգած էր, նաւապետը Ֆրանսացի՞ էր թէ ռուս, ահա ասոնք էական խնդիրներ էին, որոց մասին չէի կարող մարդու մը բացուիլ և տեղեկութիւն ուզել, որպէս զի չմատնուիմ։ Նէվայի երկայնքը կ'պարպէի, և կարմիր կամ դեղին ապդարարութիւններ կ'կարդայի, որ այլ և այլ շոգենաւերու սև տախտակներուն վրայ գրուած էին։ Սակայն ծածուկ կ'կարդայի, վասն զի դեղացի մը, ռուս մարդ մը (ռուսկի Զէլովէկ), ինձի պէս, պէտք չէր բնաւ ցոյց տալ որ գիտուն է։ Մանր ծանր կ'քալէի ապդերը կարդալով, երբեմն Նորին Վեհափառութեան կայսեր շոգենաւն էր, կամ Նորին Բարձրութեան կայսերական իշխանին և ուրիշ պալատականներու շոգենաւներն էին։ Անտարակոյս այս նաւերը շատ բարձր էին ինձի համար։ Վերջապէս ուրիշ նաւեր տեսայ որ այնքան շքաւոր չէին, բայց ամենն ալ այնպիսի տեղեր պիտի երթային որ իմ փափաքիս յարմար չէին։ Նէվայի ձախ կողմի ափունքն պարպէս ոչքէ անցնելէն եաև կամուրջն անցայ, որ Մեծն Պետրոսի արձանին դիմացը կ'գտնուի, և ամբ ափին եզերն երկայնքը բռնելով հասայ մինչև գետին բերանը։ Այս տեղ կայ առի երկու ահագին ափինքներու մտ, որ գրուած էին թանգարանին առջև, և Եգիպտոսի այս օտար հիւրերու տեսքը, սոյն սառնամանեաց քաղքին մէջ, պահ մը միտքս գըրաւեց։ Ցանկարծ ազդարարութիւն մը տեսայ, խոշոր տառերով գրուած և շոգենաւի մը կայմին մտ գետեղուած. այս շոգենաւն հետևեալ օրը պիտի նաւարկէր գէպ 'ի Ռիգա . . . : Սիրտս թռուն ելաւ, ու հագիւ գոպեկի յուզմունքս։ Բայց ի՞նչպէս մինչև նաւն երթալ և նաւապետին հետ խօսիլ պէտք էր։ Նաւուն կամրջին վրայ կ'տեսնէի մարդ մ'որ կ'ճեմէր, հաւանօրէն նաւուղիղն էր, որ ռուսական ձևով կարմիր շապիկ հագած էր տարտամն վերև. չէի համարձակեր հետը խօսիլ, և բուսական սեպեցի անոր նայիլ ակնապիշ։ Նոյն պահուն արևը մարը կ'մտնէր, արդէն երեկոյեան ժամը եօթն էր, երբ յանկարծ կարմիր շապիկով մարդը գլուխը վերցուց և ինձ հարցուց,

«Ինդեօք կ'փափաքի՞ս Ռիգա գնալ։ Ուրեմն եկուր այս տեղ նստիր։

—Անշուշտ, կ'ուզեմ Ռիգա երթալ, բայց աղքատ մարդ եմ, ի՞նչպէս կարող պիտի լինիմ շոգենաւ մտնել, կարծեմ թէ շատ սուղ է ճամբու ծախքը, և մեզի պէս իեղճերուն համար չէ այդ ճամբորդութիւնը։

—Եւ ինչո՞ւ չէ. եկուր երթանք, քեզի պէս մ-ԺԻԿ* մը շատ ոտակ չեմ պահանջեր։

—Եւ ո՞րչափ կ'պահանջես։

Նաւագին մը պահանջեց զոր չեմ յիշեր, բայց զարմանքս շարժեց, վասն զի շատ չափաւոր էր։

—Լաւ ուրեմն, միթէ այս գինը չյա՞րմարիր քեզի։ Ինչո՞ւ համար դեռ կ'վարանիս։

—Վասն զի, դեռ այսօր հասայ քաղաքն և պէտք է որ ոստիկանութիւնն իմ անցագիրս տեսնէ և վաւերէ։

—Ո՜հ, այն առեն, հագիւ երեք օրուան մէջ պիտի կարենաս գործդ ոստիկանութեան հետ աւարտել, և շոգենաւն վաղն առտու ճամբայ կ'ելնէ։

*Մուժիկ պզտիկ մարդ կ'նշանակէ. բայց այս անունը կ'գրուի բաս գիշերուս անարգական խմաստով։

—Ուրեմն ի՞նչ ընեմ։

—Ցէր ողորմեա՛, առանց անցագիր ցոյց տալու մեկ-նիլ պէտք է ։ ։ ։

—Վա՛հ, հապա թէ որ դիմադրութիւն մը պատա-հի ։ ։ ։

—Անմի՞տ։ ահա քեզ մի ֆո-ֆէկ որ ինձ դաս տալու ելեր է ։ ։ ։ միթէ անցագիրը քո՞վդ է, ցոյց տուր ինձ։»

Գրպանէս հանեցի անցատոմս, զոր խնամքը փաթ-թած էի թաշկինակիս մէջ, ուստ գիւղացւոց սովորու-թեան համեմատ, բայց նաւուղիղը նայիլ անգամ չու-զեց և ըսաւ.

«Վաղն առաւօտ ժամը եօթին եկուր, եթէ կիս չը գտնես այս տեղ, սպասէ։ Եւ հիմակ շուտով վազէ՛, գնա ։ ։ ։ »

Ուրախ զուարթ բնակարանս դարձայ, և հետևեալ օրը ճիշտ որոշուած ժամուն նաւն եկայ։ Արդէն մեքե-նան կ'վառէր։ Մարդս տեսաւ զիս և այսչափ միայն ը-սաւ.

«Տո՛ւր ստակը։»

Եւ իսկոյն հեռացաւ գնաց. յետոյ դեղին տոմսակ մը բերաւ ինձ տուաւ, ես ալ բնական այնպէս ձեւա-ցուցի որ անոր նշանակութիւնը չեմ հասկընար, և ա-սոր վրայ նոր յանդիմանութիւն մը լսեցի.

«Լուռ կեցիր, ֆո-ֆէկ, դու գործդ տես, ըսաւ ինձ նաւուղիղը։»

Զանգակն երեք անգամ հնչեց, վանդակին դուռը բացուեցաւ, ճամբորդները խռնեցան։ Յանկարծ մարդս բռնցի հարուած մը տուաւ ինձ և անոնց եռևէն քշեց։ Քանի մը վայրկեան ետք նաւն սկսաւ շարժիլ ծովուն վրայ։ Կարծեցի թէ երազ կ'տեսնեմ։

Ե

Ս. Բեղրզպուրկէն շոգենաւով Ռիկա ճամբորդողը բնաւ զգալի տպաւորութիւն մը չընդունիր, եթէ ու-ղևորը նոյն իսկ Բաթոբկայէն (ծանր աշխատանք) խոյս տուող սիպէրիական մ'անգամ լինի։ Սակայն պզտի ար-կած մ'անցաւ գլխէս։ Իրաւի՝ Ովկիանոս ինձ հակառակ էր։ Ծովը դիս բռներ էր և զգացած տկարութեանս շնորհիւ՝ չգիտեմ ի՞նչպէս եղաւ՝ որ ինքզինքս «աղնուա-կանաց» խուցը գտայ և այս արշաւանքս ամենուն զայ-րոյթ պատճառեց։ Բաւական տարուբ կին մը շարունակ կ'պոռար Ֆրանսերէն լեզուաւ.

«Ա՜հ, այս գեղջուկը մեզ հիմա պիտի սպաննէ. քիչ մ'ոդ ունինք ծծելու, այն ալ պիտի ապականէ։»

Սպասաւորները հասան և դիս թէ խելքի բերին և թէ տեղս տարին։ Շոգենաւին առաջակողմի մէկ ան-կիւնը կծկուած լուռ ու մունջ նստայ հանդարտ, և միայն ատեն ատեն երևելի ճամբորդներ կ'տեսնէի, երբ ճեմելով իմ կողմս կ'գային։ Երկու գերմանացիք՝ երբ տեսան թէ սպս ու հայ կ'ուտեմ, և ստէպ կ'ուտէի, չէ թէ միայն խնայողութեան համար այլ և իմ ֆո-ֆէկի վիճակիս յարմարելու համար. «Աւա՜ղ, ըսին բարձր ձայ-նով և իրենց սիրալիր ոճով, կ'երևի թէ սա ռուս խոզ մ'է ։ ։ ։»

Զարմանալի բան, միայն երկու ուղևորներ կային, որ ատեն ատեն հետաքրքրութեամբ ինձի հետ խօսելու համեցան, առանց գիտնալու երբէք թէ ի՞նչ ազգէ եմ, և այս երկու պատանիները լեհացիներ էին։ Երբ անոնք կամրջին վրայ կ'ճեմէին, աչքս անոնց յառած կ'նայէի։ Ա՜խ, ո՜րչափ կ'փափաքէի անոնց ձեռքը սեղմել. ո՜րչափ սիրտս կ'յուզուէր, քանի այս հայրենակիցներս կ'տես-նէի։ Արդեօք անոնց մէջ անմեկնելի զգացում մը չկա՞ր որ բազմաթիւ ճամբորդներու մէջէն միայն իրենք կը խոնարհէին ինձի հետ տեսակցելու և խօսակցելու։

Համառօտ պիտի պատմեմ բրած ճամբորդութիւնս՝ Ռիգայէն, Կուրլանտայէն և Լիթուանիայէն անցնելով մինչև Բրուսիոյ սահմանը։ Քանի մը խօսք միայն պիտի ըսեմ նոր պաշտօնին վրայ, զոր Բեզբրզուրկէն մեկնելու առենս սկսեր էի կատարել։ Որովհետև Նովգորոտէն կ'հեռանայի՝ ուխտաւորի կոչումս անյարմար էր ինձ, մանաւանդ որ բաղքաքաղաքներուն կամ կաթոլիկ երկիրներէ պիտի անցնէի, ինչպէս էին Կուրլանտա, կամ Սամոգիտիա. ուստի մտածեցի որ այս ճամբորդութեան ժամանակ շէրէնկի ձևանամ։ Այսպէս կ'կոչուին այն ռուս գեղացիներն որ սովոր այն կողմերը կ'պատահին, նոյնպէս և Լիթուանիա և Իւկրէնի մէջ, և որ գիւղէ գիւղ կ'ճամբորդեն որպէս զի Ռիգայի վաճառականներուն հաշուին խոզի մազ գնեն։ Այս պաշտօնն իմ բանիս կ'գար, այս առթիւ ամեն դուռ կ'զարնէի և ճամբան կ'հարցնէի՝ միշտ խոզի մազ փնտռելու պատրուակաւ։ Ոտքով կ'ուղղուէի, ասոր-որպէս կ'պառկէի ցորենի դաշտերու և տնտառներու մէջ և գեղեցիկ օդն (յուլիս ամսուն մէջ էինք) գրեթէ միշտ հոգատուր էր ինձ։ Ամէն գաս ձմրան տաքատս փոխած և Սիպէրիոյէն հետս բերած կապոյտ տաքատս հագեր էի, նորագեր էի փոխնորդներս և ջուլիկներս։ Մուշտակս տաքով պանդոկապետի մը՝ փոխարէն տուռտուրկ մ'առեր էի և փոքրիկ դիւարկ մը, զոր մաղտխս մէջ կ'պահէի Բրուսիոյ մէջ հագնելու համար։ Իսկ պզտիկ ոչխարենի արմեակս՝ իբրև բուն ռուս մորդ՝ (Ռուսկի վելմէկ) միշտ վրաս կ'պահէի, ամառուան ջերմութեան չնայելով։ Իմ անցքս Լիթուանիայէն, մեր սուրբ Սամոգիտիոյ ալէջէն բաւական սրատաշարժ եղաւ ինձի համար և սոսկ հաճելի տեսարաններու տուիչ առաւ։ Քանի քանի անգամ քիչ մնաց որ Լեհացի լիներս պիտի յայտնէի այս կամ այն հայրենակցիս օգնութիւնը իմ դրելու կամ խորհուրդ հարցնելու համար։ Սակայն հանդերձի և միշտ իբրև ռուս շէրէնկի ներկայացայ։ Օր մը՝ Բոլոնգայի մէջ շուկայէն պանիր գնել ուզեցի Սամոգիտիացի կնոջմէ. գնոյն վրայ համաձայնեցանք, ու իմ յարգելի հայրենակցուհիս զօրեղ ձայնով, ինչպէս ամեն վաճառականուհի կին, սկսաւ անվայել օրհնութիւն մը կարդալ «Մոսկով շաներու» վրայ։ Եթէ այն խօսքերուն իմաստը չհասկընալ ձևացուցի, շարժուձևերուն իմաստը շատ բացորոշ

էր, նոյն իսկ հոգեկի մը համար, և թող ներէ ինձ Աստուած, եթէ պարտաւորեցայ մոսկովին պատիւը պաշտպանելու լեհացի կնոջ մը նախատանաց դէմ. . .

Բոլոնկայ և Քուրցանի մէջ էի երբ որոշեցի Բրուսիա անցնիլ։ Մեծ դժուարութեամբ կարող եղայ, առանց մատնուելու, մի քանի տեղեկութիւններ ստանալ թէ ինչ կերպով ռուսերը կ'հսկէին սահմանագլխուն վրայ, այս տեղեկութեանց ամենէ առատ աղբիւրն եղաւ ինձ համար նոյն իսկ մաքսատան գինուոր մը։ Տեսնելով որ նա Բոլոնկայի ծովածոցին մէջ կ'լուացուի անոր օրինակին հետևեցայ, այսպէս աւելի դիւրաւ հեռաց խօսակցելու յուսով։ Երբ իմացուց ինձ որ ինք՝ բնիկ Բոլոտավցի է, իսկոյն ես ևս՝ յայտնեցի՝ որ իր հայրենակիցն եմ։

Շատ դիւրին ու պարզ միջոց մը կայ ռուս գինուորը խօսեցնելու, այս է խօսք բանալ իր վիճակին դժբաղդութեանց և դառնութեանց վրայ։ Երբ այս բնաբանը դրի, իսկոյն բաղնեկիցս պատմեց ինձ թէ դիշեր ցերեկ ի՞նչ զգուշութեան միջոցներ ձեռք կ'առնուն առ հարկի մաքսատան մարդիկը մաքսանենգներու և ապստամբներու դէմ (այսպէս կ'անուանեն փախստականները) և թէ ի՞նչ են այս հսկողութեան պակասութիւններն ևս։ Պէտք է որ յիշեմ բառ մ'որ իմ գինուորիս բնաւորութեան ամենէ զգալի յատկանիշն է։ Երբ կ'հարցընէի թէ ինչո՞ւ համար Բրուսիացիք իրենց չէին՞ օգներ մաքսանենգն ու ապստամբը որսալու.

«Ահա ճիշդ այդ է դժբաղդութիւնը, պատասխանեց ինձ։ Այս անիծեալ բրուսիացիք չեն ուզեր աչխատիլ սահմանագլուխը պահպանելու համար. Բոլոր թեռը մեր խեղճ յաբին վրայ ընկած է . . :

Այս անգին խօսակցութենէ սա եզրակացութիւնն հանեցի որ, նախ իմ կարծածիս հակառակ, աւելի լաւ պիտի լինէր եթէ ցորեկատեն սահմանէն անցնէի։ Ուստի կէսօրէն երկու ժամ առաջ՝ նոյն օրն, Աստուծոյ ապաւինելով, դաշտոյնս ասի, և սահեցայ ցորենի արտերուն մէջ, և հեռուէն բարձր պարիսպի մը վրայ դիտելով այն վայրկեանն երբ երկու սահմանապահ գինուորներ իրարու կռնակ կ'դարձնեն, պատին վրայէն ցատկեցի սահմանագլուխը փակող երեք խրամատներէն առաջինն մէջ։ Ամենևին չչուկ մը չելաւ։ Սոդացի թու-

փերուն մէջ, բայց երբ երկրորդ խրամին հասայ՝ դին-
ւորները զիս նշմարեցին։ Այլ և այլ կողմէ հրացաններ
պարպուեցան, իսկ ես ըրածս դրածս չդիտնալով՝ եր-
կրորդ խրամին մէջ սահեցայ։ Նորէն վեր ելայ, յետոյ
դարձեալ վազեցի։ Ի վերջէ գինուորներն անհետացան և-
դան և ես անտառակի մը մէջ ընկայ։ Բրուսիոյ հողին
վրայ էի։

Շնչասպառ, նուաղած մնացի երկար ժամեր անտա-
ռակին մէջ, առանց շարժելու։ Քաջ դիտնալով թէ մին-
չև ո՞ւր կ՚հասնի երբեմն ռուսաց զայրոյթը, կ՚վախնա-
յի որ զիս չհալածեն մինչև անդամ օտար հողի վրայ։
Բարեբաղդաբար ամեն բան խաղաղ անցաւ, և թեթև
անձրև մ՚եկաւ յանկարծ ու օրուան հեղձուկ տաքու-
թիւնը զովացուց։ Այն ատեն սկսայ մտածել իմ այլա-
փոխութեանս վրայ։ Մոռէէի օրթոտոքս մօրուան այլևս
չէր յարմարեր ինձ Բրուսիոյ մէջ, ուր ամենուն ուշա-
դրութիւնը պիտի դրաւէի։ Բոլոնիա գտնուած առենս
պատասուութիւն տեսեր էի։ Սղզուիկ հայելի մը գնեցի
կրպակէ մը, և ածելիմը հրկայէ մը։ Իսկ ամառ ար-
դէն կտոր մը կար պարկիս մէջ, Սիպէրիայէն առած։
Հայելին թէպէ մը կախեցի, տերևներու վրայ իջած ան-
ձրևի կաթիլներով և մանաւանդ ցօղով ամառս փրփրե-
ցուցի, և այսպէս միշտ պատկած ու կոթնած՝ իմ քա-
ղաքակրթական գործողութիւնս շարունակեցի։ Շատ
ծանր ու տժգանելի եղաւ, մանաւանդ անյարմար դիր-
քիս պատճառաւ։ Վերջապէս նպատակիս հասայ, թէև
մի քանի ակօսներ թողուցի այտերուս վրայ։ Երբ մու-
թը լաւ մը կոխեց, ճամբայ ընկայ, տառատոկս հագեր
էի, դվարկս գլուխս դրեր և տարատս մինչև գոչիկ-
ներս իջեցուցեր էի։

Քաջ դիտէի որ բոլորովին ապատ չէի վտանգէ։ վասն
դի դաշնադրութիւն մը, Ռուսիոյ ու Բրուսիոյ մէջ, կոր-
դել (cartel) մը, ինչպէս կ՚ենուանէին այն ժամանակ,
կ՚պարտաւորէր այս երկու տէրութիւններն իրարու յանձ-
նել փոխադարձաբար ամեն փախստականներն, և ա-
նել փոխադարձաբար ամեն փախստականներն, և ա-
ռանձ՚ն, իմ հայրենակիցներէս շատերը, շատ անգամուս
սակայն սահմանը կ՚բերուէին, մեծ դժուարութեամբ
անցնելէն ետև։ Սակայն ես վստահ էի իմ ատաղիս
վրայ։ միայն պէտք էր խոյս տալ զօրականներէ և օ-
թեւաններէն, և այս շատ դիւրին էր՝ եղանակին նպաս-

տելովը։ սակայն իմ բռնելիք ճամբաս կրնայի առանց
վարանման որոշել։ Ես կ՚ուզէի Բոզէնի մեծ դքսութեան
երկիրը հասնիլ, ուր կ՚յուսայի ամեն օգնութիւն դտնել՝
քանի որ իմ դրամական միջոցներս կ՚նո ապէին՝ հայրե-
նակիցներուս մէջ, որ բրուսական իշխանութեան ներ-
քև էին։ Այն ատեն տեղեակ չէի այն կոտորածին որ
Կայիցիան անասպատ դարձուցեր էր։ չգիտէի որ Բոզէ-
նի մէջ անդամ, մեծ դաւադրութիւն մը երևան հաներ
էին։ 'ի հարկէ ոչ Ուրայի լեռներուն և ոչ Ռուսիոյ դռե-
հիկ ժողովրդեան մէջ կարող էի իմանալ այս ծանր ու
տխուր լուրերը։

Հետզհետէ անցայ Մեմել, Գիլսիդ և Քէօնիկսպէրկ՝
առանց որ և է դիտաւորութեան։ Ցորեկը կ՚քալէի և
դիշերը ատոնդ զարդ երկնից տակ կ՚քնանայի։ Անցա-
գիր պահանջելով բնաւ զիս անհանդիստ ընող չեղաւ,
իսկ երբ ճամբուս վրայ ճամբորդներ և ուղևորներ ա-
տեն ատեն հարցուփորձ կ՚ընէին զիս, կ՚պատասխանէի
թէ Ֆրանսացի բանվորի դործաւոր եմ և Ռուսիայէն
կ՚վերադառնամ։ Ի վերջէ՝ երբ յուլիսի 27ին Քէօնիկս-
պէրկ հասայ, նաւահանդիստը չդտնաւ մը տեսայ որ
հետևեալ օրն Էլբինկ պիտի երթար։ Արդէն շարունակ
քալելէն՝ յոգնած լինելով՝ ուզեցի օգուտ քաղել և նաւ
նստիլ, քանի որ ուղևորութեան գինն ալ չատ չափա-
ւոր էր, այնպէս որ նաւն ուղղակի պիտի տանէր զիս
Բոզէն, իմ հայրենակիցներուս մէջ։ Հետևապէս միտքս
դրի Քէօնիկսպէրկ մնալ մինչև հետևեալ օրը։ Բայց
նոյն միջոցին քաղքին մէջ սկսայ թափառիլ, և երբ դի-
շերը հասաւ՝ քարերու կոյտի մը վրայ նստայ՝ կիսափուլ
տան մը մօտ, որպէս զի մութը կոխելուն հետանամ և
երթամ դուրս ցորենի դաշտերուն մէջ պառկիմ, առա-
ւօտուն՝ շոգենաւը ճամբայ ելնելու միջոցին, վերադառ-
նալու յուսով։ Աւա՜ղ, ոյսպէս կ՚յուսայի ընել, առանց
մտածելու որ յոգնած էի, առանց նկատելու որ այժմ
պատեր էր, և վրաս տիրեր էր անհոգութիւն մ՚որ
յարաբերական երկար ապահովութեան մը բնական հե-
տևանքն էր։ Խորունկ քնացայ այն քարակոյտին վրայ
. . . : Երբոր քունէս արթնցայ, սաստիկ ցնցուելով
մարդու մը բազուկն, արդէն սաստիկ մութ էր, և
իմ առջևս կ՚կենար անծանօթ անձ մը, դիշերապահ մը,
կամ տեղական բարբառով՝ Նախգվախթէր մը, որ հար-

ցուց լինի թէ ո՞վ եմ և ո՞ւսկից կ'գամ։ Քունէն թմրած լինելով՝ մի քանի խեղճ խօսքեր թոթովեցի, և երբ վերջապէս գտնուած վտանգիս զգացումն խելքս գըլուխս եկաւ, պարապ տեղը կիսկտուր դերմաններէն լեզուով մի քանի բացատրութիւններ տուի, իմ բոլոր պատասխաններս կասկածելի արեցան։ Որովհետև այն տեղերը բոլորովին անծանօթ էին ինձ և գիշերը շատ մութ ըլլալուն չէի կարող գիշերապահ մարդուն հետ կռուի բռնուիլ և խոյս տալու միջոց մը փնտռել. դաշոյնս փնտռեցի, և բարեբաղդաբար չկրցայ գտնել զայն։ Պահապանը թեւս բռնեց, իր ընկերները կանչեց, և դիս մոտակայ պահականոցը բռնի տարաւ, իբրև կալանաւոր . . . ։

Երբոր վերստին բանտ մտայ, դիս յուզող զգացումն ոչ այնքան տխրութիւնն և յուսահատութիւնն էր որքան ամօթը։ Բոպրկայէն փախչիլ, Ուրալ լեռներէն անցնիլ, ամիսներով օգիակներու գետնափոր ձիներուն մէջ պառկիլ, այնքան տառապանք ու զրկանք կրել, հըրացանի դնդակներն արհամարհելով ռուսական սահմանագլխէն ցատկել և ապա անմոռաբար բրուսիական գիշերապահ գինուորի մը ձեռքն ընկնիլ. . . ճշմարիտը խօսելով, այս բանս շատ ծաղրական կ'երևէր ինձ, և ամօթահար կ'մնայի,

Միւսը օրը՝ ժամը տասնին ոստիկանութեան դուռը տարին, և այն տեղական քննել թէ որչափ յանցաւոր է այն մարդն որ օրինաց դէմ կ'նենգէ։ Ինքզինքս Ֆրանսացի և ռուսատանէն դարձող իբրև բամբակի գործաւոր մը ցոյց տուի և յայտնեցի որ թէ Ֆրանսա և թէ Ռուսիա կ'ճանչեն դիս, ու իմ հասցէս տուի, բայց կ'դիտէի որ այս վկայութիւններս բնաւ վստահութիւն մը չեն ազդեր։ Ամենէ աւելի կ'ցաւէի տասը համար որ, թէ այս առաջին և թէ հետևեալ հարցուփորձներու մէջ՝ դիս իբրև չարագործ մը կ'համարէին, և կ'կարծէին թէ անպատիւ գործ մը ծածկելու կ'ջանամ։ Խնդրեցի որ դիս Ֆրանսա զրկեն և խոստացայ՝ դատարանի առջև՝ բոլոր գործոց համար պատասխանատու մնալ և եթէ յանցաւոր եմ՝ պէտք եղած պատիժը կրել։

Սակայն խնդիրս մերժուեցաւ և դիս զրկեն Կապոյտ Բերդը։ Ուր բանտակիցներս եղան մի քանի քաղաքացիներ, որ նենգագիր անանկութեանց և ուրիշ մանր յանցանքի

համար բռնուած էին։ Ճիշդը խօսելով՝ այդ Կապոյտ-Բերդը բնաւ ահռելի չերևցաւ ինձի այս մարդու մ'որ ռուսական բանտերն ու փոքրիկ տեսած էր. բայց այս տխուր գիպուածին պատճառած անուսուցութիւնն ու զայրոյթն՝ քանի մը տարիէ՝ ի վեր՝ իմ կենացս գրեթէ ամենէ վատ օրերը միտքս կ'բերէին։ Վերջապէս ամիս մը բանտ մնալէն ետև՝ վերստին ոստիկանութեան ատեանն եկայ, և ինձ յայտնեցին որ իմ անձիս վրայօք բոլոր տեղեկութիւններս անստոյգ են և թէ խիստ ծանր կասկածներ կան իմ վրայ. կեղծելէն ձանձրացած, մանաւանդ բարկանալով որ դիս իբրև ծածուկ չարագործ կ'համարին, խնդրեցի որ առանձին տեսնուիմ դիս հարցաքննող բարձր պաշտօնէից մէկուն հետ, նոյնպէս Պ. Ֆլէօրիին հետ, որ Գերեսուն տարիէ 'ի վեր Բէօնիկսպէրկ բնակելուն բրուսիացի եղած և երդուեալ թարգման էր, միշտ դատաստանիս ներկայ։ Երբ միանակ մնացի այս պարոններուն հետ, բացէ 'ի բաց յայտնեցի թէ ես ո՞վ եմ, և իմ բաղդս անոնց ձեռքը յանձնեցի։ Կարելի՞ էր նկարագրել երկու քննիչներուս զարմանքն, ապշութիւնն ու խորին սարսափն, երբ իմացան որ իրենց առջև կեցողը լեհացի է, քաղաքական յանցաւոր մը, քատորկայէն փախած և Սիպէրիայէն դարձող յանցաւոր մը . . . .

Ի սկզբան պաշտօնատարը բառ մը չկրցաւ արտասանել. վերջապէս պոռաց.

«Բայց դժբաղդ մարդ, քեզ պիտի յանձնենք Ռուսիոյ իշխանութեան, այս մասին դաշնադրութիւնը վճռական է . . . ։ Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, է՜հ, ինչո՞ւ համար այս տեղ եկաք։

—Ես կ'ուզէի ձեզ ազատել այս դժուարութենէ և խոշի խայթէ. ինչո՞ւ համար դիս Ֆրանսա չդարձուցիք, ինչպէս որ կ'խնդրէի։»

Այն ատեն խնդրեցին որ փախուստիս բոլոր պարագաները մանրամասն պատմեմ. բրուսիացի պաշտօնատարը դուրս ելաւ, և Պ. Ֆլէօրի ինձ մօտենալով՝ ըսաւ.

—Անհնար է քեզ Ռուսաց ձեռքը չտալ. դեռ մօտ օրերս հայրենակիցներէդ շատերն Ռուսիոյ սահմանը զրկուեցան։ Քեզի համար փրկութեան մէկ հատիկ միջոց կայ միայն. աշխատէ տեսնել Իշլենպուրգի կոմսը, կամ գէթ անոր գրել։ Խնամակալ վարչութեան նախագահն

համար բռնուած էին։ Ճիշդը խօսելով՝ այդ Կապոյտ-Բերդը բնաւ ահռելի չերևցաւ ինձի այս մարդու մ'որ ռուսական բանտերն ու փոքրիկ տեսած էր. բայց այս տխուր գիպուածին պատճառած անուսուցութիւնն ու զայրոյթն՝ քանի մը տարիէ՝ ի վեր՝ իմ կենացս գրեթէ ամենէ վատ օրերը միտքս կ'բերէին։ Վերջապէս ամիս մը բանտ մնալէն ետև՝ վերստին ոստիկանութեան ատեանն եկայ, և ինձ յայտնեցին որ իմ անձիս վրայօք բոլոր տեղեկութիւններս անստոյգ են և թէ խիստ ծանր կասկածներ կան իմ վրայ. կեղծելէն ձանձրացած, մանաւանդ բարկանալով որ դիս իբրև ծածուկ չարագործ կ'համարին, խնդրեցի որ առանձին տեսնուիմ դիս հարցաքննող բարձր պաշտօնէից մէկուն հետ, նոյնպէս Պ. Ֆլէօրիին հետ, որ Գերեսուն տարիէ 'ի վեր Բէօնիկսպէրկ բնակելուն բրուսիացի եղած և երդուեալ թարգման էր, միշտ դատաստանիս ներկայ։ Երբ միանակ մնացի այս պարոններուն հետ, բացէ 'ի բաց յայտնեցի թէ ես ո՞վ եմ, և իմ բաղդս անոնց ձեռքը յանձնեցի։ Կարելի՞ էր նկարագրել երկու քննիչներուս զարմանքն, ապշութիւնն ու խորին սարսափն, երբ իմացան որ իրենց առջև կեցողը լեհացի է, քաղաքական յանցաւոր մը, քատորկայէն փախած և Սիպէրիայէն դարձող յանցաւոր մը . . . .

Ի սկզբան պաշտօնատարը բառ մը չկրցաւ արտասանել. վերջապէս պոռաց.

«Բայց դժբաղդ մարդ, քեզ պիտի յանձնենք Ռուսիոյ իշխանութեան, այս մասին դաշնադրութիւնը վճռական է . . . ։ Աստուա՛ծ իմ, Աստուա՛ծ իմ, է՜հ, ինչո՞ւ համար այս տեղ եկաք։

—Ես կ'ուզէի ձեզ ազատել այս դժուարութենէ և խոշի խայթէ. ինչո՞ւ համար դիս Ֆրանսա չդարձուցիք, ինչպէս որ կ'խնդրէի։»

Այն ատեն խնդրեցին որ փախուստիս բոլոր պարագաները մանրամասն պատմեմ. բրուսիացի պաշտօնատարը դուրս ելաւ, և Պ. Ֆլէօրի ինձ մօտենալով՝ ըսաւ.

—Անհնար է քեզ Ռուսաց ձեռքը չտալ. դեռ մօտ օրերս հայրենակիցներէդ շատերն Ռուսիոյ սահմանը զրկուեցան։ Քեզի համար փրկութեան մէկ հատիկ միջոց կայ միայն. աշխատէ տեսնել Իշլենպուրգի կոմսը, կամ գէթ անոր գրել։ Խնամակալ վարչութեան նախագահն

է, և ամեն բան իրմէ կախում ունի։ Նա բարեսիրտ, անկեղծ, վեհանձն մարդ մ'է և ամենուն սիրելի։ Ի սէր Աստուծոյ. գրէ անոր. այս ինչ դժբաղդութիւն է, ինչ դժբաղդութիւն։»

Երբ բանտ դարձայ իրօք գրեցի Էլլենպուրկի կոմսին, ինչպէս նաև 'ի Բարիզ՝ Գաժիէվիչ աբբային, որպէս զի իմ բուն անձնաւորութիւնս հաստատող վկայագիր մ'առնու, վասն զի գիտած էի որ հարց ու փորձ կ'ընէին թէ ա՞ր դեռ Բոզէնի ապստամբութեան գործին մասնակցող գործակիցներէն մին եմ։ Եմ ո՞վ լինելս հասկնալով՝ սկսան աւելի յարգանօք վարուիլ հետս։ բայց միանգամայն իմ վրայ հսկողութիւնն աւելցուցին։ Տաս օրէ ետք՝ Էլլենպուրկի կոմսէն քաղաքավարական գիր մ'առի, թէև անորոշ էր. սակայն վերջաբանին այս խօսքը թէ՝ համբերութիւն անենալ պէտք է, քաջալերական կ'թուէր ինձ։ Այնուհետև՝ գլխաւոր հետաքննութիւններն միայն կիսի մը վրայ սկսան դառնալ, այս էր թէ՝ արդեօք Բոզէնի գործին մասնակից եղա՞ծ եմ թէ ոչ։ Այս մասին բոլորովին հանգիստ էր սիրտս։ Բայց և այնպէս իմ յուսահատական կսկիծներս շատ էին, և շատ անգամ կ'ըսէի թէ իմ փրկութեան միակ միջոցն իմ գաղտնս էր։

Օր մը՝ պարոն մը ներկայացաւ ինձ բանտիս մէջ, յայտնեց թէ ինք Գէօնիկսպէրկի վաճառական՝ Պ. Քամք կ'կոչուի, և հարցուց թէ արդեօք կ'յօժարի՞մ ընդունիլ իր երաշխաւորութիւնն։ Այս անակնկալ առաջարկութիւնն ոչ միայն զարմացուց այլ և խիստս շարժեց, և հետևապէս բացատրութիւն մը խնդրեցի։

Այն ատեն իմացայ թէ Սիլէրիայէն փախած լեհացիի մը բանտարկութեան լուրը տարածուեր է քաղքին մէջ և մեծ յուզմունք մը պատճառեր է։ Գէօնիկսպէրկի բարեսիրտ բնակիչներն, որ արդէն շատ անգամ վիրաւորուած էին Ռուսիոյ հետ կնքուած դաշնագրէն, մանաւանդ յուզուեր էին մտածելով որ Սիլէրիայէն այնքան վտանգներէ փախած մարդ մը Ռուսաց պիտի յանձնուի։ Արդէն իմ օգտիս համար այլ և այլ միջոցներ 'ի գործ դրեր էին, և կ'յուսային իմ ազատութիւնս ստանալ երաշխաւորութեամբ։ Ա՜հ. այս խօսքերն ո՛րչափ սփոփեցին սիրտս . . . ։

Թէև մեծ դժուարութիւններ հանեցին որ երաշխաւորութիւնը չընդունին, բայց երբ սեպտեմբերի 1ին վերստին ոստիկանութեան դատարանը կոչուեցայ, գըտայ այն տեղ աղնուասիրտ Պ. Քամքն, որ ինձ մօտեցաւ, գրկեց զիս և ըսաւ որ ազատ եմ։ Աստուդիս ազատ էի, և այս յայտարարութիւնը կրկնեց ինձ դատս քննող պաշտօնեայն։ Հարցուց ինձ թէ արդեօք կ'փափաքիմ ժամանակ մ'ալ 'ի Գէօնիկսպէրկ մնալ, պատասխանեցի թէ մնալ կ'ուզեմ, վասն զի պարտ կ'համարէի շնորհակալիք յայտնել իմ բարերարներուս, որ իմ վիճակիս համակրեր էին, մանաւանդ Էլլենպուրկի կոմսին։ Նոյնպէս լաւ քաղաքականութիւն կ'երևէր ինձ շտապաւ չմեկնիլ Բրուսիայէն։ Աւա՜ղ, այնքան կասկածոտ դարձեր էի . . . ։

Պ. Քամք առօք փառօք իր տունը տարաւ զիս, և իր ընտանիքին մէջ սիրալիր ընդունելութիւն մը գտայ, որ միշտ պիտի մնայ իմ յիշողութեանս մէջ։ Հապա՛ւ շաբաթ մ'անցած էր իմ ազատութենէս 'ի վեր՝ որ յանկարծ ոստիկանութեան տեսանը կոչուեցայ։ Այն տեղ երկու պաշտօնատար գտայ զոր արդէն կ'ճանչէի, և որ տխուր այլ բարեսէր դէմքով մ'ըսին ինձ որ Պէրլինէն հրաման հասած էր զիս Ռուսիոյ յանձնելու, թէ ուրիշ բան չեն կարող ընել այլ միայն ինձ ժամանակ տալ խոյս տալու, ամեն վտանգ աչքս առնելով, և թէ կ'խնդրէին Աստուծմէ որ զիս պաշտպանէ։

Աստիկ շարժեցաւ սիրտս անոնց այս վեհանձն վարմունքէն, և խօսք տուի ամեն կարելի միջոց 'ի գործ դնել որ իրենց նոր չխոթութիւն չպատճառեմ։ Անմիջապէս իմաց տուի այս նոր դիպուածն Պ. Քամքի և իմ պաշտպաններուս, և իմ փախուստս շուտով կարգադրեցի։ Հրաժեշտ տուի իմ բարի և աղնուասիրտ բարեկամներուս, և հետևեալ օրն՝ սեպտեմբեր 9ին արդէն Տանցիկի ճամբուն վրայ էի։ Գերմանիոյ քաղաքներու մէջ բնակող այլ և այլ անձերու ուղղուած յանձնարարական գիրեր ունէի, և ամեն տեղ մեծ հոգ ու ևռանդ ցոյց տուին որ ուղևորութիւնս դիւրացնեն, մանաւանդ ներուի ինձ յիշել Լէյպցիկի վեհանձն գրագէտ Պ. Ռոսլերդ Պլումն, որ երկու տարի ետքը պիտի հրացանի բռնուէր Վիէննա՝ Վինտիշգրայեց իշխանին հրամանաւ։ Ինձ՞ տրուած օգնութեանց շնորհիւ՝ շուտով Գերմանիայէն անցայ, և 1846 սեպտեմբեր 22ին վերստին

ինքզինքս գտայ Բարիզ ուսկից չորս տարի առաջ մեկնած էի։

Բարիզ դառնալէս 'ի վեր՝ տարիէ մը քիչ աւելի անցեր էր երբ փեբրվարի յեղափոխութիւնը տեղի ունեցաւ, և մեր երկիրն լուսագոյն ապագայի մը յուսալուսկաւ։ Շատ չանցաւ մեր սխալմունքը հասկցանք, աւա՜ղ։ Կալիցիա իմ հայրենիքս վերսին փութալով՝ նոր քաղաքական ճախորդութեան մ'ականատես եղայ։ Մեր յոյսերը պարապ ելնելով՝ ժամանակ ունեցայ անցելոյն խոր տպաւորութիւններն գրել, քանի որ դեռ կենդանի էին յիշողութեանս մէջ, և այս Ցեշպոկարանէ մեծ մասը լմնցուցի։ Եթէ բնաւ չխօսեցայ իմ դժբաղդ վիճակից եղբարցս վրայ, որ Կամենիցի գործին մէջ մասնակից եղան, պատճառն անտարբերութիւնս չէ անոնց վիճակին համար։ Հետզհետէ իմացայ անոնց ճակատագիրն և այն աղէտներն որոց ենթակայ եղան։ Արդէն չատերն չկրնալով տոկալ մեռան, ոմանք Սիպէրիոյ մէջ կ'հեծեն, ոմանք Կովկասու և Օրէնպուրկի մարզական գումարտակներուն մէջ։

Աստուած ինք ողորմի մեռելոց և կենդանեաց։

ՎԵՐՋ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԵՐԵՎԱՆՈՒՄ
ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի Ս. Մատենադարանի

ՀՀ Ազգային գրադարան
NL0318919